

ՄՏԵՓԱՆ ՇԱՀՊԱԶ

«Մարդոց դէմքէն առաջ, անոնց խօսքերը
մտիկ ընելէ աւելի, դիտեցէք իրենց ձեռքերը.-
խօսուն են անոնք, երբ նոյնիսկ կարծր ըլլան,
երբ նոյնիսկ տխտղծ ըլլան»:

«Մեր խելքին, մեր զարգացումին եւ մեր
ձեռքին միջեւ՝ համերաշխութիւն, կամ
հասկացողութիւն տեղի չունեցաւ»:



ՄԱՐԴՈՒՆ ԶԵՌՔԵՐԸ

ՀԲԸՄ Գահիրեի «Չագըր» Հիմնադրամի «Արխիվ» Մատենաշար թիւ 6

ՄՏԵՓԱՆ ՇԱՀՊԱԶ

ՄԱՐԴՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Խմբագրեց եւ հրատարակութեան պատրաստեց
ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ
Գահիրէ 2024

Կողմի նկարը` Albrecht Dürer (1471-1528), Study of Hands

Հոս կը դնեմ կեանքիս իմաստասիրութենէն, փորձառութենէս,
գրական տեսակէտներէս շատ բան:

Ո՛չ բոլորը՝ անշուշտ:

Բայց ինչ որ դրի հոս, անկեղծօրէն դրի:

Ս. Շ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գահիրեի ՀԲԸՄի արխիւներուն եւ գիրքերուն դեղերուն մէջ գտանք մեծ չափի թղթապանակ մը, որ կը բաղկանայ ձեռագիր բարակ թուղթերէ, իրար կցուած եւ զետեղուած նարնջագոյն թղթածրարի մը մէջ:

Մանր ձեռագրով եւ մութ կապոյտ չոր մելանով գրուած, յաճախ փոքր թուղթերով յաւելումներ աւելցուած, թուագրուած 169 էջեր են ասոնք, որոնք հեղինակի անուն ունին եւ բարեփոխուած խորագիր մը (նախապէս «Մեր Ձեռքերը» կոչուած է գիրքը), իսկ անոնց թուականը դրուած է վերջաւորութեան, հաւանաբար սկիզբի եւ աւարտի մանրամասնութեամբ՝ Աղեքսանդրիա, Նոյ. 1983 – Դեկտ. 1984:

Եզիպտահայ այլ մտաւորական մը՝ Յովհաննէս Տէր Պետրոսեան «Արեւ» օրաթերթին մէջ գրած իր մէկ յօդուածին մէջ կ'ըսէ, ակնարկելով Ստեփան Շահպագին.

«Կը ճանչնամ զինք, բայց չեմ ծանօթացած» («Արեւ» օրաթերթ, 75րդ տարի, թիւ 21620, 10 Նոյեմբեր 1990):

Պէյրութի «ԾԱՂԻԿ» Գրական Ազգային հանդէսին մէջ կը կարդանք մանրամասն կենսագրութիւնը Ստեփան Շահպագի (8 Օգոստոս 2020).

«Եզիպտահայ երկարամեայ գրող, բանասէր, սփիւռքահայ գրականութեան երախտաւորներէն Ստեփան Շահպագ, կարծես ճակատագրի հանգիստութեամբ մը եզիպտահայ ժամանակակից գրողներ Խորէն Տէտէեանի ու Պարոյր Մասիկեանի հետ, քիչ ուսումնասիրուած այն գրագէտներէն է, որուն գործերը իր կենդանութեան եւ մահէն ետք ալ չգրադեցուցին գրականութեան սպասարկուները, մանաւանդ որ այդ գործերուն մէջ կը շարու-

նակէ բարձրագոռ հնչել 1915-ի ողբերգութիւններով սկսուած մեր արինավառ պատմութիւնը...»:

«Շահպագի մահէն եօթ տարի առաջ, 1987-ին, սփիւռքահայ գրականագէտ ու բանասէր Դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրութէն ուղղուելով Գահիրէ, վերադարձին արդէն իրագործած կ'ըլլար իր առաքելութիւնը, յաջորդ տարի իսկ խմբագրելով ու հրատարակութեան ձեռնարկելով Ստեփան Շահպագի «կարապի երգ»ը հանդիսացող «Արփիար Արփիարեան» խորագրեալ հաստատար աշխատութիւն-մենագրութիւնը (Պէյրութ, 1988, 624 էջ): Յիրաւի կոթողային յիշատակարան մը Շահպագին կողմէ Արփիարեան գրողին նուիրուած, ի մի ամփոփելով «Կարմիր Ժամուց»ի տարաբախտ ու մեծահամբաւ երգիչին հասարակական-կուսակցական կեանքի ուղին ու գրական վաստակը»:

«8 Օգոստոս 1900-ին Ատանա ծնած եւ ինն տարեկանին Ատանայի կոտորածներուն զարհուրանքը ըմպած Ստեփան՝ մօր հետ խոյս կու տայ Կիպրոս, ուր Փարիզէն վերադառնալով իրենց կը միանար հայրը: Շատ չանցած՝ փոքրիկն Ստեփան կը մեկնի Մերսին քաղաք, ուր կը յաճախէ տեղի Ազգային նախակրթարանը: Երկու տարի հոն ժամալէ ետք կը վերադառնայ Ատանա եւ այս անգամ կը յաճախէ տեղի Աբգարեան վարժարանը: 1915-ի տարագրութեան օրերուն, երկար ու տառապալից ողիսական մը ապրելէ յետոյ, կը հասնի Հալէպ»:

«Ա. Աշխարհամարտէն ետք, զինադադարին, պատանի Ստեփան Շահպագ կը վերադառնայ Կիլիկիա, ուրկէ կ'անցնի Պոլիս՝ հետեւելու միջնակարգ ուսման, որուն քննութիւնները կ'անցընէ Ֆրանսայի Կրընոպլի համալսարանին մէջ, 1922-ին: Իր ուսանողական շրջանին կ'ընտրուի Հայ Ուսանողական Միութեան նախագահ եւ Հայ Դատի մասին կը խօսի Սորպոնի «Ռիշիէ» սրահին մէջ: Կը հետեւի Լահէի Միջազգային Իրաւա-

բանութեան Քառնէկի Ակադեմիայի 1923-ի դասընթացքներուն եւ 1925-ին կ'աւարտէ Փարիզի համալսարանի իրաւաբանութեան բաժանմունքը: Յաջորդ տարի կը տեղափոխուի Ադէքսանդրիա, ուր որպէս փաստաբան կ'արձանագրուի Եգիպտոսի խառն դատարաններու քով: Երեք տարուան գործնական, փաստաբանական դրական աշխատանքներէ ետք կատարուող խիստ քննութիւններու մէջ իր ձեռք ձգած յաջողութեանց համար կը ստանայ «Ոսկեմատեան» մրցանքը:

«1947-1948 հայրենադարձութեան տարիներուն, Շահպազ Ադէքսանդրիոյ մէջ կը ղեկավարէ Եգիպտահայերու Ներգաղթի Կոմիտէն: Շուրջ կէս դար կ'աշխատի եգիպտական Ազգ. Վերաքննիչ ատեաններու մէջ իբրեւ փաստաբան՝ միաժամանակ վարելով ազգային հասարակական գործունէութիւն: Գահիրէի մէջ Ռ.Ա.Կ.ի օրկան «Արեւ» օրաթերթի եւ «Լրաբեր»ի սիւնակներուն մէջ պարբերաբար լոյս կը տեսնեն իր ընդարձակ ուսումնասիրութիւնները Թուրքիոյ Հայոց Ազգային սահմանադրութեան ու եկեղեցական կանոնագրութեան մշակումին շուրջ, միջազգային իրաւաբանական տեսակետներ ալ ներկայացնելով հայոց դատին կապակցութեամբ՝ բազմաթիւ գրութիւններու մէջ»:

«Եգիպտական Ազգութիւնը»՝ Շահպազի առաջին երկերէն, իրաւագիտական գործ մըն է, շահեկան եւ ուսումնասիրութեան արժանի: 1946-ին, Վենետիկի Միսիթարեան տպարանէն հրատարակուած է իր «Վարագոյրին Ետեւը» վէպը, 1956-ին, «Պայքար» տարեգիրքին մէջ «Միսիթար Գօշ Եւ Իր Դատաստանագիրքը», 1959-ին, Սիմոն Սիմոնեանի «Սեւան» հրատարակչատունէն՝ «Մենք՝ Հայերս» ծաւալուն ուսումնասիրութիւնը: Նոյն տարին եւ նոյն հրատարակչատունէն լոյսի բարիքին կու գայ «Գրիգոր Զօհրապ» մենագրութիւնը, 1966-ին, ֆրանսերէնով՝ «Les Arménienne d'Egypte» («Եգիպտոսի Հայերը») ուսում-

նասիրութիւնը, յաջորդ տարի՝ «Տողանցք» նշմարներն ու պատմութիւններու ժողովածոն, դարձեալ «Մեւան» հրատարակչատունէն: Երեք տարի ետք՝ 1970-ին, «Օրերուն Հետ» պատմութիւններու ժողովածոն, 1971-ին՝ «Մեր Երկիրը», հայրենական տպաւորապաշտ էջերը»:

«Արդարեւ, Ստեփան Շահպազի գործերը ունին իբրեւ փինիկ յառնած մեր ժողովուրդին կենսական յոյս տուող, Հայ Դատին խրախուսանք բերող անկոտրում ոյժ՝ մեր եւ ապագայ ժամանակներու մէջ միշտ բարբախող»:

Այստեղ «կարապի երգ»ը համարուած է Շահպազի Արփիար Արփիարեանին նուիրուած հաստափոր ուսումնասիրութիւն-մենագրութիւնը: Սակայն ահա քանի մը տասնամեակ ետք ի յայտ կու գայ, թէ Շահպազի կարապի երգը ո՛չ թէ Արփիարեանի նուիրուած աշխատութիւնն է, այլ՝ «Մարդուն Ձեռքերը» երկար խոհագրութիւնը:

Մէկ նախադասութեան մէջ ամփոփելով «Մարդուն Ձեռքերը» գիրքին ամբողջ էութիւնը, Շահպազ կը գրէ.

«Մարդոց դէմքէն առաջ, անոնց խօսքերը մտիկ ընելէ աւելի, դիտեցէք իրենց ձեռքերը.- խօսուն են անոնք, երբ նոյնիսկ կարծր ըլլան, երբ նոյնիսկ տխւեղծ ըլլան» (էջ 6 բնագրին մէջ):

Տիտղոսաթերթէն կը տեսնենք, որ նախապէս խորագիրը եղած է «Մեր Ձեռքերը», ապա, անոնց վրայ քառանկիւն թուղթ մը փակցուած է եւ գրուած՝ «Մարդուն Ձեռքերը»:

Երբ վեր կ'առնէ իր յուշերը, օրինակ երբ կը խօսի Ատանայի իրենց այգիին մասին մեծ կարօտով եւ յուզումով, ոճը կը դառնայ անբռնագրօս եւ հեզասահ, կարծես կը մոռնայ որ կը գրէ եւ կը սկսի պատմել, տրուելով յուշերէն ծորող տխրութեան:

Ս. Շահպազ իր այս գիրքին մէջ երկա՛ր հատուածներ նուիրեր է այլ եգիպտահայ մտաւորականի մը՝ Արշամ Տատրեա-

նին, որուն հետ կը թուի մտերիմ, գոնէ բարեկամ ըլլալ, կը թուի անոր բոլոր գործերը կարդացած ըլլալ, որովհետեւ անոր գիրն ու խառնուածքը կը մեկնաբանէ հոգեբանական խոր վերլուծումներով: Այսպէս, կրնանք կազմել կենդանագիրը Արշամ Տատրեան մարդ-գրագէտին, որ այնքան ալ ծանօթ անուն մը չէ սփիւռքահայ մեր գրականութեան մէջ կամ սփիւռքահայ ընթերցողին համար:

Էջերուն թաւալքին հետ կը տեսնենք, որ այս գիրքը կամաց-կամաց օրագիրի մը կերպարանքը կ'առնէ (առանց օրաթիւ-ամսաթիւի անշուշտ), որուն մէջ հեղինակը կ'արձանագրէ իր սրտմտութիւնը մեր ընդհանրական ժխտական երեւոյթներուն առջեւ, ինչպէս օրինակ մամուլին մէջ հետզհետէ տարածուող սխալ բառերու օգտագործումը: Եւ ձեռով մը ինք եւս կը դառնայ մէկը այն հայերէն, որոնք կը խուսափին բարձրաձայն արտայայտելու իրենց դժգոհութիւնները, բան մը, որ յստակօրէն ըսած է թիւ 35 գլուխին մէջ:

1993-ին, երբ Ստեփան Շահպազ կը մահանար, արդէն 93 տարեկան էր, իսկ այս հատորը սկսուեր է 1983-ին եւ աւարտի հասեր 1984-ին. այլ խօսքով՝ այս հատորը ո՛չ միայն իր վերջին ստեղծագործութիւնն է, այլ նաեւ իր հասուն միտքին արգասիքը, գրուած 83 տարեկան հասակին:

Թիւ 50 գլուխը կը սկսի էջ 65-էն, ուր կը խօսի անձի մը մասին, կը նկարագրէ անոր դրական բազմաթիւ յատկանիշերը, բայց կը նշէ, թէ «ձեռքերը չէի սիրած»: Յետոյ էջ 67-էն ետք, երբ կը բացատրէ մանրամասնօրէն, թէ ինչո՞ւ չէ սիրած այդ ձեռքերը, էջերը կը թուագրուին 67-(ա), 67-(բ), 67-(գ) եւ այսպէս մինչեւ 67-(ե):

Այս էջերը խոստովանութեան մը մթնոլորտը ունին, վաղուց սրտին եւ հոգիին վրայ ճնշող ցաւի մը պոռթկումը կայ

այս քանի մը էջերուն մէջ, որոնք այնքա՛ն տարբեր են նախորդ 50 էջերէն իրենց իրապաշտ եւ մտածողական ոճով:

Երբե՛մս բառերը կ'էսէն իրարմէ հեռու գրելու սովորութիւնը դժուարութիւն կը յարուցէ բառը ճիշդ կարդալու, ինչպէս օրինակ «անկու մային» բառը ...

Ձեռագրին գլուխ թիւ 57-ը կ'երկարի էջ 85-էն մինչեւ էջ 150, այսինքն ամբողջ 65 էջեր, որոնց մէջ Շահպազ կը խօսի Շահան Շահնուրի, Տոսթոյեվսկիի, Ա. Արփիարեանի եւ Տիգրան Կամսարականի մասին, հետաքրքրական վերլուծումներ ընելով անոնց խառնուածքին եւ երկերուն մասին:

Իր հրատարակութեան առաջին օրերուն, երբ վէպը որպէս թերթօն կ'երեւէր Փարիզի «Յառաջ» օրաթերթի էջերուն, երբ այդ օրերուն մարդիկ անհամբեր եւ խիտ սպասումով կ'ընթերցէին Շահնուրի էջերը, այդ օրերուն եթէ գրուած ըլլային Շահպազի այս տողերը – որոնք կը շարունակեն այժմեական փասլ – որքա՛ն ընդունելութիւն պիտի գտնէին, միջակ ընթերցողին բացայայտելով կարգ մը հարցեր եւ պատասխանելով կարգ մը հարցումներու:

Բայց այս տողերը գրուած են 1983-1984 տարեշրջանին, եւ լոյսին կու գան ահա ճիշդ 40 տարի ետք, երբ արդէն Շահնուրի «Նահանջը» գրեթէ ընթերցող չունի ա՛լ...

Արդե՛օ ք ի գուր է այս էջերը լոյսին տալը:

Չե՛նք կարծեր:

Կը հաւատանք որ իւրաքանչիւր վէպ, որ ունի անժամանակ ըլլալու յատկութիւնը, երբե՛ք պիտի չմոռցուի, թէեւ կրնայ երբե՛մս թմբիրի շրջաններ ունենալ: «Նահանջը ...» անոնցմէ մէկն է:

Փորձած ենք խմբագրական միջամտութիւնները նուազագոյնի իջեցնել, հակառակ անոր որ Շահպազի լեզուն երբեմն կը կրէ անցեալ դարու կնիքն ու ֆրանսերէնի ծանր ազդեցութիւնը: Սակայն այդ լեզուն նաեւ կ'արտայայտէ եգիպտահայոց կեանքին կարեւոր մէկ ժամանակաշրջանը:

Ուղղած ենք միայն վրէպները Շահպազի գրութեան մէջ, իսկ մէկ-երկու պակասաւոր նախադասութիւններուն բառերը աւելցուցած ենք – յստակացումի համար միայն – քառանկին փակագիծերու մէջ: Նոյն մտահոգութեամբ կ'ետադրութիւնը եւս նոյնը ձգած ենք:

Մ. Ե.

1-

Շատ յաճախ մտածած եմ մեր ձեռքերուն մասին: Անոնց նրբութեանը վրայ:

Անոնք ունին զգացում, ուշիմութիւն, զգուանքը, ըմբոնում, իրա՛ւ արդարութիւնը:

Մտածած եմ նաեւ սակաւութեանը մասին՝ նուրբ եւ աղուոր ձեռքերուն: Անկեղծ, մաքուր, ժպտուն ձեռքերուն: Հաւատարիմ, ընկերական ձեռքերուն: Ինչպէս նաեւ անոնց հանճարեղ ստեղծագործումներուն առնչութեամբ: Կը պարունակեն բոլոր արուեստները, եւ զանոնք կը բաշխեն ալ:

Բայց անոնք կը պարփակեն ե՛ւ նախանձը, կ'արգիլեն սիրտը, ունին ժլատութիւնը, վախը, անորոշ զգուշութիւնը: Եւ ձեռքը կը պարփակէ դէռ իր ափին մէջ եւ իր մատներուն մինչեւ ծայրերը, մարդուն բոլոր քէները, կեղծիքը, գողութեան մոլութիւնը, սուտը, ընչաքաղցութիւնը, կոշտ ու կոպիտը, անասնական բնագղները, ոճիւրը:

Խորհած եմ. բոլո՛ր մեծութիւնները, ցածութիւնները ձեռքերուն մէջ կը գտնուին, հոն կը ծնին, հոն գոյութիւն կ'առնեն, հոն կը փթթին, ուստի եւ մարդիկ ձեռքին միջոցով է որ կը գործեն, կ'արտայայտուին:

2-

Ձեռքին հպումը, շօշափումը, իր նրբութիւններն ու ստորոգելիները, իր հանճարը, իր ստեղծագործութիւնները՝ նոր զգացում, նոր ստացում, նոր գնահատում իրականութիւններ, արժէքներ չեն: Ընդհակառակն՝ թուականի կարգով ձեռքը եղած է՝ մեր զգայարանքներուն մէջ, շատ որոշ ու կարելորդերէր կատարողը: Եւ իր գնահատուիլն ալ չէ ուշացած:

Այս առնչութեամբ, հին Յունաստանէն մեզի հասած է բոլորովին անվերապահ, բացարձակ, գերազանց վկայութիւն մը.- արդարեւ, Քրիստոսէ հինգ դար առաջ, իմաստասէր Անաքսագորաս՝ որուն դասերուն հետեւած են Փէրիքլէս եւ Սոկրատ, կ'ըսէ թէ մարդը խելացի է, որովհետեւ ձեռք ունի:

Միշտ հին Յունաստանի մէջ երիտասարդ զինուոր մը, պատերազմական ճակատ մեկնելու վրայ, իր նշանածին կը հանդիպի՝ այս մեկնումին առթիւ իր սիրոյ երդումները արտայայտելու համար: Մինչ իրենց տեսակցութեան ատենը, կը տեսնէ քովի սպիտակ պատին վրայ, կնոջ կիսադէմքի մը ստուերը – իր նշանածինը, որուն աջ կողմէն արելը կը զարնէր: Ուրախ է երիտասարդ զինուորը. իսկոյն կը գտնէ ածուխի կտոր մը ու այդ ստուերը կը գծէ պատին վրայ իսկ, ճիշդ այնպէս ինչպէս որ է ստուերը: Պարագան հաղորդողը կը հաւաստէ, թէ ան առաջին պատկերն է գծագրութեան պատմութեան մէջ. ամենայն դէպս, շատ հին ու շքեղ քաղաքակրթութեան մը մէջ կը գետեղուի այս դրուագը՝ որ, միեւնոյն ատեն, մեզի կը հաղորդէ, թէ երիտասարդ զինուորը, առանց գծագրիչ մը ըլլալու, կրցած է իր ձեռքովը յաւերժացնել իր նշանածին յիշատակը: Ձեռքին շնորհուած ամենէն աղուոր դերերէն մին է այս:

Դարձեալ հին Յունական քաղաքակրթութեան մեջ, անկորնչելի երեւոյթներ, ստեղծագործ մտածումներ, երկեր, ճշմարտութիւններ շատ գոյութիւն ունին ձեռքին կարելիութիւններուն, արժէքաւորումներուն առնչութեամբ: Օրինակ, Տիոփէնի ինքնայատուկ ելոյթներէն մին կը կազմէ առարկայական եւ միանգամայն մտածումի անհերքելի մէկ վկայութիւնը՝ ձեռքին բազմաթիւ ձիրքերուն մասին: Գիտէ՞ք. Տիոփէն իբր բնակութիւն՝ ունէր տակառ մը, մինչ իր գոյքը կը բաղկանար կոյժէ մը՝ մի միայն: Երբ, առտու մը, իր սովորական աղբիւրը կ'երթայ իր կոյժը լեցնելու համար, հոն կը տեսնէ պատանի հովիւ մը, որ իր երկու ավերովը աղբիւրէն ջուր կը խմէր: Եւ այն ստեն, Տիոփէն՝ ձեռքը գլխուն զարնելով, կը գոչէ ինքն իրեն.- «Ուրե՛մս դուն այս տղուն չափ ալ խելք չունիս. տե՛ս, ան ջուրը իր ավովը կը խմէ»: Ձեռքին ծառայութեան, ձեռքին աջակցութեան գովքն է այս՝ անշուշտ, Տիոփէնին կողմէ, արդէն շատ երկար դարեր առաջ:

Պիղատոս՝ կայ քսան դար, երբ «ձեռք լուալու» հասարակ գործողութեան փոխաբերական պատկերաւոր իմաստ մը տուաւ: Ձեռքերուն բարոյական թե՛ ֆիզիքական ստորոգելիներուն իմաստը:

Գրիգոր Նարեկացի, իր «Մատեան Ողբերգութեան» մեջ, մարդուն ձեռքերն ու մատները Աստուծոյ աջին գործակիցը կը նկատէ, իր հետեւեալ տունովը.

*Կրելով գործուն, արուեստող ձեռքեր,
Ճարտար մատներդ շառաւիղներով,
Իբրեւ գործակից ամենապարզեւ աջին Աստծոյ,
Համակեցութեամբ՝ Աստուած կոչուեցիր:*

Գեորգ Էմին՝ իր «Եօթ Երգ Հայաստանի Մասին» հատորին մեջ, կը հաւաստէ, պերճախօս պատկերով մը, ձեռքին կարելիութիւններուն նշմարուած ըլլալը, Քրիստոսէ արդէն երկու դար առաջ իսկ, յիշատակելով՝ թէ պարուհի մը այնքա՛ն գեղեցիկ ու հմուտ էր «որ թուում էր թէ երգում է ձեռքերով»:

3-

Թանկագին է աղուոր ձեռքը:

Եւ խօսուն է աղուոր ձեռքը, ու գրաւիչ. եւ առինքնող հմայք մը: Եւ ան կ'արտայայտէ մարդուն ու իր հանճարին բոլոր զգացումները, մտածումները, ինչպէս նաեւ իր բոլոր իղձերը: Կրնա՛յ իրագործել ալ զանոնք:

Մետաղէ, փայտէ, թելերէ կազմուած անշունչ գործիքներ՝ մատներու շփումին տակ կ'արտայայտեն, իսկոյն, երաժշտութիւնը: Քարին, կտաւին, թուղթին, փայտին վրայ կը քանդակեն, կ'անմահացնեն սերը, զգացումները, մտածումները՝ բարի կամ չար, վեհ կամ ցած, ինչպէս նաեւ բնութեան հրաշալիքները, գոյները, սիրուած դէմքը, արուեստի առարկան, գնահատելի դէպքերը, յաղթանակները, գաղափարները: Ձեռքերը, մատները գիտեն հասկնալ, գիտեն արտայայտել մարդուն ամենէն բարդ զգացումները, միտքը: Ուստի, կան օժտուած ձեռքեր, օժտուած մատներ, ինչպէս նաեւ բութ ձեռքեր, բութ մատներ ալ. ճիշդ մարդուն ուղեղներուն նման:

Եւ ձեռքն ու մատները գիտեն զրուցել, կեանքին բացուիլ, իրենք իրենցմով ալ: Կենդանի ձեռքը, կեանքով լեցուն ձեռքը միշտ ալ պիտի արտայայտուի. ներկայ է, կը զգացնէ իր ներկայութիւնը: Դիտա՞ծ էք իրական խաղամուլներուն ձեռքերը, մատները՝ թղթախաղի սեղանին շուրջը, քառթ մը, դրամ մը

առնելու կամ տալու պահերուն. անոնք իրենց ինքնայատուկ լեզուն ունին, արտայայտուելու իրենց կերպերը ունին: Եւ իրենց հոգին ալ ունին, իրենց յատուկ հոգի մը:

Բռնակալներուն ձեռքերն ալ կ'արտայայտուին, գիտեն արտայայտուիլ:

Հոչակաւոր պերճախօսներուն արձանները ձեռքի շարժումներ ունին. ասոնք արտայայտութիւն են:

Նուագախումբի մը ղեկավարը ձեռքով է որ կը վարէ: Բայց Մթաքովսքի¹ կը վարէ իր նուագախումբը առանց ճպոտի. տեսնելու է իր ձեռքին, իր մատներուն արտայայտութիւնները.- նուագ մըն ալ այս, անստգիւտ, պերճ նուագ մը՝ ինքնին:

4-

Ձեռքերը՝ մարդն իսկ են.- ոճը, դիմագիծը, բնութիւնը, մարդուն լինելիութիւնը:

Մարդը՝ իր ձեռքերէն կախում ունի:

Մարդը՝ իր ձեռքերէն ալ կը տարուի.- աչքերը, դէմքը, ժպիտը՝ չեն կրնար յայտնել մարդը այնքան որքան իր ձեռքերը. ո՛չ ալ կրնան զինքը բոլորովին դրսեւորել, պատկերացնել, ճանչցնել, մատնել՝ որքան իր ձեռքերը: Ամէն ձեռք իր ոճը ունի:

Կան ծակաչք ձեռքեր: Կան նախանձ, ատելավառ ձեռքեր՝ կծծի, աներես, կեղծ, անորոշ ժպիտով, տամուկ, դաւաճան, գետնաքարշ ձեռքեր ալ: Կարծր, անհաղորդ, անտարբեր ձեռքեր եւս: Դիակապուտ ձեռքեր ալ, յարափոփոխ աչքերով, քսուներ, թունաւորներ, օձեր, զրպարտողներ՝ ամէն անգամ որ կը զգան

¹ Leopold Stokowski (1882-1977), անգլիական ծագումով ամերիկացի ղեկավար, նշանաւոր դարձած 20րդ դարու երկրորդ կեսին:

իրենց գաճաճ դրութիւնը: Եւ ես սարսափած եմ, երբ որ ձեռքերէն
ոռւէ մէկը կը սկսի յափշտակել. սարսուռ կ'ազդէ ինծի. իրենց
յափշտակելու կիրքը՝ կանգ չ'առնէր, ոչ ալ շեղում կ'ունենայ: Եւ
այդ ձեռքերը կ'աղոտոտեն ամէն բան. իրենց համար վեհութիւն,
կամ սրբութիւն չկայ երբեք:

Ձեռքը կրնայ գատել, բաժնել ալ մէկը միւսէն, իրարու
խորապէս սիրելի եղողներն անգամ: Բայց ձեռքը կրնայ նաեւ
իրար միացնել, շաղկապել ալ: Կրնայ ընտրութիւն եւս կատարել,
կամ չզանազանել իսկ բարին՝ գէշէն, պիտանին՝ անպիտանէն,
օգտակարը՝ զնասակարէն, դեղձանիկը՝ ագռաւէն: Առհասարակ
սակայն, ձեռքը գիտակից է իր ըրածին բնոյթին ու
կարողութեան. իր ժեսպերուն, իր գործադրութիւններուն մէջ
միշտ նկատի կ'ունենայ միտք մը, առաջադրութիւն մը: Անշուշտ
ձախլիկներն ալ պակաս չեն:

Մարդոց դէմքէն առաջ, անոնց խօսքերը մտիկ ընելէ աւելի,
դիտեցէք իրենց ձեռքերը. - խօսուն են անոնք, երբ նոյնիսկ կարծր
ըլլան, երբ նոյնիսկ տխւեղ ըլլան:

Գեղեցկութիւնները, մաքրութիւնը, ապերախտութիւնը,
ստեղծագործումը, առհաւութիւնը, ոճիրը, բարեկամութիւնը,
բայց ուրացումս ալ, ձեռքերու մէջն են, հո՛ն կը գտնուին միշտ. -
հո՛ն միայն փնտռելու է: Ինչպէս նաեւ կաշառքը, տալն ու
առնելը՝ հաւասարապէս: Բոլոր ժամանակներու մէջն ալ,
մարդկութեան ամէնէն մեծ դժբախտութիւնները, չարիքները՝
աղոտոտ ձեռքերէ առաջ եկած են:

Բայց եւ դարձեալ ձեռքով է որ կը շոյեն, կը սիրեն, վեր
կ'առնեն ինկած մէկը, ձեռք կու տան մերձաւորի մը, բարեկամի
մը: Ստոյգ վեհութիւն մը կայ անշուշտ ձեռք տալուն մէջ, որպէս
ծառայութիւն, որպէս մարդկայնական զգացումի արգասիք:
Մա՛րդը միայն ձեռք ունի. անասունը՝ ոչ:

Ամենէն աւելի ձեռքին տուած վկայութիւնը, կամ հաւաստիքն է որ կը համոզէ մարդիկը՝ իրականութեան մը մասին:

Երբ հանճարե՛ղ, երբ գիտակի՛ց են ձեռքերը.- պիտի խօսին, պիտի արտայայտուին, պիտի գնահատեն, պիտի դատեն, պիտի պատժեն կամ վարձատրեն, պիտի ծանուցանեն, լոյս պիտի տան: Ձեռքերը քանդեն իսկ, պիտի շինեն ալ անպայման նո՛րը, հարազատը, իրենց հետը բարձրացնելու համար, ուրախացնելու, ժպիտ սփռելու համար է՛ւ: Ձեռքերը շատ կը սիրեն ժպիտ սփռել իրենց շուրջը, եւ ուր որ երթան:

Երբ հանճարե՛ղ, երբ գիտակի՛ց են ձեռքերը: Այն ատեն, երբե՛ք, բայց երբե՛ք անտարբեր պիտի չըլլան անոնք. իրենց բնութեան մէջ՝ բնա՛ւ չկայ անտարբեր ըլլալը: Ի՛նչ է, ի՛նչ կրնայ արժել այն ձեռքը՝ որ չի գիտեր շոյել, գնահատել, սիրել կամ պատժել: Աշխարհ մը կայ մարդուն ձեռքին մէջ: Մինչ ձեռքին աշխատանքը չի՛ սահմանուիր, չի՛ վերաբերիր իր ժամանակին միայն.- ազդեցութիւնները, դիրքերը կրնան աննախատեսելի ըլլալ՝ թէ՛ իրենց տարողութեամբը եւ թէ՛ իրենց տեւողութեամբը, միանգամայն:

Կան հրաշք ձեռքեր:

Արարչութեան մէջ, երբ մեր աշխարհին վրայ, վստահաբար ամենէն շահեկանը, ուրե՛մս, ամենէն օգտակարը՝ ո՛չ թէ մարդուն պատմութիւնն է, այլ՝ մարդոց կատարած գործերո՛ւն պատմութիւնը.- արդ, այդ գործերը մարդուն ձեռքին կը վերաբերին:

Շատ շատոնց՝ ժառանգականութիւն մը կը նկատուի մարդուն ձեռքը: Ամէն մարդ, իր իսկ ձեռքերուն կը հետելի: Եւ ամէն մարդ ունի իր հարազատ, իւրայատուկ ձեռքը, որ չի՛ փոխուիր իր էութեանը, իր իսկութեանը մէջ:

Եւ ձեռքերը իրարու չեն նմանիր երբեք: Չկայ բացառութիւն, չէ՛ եղած միլիոնաւորներու մեջէն երկու անհատ, որ բթամատի նոյնանման տիպ ունենան: Բայց ինչո՞ւ: Ձեռքերուն արարչական մեծութեան խորհուրդը կայ այս իրականութեան մէջ:

5-

Դիտա՞ճ էք:

Այո՛, դիտա՞ճ էք՝

Երբ երիտասարդ մայր մը, որ օրօրոցին մեջէն կը վերցնէ իր մանկիկը, յետոյ զայն կը տանի ուղղակի իր կուրծքը, ու, այսպէս, իր երկու ձեռքերը իրարու հետ լիովին կը շաղկապուին մանուկին վրայ:

Դիտեցի՞ք, տեսա՞ք այս ձեռքերուն զգուշութեան յուզումը, անոնց արտայայտութիւնը, այո՛, այո՛, այդ ձեռքերուն զգացած երջանկութիւնը, մայրական աստուածութիւնը:

Ես աւելին չեմ ճանչնար:

6-

Դիտելով առօրեայ իրագործումները, դիտելով նոյնիսկ պարզ առօրեան, կը զգանք որ գոյութիւն ունին դիւրագգաց ձեռքեր, իմաստուն, հաւատարիմ, գաղտնապահ, ամօթխած, դիւրախոց ձեռքեր ալ, ինչպէս եւ բարձրացող ու բարձրացնող ձեռքեր, բիրեղ, չարքաշ, երախտապարտ, լեզուանի, ճարպիկ, ճաշակի տէր ձեռքեր, շոայլ, տաքարիւն, ստեղծագործ, ճշմարիտ ձեռքեր եւս: Եւ այդ ձեռքերը կը կազմեն մարդկութեան փայլն ու յոյսերը: Այո՛, այդ ձեռքերը: Հանճարը անոնց կը վստահի, անոնց աջակցութիւնը կ'ունենայ: Անոնց շնորհիւ կը ստեղծագործէ:

Լսած եմ, լսած եք, որ կ'ըսեն աղուոր գնահատումով մը՝ «Այնքա՛ն ժպտուն, այնքա՛ն անոյշ բուժքոյր է ան, որ իր ձեռքով տուածը եթէ թոյն ալ ըլլայ, կը խմեն»:

7-

Պատմութիւնը կը յիշատակէ, թէ մարդկութիւնը ունեցած է խուլ, մունջ, կոյր մարդիկ, բայց երբե՛ք առանց ձեռքի մեծ մարդ մը:

Պէթովէն իր շատ երիտասարդ տարիքէն սկսաւ լսողութիւնը կորսնցնել, եւ գրեթէ զայն կորսնցուց իր երեսունէն յետոյ. եւ սակայն ան չդադրեցաւ իրական գլուխ-գործոցներ արտադրելէ: Յուզիչ գուգադիպութեամբ մը, Թէմէլի², ի ծնէ կոյր դաշնակահարը, ամենէն աւելի Պէթովէնի գործերը նուագելուն մէջ զարգացուց իր գործադրութիւնը, իր արահետը: Հելեն Քէլլըր խուլ, համր եւ կոյր ծնած է, բայց եւ կրցաւ սորվիլ հին եւ նոր բազմաթիւ լեզուներ, եւ ուսուցանել ալ:

8-

Եթէ արժէք մը, եթէ ոեւէ դէպք, եղելութիւն, ոեւէ երեւոյթ, կամ ոեւէ ստեղծագործութիւն գնահատելու համար իրենց բովանդակ դատողութեամբ պէտք ըլլայ կանգունի մը, կշիռքի

² George Thamalis Գահիրէ ծնած յոյն դաշնակահար (1915-1997). առաջին կոյր աշակերտն է, որ ընդունուած է Փարիզի նշանաւոր երաժշտանոցէն ներս, վկայուելով առաջին մրցանակով եւ պատուոյ գիրով, 1936-ին:

մը, կամ այլ միջոցի մը, կամ ալ ամէնէն ստոյգ եւ ամէնէն ճշգրիտ կերպի մը, ասիկա ապահովաբար պիտի ըլլայ ձեռքը:

Այսպէս, առանց ձեռքին աջակցութեան, առանց ինքնայատուկ ստորոգելիներուն, ամէն գնահատում պակասաւոր ու թերի կը նկատուի: Մինչ գնահատումի արտայայտութիւնն ալ պիտի չկրնայ ըլլալ հարազատ, պայծառ, իրա՛ւ, բայց եթէ ձեռքով միայն:

9-

Սոսկալի է կծծի ձեռքը: Անակնկալներ շատ ունի: Կարելորը իր անհաճոյ գոյութիւնը չէ, կարելորը իր սգեղ ժէսթն ալ պիտի չըլլայ, այլ կարելորը այն է, որ կ'իրագործէ այնպիսի կարգադրութիւն մը, կամ այնպիսի որոշում մը, որուն չէինք սպասեր երբեք, եւ այնպիսի պահու մըն ալ, որուն եւս չէինք կրնար սպասել եւ որ կը գերազանցէ իր նախորդները:

Կծծի ձեռքերը միայն կրնան այդ իրագործել:

10-

Ժողովրդական իմաստութիւնը իր ճշմարիտ ու պատկերաւոր մտածումները, արտայայտութիւնները ունի. կեանքէն ուղղակի վերցուած իր փորձառութիւնը հիմնական է:

«Իր ձեռքովը ըրաւ», կ'ըսէ ան, գիտե՛նք երբ: Քիչ մը այլ պարագային ալ՝ «Իր ձեռքովը փնտռեց, գտաւ» կը հաւաստէ ան. դատա՛ծ է արդէն:

«Իր ձեռքերովը շինեց» պիտի գովէ սակայն, երբ լաւ աշխատանք մը տարած է իր մէկ ծանօթը, կամ բարեկամը:

«Ուրիշին ձեռքովը գործ չի՛ տեսնուիր» կը տրամաբանէ ե՛ւ, երբ ծոյլերուն կամ անհոգ մարդոց մասին կ'արտայայտուի:

«Առաւ եւ գրպանը դրաւ. տեսա՛յ», կը վկայէ գողին ձեռքը վերյիշելով:

«Կը հնձես ինչ որ կը ցանես», կ'ըսէ իմաստունը:

«Երբ աջ ձեռքդ կու տայ, ձախը պէտք չէ իմանայ», կը յորդորէ համեստ մարդը:

«Աջովը կ'առնէ, ձախին կու տայ», կ'ըսեն կեղծաւորին ակնարկելով: Եւ տեսակը շատ է:

«Ձեռքս չէ», կ'ըսեն ինքնաբերաբար անոնք, որոնք անպայման չքմեղանք մը պիտի փնտռեն իրենց մէկ սխալին, մեղքին, կամ մոլորութեան առթիւ:

«Ձեռքիդ կը նայի միշտ», կ'ըսեն մարդիկ, երբ հասարակ, սովորական մուրացկանները չէ որ նկատի ունին, այլ Յակոբ Պարոնեանին թուած Մեծապատիւ Մուրացկանները, իրենց երփներանգ, այլազան տեսակներովը, որ մի՛շտ կ'ուզեն, որ միշտ ամէ՛ն ինչ կ'ուզեն, կը մուրան, որ ձեռքիդ կը նային պիշ-պիշ, որ լաւ գիտեն, թէ ձեռքով է որ կը տրուին արծաթը, զարդեղէնը, շքանշանը, աթոռը, բոլո՛ր զանազան բաները:

«Իր ձեռքը կապուած է», կ'ըսեն այն խեղճ մարդուն համար, որ չի՛ կրնար ազատօրէն խօսիլ, քննադատել, արտայայտուիլ, կամ ազատօրէն որոշում առնել:

«Բերանը գոցեցի». ինչքան ալ փոխաբերական իմաստով ըսուած ըլլայ այս, անշուշտ որ ամբարտաւան արտայայտութիւն մը, ամբարտաւան հաւաստում մը, ամբարտաւան վկայութիւն մը ըլլալէ չի՛ դադրիր:

«Ձեռամուխ եղաւ». իրականութեան մէջ, ձեռքին տրուած մեծ իրաւասութիւն մըն է այս. կը նշանակէ ստուգիւ, թէ ուրիշներու գործին ալ կրնայ միջամտել, իրաւաբար ըլլալ,

արդարութիւնը ճշդէլ, բաշխել, կամ գործը խառնել, խառնշտկել
ալ:

«Ձեռնունայն վերադարձաւ». ուրեմն չէ յաջողած իր
առաջադրութեան, կամ իր առաքելութեան մէջ. եւ կամ չէ կրցած
ստանալ ինչ որ իրն էր, իր իրաւունքը. կամ չէ ստացած ինչ որ
ուզած է, կամ յուսացած: Կերպով մը, ամէն պարագայի տակ ալ,
պարտուած մը: Այս իրողութիւնն ալ, ուրեմն, ձեռքով
արտայայտուած պատկեր մըն է:

«Ձեռնթափ եղաւ», կ'ըսեն անոր որ իր պարտութիւնը կը
հասկնայ, կամ իր պարտութիւնը ընդունած է:

«Իր ձեռքը առաջ չէր երթար», գնահատելու համար իր
մերձաւորին գործը: Գիտէր ճշմարտութիւնը, բայց զայն հրապա-
րակաւ յայտնելու համար «իւր ձեռքը առաջ չկրցաւ երթալ»: Շատ
դրամ ունէր եւ կ'ուզէր բարեսիրական հիմնարկութեան մը օգնել,
բայց «իւր ձեռքը առաջ չգնաց»:

Օրհնութեան բառերուն անպայման կ'ընկերանայ ձեռքին
ժեսթը, եթէ երբեք այս ժեսթը արդէն իսկ չէր սկսած աւելի առաջ:

«Տկարին միայն ձեռք կը բարձրացնէ ան» երբ կ'ըսեն, այս
կերպով արդէն իսկ կը հաւաստեն որոշ հոգեբանութիւն մը, որոշ
բնութեան մը գոյութիւնը՝ տկարին միայն ձեռք բարձրացնողին
մէջ:

Ձեռքը միայն աշխատանքի գործիք չէ: Անիկա է՝ նաեւ
աշխատանքին արտադրութիւնը, ինչպէս կը դաւանի Էնկէլս:
Մարդոց աշխատանքին եւ այս աշխատանքին իրագործումնե-
րուն հանդէպ, եւ մարդոց համար՝ ամէնէն աւելի իրականու-
թիւններ, զգացումներ, յոյզեր, միտքեր ունեցողը ձեռքն է
անկասկած:

Եթէ կարելի ըլլար մարդոց միջեւ «ձեռք ձեռքի» քալելը,
գործելը, ապրիլը: Բայց տակաւին մարդոց ձեռքերը իրար չեն

հասկնար, զիրար չեն սիրած: Մարդոց հաւաքականութիւնը՝ հակասութիւններէ կազմուած է, իրենց ձեռքերուն պատճառովը: Մարդոց ձեռքերը միշտ հինգ մատ ունին, հինգ մատներով ծնած են, բայց իրարմէ շատ ալ զանազան:

Անփոփոխելի իրականութիւնը սակայն այն է, որ ձեռք կայ գագաթը բարձրացնող, կայ եւ ձեռք, որ անդունդներուն խոր յատակը կ'իջեցնէ իր տերը:

Ես չեմ հաւատար, որ ձեռքը յեղաշրջումներու դիրաւ ենթակայ կ'ըլլայ: Կան «կարծր ձեռքեր», կան «մեղմ, փափուկ ձեռքեր», կան բարիները, չարերը, կեղծերը. կան որ ունին իրենց ինքնայատուկ ոճը, կիրքը: Մենք է որ երբեմն, գուցէ յաճախ, գուցէ շատ յաճախ իսկ, չենք իմանար ճշմարտութիւնը, անոնց պարզած երեւոյթը միայն տեսնելով:

Հին, հի՛ն արդարութիւն կը սեպեն գողին ձեռքերը կտրելը. դրամ, ապրանք, ոեւէ ինչք մը գողցողին ձեռքերը. բայց կային անշուշտ, դեռ կա՛ն եւ, ալ աւելի մանր տեսակի գողեր, որոնք անպատիժ կը մտային, կը մտան – բարոյականի, միտքի, արդարութեան, մարդոց երջանկութեան, հանգիստին, պատիւին, խիղճին գողերը, ինչքան ալ յայտնի ըլլան անոնք: Կը թուի որ ձեռք մը ուրիշ ձեռքով կտրելը, պատժելը դժուար է: Երբեմն, գուցէ առ հասարակ «ձեռքը չափ չունենար», կամ նոյնիսկ ձեռքը ի՛ր չափը չունենար. օրինակ՝ կանխակալ, նախանձ ձեռքը. ու այն ատեն, ո՛չ մէկ սահման, ո՛չ մէկ խիղճ, ո՛չ մէկ օրէնք չի յարգեր: Մինչդեռ այսօր, ոեւէ օրէնսդրութիւն չէ յաջողած այդ տեսակի ձեռքերուն դէմ ճիշդ ու արդար պատիժը տնօրինել ու գործադրել տալ. նման երկիր մը, գոյութիւն չէ ունեցած դեռ: Արդարեւ չբռնուած, չպատժուած չարագործ ձեռքերը շա՛տ աւելի են թիւով, քան բռնուածները, պատժուածները: Իրա՛ւ է, ճի՛շդ է նաեւ, որ երկար ու հասուն

ձեռքերը չեն բռնուիր, չեն պատժուիր ալ: Հիները լաւ հասկցած էին ձեռքին էական արժէքը, վարպետութիւնը, կարելիութիւնները. մարգարէ մը ըսեր է Տիրոջը. «Եթէ սուտ խօսիմ, թող ձեռքս չորնայ»: Եւ կա՛ն ալ ձեռքեր՝ որ արուեստի գլուխ գործոցներ կերտած են եւ կը կերտեն: Եւ այդ գլուխ գործոցները քանդողներ ալ կան սակայն. երկա՛ր դարերու պատմութիւնն է այս:

Ձեռքի սեղմումով մը կարելի է արտայայտել բարեկամական ջերմ զգացումներ: Ձեռքի մէկ շարժումն ալ կրնայ նաեւ արտայայտել նախանձը, ատելութիւնը. եւ ոչնչացնել հին բարեկամութիւն մը:

Ձեռքը դեկավարի իմաստով ալ կը գործածուի, իր ստորոգելիներէն շատերը նշմարել տալու համար:

Արդարեւ, այս առնչութեամբ ստեպ կ'ըսեն.- «Վարչութեան դէկը իր ձեռքը առաւ», կամ «Իշխանութիւնը իր ձեռքին մէջ կեդրոնացուց»: Եւ իրա՛ւ է, ինչե՛ր չ'ըներ ձեռքը, ինչե՛ր կրնայ ընել կամ կրնայ չընել ձեռքը. բայց, անշուշտ ո՛չ ամէն ձեռք, քանի որ անճարակն ալ կայ, տխեղծը կայ, կեղտոտն ու ամուլը կան, ինչպէս նաեւ հրաշք ձեռքը, ստեղծագործողը, շինարարը, դարման բերողը:

Միա՛լ է աւելին գիտնալ ուզելը: Դժուար է աւելին գիտնալը: Ամէն մէկուն տրուած չէ ձեռքերուն միջեւ զանազանութիւն կատարելու գիտութիւնը: Թիւով քիչ չեն անոնք՝ որ աներեւոյթ ձեռնոցներ կը կրեն. թիւով՝ իրենցմէ շատ աւելի են սակայն իրենց զոհերը, ամէն օր, հարկաւ: Երբ մարդիկ ամբարտաւան դառնան, այնքան աւելի դիւրաւ եւ այնքան աւելի ծանրապէս կը խաբուին:

Ձեռնհասը՝ կարող մարդն է:

Երկդիմի բառ չէ այս:

Ձեռքը՝ իր բարձր արժանիքներէն մին այդ բառով կ'արտայայտէ. փորձառութեան հետ՝ մասնագիտութեան իմաստն ալ կը պարունակէ ան:

Մինչ ձեռներէց գոյականը իսկոյն ցոյց կու տայ իր դրական հանգամանքը: Անշուշտ որ ամէն մարդ ձեռներէց չէ, չի՛ կրնար ըլլալ: Ձեռներէց մարդը՝ անպայման ունի ինքնավստահութիւն, որոշ գիտակցութիւն՝ շրջապատին եւ ինչքերուն մասին, արդէն շահուած փորձառութիւն մը է՛ւ:

Իսկ իր գոյութիւնը է՛ նաեւ վկայութիւն մը իր ձեռքին անհրաժեշտ ստորոգելիներուն էութեանը առնչութեամբ:

Ձեռքը՝ իր կարելորութեանը շնորհիւ, ստացած է եւ սիրտին տեղը:

Կան՝ արդարեւ «լայն» կամ «նեղ» ձեռքեր: Եւ ձեռքը մինչեւ անգամ խիղճին տեղն ալ կ'առնէ. «ձեռք տալ»ը կը նշանակէ եղբայրութիւն, բարեկամութիւն, համերաշխութիւն, այլասիրութիւն, եւ ներուժն ալ:

Իրաւ ձեռքը չի՛ բամբասեր, չի՛ գրպարտեր:

Իրաւ ձեռքը կը հաւաստէ, կը վկայէ երբ գրած է՝ հետազօտութենէ, շօշափումէ, որոշ քննութենէ՝ ետքը, իրականութիւնը: Բամբասանքը եւ գրպարտութիւնը՝ իրեն համար անմտածելի կը սեպէ. իր սկզբունքը, իր բարոյականը ունի ան. եւ չի՛ շեղիր այս մասին:

Չեմ գիտեր ինչո՞ւ կան դեռ, չեմ գիտեր ի՞նչպէս գոյութիւն առած են ու կա՞ն դեռ, բայց ե՛ւ կան ձեռքեր, անպիտան, վիժած, բիրտ, յամառ, անտրամաբան, ինքնահաւան ալ, քսու, անգոյն, անվստահելի: Այո՛, ձեռքեր կան անզգամ, ձախլիկ, սնամիտ, ստրուկ, միմոս, ապատես, հտպիտ, պոռնկագիր, տամուկ, լլկուած, բժաւոր, փակող, փակող՝ մանաւանդ աթոռի, տատանող, ապիկար:

Դեռ կան ալ ձեռքեր անզաղտնապահ, ատելավառ, գորշ, վրէժխնդիր, զարտուղի, սմբած, անհաւասարակշիռ, եւ ձեռքեր՝ որոնց վրայ ստորակայութեան բարդոյթը կը տիրէ մինչեւ իրենց մատներուն ծայրերը, ամէն ատեն, ամէն առթիւ:

Եւ երբեք պակաս չեն ու պակաս պիտի չըլլան ալ, ծուռ ծնած ձեռքեր, պառաւ ծնած ձեռքեր, ծանր ժառանգութեամբ ծնած ձեռքեր: Ձեռնածու, ինչպէս նաեւ շահամոլ, հոտած, ծակաչք, զեղծարար ձեռքեր ալ: Եւ կան ձեռքեր՝ որ կը փոխանցեն իրենց մոլութիւններն ու ախտերը: Եւ այսպէս ե՛ւ կան ձեռքեր՝ որ երբե՛մ, թերեւս յաճախ իսկ, վախ ու սարսուռ կ'ազդեն, եւ ցաւալին, բայց ամէնէն ցաւալին այն է որ ստիպուիք՝ անխուսափելի պատճառով մը, այդ ձեռքերէն մին կամ միւսը ձեր աջովը սեղմելու, հանդիպումի մը առթիւ.- վստահ եմ որ դուն ալ, թէկուզ պատահական ընթերցող, ձեռքդ երբ ետ քաշես՝ անմիջապէս եւ անպայման կը նայիս ձեռքիդ հինգ մատներուն անպակաս ըլլալը ստուգելու մտահոգութեամբ ...:

Ձեռքերուն ալ աշխարհը անհուն է: Եւ շատ բաներու հարկը կայ աշխարհի մը կերտելու համար: Մինչ ձեռքերն են որ աշխարհը կերտած են, եւ կը կերտեն այնպէս ինչպէս որ կայ ան ու պիտի ըլլայ:

Ձեռքը սկիզբ եւ վախճան է:

Կեա՛նք մը:

Ճիշդ ու ճիշդ մարդոց կեանքին պէս. անպայման, անխուսափելի կերպով:

Տաղանդաւոր, հանճարեղ ձեռքերուն գործերը կը տեսնես սակայն:

Ազգերուն, երկիրներուն տեւողութիւնն ալ՝ ձեռքերէն կախում ունի:

Մեծագոյն դժբախտութիւնը, մեծագոյն ողբերգութիւնը՝ սակայն, է՛ այն պարագան որ գոյութիւն ունեցած ըլլան, եւ դեռ գոյութիւն ունին ալ, անպիտան, չարագործ ձեռքեր, նոյնիսկ հասարակ ոճրագործութիւնները, վայրագ գազանութիւնները գերազանցող ձեռքեր, եւ որոնց գործունէութիւններն ալ տեսական ու սանձարձակ եղած ըլլան.- օրինակ՝ թուրքիան կը տեսէ տակաւին:

Արարիչին մէկ խոշոր սխալը՝ անտարակոյս:

Ո՛չ ոք պիտի կրնար բացատրել, մեկնաբանել այս պարագան, որ դարեր շարունակ գոյութիւն ունեցած է, անընդհատ տեսած է, անպատիժ տեսած է, ջարդով, թալանով, ուրիշներուն աշխատանքը շահագործելով. արարչութեան արդարութիւնը, իմաստը հերքելու երեւոյթը առնելու աստիճան:

Ո՛վ չի սարսափիր անկէ.- թէ ձեռքերը կրնան ա՛յս աստիճան բացասական, ա՛յս աստիճան մեղաւոր ըլլալ:

Բայց ձեռքը՝ մարդն իսկ է. յաւիտենական ճշմարտութիւն մը՝ իր բոլոր հակասութիւններովը:

11-

Ֆրանսացի հեղինակ մը՝ Փոլ Կիլթ, «Մեծն Գոլէթ»ին վրայ խօսելու ատեն, կը պատմէ թէ, օր մը, երբ Ոճրադատ Ատեանի մը մէջ դատի մը ներկայ են՝ այս ֆրանսուհի հոշակաւոր գրագիտուհին եւ ինք, դատական քարտուղարին ետեւը նստած, ու կը խօսէին անասունի տիպ մարդոց մասին, Փոլ Կիլթ մէկէն կը նշմարէ ամբաստանեալին գազանավայել ձեռքերը, եւ այն ատեն է որ Գոլէթ կը նայի իր ձեռքերուն եւ բարձրաձայն կը գոչէ իսկոյն.

-Ո՛չ, ո՛չ, ես պզտիկ պարտիզպանի մը ձեռքերը ունիմ:

12-

Դատի մը մէջ, իր վկայութիւնը տալու համար կանչուած անձին դատաւորը կ'ըսէ.

-Վերցուցէ՛ք ձեր աջ ձեռքը եւ երդում ըրէք որ ճշմարտութիւնը պիտի ըսէք, միա՛յն ճշմարտութիւնը:

Այսպէս, օրէնքը հանդիսաւոր ձեւ մը տալով մարդուն ձեռքին, անոր ուշադրութիւնն ալ գրաւած կ'ըլլայ երդումին կարեւորութեանը վրայ:

13-

Տա՛լ. տա՛լը՝ այո՛: Կերպով մը փոխանցել՝ մէկէն միւսին, կամ միւսներուն, առ հասարակ ձեռքով, ի՛ր ձեռքովը, ու դարձեալ առ հասարակ փոխանցել լա՛ւ բան մը. ինչպէս կ'ըսեն՝ օրինակ, հաց տուաւ, նուէր տուաւ, դարման տուաւ, ձեռք տուաւ:

Վահան Թեքեան կը յարէ՝ իր «Սէր» բանաստեղծական հատորին «Հաշուեյարդար» վերնագիրով քերթուածին մէջ, այնքա՛ն պատկերալից ու խոր շունչով.

*Հաշուեյարդար. ի՞նչ մտաց, կեանքէն ինձի ի՞նչ մտաց.
Ինչ որ տուի ուրիշին, տարօրինա՛կ, ա՛յն միայն:*

Նման հաւաստում մը իրմէ՛ ըլլալուն, չենք ենթադրեր, ի հարկ է, թէ ինքնագովութեան շեշտի մը, կամ խորհուրդի մը գոյութիւնը կը պարփակէ ան: Ամենայն դէպս, հիմնական ու մեկին կերպով իմաստալից է իր այդ նկատումը, որ պատգամ մըն ալ է, անառարկելի ու բարձր:

14-

Իր ոտքերը սկսած էին տկարանալ, հասակը իր հաւասարակշռութիւնը կորսնցնելու վրայ էր, կը տատանէր, մինչ իր աչքերն ալ տկարացած էին. կրնար դիւրաւ գետին իյնալ՝ փուճ պատճառով մը:

Իր ձեռքերը՝ սակայն, կրնային տակաւին վստահութիւն ներշնչել իրեն. գաւազան մը հայթայթեց եւ ի վիճակի էր այլեւս քալելու:

15-

Երկրորդ Համաշխարհային Պատերազմին վերջաւորութենէն քանի մը տարի ետքն էր: Կը յիշեմ, երբ նուագի վերաբերող

առևտրական ընկերություն մը՝ Ադեքսանդրիա, հրախրեց, յատուկ պայմանագրութեամբ, մեր քաղաքը նուագահանդէս մը տալու, գերմանացի հոշակաւոր դաշնակահար Ուիլեամ Քէմֆը³, - շատեր յիմարություն կոչեցին յիշեալ այս ընկերութեան ձեռնարկը՝ նիւթական յարաբերաբար խոշոր փասս մը նախատեսելով.- կ'ենթադրէին, թէ Ադեքսանդրիոյ հրեական համայնքը պիտի մերժեր գերմանացի դաշնակահարի մը նուագահանդէսին ներկայ ըլլալ:

Ադեքսանդրիոյ մեծագոյն մէկ թատերասրահին մէջ տեղի ունեցաւ այս նուագահանդէսը, եւ լեփ-լեցուն, ոտքի վրայ հանդիսականներով ալ: Աջիս, քով քովի էի յիշեալ ընկերութեան տնօրէնին հետ: Յայտագիրին վրայ, լոկ Պէթովէն կար: Ուիլեամ Քէմֆ մի միայն Պէթովէն կը մեկնաբանէ. իր մասնագիտութիւնը: Երբ այս դաշնակահարը իր յայտագիրին առաջին կտորը վերջացուց, սրահը՝ հմայուած, խանդավառ, մագնիսացած՝ որոտընդոստ ծափահարութիւններով փոթորկեցաւ իսկոյն: Եւ դեռ երկար, եւ միահամուռ եւ քիչ անգամ այսքան հիացական ծափահարութիւններ, որոնց դադարին՝ յիշեալ ընկերութեան տնօրէնը փսփսաց ականջիս.

-Չէի կրնար երբէ՛ք երեւակայել, թէ մեր վարձած այս դաշնակը այսքա՛ն սքանչելի կերպով կրնար նուագել այս իրիկուն ... ի՛նչ յաջողութիւն իսկապէս:

³ Ուիլեամ Ուալթեր Ֆրիդրիխ Քէմֆ (1895-1991) գերմանացի դաշնակահար, ուսուցիչ եւ երաժիշտ-երգահան: Իր ծրագիրներուն մէջ թէեւ միշտ կային Պախ, Մոցարտ, Շոփէն, Շուման, Լիստ եւ Պրամս, Քէմֆը յատկապէս նշանաւոր էր Պէթովէնի եւ Շուպերի մեկնաբանութեամբ, ձայնագրելով երկու երաժիշտներուն ամբողջական սոնաթները:

Եւ անմիջապէս ալ անելցուց լրջօրէն.

-Գիտէ՞ք, շատ հրէայ կայ սրահին մէջ. անո՛նք ալ ծափահարեցին, հակառակ անոր որ Ուիլեամ Քէմբֆը գերմանացի է ... այս պարագան ալ իր յաջողութիւնը կը շեշտէ ...:

Իր դրուատական արտայայտութիւնները, դաշնակահարին հանդէպ՝ անշուշտ որ ճապաղ, հասարակ պիտի գտնէի, մանաւանդ Ուիլեամ Քէմբֆին մեկնաբանական արուեստին ուղղուած ամբողջ սրահին բուն հիացումէն ետքը. բայց այս մասին երկարօրէն ալ խորհեցայ ո՛չ թէ միջնարարին պահերուն, այլ ե՛ւ նուազը մտիկ ընելու եւ սքանչացումիս աստէն:

Դաշնակը, որուն վրայ Ուիլեամ Քէմբֆ նուագեց, բեմս է, դիմացս.- առարկայ մը, անշունչ, անհոգի, որ չի զգար, չի կրնար արտայայտուիլ, որ չի կրնար շարժիլ իսկ ինքն իրեն՝ առանձին, առարկայ մը՝ մարդուն ձեռքերովը շինուած, փայտէ, կարգ մը մետաղ կտորներէ, թելերէ, լարերէ, առարկայ մը՝ զուրկ ոեւէ մասնայատուկ հրապոյրէ ալ. ոեւէ կենդանութենէ ալ. եւ սակայն երբ իր առջելը կ'անցնի յիշեալ դաշնակահարը ու կը սկսի նուագել, ան՝ այս դաշնակը հիանալիօրէն կ'արտայայտէ, կը կատարէ Պեթովէնի մը հանճարին բազմերանգ ստեղծագործական արուեստին հարագատ մեկնաբանութիւնը:

Ահա՛, ուրեմս, Ուիլեամ Քէմբֆ դաշնակահարին ձեռքերուն մատներէն ստեղծուող յուզումներուն, զգացումին, մտածումներուն, կեանքին եւ երանութեան կենդանացումը: Դաշնակը՝ հոն, կամ ամէն տեղ, առարկայ մը, ի՛ր մը պարզապէս. բայց իրա՛ւ դաշնակահարին երկու ձեռքերուն շնորհիւր կրցաւ դառնալ կեանք մը, եւ արուեստ, նրբագոյն հպումներուն արտայայտութիւններով. եւ ահա՛ ձեռքերուն հրաշքը: Դաշնակ մը՝ անշունչ կարասի, կրնայ ուրեմս մարդուն մատներուն հպումովը մեկնաբանել բոլոր հանճարեղ ստեղծագործութիւնները:

Սրահէն մեկնելու ատեն, կը մտածեմ որ այդ դաշնակը պիտի սպասէ այլ մատներու՝ արտայայտելու համար այլ հարազատութեամբ, այլ մեկնաբանութեամբ, այլ արուեստով ականջու՛ւշտ, հանճարեղ ստեղծագործութիւններ. այս՝ կախում պիտի ունենայ, ուրե՛մս, դաշնակահարին ձեռքերէն:

16-

Անկասկած իր հայրենակիցներուն գովեստը ընելու մտասուեռումովն է, որ Փոլ Վալէրի կը հաւաստէ.

-«Տրանսան ազգ մըն է, որուն մասին կարելի է ըսել, որ կերտուած է ան մարդուն ձեռքովը»:

Այս վերջին բառին ընդգծումը իրմէ է, անշուշտ շեշտը աւելի եւս ուղղակի դնելու համար իր մտածումին վրայ:

Արդարեւ, երկիր մը, ազգ մը կը կերտուին, կը յառաջդիմեն, կը զարգանան մարդու ձեռքերուն աշխատանքովը, սէրովը, գնահատանքովը, բերած ապահովութեամբը: Ազգերը, երկիրները, հայրենիքները՝ չեն ծնիր, գոյութիւն չեն առներ մէկ օրէն միւսը, այլ կը կառուցուին, կը կերտուին դարերու ընթացքին մարդուն ձեռքովը, երբ այս ձեռքին մէջ կան՝ սակայն, ոյժ, միտք, պարկեշտութիւն, զգացում, մշակոյթ, զոհողութեան ոգին ալ:

17-

Ձեռքը մաքուր, կամ աղտոտ կ'ըլլայ: Տառացի, կամ փոխաբերական իմաստով ալ: Իր փոխաբերական իմաստին մէջ, պատկեր մըն է ան, որ կը ներկայացնէ իր մարդը, իր բովանդակութեամբ:

Եւ դարձեալ ձեռքն է որ կը մաքրէ՝ պատահաբար, կամ արկածով մը աղտոտած ձեռքերը: Բայց վատ, կեղտոտ, կաշառակեր, ոճրագործ, ախտաւոր ծնած ձեռքերը չեմ մաքրուիր. կարելի չէ:

Մենք շատ լաւ կը ճանչնանք ի ծնէ ոճրագործ ձեռքերը, որ տակաւին չեն մաքրուած հակառակ դարերու հոլովումին, դժբախտաբար.- օրինակ՝ Թաւաթին⁴ եւ իրեն ցեղակից ընկերներուն ձեռքերը միշտ պիտի պահեն արիւնը, թալանին բնագործ:

18-

Մաքսիմ Կորքի կը պատմէ՝ 1924ին լոյս տեսած իր յուշերուն մէջ, «Ես ի՛նչպէս գրել սորվեցայ» վերնագիրին տակ, թէ օր մը, իր շատ երիտասարդ շրջանին, հանդիսատես եղած է իր թաղին մէկ փողոցը, թիապարտներու «կարեւոր խումբի մը շարքով ընթանալուն, շղթաներու շառաչիւնով»: Եւ կը շարունակէ պատմել.- «Կողքին, մայթին մօտիկը, երկու թիապարտ կը քալէին, իրենց ձեռքերն ու ոտքերը շղթայակապ. անոնցմէ մին՝ սարսափելի ու ժանտադէմ էր, մեծ կտրիճ մը՝ սեւ մօրուքով, ձիու աչքերով, ճակատին վրայ կարմիր խորունկ սպիռով եւ կրճատուած ականջով մը: Մայթին վրայ, զինքը դիտելով կը հետեւէի իրեն, երբ ան մէկէն ի մէկ ըսաւ ինձի բարձրաձայն եւ զուարթագին.

«-Է՛հ ուրե՛մս, մարդո՛ւկս, քչիկ մը պտոյտ ըրէ մեզի հետ:

«Ճիշդ կարծես եթէ ձեռքս բռնած ըլլայ»:

Ուրե՛մս այսպէս, ձեռքն ու ոտքը շղթայակապ թիապարտ մը «քիչիկ մը միասին քալելու» այդ առաջարկին մէջ, կարիք կը տեսնէ անվերապահ համակրութեան մը արտայայտութիւնը, եւ

⁴ Հաւանաբար՝ Թաւեաթին. Խմբ.

այս՝ «իր ձեռքը բռնած» ըլլալու տպաւորութիւնը, զգացումը ունենալու աստիճան:

Եւ առանց ընդհատելու շարունակելով իր յուշերը նոյն թիապարտին առնչութեամբ, Կորքի կը պատմէ դեռ.

«Անմիջապէս իրեն մօտեցայ»: Հսկիչ մը զիս ետ հրեց՝ հայիոյելով: Բայց եթէ զիս ետ հրած չըլլար երագի մը մէջ պատահածի պէս, ես կը հետեւէի այդ ահռելի մարդուն, ես իրեն հետեւած պիտի ըլլայի ճիշդ անոր համար որ արտասովոր մարդ մըն էր ան, ու չէր նմաներ այն մարդոց զորս կը ճանչնայի: Ի՛նչ կարեւորութիւն ունի եթէ ան սարսափելի էր եւ շղթայակապ. կը բաւէ որ ան իծի նոր կեանք մը կը բերէր»

«Երկար ատեն մը վերյիշեցի այս մարդը եւ իր քաղցր եւ գուարթ ձայնը»:

19-

Ֆրանսացի բանաստեղծուհի մը՝ Ռընէ Վիվիէն, կը հաւաստէ, թէ՛

Շօշափումի բարդ եւ հետաքրքրիւ արուեստը, կը հաւասարի

Բուրմունքներու երագին, ձայներու հրաշքին:

Շքեղ, շքեղօրէն իրական պատկերաւորումով փառաբանութիւն մը՝ ձեռքին շօշափումներուն հանդէպ, քերթողական շունչով, յղացումով:

20-

Կարելի՞ է բացատրել, թե ինչպես երկար տարիներ է ի վեր բազմաթիւ մարդիկ եւ քաղաքակրթութիւններ՝ գրիչ, վրձին, մուրճ, ասեղ, աւել, բրիչ, մանգաղ գործածած են, համեստ թէ հանճարեղ ձեռքերով, ի նպաստ թէ՛ իրենց եւ թէ՛ համայն մարդկութեան, բայց ե՛ւ տակաւին կը գտնուին եաթաղանին կառչած ձեռքեր, արիւնի եւ թալանի համար:

Զէ՞ք հաւատար: Կը չափազանցե՞մ: Բայց ահա՛ թուրքը. լա՛ւ, դժբախտաբար շա՛տ լաւ կը ճանչնաք զայն: Եւ ուրիշ շատ շատեր ալ կը ճանչնան զայն:

Առաջին Համաշխարհային պատերազմին զինադադարէն յետոյ, ո՛չ թէ ես, ո՛չ թէ ուրիշ մէկը, այլ՝ Դաշնակիցներու Բարձրագոյն Խորհուրդը կը յայտարարէ պաշտօնական կերպով, դէմ առ դէմ եկած թրքական Պատուիրակութեան եւրոպական ձեռով հագուած անդամներուն, թէ «Թուրքը մի՛ միայն քանդում բերաւ հոն ուր յաղթական էր»:

Բայց մենք՝ հայերս աւելի՛ն իսկ գիտենք. թէ թուրքը չէր կրնար բերել բայց եթէ ոչ ջա՛րդ եւ քանդո՛ւմ միայն. իր ձեռքերը շինելու, կառուցանելու, կերտելու շնորհը չունին եւ պիտի չունենան ալ. դարերու պատմութիւնը տեսաբար կը վկայէ այդ: Կը վկայէ 1915ի Մեծ Եղեռնէն առաջ, ետքը, եւ մինչեւ այսօր:

Եւ թրքական յիշեալ պատուիրակութեան անդամներուն ձեռքերը չդողդղացին՝ Դաշնակիցներուն ծանր ամբաստանութեան առաջ, ստորագրելու իսկ այդ, առանց խպնելու ալ, բայց ապահովաբար ե՛ւ շատ քիչ ատեն ետքն իսկ: Թուրքին ձեռքերը առանց արիւնի, առանց թալլելու չեն կրնար տեսել. իր ցեղին լինելիութեան պայմանը միշտ առկայ է հոն: Եւ թուրքը սկնածանք ունի այդ ձեռքերուն հանդէպ: Եւ չի՛ մոռնար երբեք

իր այս ակնածանքը ամեն ատեն յայտնաբերելու: Արդարե՛ւ, բոլոր դարերու բոլո՛ր ցեղասպաններուն ամենէն հրեշայիհին աճիւնները Պերլինէն իրենց նոր մայրաքաղաքը՝ Անգարա բերելու հոգեկան անհրաժեշտութիւնը, թուրքը չմոռցաւ: Այս առհաւական արարքը իրեն մոռցնել տուաւ սակայն, թէ այսօ՛ր ալ, այս արարքին պատճառով իսկ, մեղսակից կը նկատուի Թալաթին բոլոր ոճիրներուն: Յեղին ոռնացումը առկայ է միշտ. ժառանգութիւն մը:

Պատժական իրաւաբանութեան մասնագէտ, հոչակաւոր փրոֆ. Լոմպրոզօ կը հաւաստէ՝ իբր եզրակացութիւն իր գիտական երկարատեւ ուսումնասիրութեանց եւ քննելէ յետոյ հազարաւոր մարդկային գանկեր, թէ «ոճրագործ ծնած» արարածներ կան:

Երբեք զարմանալու չէ ուրեմն թրքական ձեռքին գործած ոճիրներուն մասին: Զարմանալի է սակայն որ այդ ձեռքը տակաւին կրնայ մարդու արիւնով շարունակել իր գոյութիւնը:

21-

Վերքերը կարելի չէ դարմանել անմաքուր ձեռքերով:

Պարագան նո՛յնն է նաեւ ընկերային, հասարակական վերքերուն, բոլոր թերիւններուն համար ալ:

Մարդուն ցաւը, մարդուն յարատեւ պայքարը՝ այս իրականութենէն ծնած են: Մարդը պիտի շուարի, պիտի ձախողի, պիտի սայթաքի, եթէ երբեք այլ ուղի ցոյց տուող ձեռքին հետեւի:

Բայց չկարծուի, թէ այս զանազանութիւնը կատարելը դիւրին է, հեշտ է:

22-

Անպայման մեկ ուղղութեամբ գործող ձեռքը չէ որ կրնայ գնահատուիլ: Ճիշդ է որ հաւասարակշռութիւնը պահողը կ'ըլլայ ան, բայց կամքը, կամ յամառութիւնը կրնայ մղիչ ոյժը կազմել այդ առնչութեամբ: Գնահատումը՝ այդ զանազանութենէն միայն պէտք է գայ.- կամքը կ'ենթադրէ, արդարեւ, ուշիմութիւն, փորձառութիւն, ինքնավստահութիւն: Այսպէս ալ, կամքի տէր եւ արդար ձեռքը՝ սպասելի է որ մէկ ուղղութիւն ունենայ:

23-

Եւ ձեռքը իր ինքնուրոյն ձեւը ունի, իր իքնուրոյն ձեւերը ունի: Ձեւը նաեւ դրամ ուզելու, դրամ ստանալու: Մուրացկանը անշուշտ որ իր ձեւը ունի բոլորովին իրեն յատուկ, ինչպէս կաշառակեր ձեռքը ունի իրը:

Եւ ձեռքը բերանին մօտն է, կամ ալ անհասանելիօրէն շատ հեռուն կը գտնուի: Ձեռքն է կերակուրը բերան տանողը, եւ շատ լաւ գիտէ, թէ ի՛նչ տեսակի կերակուրը համեղ է եւ դիւրաւ կը մարսուի, կամ ո՛ր տեսակը կրնայ զսասել: Մինչ շատ շատ բաներ կախում ունին ձեռքին ճաշակէն, ձեռքին իմաստութենէն:

24-

Երբ իր ազգակիցներովը շրջապատուած է, հայր՝ իր ձեռքին անհնազանդութիւնն ու անկարգապահութիւնը, կը շփոթէ ազատութեան կամ անկախութեան հետ:

25-

Հնագոյն Յունաստանի մէջ, մահուան դատապարտութեան պատիժ մըն ալ կայ, ըստ որուն դատապարտեալը ստիպուած էր մոլեխիւնդ կոչուող անխնայ թոյնը խմելու՝ ինքն իր ձեռքովը:

Կը խորհիմ, թէ այս մահապատիժը կրկնապէս սարսափելի ըլլալու էր.- նախ ստոյգ մահուան տեսիլքը, յետոյ՝ ինքն իր ձեռքին դահիճի հանգամանքն ու դերը տալը՝ ի՛ր իսկ անձը թունաւորելու համար:

Սոկրատ՝ նման մահապատիժի մը ենթարկուած է:

Չկարծէ՞ք, թէ մարդոց ձեռքերը նոր սկսած են նախանձ, ոխակալ, անարդար, ոճրագործ ըլլալու:

26-

Ատեն մը կայ, ո՛չ երկար ատեն, որ յարգանքի համար առաջացած տարիք ունեցողներուն ձեռքը կը համբուրէին՝ երիտասարդներ, եւ երախտապարտ մարդիկ:

Այս աջահամբոյրը կը նշանակէր նաեւ՝ պարագաներու համաձայն, համեստութեան արտայայտութիւն, հլութիւն, ներողութեան խնդրանք, սխալի մը, մեղքի մը ընդունումը, ինչպէս նաեւ զղջանքի մը խոստովանութիւնը: Ձեռքը՝ սակայն, այս ստորոգելիները գրեթէ կորսնցուցած է այսօր: Մինչ ձեւը՝ փասց որ ձեռքին համար ալ հաճելի չէր գար շատ անգամ. ոմանք արդէն ետ կը քաշէին իրենց ձեռքը:

Որոշ դասակարգի մը մէջ, սովորութիւն էր նաեւ կիներուն ձեռքը համբուրելը, եւ այս կնամեծար կենցաղագիտութիւն մը կը նկատուէր: Այլեւս ա՛ն ալ դադրած է գոյութիւն ունենալէ: Երբեք չէի սիրած կիներուն ձեռքը համբուրելու սովորութիւնը. ո՛չ թէ

չեմ սիրած կնամեծար ձեւերն ու արտայայտութիւնները. ընդհակառակն՝ այս բնագաւառին մէջ, կա՛յ կեանքին հմայքը, կայ կնոջ մը հաճոյք պատճառելու գիւտը, բայց կան նաեւ ձեռքերը՝ տգեղ ու տամուկ, բժաւոր եւ անշունչ, մինչ ներելի չի նկատուիր՝ սալօնի մը մէջ, զանազանութիւններ կատարելը անոնց միջեւ: Ամէն ձեռք նոյն հաճոյքը չի կրնար պատճառել, իսկ հաճոյքը անհրաժեշտ ալ է:

27-

Կը կարծէի, թէ ֆրանսուհիները ունին ամէնէն գեղեցիկ ձեռքերը՝ բարեձեւ եւ ներդաշնակ մատներով. բայց ետքը նշմարեցի որ Եգիպտոսի կիներուն մէջ աւելի գեղեցիկ ձեռքեր ունեցողները առաւել են:

Կիներ հասկցած ըլլալու է աղուոր, գրաւիչ ձեռքին առաւելութիւնները, որ իրենց շուրջը ցոյց տալու մտածումովս է, անշուշտ, որ յաճախակի կերպով ձեռքը դէպի վեր, իր գլուխը կը տանի, իր մազերը շտկելու պատրուակով, կամ ալ շարժումներ կը կատարէ միշտ նո՛յն նպատակով: Պարագան՝ բոլորովին իզական անմեղ պջնասիրութիւն մը կը գտնեմ ես: Եւ գիտակից ալ՝ իր ձեռքին աղուորութեանը:

28-

Տեսա՞՞ծ էք ամբոխավարի մը ձեռքերը:

Շա՛տ կայ ամբոխավար: Փողոցներուն մէջ, բեմերու վրայ՝ մանաւանդ: Մամուլին սինակներուն վրան ալ: Ամէն տեղ, ցերեկ թէ գիշեր:

Իր^օ ալ չէք տեսած անոնց ձեռքերը: Ժողովի^օ մըն ալ ներկայ չէք եղած:

Բեմին վրայ, ամբոխավարը կ'երկարէ իր աջ բազուկը ինչքան որ կրնայ, յետոյ ձախն ալ իր վկաներն են անոնք: Եւ այն ատեն, կը հաւաստէ իսկոյն. չի՛ կրնար սպասել. ճիշդը՝ կ'ուզէ իր ճշմարտութիւնները այսպէս երկու ասփերով տալ իր ունկնդիրներուն, զորս շա՛տ կը սիրէ եւ որոնց համար կրնա՛յ ամէն վայրկեան զոհուիլ, անմիջապէս որ իրեն դիմեն: Թէ ինք միայն ունի, ի՛նք միայն կը կրէ ճշմարտութիւնը, բոլո՛ր ճշմարտութիւնները:

Իր ձեռքերը մեղկ են ու չորս կողմերը դիտող: Կրցած է արտաքին ինքնայատուկ փայլ մը, քաշողականութիւն մը տալ իր ձեռքերուն: Երեւութական վարպետութիւն մը կայ հող, չեմ գիտեր ինչ մը աչքկապուկի: Ամբոխավարը միայն կեղծաւորը չէ, միայն պոռոտախօսը չէ, միայն ինքնահաւանն ալ, միայն ճամարտակն ալ չէ. ո՛չ իսկ միայն մեծամիտը.- ամէնէն աւելի՝ ծա՛փ մուրացողն է ան: Իր ձեռքերը, անհերքելի կերպով կը վկայեն այդ:

Ամբոխավարը ծափի՛ն համար կը շնչէ, բեմ կ'ելլէ. ծափին համար կ'ապրի. ծափը իր միակ զսպանակն է, իր միա՛կ տէրը, իր բովանդակ իտէալը:

Զարմանալիօրէն, մարդոց ձեռքը՝ առ հասարակ, ծափահարութեան զգացումը ունի: Որոշ տրամադրութիւն մը՝ գիտակից կամ ոչ, ծափահարելու: Իր ծափին հետեւանքը չէ որ իրեն խորհիլ կու տայ. բայց ես կը խորհիմ այս երեւոյթին առնչութեամբ, թէ ամէնէն աւելի մէկը միւսին ինքնաբերաբար հետեւելու բնութիւնն է որ տիրական կ'ըլլայ: Իսկ եթէ սրահի մը միահամուռ ծափահարութիւններէն ետքը, հոն

ծափահարողներէն մէկուն հարցնէիք իր կարծիքը, ապահովարար ան պիտի դժկամակէր իսկ արտայայտուելու ...:

29-

Մեր մէջ, շատ բան կայ քանդուելու արժանի, շատ բան՝ արմատախիլ ըլլալու: Շատ բան՝ որուն քանդումը օգտակար է: Կան շատ բաներ ալ, որոնք կոկուելու, կոփուելու, տաշուելու կարօտ են:

Այս բաներուն ցանկը երկար պիտի ըլլայ. բաներ՝ նիւթական, բարոյական, բաներ՝ միտքի, եւ բաներ՝ բարքերու ալ վերաբերեալ: Եւ շատոնց գոյ են անոնք:

Տաշելու, կոկելու, սրբագրելու կարելիութեան համար՝ անհրաժեշտ է քաջ, երկար շունչ ունեցողող գիտակից ձեռքեր ունենալ, ձեռքեր՝ որ ըլլան ե՛ւ անկախ, յանդուգն, ե՛ւ աննախապաշարեալ, զոհուող, ե՛ւ կախադան հանուիլն իսկ աչք առած, կախադան հանուիլ՝ իր ցեղակիցներէն:

30-

Ամէն ինչ արտակարգ է հայուն համար, հայուն հետ: Եւ ամէն ինչ՝ խնդիր մը: Ի՛նչ կը ներկայացնեն հայերը՝ զանազան երկիրներու մէջ տարտղնուած, արտասահման, քիչ մը ամէն տեղ, երբեմն ալ «գաղութ» կոչուող հաւաքականութիւններ կազմելով:

Եւ ձեռքը՝ որ ունին, երկար չէ. չի՛ կրնար հրահանգել, տաշել, պատժել անգամ ազգային շահերը, հաստատութիւնները

քանդողը: Իշխանութիւն չկայ իրենց ձեռքին մէջ: Անգլուխ գոյութիւններ են: Արտակարգ, բայց առկայ բան մը:

Լուծո՞ւմը այս դրութեան, այս կացութեան:

Միջոցառո՞ւմը այս դրութեան, այս վատութեան վերջ տալու:

Յարմար ձեռքը պէտք է: Իրողութիւնները նշմարող, հասկցող, օրէնքին գիտակից, օրէնքին ապաւինող անյողողող ձեռքը: Իսկ եթէ այդ ձեռքը չունինք այսօր, սկսելու է զայն պատրաստել՝ անկեղծ ու անկողմասակալ ջանքերով: Անհրաժեշտաբար: Ձեռքերն ալ պէտք ունին մղումի, սովորութեան, վարժութեան: Մեր հայկական սովորութիւնը չունին՝ յիշեալ պարագաներու մէջ շարժելու, գործելու, հետեւաբար ե՛ւ կորսնցուցած են իրենց գիտակցութիւնը, արդարութեան իրաւունքը, արդարութիւնը գործադրելու առնչութեամբ, կորսնցուցած են իրենց գլխաւոր, կենսական հանգամանքը:

Օրէնքին ձեռք երկարելը, դիմելը՝ ձեռքին բարձրագոյն յատկութիւններէն մին է, ինչպէս նաեւ իր գոյութեան, իր առաքելութեան արդար իրաւունքը, յենարանը: Մարդուն, պարկեշտ, անկաշառ, ոչ-կողմասակալ մարդուն ձեռքը՝ կը գնահատէ, կամ կը պատժէ, պարագան քննելով: Արտասահմանի մէջ, հայու ձեռքը սկսելու է այլեւս շարժելու, գործելու սովորութիւնը, վարժութիւնը ստանալու համար, եւ այն ատեն յանցագործներն ալ պիտի զգուշանային, ու ասիկա պիտի ծառայէր նաեւ վերապրումին կարելիութեան: Իսկ եթէ այդ ձեռքը ի վիճակի չէ, կամ չի՛ գիտեր դատել, կամ չի՛ կրնար դատել,- ինչ որ շատ աւելի ծանր է,- պէտք է որ, այն ատեն, հրաժարի այլեւս ամէն յուսկնութենէ, ամէն յոյսէ. այլ՝ աւելի վատ պարագայ գոյութիւն չունի:

31-

Մեծ Եղեռնին, հայոց բոլոր ինչքերը, բոլոր անշարժ կալուածները, բոլոր ընտանիքները գրաւեցին, եւ դարձան, այսպէս, անոնց բացարձակ տէրը, այլ ոճիրներ ալ գործելով հայոց անձերուն վրայ:

Ի միջի այլոց, այգի մը ունէինք մենք, Ատանա: Մնաց որ բոլոր հայերն ալ ունէին իրենց այգին: Ըստ սովորութեան, դպրոցական տարեվերջին, հայ ընտանիքները այգի կ'ելլէին, ամառը հոն անցնելու համար, եւ դպրոցական վերամուտին՝ քաղաք կը վերադառնային:

Շատ կը սիրէինք այգիի կեանքը. մեզի՝ տղայոց համար ազատութիւնը կատարեալ կ'ըլլար, արշալոյսէն մինչեւ մայրամուտ, ծառերու միջեւ, ծառերու վրայ, ծաղիկներու եւ բոյսերու հետ, աննման առատ պտուղներու հետ, կռիւ՝ դրացի տղայոց հետ, կամ միասին արշաւանք երեւակայական գազանի մը դէմ, եւ զանազան խաղեր: Իրաւէն ալ, դիւթական էին մեր այգիները: Մանաւանդ մերինը: Որուն՝ ամէն տարի, մեծ հայրս մասնաւոր խնամք կը տանէր. «Տղաս եւ թոռնիկներս պէտք է գոհ Ֆսան» կ'ըսէր, իր կարգին՝ գովողներուն: Եւ հպարտ էր մեծ հայրս իր այգիովը. եւ իրաւունք ունէր: Բազմաթիւ, շատ ծառեր կային հոն. ամէնքն ալ պտղատու, առատօրէն պտղատու. ոմանք հսկայ ալ, մանաւանդ թթենիները, թզենիները. մինչ որթատունկերը կ'ըլլային քանի մը հարիւրէ աւելի. բանջարեղէնի բոյսերէն գատ:

Տան ճիշդ դիմացը ունէինք հսկայ ծառ մը՝ բարձր ու լայն, կլորաձեւ հովանիի մը պէս տարածուած, խիտ տերեւներ ունեցող ճիւղերով, եւ որուն շուքին տակն է որ ընտանիքը կ'անցնէր իր բոլոր ցերեկները: Նաեւ բացօթեայ սալօն մըն էր

այս. հիւրերը հոն կ'ընդունուէին, հանգստաւէտ նստարաններու եւ աթոռներու վրայ. ճաշարանն ալ հոս էր: Հողը՝ բարակ աւազի պէս, կղմինտրի գոյնը ուներ, հաճելի երեւոյթով: Մեր այս կերպով մը Սալօնին սահմաններուն վրայ, զանազան ծաղիկներ կը բուսցնէի, կը տնկէի, կը խնամէի, եւ ասիկա միշտ ալ իմ աշխատանքս էր. ուրիշին թող չէի տար: Ամէն իրիկուայ դէմ կը ջրէի անպայման իմ այս ծաղկեստանս:

Քանի մը տարիէն երեք քառորդ դար անցած պիտի ըլլայ, որ մեզ արտաքսեցին մեր այս դիւթական այգիէն ալ: Ես զայն իր բոլոր մանրամասնութիւններով կը յիշեմ սակայն, եթէ բաժանումս երէկ միայն եղած ըլլար.- անմեղ յիշատակներ, անկրկնելի պահեր, բնութեան եւ մարդուն ձեռքին տուած խնամքներուն արգասիքները, սէրը՝ որ կը լսուի, կը զգացուի ամէն տեղ, հողէն, բոյսերէն անգամ, ու չեն մոռցուիր, յաճախակի կը յայտնուին, դէպի իրենց կը կանչեն, իրենց խորհուրդը կը ներկայացնեն, երբեմն կը թելադրեն ալ: Եւ այն ատեն, յիշատակը կեանքին շարունակութիւնը կը դառնայ:

Եւ պատերազմէն յետոյ, Կիլիկիոյ դուռները բացուեցան՝ հայերուս համար: Յաղթանակ մը: Մենք ալ վերադարձանք, ուրեմն, Ատանա, մեր հայրենիքը: Ուր հասնելէ քանի մը օր ետքը, ուզեցի մեր այգին այցելել. կարօտը ունէի: Ատանա՝ ապահովութիւն կար, բայց ո՛չ դուրսը, ո՛չ ալ անշուշտ հայոց այգիներուն մէջ. եւ ըսին թէ հոն բնակող ալ չկայ: Բայց եւ այնպէս, կ'ուզէի անպայման երթալ մեր այգին, զայն տեսնել անպայման, ինչ որ ալ ըլլային անապահովութեան վտանգները: Քանի մը ընկերներու հետ համաձայնեցայ. եւ գացինք առտու մը մեր՝ մեծ հօրս այգին:

Իր սահմաններուն հազիւ հասայ՝ սարսուռ մը զիս գրաւեց, տակն ու վրայ ըրաւ. անկարող էի առաջանալու. մեր այգին

աւերակ դարձած էր, եւ ես սիրելիի մը մահուան տեսքին առաջ սուգի մատնուած էի ու չէի կրնար բնորոշել իսկ զայրոյթս, վիշտս, եւ գիտնալ իմ ինչ ըլլալս անգամ:

Տունին պատերը միայն փացած են: Պատուհանները, ինչ որ փայտ է եւ երկաթ, հանուած են ու տարուած են: Չկա՛յ ծառ, չկայ ո՛չ մէկ ծառ՝ մեծ կամ փոքր: Չկա՛յ նաեւ ո՛չ մէկ որթատունկ, երբ հարիւրաւորներ էին անոնք: Ամէն կողմ՝ չոր խոտեր, չար խոտեր. աւերա՛կ. անապա՛տ:

Անյայտ եղած է ջրհորն անգամ. հետքը չկայ: Տան առջեւի հսկայ ծառն ալ կարճ կոճղ մըն է միայն, հաստամարմին, կարմիր ժայռի մը պէս, եւ տխուր, դժբախտ, սգաւոր, անպէտք:

Մեծ ու նոր սուգի օր մը եղաւ այս այցելութիւնը՝ դէպի մեր այգին: Դեռ կը յիշեմ եւ կը տխրիմ: Դեռ կը յիշեմ այսքա՛ն տարիներ ետքն ալ, եւ կ'ըմբոստանամ, եւ կը տխրիմ: Կը յիշեմ մանաւանդ ինչ որ պատահած է մեր բարի ու հսկայ ծառին, եւ մեր տանը: Ձեռք մը, թուրքի՛ն ձեռքը անոնց ալ հասած էր.- բայց թուրքին պատմութիւնը, բայց թուրքին անհատական թէ ազգային պատմութիւնը նո՛յնն է. չի՛ փոխուիր ան: Մեր շքեղ, մեր դիւթական այգին, նաեւ տունը, աւերակի, անապատի վերածած է, թալ լէլէ յետոյ ինչ որ կար հոն.- ա՛յս է թուրքին ձեռքը: Եւ այնքա՛ն՝ որ իր գոյութիւնը՝ հերքումս է արարչութեան արտայայտութեան. պիտի չուզէի անշուշտ նման մտածումի մը մեղքը գործած ըլլալ. այսուհանդերձ, եթէ երբեք թուրքին ստեղծումը դժբախտ բացառութիւն մըն է, բայց այն աստէն ալ աւելի եւս հարկ պիտի ըլլար, - չեմ գիտեր այլեւս որո՛ւ կողմէ,- անոր ձեռքը կտրելու, կամ շղթայելու՝ մի անգամ ընդ միշտ:

Կը խորհիմ, թէ կը բաւէ՛ ա՛լ. չարութեան, ոճրագործ ձեռքին գոյութիւնը վերացական անքննելի խօսքերով բացատրելու համար՝ դարձեալ աշխարհ մը մարդ խաբելու չէ:

32-

Իր «Ապրիմ-Մեռնիմ» քերթողական հատորին «Մեկնումներու Սարսափով» անուն ոտանաւորի մը մէջ, Գառնիկ Ադդարեան կը գոչէ.

*Այստեղ հունտեր կան դեռ հարուստ՝
Սերմանողի ձեռքի՛ կարօտ:*

Անշուշտ չի՛ քաւեր միայն «հարուստ» հունտեր ունենալը, այլ անհրաժեշտ է նաեւ ունենալ սերմանող ձեռքեր, աշխատող ձեռքեր:

33-

Ձեռքը չի կրնար գութի զգացումէն զերծ ըլլալ: Պիտի ինամէ, պիտի դարմանէ, պիտի շոյէ, վեր առնէ. ամէն ձեռք չի գարներ, կարծր չըլլար, ո՛չ ալ աներես, կամ կծծի: Երբեմն, իր մէջը՝ գութը տիրական իսկ է. կը ծորի ան՝ իր մատներէն: Ջարմանք պատճառելու աստիճան: Իր ներուժ մեծութիւնն է որ կրնայ արտայայտել իր չափազանցութիւնը:

Ճանչցայ ֆրանսացի մտաւորական մը, որ իր երկու թելերն ալ ամբողջովին կորսնցուցած էր պատերազմի դաշտին վրայ. սիրուն ֆրանսուհի մը՝ եւ տարիքով իրմէ բաւական աւելի երիտասարդ, հետը ամուսնացած էր, սակայն: Զիրենք յաճախ կը տեսնէի մեր պանդոկին ճաշարանին մէջ: Կերակուրի պատահները՝ կիներ կը դներ ամուսինին բերանը, ճիշդ ինչպէս մայր մը կ'ընէ իր մանկիկին հետը: Այլապէս, բնական կը թուէր իրենց կեանքը, եւ երիտասարդ կիներ կը շարունակէր զրուցել՝ միեւնոյն

ատեն կը ժպտեր, եւ ամուսինը գոհ կ'երեւար: Առանց մտածումի չէ որ կը դիտէի զիրենք: Ուշադրութիւնս կ'երթար այն ձեռքին՝ որ կերակուրի պատառներ կը դնէր պատերազմին մէջ իր երկու բազուկներն ալ կորսնցուցած զինուորականի մը բերանին մէջ, մինչ երբեմն ալ ջուրի կամ գինիի գաւաթը կը տանէր հոն: Գութը միայն կրնար այդ ձեռքը մղած ըլլալ այս առօրեայ զոհողութեան, ծառայութեան: Բայց այս գութը՝ կրնար սիրոյ զգացումը սպաննել: Ձեռքը՝ այս առթիւ, բարդ ժեսթի մը մղումը կ'արտայայտէր:

34

Արշամ Տատրեան՝ մին մեր լաւագոյն փորձագէտներէն, եթէ ոչ ամենէն իրա՛ւր, կը հաստատէ իր «Բանաստեղծին Ձայնը» անուն հատորին մէջ, 1938-ին հրատարակուած (էջ 14), թէ «Մեր մտաւորականութեան լեզուն եւ ոճը, ամենէն աւելի, մեր քաղաքական գրականութեան մէջ է որ վիպային են: Ուրեմն մեր քաղաքական մտայնութիւնն է որ ամենէն աւելի վիպային է, երբ ամենէն աւելի անիկա էր որ իրապաշտ պէտք էր ըլլար: Ամեն բանէ առաջ, հայ մտաւորականութեան ձեռքը հայերէն բառարան մը տա՛լ»:

Բայց վիպապաշտութիւնը, տակաւին մեր գրականութեան մէջն ալ, մեր հրապարակագրութեան մէջն եւս կայ: Մեր ազգային սուգերուն, տօներուն մէջն ալ. ամէ՛ն տեղ, ամէ՛ն ատեն: Վիպապաշտութիւնը հայուն կը հետեւի իր շուքին պէս: Կը թուի որ բնութեան հարց է այս՝ գուցէ: Բայց, այլեւս, մտայնութեան ալ ընդհանրացած կերպ մը:

Եւ իրականութեան մէջ, հայերէն բառարանը շատերուն ձեռքը տալու հարկը զգալի դարձած էր՝ վաղուց: Հարազատ պատկերի մը գիւտն է այս, հեղինակին կողմէ:

Ուրիշ առթիւ մը, Արշամ Տատրեան հարկը կը տեսնէ «Իրականին պայմանները ճանչնալ, ուստի միշտ զանոնք իր ձեռքին տակ ունենալ՝ իրականալիին կարելիութիւնները վիժումէ գերծ պահելու համար»: Հոս ալ, ուրե՛մս, կը շեշտուի ուղղակի եւ ապահովօրէն, ձեռքին կարելութիւնը, օգտակարութիւնը, կարելիութիւնները վիժումէ գերծ պահելու համար, այլ խօսքով՝ ստեղծագործելու համար:

35-

Մեր ներկայ ժամանակներուն, գործերուն, արտայայտութեանց մէջ՝ Արշամ Տատրեան հիմնական իրականութիւնները հասկցած մտաւորականն է. մինչ իր մտածումներն ու եզրակացութիւնները՝ թանկագին են:

Բայց, դժբախտաբար, օրինակներ, կեանքէն վկայութիւններ չի տար, չի բերեր՝ իր եզրակացութիւնները փաստելու համար: Ճիշդ է, կը սիրէ վկայութիւնը, կը հաւատայ այս մասին, բայց իր տուած վկայութիւնները՝ իրողութիւններ չեն յիշատակեր, եւ ուղղակի անուանումով չեն: Այսուհանդերձ, կը հաւատամ իր նշմարած իրականութեանց. իր ձեռքը վստահելի է, գրաւական է:

Ես կը խորհիմ, որ ո՛չ թէ Արշամ Տատրեան չի յանդգնիր, այլ գուցէ գայթակղութիւնն է որ չի սիրեր, կամ չ'ուզեր գայթակղութիւններ յարուցանել. իր ձեռքը այդքան ալ առաջ տանիլը թերեւս չի բաղձար: Արդարեւ, ինքն իսկ նշմարել կու տայ մեզի, հաւաստելով թէ՛

«... մեր մէջ, ճշմարտութիւնը, ճշմարտութիւնը խօսիլն ու խօսողը՝ գայթակղութիւններ են: Եւ ապիկա այսպէս եղած է,

ամէն անգամ որ համայնքներն, մեզի նման, համակերպած են ապրիլ միջակութեանց գերիշխանութեան ներքեւ» (Նոյեան Աղանի, Գահիրէ, 1951, հատոր 2, էջ 111-112):

Այսինքն՝ ուրե՛ս, իր եզրակացութիւնները, կարծիքները, համոզումներն ու վճիռներն իսկ կը թուին, թէ հիմնուած են դէպքերու, պատահած, պատահող, տեղի ունեցող իրողութեանց վրայ, եւ սակայն անոնք՝ առ հասարակ, մասնակի դէպքեր են, մասնակի բայց յատկանշական դէպքերէն դէպի ընդհանրական գաղափարներ կամ եզրակացութիւններ կազմելու հանգամանքը, առաջադրութիւնը չունին: Եւ չեն ունեցած:

Այսուհանդերձ, չեմ մեղադրեր զինքը: Մեր միջավայրը, մեր ազգային հաւաքական գետինը, մեր կարծրացած մտայնութիւնները, մեր դիրախոց առհաւական տրամադրութիւնները՝ շատ մը մտաւորականներու, գրողներու ձեռքերը շղթայած են բռնակալական սեղմումներով, պարագայ մը՝ որմէ շատ, շատ քիչեր կրցած են խուսափիլ երբե՛ս:

Մեր մէջ, արտասահման, իշխանութիւն չկայ, դատարան չկայ, եւ անշուշտ այս իսկ պատճառով ալ, չկայ հայ մարդուն ազատութեան, իր խղճին անկախութեան, անդորրութեան համար՝ պաշտպանութիւն:

Հայ Սփիւռքէն գատ՝ գոյութիւն չունի հաւաքականութիւն մը, երկիր մը, ուր կեդրոնացած ըլլան մերինին չափ բռնակալական սեղմումներ, գրաքննութիւն, անազատութիւն, վախ, զգուշութիւն, ինչպէս նաեւ ի յառաջագունէ մեղսակից լռութիւն՝ անգիր, անգոյ օրէնքներու ճնշումով:

Ուստի, Արշամ Տատրեանին պարագան եզական չէ. վկայ՝ իր «Բանաստեղծին Չայնը» եւ «Նոյեան Աղանի» փորձերուն հատորները, ծաւալով փոքր բայց տարողութեամբ ու իր արձանագրած ճշմարտութիւններովը՝ ծանրակշիռ, օրէնքնե-

րովը՝ թանկագին: Եւ որոնց մէջ, ան յաճախ կը գանգատի շատ մը այլ արտայայտութիւններով, ազատութեան չգոյութեանն մասնաւորապէս հայ մտքին ու խղճին համար:

36-

Իր գրականութեան, ինչպէս նաեւ անհատական խօսակցութեանց մէջ, Արշամ Տատրեան սիրած էր մեր աւանդութիւնները, կը հաւատար մեր անցեալին, որուն եւ կապուած էր. բայց ասով մէկտեղ՝ երբեք չէր խուսափեր ալ իր նշմարած սխալները, տգեղ բարքերը, փասակար երեւոյթները քննադատելէ, զանոնք սրբագրել ուզելէ, ինչքան ալ այդ թերիները մեզի եկած ըլլան անցեալէն, մեր նախորդներէն, ժառանգութեան մը պէս:

Եւ յետոյ, այս ձեւով, կ'առաջարկէր նաեւ որ մեր ներկան հասկնանք, եւ այս ներկան ըլլայ, դառնայ՝ այժմէական:

Արդարեւ, եւ այնքան իրաւացիօրէն, կը գրէ ան իր «Բանաստեղծին Չայնը» հատորին մէջ (էջ 35-36) պատգամի մը պէս.

«Այժմէականութեան վերածել մեր տառապանքը, մեր թշուառութիւնը, մեր յոյսը, մեր իրաւունքները, մեր անցեալի արժէքները, մեր սէրը, մեր հաւատքը, մեր բնութիւնը: Ու ասիկա՝ նախ քանդելու համար ինչ որ կ'այ մեր միտքին ու մեր գոյութեան մէջ իբրեւ պատրանք: Յետոյ՝ քանդելու համար շփոթութիւնն ու անիշխանութիւնը մեր մտքին ու մեր սրտին: Եւ աւելի յետոյ՝ հասկնալու համար մեր ներկան ու մեր ներկային մէջ՝ զմեզ: Եւ այս բոլորը այժմէականութեան վերածելու համար, անհրաժեշտ է, մեր ժողովուրդի՛ն, ուստի իւրաքանչի՛ր հայ անձին վրայ

կախուած սպառնալիքն ու արգելքը զգալ, բռնե՛լ ու ճանչնալ, իր անմիջական ու վշտակոծ իրականութեան մէջ»:

Անկեղծօրէն կը խորհիմ, թէ բոլորովին աւելորդ աշխատանք մը կատարած պիտի ըլլայի, եթէ երբեք ուզէի բացատրել, մեկնաբանել իր վերի տողերը. յստակ եւ լման են անոնք:

Համաձայն եմ անշուշտ իր հետը, որ հա՛րկ է «հայ անձին վրայ կախուած սպառնալիքն ու արգելքը զգալ, բռնե՛լ ու ճանչնա՛լ»: Ուստի ե՛ւ զանոնք զգալու, բռնելու եւ ճանչնալու համար, անհրաժեշտ է ունենալ նաե՛ւ արի ձեռք:

37-

Արշամ Տատրեան Գահիրէ կը բնակէր, իսկ ես՝ Աղեքսանդրիա: Երբ Գահիրէ կ'երթայի ուսուցչութիւն, անպայման կը տեսնուէինք, ինչպէս նաեւ երբ ինք Աղեքսանդրիա գար երբեմն:

Բայց կը թղթակցէինք ալ, երբ մեր հանդիպումները ուշանային: Այս ըսել ուզեցի անոր համար, որ իր նամակներուն մէջն ալ Արշամ Տատրեան անկեղծ, սրտբաց էր, եւ բարեմիտ: Ֆրանսական լիսէին մէջ գիտութեան ուսուցիչ էր:

Չեմ մոռցած իր մէկ արտայայտութիւնը՝ խոստովանութիւնը, նամակով մը: Կը գրէր, թէ ֆրանսական պետութիւնը շքանշան մը շնորհած է իրեն, ուսուցչական ասպարէզին մէջ իր կատարած ծառայութեանց համար, եւ կ'աւելցնէր նո՛յն ատեն, թէ ինք փոխանակ ուրախանալու՝ տխուր է այս առթիւ, որովհետեւ, - կ'ըսէր ան դեռ իր նամակին մէջ, - ինք պիտի նախընտրէր որ այդ գնահատումը եկած ըլլար հայկական ձեռքէ մը:

Չեմ կարծեր, որ հարկ սեպուի մեկնաբանել Արշամ Տատրեանի այս արտայայտութիւնը՝ խոստովանութիւնը, որ կը բաւէ ինքն իրեն, իր խորունկ ցաւովը լիովին հասկցուելու համար:

38-

Հայերէն լեզուին գլխաւոր եւ ինքնայատուկ կարելիութիւններէն, հարստութիւններէն մին՝ բարդ բառեր կերտելու, ստեղծելու դիւրութիւնն է:

Բայց եւ այս կարելիութիւնը, կամ այս որոշ առաւելութիւնը՝ երկսայրի է միեւնոյն աստեն: Այսինքն՝ երբ բարդ բառ յօրինողը, ստեղծողը չունի հայերէն լեզուին բնութեան հմտութիւնը, չունի գրական ճաշակ, լսողական ճաշակ, չունի ճշգրտութեան, հարազատութեան պատասխանատուութիւնը, եթէ չունի, վերջապէս, այս բոլոր պայմաններուն հանդէպ ներդաշնակութեան գիտակցութիւնը՝ այն աստեն կը ձախողի ան ողբալի կերպով: Օրինակները՝ այդ ձախողութիւններուն, կը վիստան մանաւանդ վերջին տարիներուն, մեր մամուլին մէջ, օրաթերթ եւ հատոր միասին առած, այս մասին:

Ոմանք կը կարծեն, թէ բարդ բառեր ստեղծելը՝ ինքնատպութեան կերպ մըն է, կամ օտար բառերը հայերէնի թարգմանելու լաւագոյն միջոցը: Ասկէ գատ, կը խորհին նաեւ, թէ բարդ բառը երբեմն պատկերաւոր ձեւ մըն ալ կրնայ տալ իրենց արտայայտութեան: Այս բնագաւառներուն մէջ յաջողելու համար, սակայն, սահմաններ կան, անգիր բայց անխուսափելի պայմաններ, ձեռքին զգայնութիւնը, փորձառութիւնը, մեր լեզուին միանգամայն հեզ ու խստապահանջ բնութեան

գիտակցութիւնը հա՛րկ է: Եւ այս օրէնքները մտիկ չընելը, անգոսնելը՝ առանց պատիժի տեղի չի՛ կրնար ունենալ, եւ այն ստեն, բարդ բառը վիժած դուրս կու գայ: Դայեակը՝ յղացողը, յօրինողը չէ:

Ատենէ մը ի վեր, Ամերիկա ծնած հայոց համար կ'ըսեն թերթերու մէջ.-«ամերիկածին»: Տարբերութիւն մը կ'ընէ՞, ո՛րէն կերպով տարբերութիւն մը կ'ընէ՞ եթէ ըսեն.- «Ամերիկա ծնած»: Երբէ՛ք: Բայց «ամերիկածին» բարդ բառը առնուազն վտանգաւոր հետեւանք մը կրնայ ունենալ. օրինակ՝ եթէ մէկն ալ գրէ Թուրքիա ծնած մէկու մը համար.- «թրքածին»:

Եւ այս ձեւին հետեւելով է, որ յաճախ կը գրեն նաեւ «օտարածին», - Ամերիկայէն սկսելով՝ այլ գաղութներու մէջն ալ: Ըստ իրենց՝ «օտարածին» է, օտարածին կը կոչուի այն հայը, որուն մայրը կամ հայրը օտար ազգութեան մը կը պատկանի: Արդ, այս բարդ բառը՝ իր իմաստովը, օրինական դժբախտ սխալ մըն է.- արդարեւ, օտարածինը՝ ապօրինի գաւակն է: Այսինքն՝ օտարածին կը կոչուի այն՝ որուն մայրը իր օրինական ամուսինէն դուրս մէկու մը հետ իր ունեցած յարաբերութիւններէն ունեցած է զինքը, կա՛մ ան՝ որ ծնած է իր հօրը ապօրինի յարաբերութիւններէն: Ի՛նչ ազգի ալ պատկանին՝ ուրե՛մս, այս մայրն ու հայրը:

Տխուր ու ցաւալի է այլեւս, որ ծանր, կործանարար հարուածներու կ'ենթարկուին անպատասխանատու ձեռքերու կողմէ, հայերէն շատ մը բառեր, լեզուի ամէն կանոն: Կը թուի, թէ ձեռքը, միտքը, լեզուն ա՛լ անդամալոյծ եղած են քիչ մը ամէն տեղ, մեր մամուլին մէջ:

Այսուհանդերձ, բարեբախտաբար, Սփիւռքին իրականութիւնը կը վկայէ նաեւ թէ ձեռքերէն ամէնքը չէ որ անգիտակցութենէ, սնափառութենէ, ինքնահաւանութենէ անդամալոյծ

դարձած՝ ենթակայ են անպատասխանատու արարքներու, եւ հրաժարած՝ սրբագրուելու կարելիութենէն, յամառօրէն կառ-
չելով իրենց սխալներուն:

Մարդուկ մը՝ որ երբեմն ինքզինքին թոյլ կու տար հիւրընկալ, բայց այսօր անհետացած շաբաթաթերթի մը մէջ ամբարտաւան թոնով յօդուած ստորագրելու, յանդգնութիւնը ունեցաւ, օրին մէկը, ծանօթ գրող մը անարդար ու անվայել կերպով նախատելու:

Այս վերջինը պահ մը ձայն չհանեց, ինչ որ զիս զարմացուց ալ, բայց քիչ յետոյ տուաւ իր միանգամայն հանդարտ ու ծա՛նր պատասխանը, որուն մէջ զայն որակեց նաեւ.- «Ապատես»:

Կարծեմ իր պատասխանին ուշացումը կու գար այն պարագայէն, որ նոյն երկիրը չէին բնակեր, հետեւաբար ե՛ւ գրողը շատ հաւանաբար ուզած ըլլայ իր վրայ յարձակող յօդուածագիրին առնչութեամբ տեղեկութիւններ ստանալ:

Ապատես բարդ բառը տեղին ու ճիշդ էր որակելու, պատկերացնելու համար՝ իր իրականութեանը եւ էութեանը մէջ գաճաճ մը, որ համարձակութիւնը ունեցած էր մտաւորական արժէք մը նախատելու, վրան ցեխ նետելու:

Ուրիշ մը նոր հարուստ պիտի կոչէր զայն, փոխանակ ապատեսի. բայց այս երկու որակականներն նո՛յն միտքը, նոյն խորութիւնը, յատկանշական նո՛յն ծիծաղելիութիւնը չունին հաւասար կերպով: Նոր հարուստը բացատրութեան մը, ծանօթացումի մը, զգուշաւոր նկատումի մը գոյութեան տպաւորութիւնը կը ձգէ. մինչ այլեւս հասարակ դարձած բարդ բառ մըն ալ է. օտար լեզուէ բառացի թարգմանութիւն մը եւ. ամէն մարդ ամէն ատեն զայն կ'արտասանէ եւ չի տպաւորեր ալ: Մինչդէռ ապատեսը դիպուկ որակում մըն է, դատում մը, պատկերաւոր, չափի վրայ շինուածի պէս, եւ որ կը կպի մի

անգամ ընդմիջտ իր մարդուն, բերան գոցել կու տայ ճիշդ ձեռքով մը իր ճիշդ տեղը դրուած ըլլալու հանգամանքին համար, ինչպէս նաեւ է՝ ան լրացուցիչ ներկայացում մը, երանգաւոր դիմագիծ մը տալն ալ այնպէս ինչպէս որ է. եւ աւելի կը տպաւորէ: Ամէն տեսակէտով, ամէն կողմով գոհացուցիչ, ուրե՛մս: Ապատե՛սը:

Դասը՝ լա՛ւ էր ուրե՛մս: Մանաւանդ տեղին: Այս բարդ բառը իր ճշգրտութեան համար ալ տեղին նկատուեցաւ: Բառը՝ եւ կրկնապէս սիրեցի. նախ՝ ապատեսը իր յատկանշական եւ հարազատ պատկերը ունի. յետոյ՝ խնդրոյ առարկայ եղող առթիւ ալ որոշապէս նշմարեցի որ դրա՛մս ու դիրքը՝ հայուն չեն վայելէր:

Գիտե՛մ, բայց շա՛տ լաւ գիտեմ. այդ ծանր դատումս, ոմանց հաճելի պիտի չգայ, ու հետեւաբար ե՛ւ զայն անճիշդ, անհի՛մս պիտի գտնեն. հասկնալի է, անակնկալ մը պիտի չըլլար այս՝ ինծի համար: Նոյնիսկ ապատեսներու եւ ամբոխավարներու ցեղէն դուրս գտնուողներէն ոմանք ալ, թերեւս, համաձայն չըլլան հետս, այս մասին: Բայց ինծի համար, հոս չէ կարելորդ: Կարելորդ՝ հարկ է ստուգել յիշեալ հաւասարումիս իրողութիւնը: Որովհետեւ ազգայնամոլութիւնը ժսասակար կը նկատեմ ամէն կերպով, եւ անպիտաններուն ձեռքին մէջ վատ դրօշակ մը: Ես իսկ կ'առաջարկեմ բոլոր անոնց որ այս խնդրին մէջ համաձայն չեն հետս, ես իսկ կ'առաջարկեմ ուրե՛մս ամէնէն կատարեալ եւ դիւրին միջոցը ստուգումին.- դիտեցէք ձեր շուրջը. այնքա՛ն շատ, բազմաթիւ են այլեւս ապատեսները՝ մեր օրերուն: Անշո՛ւշտ, ասոնք միշտ ալ գոյութիւն ունեցած են, բայց անոնց համար այլեւս սահման չկայ, իրենց թիւին եւ նոր համարձակութիւններուն, անընդհատ յանդգնութիւններուն պատճառովը: Դժուարը՝ կ'ըսէ Միշլէ, բարձրանալը չէ, այլ՝ բարձրանալով ինքզինքը պահելը:

Ուժեղ, արդար, անյուսահատ ձեռքերու պետքը կայ ապատեսներու ներկայութենէն զերծ պահելու համար մեր ժողովուրդը՝ որ պատուախնդիր է, որ աշխատասէր է, որուն ծոցին մէջ շքեղ եւ իրա՛ւ մարդեր ալ շատ կան: Եւ անկախաբար ալ իր այս առաւելութենէն՝ սիրելու է հայ ժողովուրդը, որովհետեւ շատ տառապած է ան: Ապատեսը նկատի չունի այս պարագան, եւ իր ամէնէն ցաւալի կերպը՝ զայն անտեսելուն մէջ կը կայանայ:

Ապատեսը հայկական շրջանակին մէջն է որ սահման չի ճանչնար. անսանձ կ'ընթանայ, կը խօսի, իր ձեռքերը շարժելէն: Մո՛ւկ է սակայն, երբ օտարներու մէջ կը գտնուի. պարագայ՝ որ զինքը աւելի եւս յստակօրէն կը բնորոշէ: Չի՛ գիտեր. այնքա՛ն ապատեսի բնութիւն առած է, իւրացուցած է, անոր հետ այնքա՛ն նոյնացած է, որ իր այլափոխումը զինքն անգամ չի գարմացներ, իր էութիւնը կը նկատէ բնական, ճիշդ, արդար, Արարչին մէկ գլուխ-գործոցը: Այս Աբիստղոմ Աղան: Ճիշդ է որ հայը չ'ընդունիր զինքը, գոր կը սեպէ անհրապոյր, անհարագատ ներկայութիւն մը. բայց ե՛ւ իր ձեռքերը բաւական ուժեղ, բաւական ազատ ալ չի նկատեր, զայն՝ այդ ապատեսը իր ծոցէն մի անգամ ընդ միշտ արտաքսելու համար:

Ուրիշ բարդ բառ մըն ալ, եւ որ այլեւս գործածական դարձած է, առիթը կու տայ իր հեղինակին տգիտութեան յամառութիւնը ցոյց տալու:

Անշուշտ յոյժ շնորհակալ սկզբունք է, աշխատանք է օտար բառերը հայերէնի թարգմանելը, վերածելն իսկ, մանաւանդ որ մեր լեզուն բարդ բառեր հեշտօրէն ստեղծելու կարելիութիւնները ունի, բայց այս կարելիութիւնները պետք է ըստ օրինի, հարագատութեամբ, անգամ բժախնդրութեամբ գործադրուին, ինչպէս նախապէս յիշատակեցի ալ: Օրինակ՝ արեւելահայերը

compositeur-ը ուղղակի կը գործածեն, կ'ըսեն՝ կոմպոզիտոր, մինչ արեւմտահայերը կ'ուզեն անպայման այս բառը հայերէնի թարգմանել ու իրենցմէ անմիտ մը զայն կը թարգմանեն՝ երգահան:

Չեղա՛ւ այս: Ո՛ր տգէտ ձեռքը, գրեց առաջինը՝ երգահանը, որպէս compositeur-ի հայերէն թարգմանութիւնը. եւ ինչպէս իրեն հետեւողներ ալ եղան անթափանցելի հլուքեամբ: Այսինքն՝ այն որ այս թարգմանութեան հեղինակը եղած է, աւելի՛ վատը, ո՛չ ալ աւելի անճիշդը չէր կրնար կատարել, ո՛չ իսկ, մանաւանդ, իրա՛ւ compositeur-ի մը ամբողջութեան գեղարուեստական, ստեղծագործական արժէքը, իմաստը աւելի պակսեցնել, նսեմացնել:

Պէթհովէն օրինակ, մէ՛կ երգ անգամ չէ «հանած», չէ յօրինած իր այնքան այլազան ու բազմաթիւ ստեղծագործութեանց մէջ: Ուստի, եթէ իրեն համար ըսէք թէ երգահան մըն է ան, իր բովանդակ ստեղծագործական արժէքը՝ իր էութեանը մէջ, ուրացած, ժխտած կ'ըլլաք բացարձակ տգիտութեամբ: Պարագան նոյնն է ուրիշ բազում compositeur-ներուն համար եւս, ինչպէս նաեւ, անշուշտ, մեր Արամ Խաչատուրեանին համար ալ: Բայց Շարլ Ազնաւուր երգահան մըն է, բառին բովանդակ առումովը: Եւ այս պարագան աւելի եւս կը հիմնէ դիտողութիւնս:

Այս առթիւ, ուրիշ կարելոր իրողութիւն (մը) եւս երեւան եկաւ: Երբ երգահան բարդ բառը՝ որպէս compositeur-ի թարգմանութիւն, բոլորովին սխալ ու անճիշդ, շատ տգիտաբոյր իսկ գտած էի, եւ երբ այս թարգմանութիւնը այլեւս գործածական ալ դարձած էր, պարագան մէկէ աւելի անգամ հրապարակաւ, մասնաւոր յօդուածներով խնդրոյ առարկայ ըրի մամուլին մէջ՝ բացատրութիւններով եւ իրական օրինակներով, եւ սակայն ո՛չ ոք ուզեց իր սխալը սրբագրել, կամ չկրկնել. անգամ անոնք, որ իրենք զիրենք compositeur իսկ կը նկատեն ...

Կը թուի թէ գրելու համար ձե՛ռք ունին. բայց ոչ սրբագրելու համար իրենց գրածը: Ուստի եւ կը տարուիմ եզրակացնելու, թէ յամառ ձեռքեր կան ... ամէն ճիւղերու մէջն ալ:

Ցաւալի է նաեւ հանդիպիլը՝ հայաստանեան մամուլին մէջն ալ, Էրգահան բառին որպէս թարգմանութիւն compositeur-ի, բայց, ճիշդը, երբեմն միայն, շատ ցանցառ կերպով:

Իսկ կա՞յ, իրականութեան մէջ, կամ կարելի՞ է ստեղծել compositeur-ին հայերէն թարգմանութիւնը: Ինչո՞ւ չէ, եթէ մէկդի դրուի անիմաստ յամառութիւնը: Մնաց որ կա՞յ արդէն, գոյութիւն ունի արդէն այդ թարգմանութիւնը, հարազատ, ճշգրիտ, ու գեղեցիկ ալ: Յօրինող կը կոչուի ան.- compositeur-ին հարազատ, ճի՛շդ թարգմանութիւնը: Ինձմէ չէ այս յօրինող բառը՝ որպէս թարգմանութիւն. տարիներ առաջ զայն կարդացած եմ մեր մամուլին մէջ, եւ երբեմն իրեն կը հանդիպիմ ալ տեղ տեղ: Չայն առաջին անգամ ըլլալով գործածողը ո՛վ եղած է չեմ գիտեր, բայց անվերապահօրէն կ'ընդունիմ որ շատ յաջող թարգմանութիւն մըն է ան, ամէ՛ն կերպով, ճիշդ՝ իր իմաստովը, ճաշակաւոր, անառարկելի, եւ վարպետ ու գիտակից արուեստագէտ միտքի մը, ձեռքի մը արգասիքը:

39-

Ֆրանսերէն doigté բառին հայերէնը չկայ: Ինչպէս նաեւ իր փոխաբերական իմաստին մէջը առած: Գոնէ եւ չեմ գիտեր: Բայց ինչո՞ւ չկայ, ինչո՞ւ չըլլար: Գուցէ հայը հինէն ի վեր doigté չէ՞ ունեցած:

Կրնայ ճիշդ ըլլալ այս ենթադրութիւնը, այս դիտողութիւնը. որովհետեւ ֆրանսերէն tact բառն եւս իր համապատասխան հայերէնը չունի, եւ այս՝ աւելի զգալիօրէն քան ինչ որ է վերի

պակասին մէջ, մանաւանդ իր փոխաբերական նշանակութեամբը:

Եւ սակայն հայերէն լեզուն ճոխ է եւ պատկերալից, զգացումներն ու մտածումները արտայայտելու իր կերպերովը, եւ ատով ալ՝ թարգմանութիւնները հարազատօրէն կատարելու, բարդ բառեր շինելու իր իւրայատուկ դիւրութեամբը: Մինչ յիշեալ ֆրանսերէն երկու բառերն ալ յաճախակի կը գործածուին մարդոց առօրեայ յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ գրաւոր բոլոր գործունէութեանց մէջ: Օրինակ՝ կ'ըսեն.- այս դաշնակահարը լաւ *doigté* ունի, բառը՝ հոս իր բուն իմաստովը առնելով: Մինչ նոյն այս բառը իր փոխաբերական առումովը աւելի յաճախ կը գործածուի, եւ ընդհանրացած է: Եւ դարձեալ օրինակով խօսելու համար՝ այս առեւտրականը, այս դիւանագէտը, այս բանագնացը, այս պատգամաւորը, այս միջնորդը՝ լաւ, կամ գէշ *doigté* ունին, կ'ըսեն, ըստ անշուշտ այսպէս արտայայտուողին դատումին:

Իսկ *tact*-ը աւելի յատկանշական իմաստ ունի իր բառացի եւ փոխաբերական նշանակութիւններովը: Իր բառացի իմաստին մէջ, ուրեմն, ան կը նշանակէ հպումի, շօշափումի զգայարանքը. եւ ասիկա ձեռքին միայն կը վերաբերի անշուշտ: Իսկ փոխաբերական իմաստովը՝ ան կը նշանակէ մտքի նրբութիւն, յարմարութեան զգացումը, միտքը: «Այս մարդը *tact* ունի», կ'ըսեն այն անձին համար որ ոչ թէ կրաւորական, ոչ իսկ տկար արտայայտութեամբ, կամ փախուստի երեւոյթով, այլ քաղաքավարական, չվիրաւորող, անգամ անուշ բառերով ու ձեւով ալ, ինչպէս նաեւ յարմար շեշտով կը յարաբերի իր խօսակիցին հետ, կը յայտնէ ինչ որ կ'ուզէ, ինչ որ մտադրած է ըսել, ինչ որ կ'առաջարկէ, եւ միտքը ունի յաջողցնելու, միշտ ու

մանաւանդ առանց ցաւցնելու իր խօսակիցը, իր ընդդիմադիրը, կամ առանց անոնց տրամադրութիւնը վրդովելու իսկ:

Մեր մէջ՝ սակայն, շատ դժբախտաբար, ո՛չ թէ միայն բառը կը բացակայի, այլ tact ըսուած շնորհն ալ: Եւ այս բացակայութիւնն է որ շատ մը վէճերու, հասարակ ու առօրեայ կոնիւնէրու, անգամ յարատեւ հակասութեան եւ թշնամութեանց ալ պատճառ կ'ըլլայ:

Այսպէս, նաեւ tact բառին հայերէնը չէ ստեղծուած ուրե՛մս, չէ թարգմանուած:

Զարմանալի է այս, բայց շատ յատկանշական ալ:

Զարմանալի՝ որովհետեւ հայկական բնութիւնը, հայ մարդը ընդհանրապէս դիւրախոց (susceptible) էակ մըն է. շատ անգամ, անտեղի կերպով կը վիրաւորուի, այսինքն մէկէն ինքզինքը վիրաւորուած կը զգայ յաճախ առանց պատճառի, շուտով կ'առնուի, «ամպէն խոնաւութիւն կ'առնէ», ինչպէս կ'ըսեն ժողովուրդին մէջ. հետեւաբար ես կը խորհիմ, թէ անհրաժեշտութիւնը զգալու էր ի՛նք ալ tact ունենալու, գոնէ զայն վաղուց հայերէնի թարգմանելու:

Ֆրանսերէն susceptible բառին հայերէն թարգմանութիւնը՝ առաջին անգամ ըլլալով ես կարդացի Արշամ Տատրեանին «Բանաստեղծին Ձայնը» հատորին մէջ: Չեմ գիտեր եթէ ուրիշներ զայն գործածած են իրմէ առաջ: Ամենայն դէպս, թարգմանութիւնը ճշգրիտ է, եւ յաջող: Արշամ Տատրեանին լաւագոյն արգասիքներէն մին է այս, բառերու թարգմանութեան մէջ:

Երկարատեւ կեանքիս մէջ, մանաւանդ երկարատեւ ասպարէզիս մէջ, խոր ցաւով ու մօտէն նշմարած եմ tact-ին բացակայութիւնը մեր առօրեային մէջ, եւ առաւելապէս դարձեալ

ասպարեզիս շնորհիւր, գործունէութեանս եւ յարաբերութիւններուս մէջ ծանօթացած եմ շատ մը օտարներու, շատ մը օտար ազգերու պատկանող փաստաբաններու թէ դատաւորներու, բոլոր աստիճաններու վրայ. եւ անխուսափելի բաղդատութիւն մը ստիպողաբար ընելով՝ միշտ գտած եմ, որ մեր բառերը, մեր խօսքերը, մեր արտայայտութիւնները, մեր ձեռքերուն ժեսթերը՝ կա՛րծր են, անվերապահօրէ՛ն կարծր, յաճախ անմիջապէս իսկ կարծր, անհրապոյր, անտաշ, փշոտ:

Չէ՞ք հաւատար:

Անկեղծօրէ՛ն չէք հաւատար:

Բայց այս մասին ռեւէ մէկը տարհամոզելու համար մէկէ աւելի, այլազան վկայութիւններու պիտի չդիմեմ: Կը խնդրեմ միայն ներկայ ըլլալ ձեր շրջանակին իսկ պարզ, կամ պատկանելի՛ ժողովներէն մէկուն, եւ անպայման պիտի նշմարեք, որ հոն տարակարծութիւնները անտեղի ու վիրաւորական եւ անօգուտ վէճերու կը փոխուին: Նոյնիսկ երբ խնդիրը բոլորովին ակադեմական, կամ բոլորովին փուճ նիւթի մը կը վերաբերի: Այս՝ միշտ տեղի պիտի ունենայ: Անպայման: Կրնաք ապահովաբար գրաւի գալ. երբե՛ք պիտի չկորսնցնէք: Կճելու մոլութիւնն ալ կայ դեռ: Իր խօսակիցը ցաւցնելու հաճոյքը, գուցէ մեծամոլութիւնը, սնափառութիւնը եւս:

Կճելը ձեռքով կ'ըլլայ, մինչ կը թուի, որ այդ ձեռքը չ'զգար այլեւս. ուստի չի՛ շօշափեր այլեւս. tact-ի պակասը: Պարագան՝ սովորական է: Գուցէ այս ալ ճնշուած մարդուն դրութիւնը ըլլայ. բառերով, խօսքով վիրաւորելը՝ տկա՛ր մարդու գործ է, տկարին ինքնապաշտպանութիւնը:

Կը խորհիմ, որ կարծուածէն շա՛տ աւելի փասս բերած է մեզի՝ մեր անհատական, ազգային, թէ քաղաքական կեանքին մէջ, tact-ին պակասը:

Պատանի թե երիտասարդ, շատ կը սիրէի մեր մամուլին մէջ երեւցած վիճաբանութիւնները կարդալ, մանաւանդ երբ անոնք ծանօթ, հոչակաւոր մարդոց ստորագրութիւնները կը կրէին: Մեր ուսուցիչները մեզի ըսած էին, թէ գաղափարներու փոխանակութենէն կը ծնի լոյսը՝ ճշմարտութեան: Ես սակայն, ո՛չ մէկ ատեն, ո՛չ մէկ նիւթի, կամ հարցի շուրջ՝ որքան ալ էապէս ակադեմական ըլլային վիճաբանութեան առարկայ եղող նիւթերը, ի՛նչ ալ ըլլային վիճողներուն պզտիկ, մեծ, կամ շողշողուն հանգամանքները, առաւել նաեւ իրենց անձնական, բարեկամական յարաբերութիւնները, սերտ կապերը, եւ ահա այս բոլոր վիճաբանութիւնները կը վերջանային սակայն միշտ փոխադարձ հակառակութեամբ, վիրաւորանքով՝ առանց բացառութեան, ու շատ յաճախ նախատական որակականներով, անվայել փոխուժներով, նոյնիսկ երբ իրենց գրաւոր երկխօսակցութիւնը սկսած ըլլար փոխադարձ յարգանքի, սիրոյ, համակրանքի, բարեկամական զգացումներու զեղուն արտայայտութիւններով, ի վերջոյ՝ հետզհետէ յանգելու համար ցկեանս ատելութեան, քինախնդրութեան: Երբ, այսօր, հաւաստումը կ'ընեն հոս այս իրողութեան, վկայութիւնս կու գայ վեց տասնեակներէ աւելի ետ տարիներէ. տիալոկներու մէջ, ժողովներու մէջ, անհատական յարաբերութեանց մէջ՝ tact-ի պակասը դեռ գոյութիւն ունի մեր բարքերուն մէջ: Ջգացումի հարց չէ միայն այս: Ձեռքը շօշափելու է, կշռելու է, չափելու է այն բառերը՝ որ պիտի արձակուին բան մը ըսելու, գաղափար մը արտայայտելու, կառուցում մը կատարելու համար: Այնքան դժուար, այնքան անսպասելի՞ է այս: Բառը գոյութիւն չունենալով հայերէնին մէջ, պիտի կարծուի անշուշտ որ բառին հանգամանքն ալ չկայ:

Եւ սակայն մշակոյթի տէր ալ է այս ժողովուրդը. ասո՛ր ալ անկեղծօրէն ու համոզումով կը հաւատամ: Թերեւս օտար տիրապետութեան երկար շրջանները աղաւաղած են մեր բնութիւնը այս աստիճան: Եղելութիւնը անկարելի չէ: Դարերու ընթացքին, իր կրած աներեւակայելի հալածանքները, անարդարութիւնները՝ հաւանաբար իր ձեռքերուն ճկունութիւնը, առաձգականութիւնը կորսնցնել տուած ըլլան, ինչպէս նաեւ իրենց շօշափելու, զգալու գիտակցութիւնը:

Ձեռքը՝ մարդն իսկ է: Մի՛շտ: Մեր մշակոյթին վրայ կոթնելով, իր ապահով հարազատութեամբ, կա՛մք ընելու է tact-ի ստորոգելիները ստանալու, խորացնելու համար:

Մեր «վարուելակերպ» բարդ բառը բաւական կրնայ մօտենալ tact բառին, առանց սակայն բոլորովին գոհացուցիչ ըլլալու: Ի հարկին, երբեմն կրնայ tact բառը թարգմանել, բայց, անշուշտ, ո՛չ ամէն պարագաներու մէջ: Արդարեւ, tact բառը՝ նուրբ ու իր իմաստին մէջ գիտակից, ազնուական հիմ մըն է, բնութիւն մը, նկարագիր մը, եւ ո՛չ թէ «կերպ» մը պարզապէս: Անշուշտ որ tact-ը իր «ձեւը» ունի. հաճոյ, փափուկ, հանդարտ, եւ կճելու, վրդովելու, վիրաւորելու միտքերէն հեռու: Մինչ վարուելակերպը՝ աւելի ձեւ է քան խորք, եւ որ կրնայ պարագային համեմատ, երբեմն նշանակել նաեւ խիստը, իր խիստ եւ անհաճոյ կերպերը, իր անհաշտ բնութիւնը:

Շատ են tact ունեցող ձեռքին առաւելութիւնները, յաջողութիւնները:

40-

Լեզուներն ալ իրենց ինքնայատուկ կեանքը ունին: Եթէ կրնան մեծնալ, զարգանալ, հարստանալ, տարածուիլ, տիրապետել, կրնան ե՛ւ տժգունիլ, թոռմիլ, հիւանդանալ, եւ մեռնիլ ալ: Ներսէն կամ դուրսէն պարտադրուած պայմաններու համաձայն: Բայց լեզուի մը գլխաւոր պայմանները՝ իր կեանքին կամ իր մահուան, աւելի ներսէն կ'ըլլան. քանի որ լեզուն՝ իր ժողովուրդէն կախում ունի: Լեզուն՝ սակայն, երբեք մէկէն, մէկ օրէն միւսը ո՛չ կրնայ զարգանալ, ո՛չ ալ կրնայ մեռնիլ.- անընդհատ հսկողութիւնը, խնամքը, հարազատութիւնը պահելը՝ լեզուն կենդանի կը պահեն, մինչ այդ ազդակներուն պակասը, կամ թուլնալը՝ զինքը դէպի անկում, յետոյ ե՛ւ մեռեալ լեզուներու դասը կը տանի:

Լեզուները բառերէ կազմուած են, հետեւաբար եւ բառերով է որ կ'արտայայտուին: Մեր միտքերն ու զգացումները, մեր իդէներն ու բողոքները, բառերով կը բնորոշուին: Բառերուն իմաստը, հարազատ իմաստը գիտնալը, յարգելը, եւ խօսելու ու գրելու ատեն այս ստորոգելիները իրագործելը՝ լեզուին իմացութիւնը ըմբռնած ըլլալու առաւելութիւնը իսկոյն ցոյց կու գայ անառարկելի կերպով:

Բառերը խաբելու, եղծելու չի՛ գար: Բառերը խաբելով խօսիլ սկսիլը՝ ճշմարտութիւնը խանգարելով եւ անորոշութեան մատնելով կը վերջանայ, եւ այս պարագային՝ ամէնէն աւելի փաստողը լեզուն կ'ըլլայ, ինչպէս նաեւ այն ձեռքը որ այդ խանգարումը իրագործած է:

Սփիւռքին մէջ՝ հայ լեզուն այս պայմաններուն տակ կը գտնուի: Եւ հո՛ւ ալ կը գտնուի մեր գլխաւոր խնդիրը: Ի՛ր մէջը, ի՛ր շուրջը: Յանցանքին, մեղքին մեծ բաժինը կ'իյնայ շարք մը մեծ

ու պզտիկ գրողներու, թերթերու մէջ եւ հաստորով ալ գրողներուն: Արդարեւ, մեր գոյատեւումը՝ հայ լեզուով կը սկսի, անով կը շարունակուի, անով ալ կը զարգանայ: Ահա՛, ուրե՛ս, իր կարեւորութիւնը, հայերէնին անհրաժեշտ կարեւորութիւնը: Ֆրանսացի գրող մը կը հաստատէ՝ իրաւամբ, թէ «լեզուն ճակատագիր մըն է»: Հայերուս համար, մանաւանդ: Ա՛լ աւելի, երբ սփի՛ւոք է մեր ճակատագիրը:

Իր կարգին՝

Յովհաննէս Թումանեան կ'ըսէ ե՛ւ.- «Մի բառ մի աշխարհ է»: Իսկ ես պիտի ուզէի աւելցնել նաեւ, թէ ամէն բառ իր աշխարհը ունի:

Արդ, Սփիւոքին մէջ, հայ գրողներէն շատերը մեր լեզուին դէմ խոշոր, վտանգաւոր սխալներ գործելու վրայ կը գտնուին առ հասարակ: Եւ այսօր աւելի քան երբեք:

Հայերէն բառերը իրենց հարազատ իմաստէն տարբեր կերպով, զարտուղի կերպով գործածուելուն մէջ՝ շատ անգամ ամբարտաւան հիմ ալ կայ: «Ես ամէն գնով պէտք է գատուիմ ուրիշներէ, ամէն առթիւ», կը մտածեն այս ամբարտաւանները: Անշուշտ որ ինքնատիպ ըլլալէ, խելացի մտածում մը ըլլալէ շատ հեռու է այս:

Ինքնահաւանութիւնը մէկ տեսակի չ'ըլլար: Մարդիկ իրենց խօսքերովը կը բնորոշուին, կը տարուին: Ո՛չ որ կրնայ մարդիկը պզտիկցնել, ո՛չ ալ մեծցնել. խօսքն է, արտայայտուած բառերն են իսկական փորձաքարը:

Լեզո՛ւն, բոլո՛ր լեզուները՝ հայերէնն ալ անշուշտ, անպայման կը ժաստուին, կը վիրաւորուին, կ'աղաւաղուին, եթէ երբեք իրենց բառերը սխալ, անտեղի կերպով գործածուին: Եւ այսպէս, ժամանակով, երանգ ու մինչեւ անգամ դէմք կը փոխեն: Մինչ տգէտ եւ հլու հետեւողներ միշտ ալ պիտի գտնուին:

Օրինակ՝ անմիտին մեկը, օրին մեկը, գործածած ըլլալու է «խիստ» բառը, առանց իր իսկական իմաստը հաշուի առնելու, եւ այլեւս յաճախ կը հանդիպինք ալ, մեր մամուլին մէջ, «խիստ ժպտուն», «խիստ գեղեցիկ», «խիստ անուշ», «խիստ զուարթ» արտայայտութեանց: Բայց եղա՞ւ այս: Չե՞ն նշմարեր իրենց հակասութիւնները.- անուշը խիստ կրնա՞յ ըլլալ, կամ խիստը անուշ կ'ըլլա՞յ: Բայց ձեռքս կրնայ խիստ կամ անուշ ըլլալ՝ պարագաներուն համաձայն:

Ատենէ մը ի վեր մեր մամուլին մէջ կը կարդամ բառերու այնպիսի գործածութիւն, որ Տոն Քիշոթական ծիծաղելիութեան կը հասնի. օրինակ՝ երբ հայկական, զո՛ւտ հայկական հաւաքոյթ մը համազգային ըլլալու հանգամանքը կ'առնէ.- որովհետեւ հաւաքոյթին մասնակցողները այլազան գաղութներէ եկած են,- զայն կ'անուանէ միջազգային, երբեմն ալ համաշխարհային. այս մասին խօսողը, ըլլայ այդ գրողը թղթակից մը, կամ ժողովական մը: Կա՞յ աւելի ծիծաղելին, ըսէ՛ք, խնդրե՛մ: Կարելի՞ է հայկական ռեւէ ընդհանուր ժողով մը «համաշխարհային սիմփոզիում» կոչել: Տոն Քիշոթն անգամ պիտի վարանէր այսքան առաջ երթալու չափազանցութենէն, ծաղրականէն: Կամ աւելի ծաղրածուն կրնա՞յ գտնուիլ: Ինչպէ՞ս չեն հասկնար համազգայինի եւ համաշխարհայինի միջեւ գտնուող տարրական եւ հսկայական ալ տարբերութիւնը, իմաստը.- այլեւս աւելորդ է, անօգուտ է բացատրելը, որովհետեւ չեն ուզեր հասկնալ, սրբագրել իրենց սխալը ...:

Այս տեսակ յամառութիւնը ես տեսայ՝ մէկէ աւելի անգամ, մօտը այն ձեռքերուն, որ աշակերտը կը շփոթեն ուսանողին հետ.- պարագան պատահեցաւ նոյնիսկ կարգ մը գրողներու, յօդուածագիրներու ստորագրութեան տակ, մեր մամուլին մէջ. տեսայ ալ Առաջնորդարանի մը մէկ պաշտօնական հաղորդա-

գրութիւնը՝ որուն մէջ կը յիշատակուի «Մանկապարտեզի ուսանողութիւնը ...»: Եւ աշակերտին ուսանող կոչողներուն մէջ դպրոցի տնօրէններ անգամ կան: Մինչ հակառակ բազմաթիւ առիթներով՝ մամուլով այս մասին արտայայտուած ըլլալուս, անոնք կը շարունակեն դեռ նման աններելի սխալը: Ինչպէս ուրիշ զարգացած լեզուներ եւս ունին աշակերտ եւ ուսանող, աշակերտը՝ այն տղայոց համար որ կը յաճախեն երկրորդական վարժարան, իսկ ուսանողը՝ անոնց համար որ համալսարան, կամ մասնագիտական էնսթիթիւ մը կը յաճախեն: Եւ երբ հայերէնն ալ ունի այս յստակ եւ որոշ զանազանութիւնը՝ ինչո՛ւ ելլել եւ այս բառերը մէկը միւսին հետ շփոթել, եւ չգործածել զանոնք իրենց ճշգրիտ իմաստովը:

Նաեւ սխալ է փրոֆէսէօրը «ուսուցչապետ» թարգմանելը: Հայաստանի մէջ բառը հայերէնի չեն թարգմանած, եւ իրաւունք ունին. կարելի չէր զայն հայերէնի թարգմանելը: Մինչ փրոֆէսէօրը ուսուցչապետ չէ. ո՛չ մէկ երկրի մէջ՝ չկայ այս:

Արդարե՛ւ, փրոֆէսէօրը ուսուցչապետ չէ, այլ՝ համալսարանի դասախօս, եւ իր այս օրինական տիտղոսը (titre) մասնաւոր պայմաններու շնորհիւ կը ստացուի:

Փրոֆէսէօրը կարելի չէ թարգմանել «ուսուցչապետ»ով, նաեւ ու մանաւանդ անոր համար որ պետ ալ չէ ան: Եթէ փրոֆէսէօրը ուսուցչապետը ըլլար, այն ատեն համալսարան մը բազմաթիւ պետեր պիտի ունենար, ինչ որ ծիծաղելի է իր մտածումին մէջն իսկ: Բայց ամէն համալսարան ունի իր պետը, ռէքթօրը, որ գլուխն է նաեւ իր հաստատութեան՝ որուն մէջ կը մտնեն փրոֆէսէօրները, ուսանողները, պաշտօնեաները, վարչական կազմը, տիսիփիւնը, եւ այս բոլորը՝ ըստ արդէն սահմանուած կարգադրութեանց եւ օրէնքներուն:

Կարելի չէ ցոյց տալ «ուսուցչապետ» մը, այս բառին, այս փշուած, այս շինծու բառին ոգիին կամ բառին իմաստովը:

Եւ երկար խորհրդածութիւններէ, քննութիւններէ ետքը՝ այն համոզումին եկայ, որ բառերուն հանդէպ իրագործուած այս այլափոխումը՝ առանց յետին նպատակի չէ կատարուած, եւ չի՛ կատարուիր: Արդարեւ, նման գործածութեան մը մէջ՝ կա՛յ մեծամտութեան, սնափառութեան յետամտումը.- միջազգայինը՝ համազգայինէն շատ աւելի բարձր է, շատ շողշողուն ալ է, նոյնպէս ուսանողը՝ աշակերտներէն, մինչ կազմել միջազգային, համաշխարհային ժողով մը, կամ անոր մասնակցիլ՝ անշուշտ որ աւելի՛ փառք է քան համազգայինի մը, ինչպէս նաեւ աւելի՛ բարձր գործ է ուսանողներու ուսում ջամբելը քան աշակերտներու ...: Այս տեսակէտիս հիմնական փաստերէն մին ալ այն է, որ երբեք, բայց երբե՛ք հակառակին պիտի չհանդիպիք ... այսինքն՝ երբեք ուսանողը աշակերտ պիտի չկոչեն, ինչպէս նաեւ միջազգային սիմփոզիումը՝ համազգային ...:

Լեզուական այս շատ տարրական ու անվիճելի սխալներուն, արտառոցութիւններուն մասին յաճախ գրած եմ, ինչպէս ուրիշներ ալ գրած են, չեմ գիտեր եթէ ոեւէ օգուտ մը կարելի եղած է ստանալ, բայց լաւ գիտեմ, որ դժբախտաբար անոնք կը շարունակեն դեռ երեւալ մեր մամուլին մէջ:

Եւ տակաւին կա՛յ ալ ուրիշ անկումային երեւոյթ մը՝ որ վերակսաւ մեր մամուլին մէջ, հին թէ երիտասարդ գրողներու կողմէ, եւ որոնց կարգին կը գտնուին նոյնիսկ հռչակաւորներ.- երեւոյթ՝ որ հոսանքի մը իրողութիւնը կրնայ այլեւս ստանալ ե՛ւ:

Այս ձգտումը պատկերներով արտայայտուելու սեթեւեթեալ (précieux) ձեւն է, եւ գրական նորութիւն մը ըլլալու առաւելութիւնը չունի անշուշտ: Արդարեւ, ան ներմուծուեցաւ Իտալիայէն Ֆրանսա 16րդ դարուն, եւ երկար չտեւեց. յաջորդ

դարուն ինքը Մոլիեռ գայն գործածողները ծաղրեց արդեն: Այս կերպին հետեւողները՝ կը յաւակնին թէ ինքնատիպ ձեւ մըն է ան, գրական գիւտերու բերում մը, եզական արտայայտութիւն մը: Ճիշդ է որ ան տուաւ ալ կարգ մը տակաւին տեւող պատկերներ, բայց իր չափազանցութեան ու ծիծաղելիութեան տանող հեշտ միջոցը՝ յաճախ տարած է նաեւ ձաբոտութիւն, անշահ, անճիշդ հետեւանքներու իրենց հեղինակները: Օրինակ՝ գիտէ՞ք ի՛նչ է «երկաթէ ձի» մը. եւ սակայն լուրջ նկատուած եւ ծանօթ հեղինակի մը գրիչէն է այս արտառոց «պատկերը» իր մէկ պատմուածքին մէջ, եւ այս պատմուածքը ամբողջովին կարդալէ ետք միայն կը հասկնաք, թէ իր «երկաթէ ձի» կոչածը պարզապէս ինքնաշարժն է ... բոլորիս գիտցած օթօմօպիլը:

Նոյն այս հեղինակը, մօտ տասնեակ հատորներու այս հեղինակը՝ չի՛ տատամսիր, ուրիշ տեղ մըն ալ, դարձեալ բառերուն իմաստը շեղել.- ուրե՛մս այցելութենէ մը մեկնելու պահուն՝ տան բարի մամիկը,- կը գրէ յիշեալ հեղինակը,- սկսեր է իր գլխուն «աղօթք թափել»: Արդ, թափելը՝ գէշ ու անհաճոյ արարք մը կը նշանակէ, մինչդեռ աղօթքը բարի, սրտէն եկող զգացումի մը արտայայտութիւնը, մաղթանքը միայն կրնայ ըլլալ:

Բայց իր հրատարակութեանց մէջ այնքա՛ն կը վիստան իր չնաշխարհիկ պատկերները, որ ակամայ կը տարուիմ դեռ մէկ երկու մէջբերութիւններ եւս կատարել՝ հոս, անոնցմէ: Կը գրէ ան, ստուգիւ, ձեռքի եւ մտքի բացարձակ հանդարտութեամբ.- «Արեւը տակաւին իր ոսկեղէն մագերը չէր սանտրած երբ բռնեցինք լեռներու ճամբան». այդ մագերը, կամ անոր նման բաներ ես չեմ տեսած արեւին վրան, ո՛չ ալ իր շուրջը, մինչեւ այսօր: Ուրիշ տեղ մըն ալ մեր հեղինակը լրջօրէն կը հաւաստէ.- «Չմտռուան հեքիաթներուն վրայ նստած կը սուրանք». Ի՛նչ սուր երեւակայութիւն ...:

Այլ գլուխ- գործոց մըն ալ նոյնէն, ու կը վերջացնեն մեջբերումներս՝ իրմէ, այսքանը բաւական սեպելով իր սեթեւեթեալ ձեռագործները դատելու համար մի անգամ ընդ միշտ: Արդարեւ, վստահ եղէք որ իրմէ է հետեւեալն ալ.

«Կատար ցնցուեցաւ: Տժգոյն ներկ մը թափեցաւ դէմքին. գլուխը՝ անօրինակ պտոյտի մը մէջ կ'ընկղմէր եւ մարմնոյն վրայ հազարաւոր ասեղներ կը մտնէին ու կ'ելլէին»:

Կատար՝ որ խղճալու է, թէ հայերէնը ...:

Ուրիշ գրող մը, վերինէն շա՛տ աւելի հռչակաւոր, ու նաեւ մեր գրողներուն ամենէն հեղինակաւորներէն մին սեպուող, իր վճիռներուն մէջ բացարձակ, խի՛ստ ալ, կը գրէ իր հերոսներէն մէկուն վրայ խօսելու ատեն, թէ ան իր «գլխարկը մազերուն դուրս եկած ճերմակին վրայ շարեց»:

Սեթեւեթեալ պատկերներ անպայման շինելու իր մոլութեանը մէջ՝ ան չէ զգուշացած, ուրեմն, կատարելու միայն եօթը բառով կազմուած իր այդ նախադասութեանը մէջ, երեք եւ աւելի ակնյայտ, պոռպոսան, հիմնական սխալներ ...:

Արդարեւ, նախ մազերուն վրայ չէ որ «կը շարեն» գլխարկը, այլ կը դնեն զայն գլխուն վրայ. իսկ աւելի ճիշդ ու հարազատ հայերէնով՝ պիտի բաւէր ըսելը.- «Իր գլխարկը դրաւ». որովհետեւ գլխարկը ուրիշ տեղ չեն դներ, այլ միայն իր գլխուն վրայ. բայց եթէ ուրիշ տեղ մը դնելու ըլլանք մեր գլխարկը, այն ատենն է որ կը յիշատակենք ա՛յդ տեղը: Յետոյ՝ այլ տարրական սխալ մըն ալ ըսելը՝ «մազերուն վրայ». երրորդ՝ գլխարկը չեն «շարեր». ստուգիւ, շարել բայը գործածելու համար, պէ՛տք է որ գոնէ երկու կամ աւելի ըլլան այդ գործողութեան ենթարկուող գլխարկները: Շարելը կը նշանակէ իրարու քովը, իրարու ետեւէ զետեղել՝ կարգով: Իր «հայերէն բացատրական բառարան»ին մէջ, ակադեմիկոս Ս. Մալխասեան շարել բային համար կը գրէ.-

«իր կողքին, կամ իրար յետեւից կարգով դարսել, շարադասել»: Եւ օրինակներ ալ կու տայ բացատրելու միտքով. «Երախաները ընկոյզները գետնի վրայ շարում են». Եւ դեռ՝ «պղինձէ ամսէները շարում էին թարաքներում»: Շարել բայը կը նշանակէ նաեւ «իրար վրայ դարսել կարգով». Օրինակ՝ «պատը երեք մեթր բարձրութեամբ շարել են»:

Նոյն այս խստապահանջ հեղինակը այլ տեղ մըն ալ կը գրէ.- «Հանդիսականները հրապարակին շուրջը միսէ պատ էին կապեր»: Անկարելի կը թուին ասոնք, շատ, շատ բարձրերէն դիտող հեղինակի մը կողմէ ... բայց իրողութիւնը ահա՛ հոս է:

Դարձեալ նո՛յն գրողէն,- նո՛յն գրողէն՝ որովհետեւ իրեն հիացողներ, հետեւողներ շատ ունի ան, որովհետեւ սեթեւեթեալ բառերն ու պատկերները իր բաւական առատ գրականութեան մէջ կը վխտան աջէն ու ձախէն,- ուրե՛մս անգամ մը եւս իրմէ մէջբերում մը կը կատարեմ, Տիգրան Երկաթին վերաբերեալ իր մէկ ուսումնասիրութենէն: Որուն մէջ կը գրէ ստուգիւ.

«Կարդացի՞ք Տիգրանին նամակները: Կ'ուզէ՞ք արգահատիլ մարդերուն վրայ որոնք քիչ առաջ թուղթին կարեցին այնքան թանգ ու նոր վերլուծութներ»:

Ե՛ս ընդգծեցի վերի կարեցին բառը:

Որովհետեւ առաջին հերթին նշմարեցիք ինձի հետ, թէ գրելը կարելի չէ փոխարինել կարել բայով, նոյնիսկ ամենադիւրահաճ փոխաբերական տրամադրութիւններու տակ: Թուղթին վրայ, «վերլուծութներ չեն կարեր», չեն կարուիր, այլ՝ թուղթին վրայ կը գրեն, կամ կ'արձանագրեն: Կա՞ր հարկը՝ բառերուն այս այլանդակ փոփոխութեան: Նոյնիսկ սեթեւեթեալ պատկերներ ստեղծելու համար, բառերը իրենց կեանքին, իրենց իմաստին, իրենց հարազատութեան մէջ չարչարելու, այլափոխելու, կամ արմատախիլ ընելու շինծու կերպերը՝ լեզուն տկարացնելու,

լեզուն շփոթութեան մատնելու, լեզուն աղաւաղելու, իր դիմագիծը արատաւորելու միայն կը ծառայէ(են), հեղինակին ինքնատիպ երեւալու ջանքը դրսեւորելէ զատ: Յիշեալ նախադասութիւնը հանելուկի մը կերպն ալ ունի:

Վերի յիշեալ հեղինակներէն զատ, ուրիշ ծանօթ, հաւնուած արձակագիր մըն ալ, չի՛ տատամսիր, իր կարգին, յաճախակի կերպով սեթեւեթեալ բառեր, պատկերներ գործածել, առանց զգուշանալու իր ընթերցողներուն հեզնանքէն: Ուրե՛ս կը գրէ ան իր մէկ պատմուածքին մէջ.

«Դրացի զանգակը, իր լեռնային բարձունքէն, առտուան թզուկ ժամերը կը գլտորէ իրարու ետեւէ – մէկ, երկու, երեք ...»:

Վերի թզուկ եւ գլտորէ բառերը ե՛ս ընդգծեցի. դիւրաւ կը հասկնաք անոնց հտպիտական երեւոյթը:

Ուրիշ ոչ նուազ ծիծաղելի նմոյշ մը նո՛յն հեղինակէն.- «Անձրելը երկար ու ցուրտ մումեր կախեց»:

Ողբա՛մ զքեզ, հայոց լեզու:

Պիտի չըսեմ, թէ վերի հեղինակները հայերէն չեն գիտեր, այլ համոզուած եմ, որ ինքնատիպ երեւալու, ուրիշներէ տարբեր բան մը ըրած ըլլալու արուեստական սին ջանքովս է որ այդ սեթեւեթեալ կերպերուն դիմած են, ինչպէս տակաւին ուրիշ շատեր կան այս միջոցին դիմող, մեր մամուլին մէջ, մեծ ու պզտիկ, հոչակով թէ տարիքով:

Բառերն են որ կը կազմեն լեզուն, ու կը կերտեն զայն: Յարմար, ճիշդ տեղին վայելուչ կերպով, ամուր կերպով բառերուն գործածումը՝ լեզուն կը ճոխացնէ, կը հարստացնէ, եւ այս աշխատանքին շնորհիւն է որ ան ի վիճակի կ'ըլլայ արտայայտելու ամէ՛ն իրականութիւն՝ իր բոլոր գեղեցկութիւններովը, եւ գեղեցիկը՝ իր բոլոր հրապոյրներովը: Բառերը՝ իմաստներ են այլեւս, եւ կարելի չէ զանոնք աղաւաղել, զոհել, կամ այլափոխել

առանց պատիժի: Վերի օրինակները՝ (հեղինակները) վստահաբար ճաշակի պակաս ալ ունեցան յօրինելու ատեն: Զգայուն, հարազատ, գիտակից, պարտաճանաչ ձեռքին ստորոգելիները պետք չէ տկարանան՝ այս մասին, ճշմարտութիւնները յայտնելու համար:

Մաքսիմ Կորքի՝ նաեւ զուտ գրական, գեղարուեստական գրականութեան տեսակետներուն մէջ բարձր հեղինակութիւն մը, կը հաղորդէ ի միջի այլոց իր փորձառութիւնը.

«Երիտասարդութեանս,- կը գրէ արդարեւ իրեն յատուկ անկեղծութեամբ,- ե՛ս ալ կը ջանայի նոր բառեր հնարել: Այս միամիտ փափաքին պատճառը կու գար փաստաբաններուն եւ դատախազներուն պերճախօսութենէն: Ասիկա զիս կը զուարճացնէր. տեսնել որ «բարի»ն եւ «չար»ը հագուած էին նմանապէս աղուոր բառերով, թէ պաշտպաններն ու ամբաստանեալները հաւասար վարպետութեամբ կը գործածէին նոյն բառացանկը: Ծիծաղելիօրէն կը տքնէի «իմ բառերս» հնարել, եւ որոնցմով ամբողջ տեսրակներ կը լեցնէի: Ասիկա «մանկութեան հիւանդութիւն» մըն էր: Օրհնեա՛լ ըլլայ իրականութիւնը, սքանչելի բժիշկ մըն է. իրեն կը պարտիմ շուտափոյթ ապաքինումս»:

Անշուշտ ամէն լեզու, ինչպէս նաեւ իր բառերը, փոփոխութեան ենթակայ են՝ ժամանակին ընթացքովը: Անխուսափելի է այս: Անհետացող ալ կայ, նոյնիսկ բոլորովին անհետացողը: Նման իրողութեանց պատճառները այլազան են. երկրին, կամ ժողովուրդին անկումը, հայրենիքին կորուստը, ժողովուրդին ճակատագրական պարտութիւնը: Բայց գրողը չէ որ ըլլալու է՝ ո՛չ մէկ ատեն եւ ո՛չ մէկ պարագային, իր մայրենի լեզուին աղաւաղումը, անկումը, կամ զեղծանումը պատրաստողը, խմորողը. գրողը՝ ընդհակառակն, պարտականութիւնը

ունի, հարազատ ձեռքով բառերուն ու լեզուական օրէնքներուն ինքնուրոյն իմաստը, գեղեցկութիւնը, ճշգրիտ բնոյթը պահելու եւ զարգացնելու համար:

41-

Տաղանդաշատ բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեան կը պատգամէ իր զմայլելի ձայնովը.

*Տուէ՛ք ինձ իմ ձեռքերը,
Եւ ես կամուրջներ կը կապեմ ձեզ համար:*

Կամուրջնէ՛ր, այսինքն՝ եղբայրութի՛ւնը, միասնականութի՛ւնը, մարդկային հաղորդակցութի՛ւնը, խաղաղութի՛ւնը: Ուրեմն այս աշխատանքին համար, իր ձեռքերը բաւական կը սեպէ. միայն թէ զանոնք իրեն տալու է, եւ ա՛յս կ'ուզէ ան:

42-

Իր «Ներաշխարհ» պոէմային մէջ, Արեւշատ Աւագեան, ձեռքերուն փառքը կ'երգէ այսպէս.

*Նրանք տաճարներ են կառուցել եւ պալատներ,
Հաց են մեկնել բոլոր սովեալներին
Եւ խաւարին դէմ կառուցուած փարոսներին նման
Տուն են կանչել մոլորեալ ճամբորդներին:
Նրանք նեցուկ են դարձել ընկնողներին,
Փշրել են կապանքներ ու շղթաներ:*

43-

Լեւոն Միրիջանեան՝ ի միջի այլոց «Երգին Հովիւր» անուն գլուխ-գործոց քերթողութեան հեղինակը, կը հաւաստէ իր «Դէպի Ծով» բանաստեղծական հատորին մէջ, թէ ճշմարտութիւնը վկայելու համար հա՛րկ է որ ձեռքը ըլլայ հզօր ու արդար՝ «Աստծոյ Աջին պէս»: Արդարեւ, սհա՛ այս մասին իր շքեղ ելոյթը.-

*Երբ օրից մի օր պէտք գար վկայել
Ճշմարտութիւնը՝ կեանքով հատուցուող,
Իմ ձեռքը՝ հզօր՝ պիտի բարձրանա՛ր ...
Լոկ ա՛յն ժամանակ կեանքս կը լինէր
Ոչ թէ ինչ որ ձեռք՝ ոսկոր ու արիւն
Այլ Ա՛ջ լիարժէք,
Հզօ՛ր եւ արդա՛ր ...
Աստծոյ Աջի պէս ...*

Այնքա՛ն հիացումով եւ անվերապահ հիացումով կ'ընդունին վերի զգացումս ու միտքը, որ պիտի չուզէի, հոս, ոեւէ՛ բառ, ոեւէ՛ մեկնաբանութիւն աւելցնել, ճշմարտութիւնը ըսելու «կեանքով հատուցուող» վկայութեան կոչուած ձեռքը Աստծոյ Աջին պէս հզօր ու արդար դաւանող տաղանդաւոր բանաստեղծին այլ վկայութիւնը ընդգծելու համար՝ իր բովանդակ գեղեցկութեամբ ու իմացութեամբը:

44

Վաղուց դասական դարձած է այն ոտանաւորը, որուն մէջ Միքայէլ Նալպանտեան կը հաւաստէ, թէ անբարբառ մանուկը իր ծնած առաջին օրէն իսկ երկու ձեռքերովը ազատութիւնը գրկէր է՝ թելերը բացած:

Թէ՛ ուրե՛ս, ձեռքով միայն կարելի է բռնել, ու գրկել ազատութիւնը: Ինչ որ ցոյց կու տայ, անգամ մը եւս, ձեռքին իմացութիւնը, կենսական անհրաժեշտութիւնը:

Նախակրթարանէն սկսած, գոց սորված ենք բոլո՛րս ալ, ազատատենջ բանաստեղծին հետեւեալ բառերը.

*Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարզելել.
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թելերով
Ազատութիւն գրկեցի:*

Հին, հի՛ն, շա՛տ հին դարերէ ի վեր մարդը պայքարած է, արիւն թափած է ազատութեան համար, զայն ստանալու համար: Վերի քերթուածով՝ բարձրագոյն իտեալ կատարումի մը կոչուած է՝ ուրե՛ս, ձեռքը, բնական, ինքնածին, անմիջական ալ ժեսթով մը.- գրկել ազատութիւնը, որ թանկ է ամէ՛ն գիտակից, ամէ՛ն մարդ արարածին համար:

45-

Կան ձեռքեր որ կը դողողան:

Կը դողողան՝ տալու կամ առնելու պահերուն: Կը դողողան՝ կեցնելու, կամ ճամբայ, կամ ուղղութիւն ցոյց տալու համար: Կը դողողան՝ դատելու, վճռելու վայրկեաններուն: Կը դողողան՝ շոյելու, կամ զարնելու ատեն: Կը դողողան՝ գնելու, կամ վաճառելու ի հաշիւ:

Բայց ինչո՞ւ կը դողողան անոնք, այդ ձեռքերը: Եւ ե՞րբ կը դողողան անոնք: Գիտէ՞ք ազդակը: Կը խորհիմ, որ ամէն մէկը իր ուրոյն պատճառը ունենալու է: Ձեռքը՝ իր տիրոջը ոճը, հոգին, բնութիւնը, էութիւնը կը ներկայացնէ – իր լինելիութիւնը:

Թուրքին ձեռքը բնա՛ւ չդողողաց սակայն, բնա՛ւ երբեք չդողողաց՝ միլիոնէ աւելի հայեր ջարդելու ատեններուն, մանուկներ, մայրեր, ծերեր խողխողելու ատեններուն անգամ՝ թուրքին ձեռքը, այո՛, չդողողաց այդ մանուկները իրենց օրօրոցներուն մէջն իսկ կամ իրենց մայրերուն ծոցին՝ սուինէ անցնելու ատեն, ինչպէս նաեւ անոնց ճիչերը լսելու ատեն եւ անոնց արիւնին ժայթքումին ի տես: Եւ դարձեալ այդ ձեռքը անշուշտ որ պիտի չդողողար ալ իր գոհերուն բոլոր ինչքերը թալլելու ատեն: Եւ այս ձեռքը – թուրքին ձեռքը – չդողողաց մինչեւ այսօր, ու չփոխուեցաւ ալ դոյզն կերպով՝ մինչեւ այսօր: Պիտի չփոխուի ե՛ւ. կարելիութեան յոյսը չի՛ տար: Դիտեցէ՛ք ոեւէ թուրքի մը ձեռքը ... ահաւո՛ր է ան՝ իր յաւետ չչորցող արիւնովը, իր ծակ աչքերովը: Դիտեցէ՛ք բոլոր թուրքերուն ձեռքերը անխտիր. դիտեցէ՛ք ամէն անգամ որ թուրք մը կը հանդիպի ձեզի, ոեւէ երկրամասի մը վրայ.- բոլորին ալ ձեռքերը իրարու կը նմանին սարսափելիօրէն:

Թուրքը յաճախ ձեռք կ'առնէ իր եաթաղանը՝ զոր միշտ ալ իր գօտիին մէջ կը կրէ որպէս իր ինքնութեան մէկ անբաժան մասը: Ուստի, իր եաթաղանը տեւականօրէն արիւնոտ է: Թուրքը՝ կը նախանձի այս եաթաղանին փառքէն: Իր առհաւական բնագոյր, իր գոյութեան իրաւունքը, իր երջանկութեան եզական ճակատագիրը՝ միշտ իր ձեռքերուն մէջ կեդրոնացած տեսաւ ան. մինչ թալանին ախորժակը պիտի հետեւէր ատոր:

Թուրքը դարերով արշաւեց՝ եաթաղանը ձեռքին, նուաճեց, տեղ-տեղ երկար ատեն Վասց ալ, տուն-տեղ եղաւ, իշխեց մշակոյթով, քաղաքակրթութեամբ, բարքերով իրմէ շա՛տ շա՛տ աւելի բարձր, անբաղդատելիօրէն աւելի բարձր երկիրներու, ոստաններու, ժողովուրդներու վրայ, զանազան կարգի յարաբերութիւններ ունեցաւ անոնց հետ, եւ տիրացաւ ամէն բանի՝ զոր մեր աշխարհը կրնայ տալ իրեն.- ընդարձակ տարածութիւններ, շքեղ քաղաքներ, երկրամասեր, հոյակապ պալատներ, կառոյցներ, դրամ, զինուորական ոյժ, արուեստի գործեր, գեղեցիկ կիներ, շողոքորթներ: Դեռ ունեցաւ այլ շա՛տ բան, ամէ՛ն բան: Բացի այն ձեռքէն, որ կ'աշխատի, կը կերտէ, կը կառուցանէ, որ կը զգայ: Որ չի՛ զարներ, որ այլասեր է: Եւ գիտէ գնահատել: Որ կրնայ մշակոյթ, քաղաքակրթութիւն ստանալ, իւրացնել, զարգացնել:

Թուրքը, արդարե՛ւ, երկա՛ր դարերու ընթացքին, այսօ՛ր ալ տակաւին, չիմացաւ իր գրաւած, իր դրացի աշխարհներուն ստեղծած իրականութիւնները, քաղաքակրթութիւնը. իր արիւնը, ժառանգութիւնը՝ ատակ չէ իրեն շնորհելու մարդկային ձեռք մը: Եւ այսպէս ալ անցան դարերը: Սուլթանութիւն, խալիֆայութիւն, կամ հանրապետութիւն՝ իրողութիւնը չփոխուեցաւ. ձե՛ռքը չէ փոխուած. բնագոյր չէ՛ փոխուած: Այս ձեռքը եաթաղանով սկսած է իր արշաւը. այսօ՛ր ալ զայն գործածել գիտէ միայն, մինչ առանց

եաթաղանի իր գոյութիւնը՝ պակասաւոր, թերի պիտի սեպէր: Թուրքին ձեռքը չի՛ դողողար. չէ դողողած երբեք: Իր ձեռքը արարչութեան մեղքը կը կազմէ:

46-

Ցաւալի է, բայց իսկապէս ցաւալի, որ Սողոմոն Թէիլիբեանին աջ ձեռքը քանդակող հայ արուեստագէտ մը գտնուած չըլլայ.- արտայայտիչ, խօսուն, ուժեղ, պատուախնդիր էր այս ձեռքը, որ հայուն անունը բարձրացուցած, եւ որ արդէն պատմական վկայութիւն մը դարձած էր: Իրա՛ւ, ճշգրի՛տ, արդա՛ր, ստո՛յգ ձեռք մը՝ Թէիլիբեանինը: Այս ձեռքին քանդակը՝ շնորհակալութեան, երախտագիտութեան վկայութիւնը պիտի ստանար մեր բոլո՛ր սերունդներուն կողմէ, վստահաբար, բայց չեղաւ: Եւ շատ բան կորսնցուցինք:

Արդարե՛ւ:

Շատ բան կորսնցուցինք արդարեւ. այդ փառայեղ ձեռքը, այդ անգուգական ձեռքը՝ որ բարձրէն զարկաւ, որ ճի՛շդ զարկաւ յանուն բոլո՛ր հայերուն, որ լա՛ւ զարկաւ՝ պատժելու համար աշխարհի ամենամեծ, ամենագագանաբարոյ ոճրագործը, եւ մեզ բարձրացնելու համար ալ մեր ազգային արժանապատուութեան մէջ, ե՛ւ աշխարհին հանդէպ, ինչպէս նաեւ մեր մարդկային իրաւունքները վերստանալու համար:

Այս գիտակից, այս արդար Աջին արձակած գնդակը՝ ահա՛ չի վրիպեցաւ. չէր կրնար վրիպիլ: Աւելի արդարը, գոյութիւն չունի:

47-

Մեր միանգամայն զգայուն եւ իրատես բանաստեղծը՝ Վահան Թեքեան կը հաւատայ, թէ ձեռքերը միայն փափուկ աղուորութիւն չեն, այլ ե՛ն նաեւ ոյժ, ու կրնան տանիլ յաղթանակի, ինչպէս նաեւ ազատութեան:

Իր «Հայերգութիւն» անուն բանաստեղծական հատորին մէջ, «Որբերու Ձեռքերը» խորագիրով քերթուածին մէջ, հաւաստելով անոնց ձեռքերուն մասին՝ կը յարէ բարձրագոյն իմաստով.

*Անոնք երբեմնն այստեղ կը խրլըրտին գաղտնապէս,
Անոնք բրռունցք կ'ըլլան մերթ, կը զարնըւին իրարու,
Կ'ըլլան դրօշակ, կը բացուին Յաղթանակին վագելու:*

48-

Վահան Թեքեան կը տեսնէ՝ ձեռքին ստորոգելիներու շարքին, նաեւ միտքն ու հաւատարիմ յիշողութիւնը: Վեր կ'առնէ, արդարեւ, իր «Մեր» հատորին «Ատենօք» խորագիրով քերթուածին մէջ, ձեռքին հարազատօրէն պահած յիշատակը.

*... կը յիշե՞ս ձեռքդ այն գիշեր, այնտե՛ղ, դարձին այգիէն,
Մէջքիդ վրրայ, ձեռքիս տակ թռչունի պէս դողացող ...*

.....
Այդ փափուկ պահը կեանքիս մէջ կը Վսա՛յ տակաւին:

49-

Բառին բազմազան ու լաւագոյն առումովը, մեր նուրբ եւ հարազատ բանաստեղծը, մեր վարպետը՝ Աւետիք Իսահակեան վստահութեամբ կը հաւատայ, թէ ձեռքը կրնայ դարմանել վերքը, գուցէ ե՛ւ բոլոր վերքերը: Ուստի ե՛ւ կ'ողբայ՝ խոստովանանքի մը երեւոյթովը, թէ՛

Մէկը չեղաւ, որ իմանար վշտերս

Քնքուշ ձեռքով դարման անէր վերքերիս:

Մինչ իր մէկ այլ քերթուածին մէջ, ձեռքին բովանդակ փառքը հիւսելու համար՝ Իսահակեան կ'ուզէ «սուրբ համբոյրով» միայն փայփայել «նրա ձեռները»: Ահա՛ իրմէ՛ այս մասին երկու տող, այդ քերթուածէն.

Թւում է ինձ, որ սուրբ համբոյրով

Ես փայփայում եմ ձեռները նրա:

50-

Շրջահայեաց էր, եւ միշտ բարեացակամ:

Անպակասօրէն ժպտուն՝ մեղմ ու գրաւիչ:

Շուտափոյթ եւ ինքնեկ ծառայութեամբ այ:

Միշտ շուտափոյթ եւ բարեկամուհի:

Անշեղ հրապոյրով բարեկամուհի մը:

Իրմէ չլսեցի ո՛չ մէկ ատեն, ո՛չ մէկուն դէմ, չար, անտեղի, կամ նախանձ խօսք մը:

Եւ բարի սիրտ: Միշտ բարի: Ո՛չ թէ անձնական կարծիք, ո՛չ թէ անձնական ինքնուրոյն դատում չունէր մարդոց եւ շատ մը բաներու, շատ մը խնդիրներու առնչութեամբ. իր արդարասիրտութիւնը զգալի էր:

Իր գրեթե մանկական երեւոյթով բառերն իսկ, թոյլ չէին տար իր ուշիմութեանը մասին կասկածուէր՝ իր շրջանակին մէջ: Այլ ատիկա կ'աւելցնէր իր խօսքին հմայքը:

Եւ կիրթ՝ առանց կամակոր ըլլալու:

Եւ իր այս կերպը՝ երբեք չփոխուեցաւ. շարունակուեցաւ միշտ առանց ունէ ելեւէջի:

Միջահասակէն վեր, յամեցող երիտասարդութիւն, եւ բարեձեւ մարմին: Մինչ վստահելի, զուսպ ճաշակով կը հագուէր:

Իր ներկայութիւնը հաճոյք կը պատճառէր ամէնուն: Չեմ գիտեր անուշ ինչ մը կ'արձակուէր իր ամէն մէկ ժպիտէն, խօսքէն, հեշտ ձեւերէն. իր անձէ՛ն:

Քիչեր պիտի կրնային իրեն հաւասարիլ՝ իր բնութեանը, իր անմիջական քաղցր արտայայտութեան հետ:

Եւ խելացի՝ իր շարժումներուն մէջ եւ իր խօսակցութեան ճիշդ տեղին գործածուած բառերուն համար:

Եւ ես կը մտածէի, թէ շա՛տ աւելին ալ պիտի կրնար ըլլալ ան:

Երբե՛ս կ'ուզէի հասկնալ՝ ես ինձի, թէ ինչո՛ւ յաւակնոտ չէր: Եւ ո՛չ ալ հպարտ: Միշտ անուշութիւն մը կար իր անձին մէջ, արեւածագին լոյսերուն պէս:

Բայց չէի սիրած իր ձեռքերը:

Հարկ է ըսել այս:

Անոնք ներդաշնակ չէին իր անձին հետ: Զգալի՛ կերպով: Ներդաշնակ չէին անոնք՝ մանաւա՛նդ իր անձին հետ: Հակասութեան մը պէս:

Չէի հաւատար ես իմ աչքերուս: Տպաւորութիւնը առկայ էր սակայն:

Շա՛տ իրաւ կ'ըսեմ:

Չէի կրնար ընդունիլ, որ այդ ձեռքերը ունենար ան: Բայց ի՛նչ կարեւորութիւն: Ո՛չ: Երբե՛ք չէի կրցած անտարբեր ըլլալ:

Ես անպակաս կը նայիմ՝ կը դիտեմ խօսակիցիս, բարեկամուհիներու ձեռքերը:

Անխտի՛ր:

Ինչո՞ւ իր այդ ձեռքերը աններդաշնակ էին իր անձին ժպտուն բովանդակութեան մէջ, իր անձին հրապուրիչ բովանդակութեան հանդէպ:

Ինչո՞ւ ունենար ան այս աններդաշնակ ձեռքերը:

Եւ կը սիրէին զինքը: Ճի՛շդ էր այս, արդա՛ր էր այս. յաճա՛խ նշմարած եմ:

Եւ երբե՛մս իմ կողմէս իմ մէջս վերապահութիւն մը՝ իր պարագային առնչութեամբ, միշտ ալ առիթ տուած էր սակայն ինծի,- կը խոստովանիմ,- որ ես զիս կշտամբեմ այս մասին. երբեք չէի կրցած արդարացնել, բացատրել իսկ ո՛ւրէ՛ւ ձեռով, այդ վերապահութիւնս:

Ուրախ էի որ կը սիրէին զինքը: Բոլո՛րը: Բոլո՛րը՝ մեր շրջանակին մէջ:

Իր ժպիտը՝ միշտ անուշ, միշտ պարզ ու անդորր էր: Եւ միշտ ալ հաւասար:

Եւ օրին մէկը, տարիներ ետքը, բայց բաւական տարիներ ետքը, իրողութիւն մը յայտնուեցաւ ինծի.- զէ՛շ եղայ:

Ճիշդը՝ շա՛տ գէշ եղայ:

Չէի սպասեր անշուշտ ատոր:

Իր ձեռքերը խեղդեցին մեր բարեկամութիւնը. որ իսկապէս անկեղծ, անշահախնդիր, եզական թուած էր ինծի: Կը հաւատայի ե՛ւ մանաւանդ, թէ ի՛նքն ալ կը սեպէր մեր այս բարեկամութիւնը՝

նաե՛ւ իրեն համար, թանկագին, անկեղծ: Ա՛յս բարեկամութիւնը՝
ահա՛: Իր ձեռքերը խեղդեցին զայն պարզապէս, ճնճղուկ մը
անճիտելու պէս, անմիտ կերպով, անաղմուկ ալ:

Երկա՛ր տարիներէ ի վեր անընդհատ տեւած բարեկա-
մութիւն մը՝ այսպէս անշշուկ, մէկէ՛ն կ'անհետանար, ուրե՛մս, իր
ձեռքովը:

Դիւրա՛ւ կրցայ հասկնալ պատճառը:

Այլեւս վստահ եմ այս մասին: Ստուգելի անշուշտ:

Զրպարտութեան մը կը հաւատայ: Եւ իր այս հաւատքին
մէջ՝ կը շարունակէ ճաւ: Առաջին օրէն՝ հաւատացած էր այդ
զրպարտութեան: Այդ քսութեան: Եւ իսելացի ալ է: Չի՛ բաւեր: Չի՛
բաւեց այդ, իրողութիւնը ստուգել ուզելու չափ: Չէ՛ կրցած
հասկնալ թէ այդ զրպարտութեան պատճառը՝ առօրեայ,
անպիտան, նախանձ հաշիւներէ առաջ եկած կրնար ըլլալ, կամ
արդէն այդպէս ալ էր: Իր ձեռքերը չեն ուզած, չեն շօշափած, չեն
մտածած շօշափել պարագան, իրականութիւնը: Պէ՛տք էր
սակայն: Մեր բարեկամութիւնը, ինծի հանդէպ իր տածած
համակրանքը, մանաւանդ համարումը՝ տարիներ շարու-
նակուած, կերտուած վկայութիւններ էին:

Վի՛շտ մը կայ հոս: Վիշտ մը բացուեցաւ հոս:

Մե՛ծ վիշտ մը: Մե՛ծ ցաւ մը:

Զգա՛ց այդ: Չե՛մ խորհիր այսօր: Մեծ ցաւը՝ մարդիկ երբե՛մս
չեն զգար, չեն հասկնար, չեն սեպեր, ճիշդ ցաւին խորութեանը
պատճառով:

Ինքզինքը ան շատ մեղաւոր պիտի նկատէր, եթէ զգար այդ
ցաւը: Կամ միակ մեղաւորը՝ բո՛ւն մեղաւորը, անպիտան
մեղաւորը, զիս միայն համարեց, դատեց: Մե՛ղք իր ժպիտին:

Յանցանքը իր ձեռքերունն է, որ չգիտցան, գուցէ ե՛ւ
չմտածեցին իսկ իրողութիւնը երեւան հանելու մասին: Չէի

սիրած իր այդ ձեռքերը. զգացումս՝ իրաւունք ունի եղեր առաջին տպաւորութենէս ի վեր՝ ուրե՛մս:

Քսութեանց, զրպարտութեանց հաւատալը՝ արդէն ինքնին անկումային երեւոյթ մըն է: Ի՛րը՝ այլ ձեւ չեղաւ: Ինձի դէմ քսութիւն ընողին՝ անմիջապէս հաւատաց: Հաւատացած ըլլալով՝ կարելի կորուստի մը: Նիւթակա՛ն կորուստի մը: Եւ արդէն իսկ ստուգածի պէս: Անշուշտ չդատեց: Չի՛ դատեր: Դժուա՛ր է դատելը. քննելը՝ մտքի աշխատանք, մտքի արդարութիւն կը պահանջէ: Եւ հաւատալը՝ պէտք չունի ձեռքի, մտքի շարժումին: Ըսի՛ն իրեն. կը բաւէ՛ այս: Յիմա՛ր ըլլալու է՝ չլսելու համար:

Բարեկամութիւնը՝ անցեալին կը պատկանի:

Պէտք չկայ շօշափելու: Կը խորհի, թէ իր ձեռքը առնելու, պահելու համար կը ծառայէ, ո՛չ թէ շօշափելու: Ըսի՛ն իրեն. ուրե՛մս՝ կա՛յ որ ըսին:

Ճի՛շդ է ականջներուն իմացածը: Եւ եթէ սխա՛լ իսկ ըլլայ այս, ժաաս չի գար զայն մտիկ ընելէն, անոր հետեւելէն:

Բարեկամութի՛ւնը. կարելի է շարունակել միշտ ալ. ան հացի, հոգածութեան պէտք չունի:

Ի՛նչ բնագաւառի մէջ տեղի ունեցած է քսութիւնը, «զրպարտութիւնը»:

Կարելորը այն է որ նոյնիսկ եթէ երբեք ենթադրեալ վտանգը՝ կորուստը, տեղի ունենայ իր առաւելագոյն, անմտածելի չափովս անգամ, ի՛նչ պիտի կրնար ըլլալ անոր ամբողջ տարողութիւնը.- ոչի՛նչ ոչի՛նչ, բոլորովի՛ն ճղճիմ հաշիւ մը, այնքա՛ն որ կը վարանիմ, կը մերժեմ այդ բնորոշելն իսկ ...: Կը մեղքնամ իրեն, չեմ ուզեր աւելի ծանրօրէն դատել զինքը:

Եւ կարելի չէր տակաւին մոռնալ իր ժպիտներուն շնորհը, իր շրջահայեաց բարեկամութիւնը, իր շուտափոյթ անուշ խօսքը: Զգացումը՝ ամէն ատեն չէ որ պիտի ուրանար իր յիշողութիւնը: Մահը միայն կը պատահի վերջնական կերպով:

Բարեկամութեան կեանքը մէկէն չի ցամփիր. իր արմատները երկար կ'ըլլան: Կը հաւատամ ասոր:

Ինչո՞ւ այդպիսի խօսքեր ունէր ան. կարճամիտ, կծծի եւ անոնք եւ դաւաճանեցին իր բոլոր անուշութեան:

Բայց այսքանը չէ խորհած ան, չէ կրցած զգալ եւ գիտակցիլ: Իր խօսքերը այս հնարաւորութիւնը չեն տուած, չեն շնորհած իրեն: Եւ ան խեղդեց հազուագիւտ բարեկամութիւն մը:

Այսուհանդերձ, իր ժպիտը, իր ձեռքերը, իր խառնուածքը՝ անփոփոխ պահեցին իրենց գոյութիւնը, իրենց բնականը, իրենց իրականութիւնը՝ շարունակութիւնը, շունչը:

Ինչքա՞ն պիտի ուզէի սխալած ըլլալ:

Շա՞տ պիտի ուզէի ես ինքս եղած՝ մեղաւորը: Կորսուածը աղուոր բան մըն էր:

Շա՞տ աղուոր, շատ քնքոյշ բան մըն էր ինչ որ կորսնցուց:

Եւ այս մասին երբեք չխօսուեցաւ մեր միջեւ, այդ օրէն ի վեր:

Այո՛, այլեւս չխօսուեցաւ:

Ինչո՞ւ: Զգուշացա՞ւ: Չհամարձակեցա՞ւ. գուցէ որովհետեւ ծա՛նր էր այդ:

Մինչ ես, անշուշտ որ իր արարքը անմտածելի սեպեցի: Եթէ փորձէի իրեն խօսիլ այս մասին, դիտողութիւններս թեթեւ պիտի չըլլային ի հարկէ – եւ յետոյ՝ խզումս ալ անխուսափելի պիտի դառնար: Չէի կրնար, արդարեւ, իր վերաբերումը, ընթացքը

այսպանել, դատապարտել եւ միեւնոյն ատեն ալ շարունակել քարեկամութիւն մը՝ որուն կորուստին ի՛նք պատճառ եղած էր, ինծի դէմ իր լսած մէկ քառութեան հաւատալով անմիջապէս.- այս կերպը՝ իմ սկզբունքներուս, իմ սովորութիւններուս մէջը չկայ:

Եղածը, պատահածը, վկայութիւն մըն էր ինծի համար: Ծանր եւ առաջինը:

Վստահ եղիր, ա՛յս էր բո՛ւն, ա՛յս էր ամէնէն խոր ցաւս. այդ վկայութիւնը:

Մաքրութիւն մը կորսուած էր: Մաքրութիւն մը կորսնցուցած էին:

Կարելի՞ է:

Է՛ր. եղաւ:

Ճիշդը՝ չգիտցայ որ էր:

Իր այդ արտայայտութիւնները՝ յարատեւօրէն ներդաշնակ, քնքոյշ, ինքնեկ, անարատ, եւ մանուկի մը դրսերեւումին պէս հաճելի էին:

Հիմա՛ է որ կ'ըսեմ, թէ ինչպէ՛ս եւ ի՛նչքան սխալած եմ. տեսած՝ իր մէջ, միա՛յն իր աղուոր շնորհները:

Եւ ես ինքզինքս կը դատապարտէի ալ որ գուցէ իսկապէս շատ միամիտ գտնուած եմ.- իր ձեռքերը ինչո՛ւ չէի հասկցած:

Չէի՞ գիտեր այդ:

Անոնք սակայն, իր ձեռքերը՝ աւելի կը խօսէին այժմ: Կը պատմէին:

Բացառութեան իմաստը, հանգամանքը՝ անոնք չունէին ա՛լ. էին՝ ինչ որ եղած էին արդէն, առաջին ժամուն:

Այսօր ո՛ւր է:

Միայլը, մեր ամէնուն սխալը, միշտ տեղի ունենալէն ետքը կը նշմարենք իրականութիւնը: Միայլներուն բնոյթը, գլխաւորը, ա՛յսպէս է:

Խաբուհիլը՝ դժուարիս չի գար. այլ՝ զայն կանխել չկարենալը. այլ՝ մանաւանդ՝ այդ նշմարած ըլլալով հանդերձ, զայն հեռացնելու կամքը չունենալը:

Իր ձեռքերը չէի սիրած. ես ինձի հետեւելու էի:

Իր անուշութեանը ներկայութեան՝ իր ձեռքերուն վկայութիւնը անտեսեցի:

Շատ անգամ, մենք մեզ չենք ճանչնար, եւ այսպէս ալ տեղի կ'ունենան մեր մոլորումները, սխալները:

Մենք մեզ խաբելու հեշտ միտում մը կայ՝ գուցէ մեր ամէնուն ներսն ալ ծոյլ, հաճելի, անմիտ ձեւ մը: Կամ խորք մը՝ այս:

Մեր շուրջերը, յաճախ նշմարած եմ այդ. բայց միշտ աւելի լաւ պիտի ըլլար այդ նշմարելը՝ նախ, մեր անձին մէջ:

Այսօր, ահա քեզի կը խոստովանիմ իմ թերութիւնս: Հաւատա՛:

Եւ այս խոստովանութիւնս՝ պարտադրանք մըն է. պարզապէս. այլեւս չէի կրնար չպարպուիլ, այլեւս չեմ կրնար տկարութիւնս քողարկել: Հիմա թեթեւցած եմ, եւ ես զիս գտած: Շնորհակալ եմ քեզի, եւ անհունօրէն երախտապարտ, որ կը վստահիմ հասկացողութեանդ, ու կը խօսիմ:

Մեծ, շատ ծանր բեռէ մը ազատուած եմ:

Երկար, հաճելի բարեկամութեան մը, ի՛ր բարեկամութեան, ի՛ր գոյութեան հաւատացած էի, ու հրաշագործ բան մը մէկէ՛ն, իր կարճատեսութեան պատճառովը կորսնցուցի սիրելիի մը մահուան պէս:

Բայց չեմ խորհիր, որ ինք ցաւած ըլլայ իր արարքին համար, այլապէս իր վիշտը կրկնակի խոր պիտի ըլլար, հետեւաբար ե՛ւ իր անայլայլութիւնը պահելու հնարաւորութիւնն ալ պիտի չկրնար ստանալ, պահել:

Այդ օրերուն՝ կը հաւատայի իր ուշիմութեանը: Ինծի պէս, ճիշդը, շատերն ալ: Անուշ էր՝ ամէնուն հետ, առանց ջանքի: Ինչպէ՛ս կըրցաւ մէկ կողմ դնել՝ անարժէք իրի մը պէս, հոյակապ բարեկամութիւն մը, պարզ քսութեան մը վրայ,- առանց ստուգելու անոր դրդապատճառը: Իր ձեռքերը իրականութիւնը շօշափել չգիտցան:

Կծծի ձեռքեր կան, ձեռքեր ալ՝ որ անմիտ ու կոյր են:

Զգացի որ այդ ձեռքերը կրնան քանդել բարեկամութիւնը, կը քանդեն անգամ ո՛րեւէ մէկ հաշիւի, մեծ կամ փոքր հաշիւի մը իրագործումին համար:

Տեսա՞՞ծ էք կծծի ձեռքեր:

Այո՛, իրա՛ւ է, ինչո՞ւ չէք կըրցած աւելի առաջ շօշափել, զգալ իր ձեռքին սեղմումին, իր մատներուն շարժումներուն արտայայտութեանց մէջ՝ իր նեղ, փոքր էութիւնը, իր նեղ ու կծծի բնութիւնը:

Շեղումիս մէջ, այս սխալիս մէջ՝ չքմեղանք, արդարացում չեմ փնտրեր: Այդ չեմ ուզեր իսկ ուրանալ այլեւս: Մխալը ի՛մս է. չէի սիրած իր ձեռքերը: Ինչո՞ւ ես իմ զգացումիս չէի հետեւած: Չկռահելը սխալ մըն է, իսկ իր կռահածին չհետեւիլը՝ տառապանք մը:

Չեռքերը չեն խաբեր այն որ տեսնել, զգալ, ըմբռնել կրնայ:

Տգէտ է ան, որ չի հասկնար ձեռքերը, չ'իմանար անոնց լեզուն, չի ճանչնար անոնց հպումը:

Չե՞ս հաւատար:

-Այսպէս պատմեց ինծի բարեկամ մը, որուն նշմարումներուն, ինչպէս է՛ւ իր խօսքին կը հաւատամ, ո՛չ թէ որովհետեւ է՛ս ալ կը վստահիմ խօսքերուն արտայայտութեանց հաւատարմութեան, այլ նաեւ անոր համար որ ուրիշ մը պիտի չկրնար նո՛յն գրաւականը տալ ինծի: Կան անշուշտ կծծի ձեռքեր,

անվստահելի ձեռքեր, բայց իրենց մտածումին ու վախի պարագաներուն մեջն անգամ՝ անոնք կրնան իրենց պարփակած ճշմարտութիւնները հաղորդել՝ յաճախ, շօշափել գիտցողին: Այս հաւաստումն ալ ըրաւ բարեկամս, իր անշեղ լրջութեամբը, խորունկ ցառով, ինչպէս նաեւ ինքզինք կշտամբելու համար: Յանցանք մը, մեղանշում մը խոստովանելու պէս ալ: Եւ վերապահ դարձած էր այլեւս ան՝ ամէն առթիւ, ամէն բանի առնչութեամբ, տխուր ժպիտով մը, անպակաս: Մինչ այդ պահուն, ինձմէ բաժնուելու ատենը, յարեց.- «Գիտե՛ս, ձեռքը մարդն իսկ է»:

51-

Էմիլ Լութվիկ՝ գերմանացի, ծագումով հրեայ, հոչակաւոր գրող մըն է: Իր ուսումնասիրութիւնները վաւերական փաստերու, վկայութիւններու համաձայն կատարուած ըլլալու գլխաւոր առաւելութիւնը ունին: Հատորով մը՝ կը խօսի նաեւ իր ցեղակիցներուն, հրեաներուն մասին. հոն կը յիշատակէ, կը բնորոշէ անոնց թերութիւններն ու յատկութիւնները, միանգամայն: Արդ, իր էական եզրակացութիւններէն մին այն է, որ հրեաներուն շատ մը թերութիւնները կը վերագրէ երկար տարիներու անոնց ոչ-ազատ, ստրկական վիճակին, եւ ասկէ իսկ առաջ եկած բարդոյթին:

Սկզբունքով, հիմնական գտայ այս տեսակէտը: Իր ընթերցումէն, յիշեցի ֆրանսացի դասընկերի մը այլ հաւաստումը. երկուքն ալ նո՛յն կէտին կը հասնին, կամ զիրար կ'ամբողջացնեն:

Յիշեալ դասընկերս, առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած էր, վերջին տարուան մէջ, ճակատի

վրայ: Մէկէ աւելի, գանազան առիթներով ինծի ըսած էր, թէ պարզ զինուորութենէ տասնապետի, հարիւրապետի, կամ սպայի աստիճանին հասնողները՝ շա՛տ աւելի կարծր, ամբարտաւան, եւ անողոք կ'ըլլան իրենց ենթակայ պարզ զինուորներուն հանդէպ, քան անոնք, որ արդէն զինուորական աստիճանով բանակ կու գան, շնորհիւ Մէն Սիբ⁵ զինուորական վարժարանէն իրենց ստացած ուսումին:

Հրեան ալ երբ յաջողի, ամբարտաւան կը դառնայ: Այսպէս է պարագան՝ կեանքին մէջ, նաեւ ապատես մարդոց:

Ինչո՛ւ սպաննեցին Արփիար Արփիարեանը: Ինչո՛ւ Վահան Թէքէանին մէկ աչքը հանեցին: Երկուքն ալ լոկ մտաւորականներ էին, չունէին դրամ, չունէին իշխանութիւն ալ: Եթէ հարցնէք սակայն, թէ ո՛վքեր եղած են այդ ոճիրները գործողները, արդէն իսկ ստացած կ'ըլլաք գլխաւոր, հիմնական պատասխանը: Այն ձեռքերը որ զարկին մէկին թէ միւսին՝ անազատ, ստրուկ, նուաստացած, ստորակայութեան բարդոյթով մեծցած են դարերէ ի վեր եւ երբ գտան կարելիութիւնը տկարի մը զարնելու՝ զարկի՛ն: Այսպէս էր իրենց ձեռքը. իրենցմէ մեծին, իրենցմէ զօրաւորին զարնելու չէին մտածեր իսկ: Յիշեալ երկու արարքներուն մէջն ալ շահը չէր դրդապատճառը, ո՛չ ալ յստակ գաղափար մը, ուրե՛մն: Եւ նման արարքներ եզակի, մեկուսի չեն հայկական տարեգրութեանց մէջ: Ամէն քայլափոխին կայ: Ի՞նչ է ապատեսը. եթէ կրնայ՝ մինչեւ ոճիր կ'երթայ, եթէ կրնայ՝ կը լծուի բոլոր անամօթ գործերու. ուրիշին ձեռքը զգացած է իր ձեռքին վրայ, զգացած է նախատինքը, ու, հիմա, իր ձեռքն ալ այդ օրինակին կը հետեւի:

⁵ Saint-Cyr Military Academy, ֆրանսական ռազմական ակադեմիա, Պրըթոնի Մորպիհան նահանգի Կոնտկիդան քաղաքին մէջ, եւ որուն նշանաբանն է՝ «Այստեղ կ'ուսանին յաղթելու համար»:

Անտրէ Մոռուա պատկերալից օրինակ մը կու տայ. շատ մը ընտանիքներ,- կ'ըսէ ան,- կիրակիները՝ կէսօրէ ետքը, երբ օրը պայծառ ու հաճելի է, պտոյտի կ'ելլեն, ու եթէ պատահի որ խումբին մէջ կաղ մը, կամ դանդաղօրէն քալող մը գտնուի, խումբին միւս անդամները կը հետեւին ո՛չ թէ արագ քայլերով առաջացողին, այլ կաղին, կամ դանդաղօրէն քալողին, յառաջացողին: Ձեռք մը պէտք է այս ամբողջ խումբը կարգի բերելու համար:

Հայ ժողովուրդը իր գոյութեան երկու երրորդը ան-ազատ ապրած է, բայց է՛լ տեսած: Ահա՛ իր գլխաւոր, մեծագոյն գաղտնիքը, որ իրեն հանդէպ սէր ու յարգանք տածել կու տայ, երբեմն կը պարտադրէ իսկ: Իրողութիւնը անհերքելի է, եւ չի դադրիր պատիւ մը, ազգային պատիւ մը կազմելէ բոլո՛ր հայերուն համար, ինչ ալ ըլլան իր թերութիւնները:

Եթէ ամէն ատեն անհրաժեշտ չէ զարգացումը, յաջողելու համար կեանքին զանազան բնագաւառներուն մէջ՝ բայց խելքը անպայման հա՛րկ է յաջողելու ու մանաւանդ ինքզինքը, իր հայրենիքը, իր ժողովուրդը պաշտպանելու համար: Եւ այս մասին, ձեռքը իր կենսական դերը ունի:

Դժբախտաբար, խելքը յարաբերական է՝ առհասարակ, իր ընդհանրական, իր այլազան երեսներովը՝ իր կարողութիւնները հաշուելով եւ նկատի ունենալով: Օրինակ՝ խելացիի տեղ անցած մարդն անգամ երբ կամքը չունենար իր մտածումը ի գործ դնելու, այս պարագան իր խելացիութեան մէջ թերիի մը գոյութիւնը կ'ապացուցանէ: Հայերը այսպէս են, երբ հաւաքաբար մտածեն, հաւաքաբար գործեն: Պատճառը չեմ գիտեր: Թերեւս շատ տեսլական են: Թերեւս շատ ամբոխավար կը դառնան երբ գտնուին խումբ մարդոց մէջ: Չեմ սիրած «Ձեր սուրբ, մեր ճիտը» պատմական դարձած խօսքը, պատասխանը: Ղեկավար մը իր

ժողովուրդին ճիտերը թշնամիին սուրին տրամադրելու իրաատունքը չունի. այդ դժբախտ պատասխանը՝ ո՛չ թե միայն իր ժողովուրդին, իր հօտին հանդէպ պարտականութեան, սիրոյ պակասը ցոյց կու տայ, այլ մանաւանդ ինչպէս իսօսք մըն ալ չէ հասարակական, պատասխանատու, իր դերին գիտակից անձերու կողմէ. ո՛չ ալ ժողովուրդին զգացումը, բո՛ւն տրամադրութիւնները շօշափած ձեռքի մը, մատներուն արգասիքը: Ամէն պարագայի տակ՝ կեդրոնաձիգ անգիտակցութենէ, կեդրոնաձիգ անխղճութենէ առաջ եկած, դրդուած չեմ գիտեր ինչ մը, որ առաջնորդի դերը ստանձնած մարդուն վայել չէ, ըլլայ ան աշխարհական, կամ կրօնաւոր: Ձեռքին տկարութիւնն ալ է ան, շփոթութիւնը, վախէ ծնած երգ մը, կոչ մը. կարապետի ձեռքը չերեւար հոն: Տկարին լքումը որոշ է այդ պատասխանին մէջ, իր ժողովուրդին ճիտը սուրերու առջելը դնելը՝ իբր երաշխիք, իբր պատնէշ: Լուր ու արի կերպէ մը շատ հեռու կը նկատեմ ես, լիակատար համոզումով, սրտի լիակատար անդորրութեամբ ալ: Կադապարուած մարդիկ, աւանդական որոշ մտածումի մարդիկ՝ զիս պիտի մեղադրեն, լա՛ւ գիտեմ, եւ եթէ կրնան խարոյկի վրան ալ պիտի ուզէին հանել զիս, ձեռքերս ու ոտքերս կապած: Բայց ովքե՞ր կրնան ըլլալ ասոնք. աւելի քան յայտնօրէն անոնք որ չե՛ն հասկցած իրողութիւնը, ճշմարտութիւնը.- չո՛ր ձեռքեր՝ տակաւին անտեղեակ իրենց շքե՛ղ անգիտակցութեան, հետեւաբար ե՛ւ իրենց անպատասխանատուութեան: Անշուշտ շատ մը լուռ մեղսակիցներ ալ կան դեռ:

Ուստի հայուն կեցուածքը, հայուն գործելակերպը՝ թուրքին գազանաբարոյ բնագոյներուն, թուրքին ընչաքաղցութեան, առհաւական ծուլութեան հանդէպ, սխալ եւ մեզի համար անհունօրէն վստահար եղան:

Ժողովուրդի մը համար, երկրի մը համար՝ ապահովութիւն ունենալու առաջին եւ էական պայմանը, իր թշնամիին զանազան կարգի ուժերուն եւ միջոցներուն, ինչպէս նաեւ իր թերիներուն չափը գիտնալն է իրենինին հետ բաղդատելու համար, երբ մանաւանդ այդ թշնամին երկիրը գրաւած տէրն է, իշխանութիւնն է. հայ ձեռքը, այս ստուգումը չկատարեց: Նախ՝ զլուխ ծոեց շատ վար, յետոյ՝ զլուխը չափէն աւելի վեր առաւ: Բայց եթէ գիտնար, թէ ինք թուրքէն աւելի խելացի ու զարգացած է, այլ կերպ պիտի շարժեր: Մեր խելքին, մեր զարգացումին եւ մեր ձեռքին միջեւ՝ համերաշխութիւն, կամ հասկացողութիւն տեղի չունեցաւ: Դարեր շարունակ, անընդհատ, հայեր թուրքին լուծը կրեցին. արդարացում չունին: Արդարացում չունին, որովհետեւ իրենց խելքին շնորհիւ, թուրքէն աւելի զօրաւոր կրնային ըլլալ: Բայց յանցանքը՝ միշտ ուրիշին վրայ ձգեցին. նախ՝ անշուշտ թուրքին, յետոյ՝ Արեւմուտքին: Պարզապէս՝ մենք մեզ խաբեցինք անընդհատ: Ինչո՞ւ Արեւմուտքը մեզի պիտի օգնէր թուրքին դէմ. ո՞չ մէկ պետութիւն իր շահերը, կամ զաւակը գոհել կ'ուզէ ուրիշին համար: Դար մը առաջ այս ճշմարտութիւնը ըսուեցաւ մեզի. թէւ ըսուելու ալ հարկը չկար: Եւ սակայն չհասկցանք:

Եւ բացինք մեր սիրտը, փոխանակ զայն քողարկելու եւ միտքով աշխատելու, թուրքը շուարեցնելու, իրեն պէս կեղծելու, եւ զարնելու պատեհ առիթին: Հայը բարեմիտ եղաւ սակայն: Բայց գազանին հետը՝ բարեմտութեամբ կարելի չէ վարուիլ: Եւ գիտէ՞ք ինչքան ճկուն է, շողոքորթ է, ինչքան կենցաղագէտ է թուրքը, եւ անուշ լեզու է՝ երբ ուզէ ու խօսի. ե՛ւ հրէշ՝ խորքին մէջ: Աղուէսը չէ. այլ՝ գազան. կը սիրէ արիւնը, կը սիրէ իր գոհին արիւնովը զովանալ, սնանիլ, մինչ իր լեզուն, իր արուեստական կերպերը՝ բիրե՛ղ կեղծիքով մը անմեղութեան երեւոյթը կու տան իր ունկնդիրներուն: Ու ճիշդ ա՛յս հրէշին հետը՝ դէմ առ դէմ է որ,

ամէ՛ն օր, հայր չծածկեց իր դէմքին, իր սրտին խորը երեւացող զգացումները, մտածումները, իր ծրագիրներն անգամ:

Ի՛նչպէս չնշմարել, թէ թուրքը ծոյլ էր, իր երկիրը կը տքար պետական փոքր ու մեծ պաշտօնեաներու անպիտան ծուլութենէն եւ անոնց համատարած կաշառակերութենէն, մինչ փացածը՝ զինուորականները կ'աւարէին:

Ուրեմս մտածելու էր հրէշը իր մարդոց ձեռքովը, ներսէն քայքայելու, տապալելու: Ատենին, դիւրին պիտի ըլլար ասիկա իրագործելը: Հայը իր ամբողջ միտքն ու կարելիութիւնները այս ուղղութեամբ ի սպաս դնելու էր, փոխանակ ուրիշին օգնութեան, կամ այլ միջոցներու ձեռք երկարելու: Անշուշտ, ո՛րչ է հիմա: Բայց փորձառութիւն մը ստացած ըլլալու արժէքը պիտի ունենայ այս ... գուցէ: Կը կասկածի՞ք ...:

Դժուար է, հիմա, սփիւռքահայր հասկնալ, իրենց բերանացի խօսածն ու գրաւոր խօսածը՝ իրար հետ համերաշխ չեն ... Կը կարծեմ, թէ բերանացի խօսուածը աւելի ճշմարիտ է. թէեւ չեմ ալ կրնար վստահ ըլլալ ձեռքովս դրածի պէս: Կարելի չէ այս բաները ճշդիւ շօշափել: Բայց տարակարծութեանց գոյութիւնը՝ բերանացի արտայայտութեանց եւ գրաւոր հրապարակուածներուն միջեւ, զիս կը նեղէ, կը տխրեցնէ եւ յուսահատութեան կը տանի անտարակոյս: Կեղծաւորութիւնը, «դիւանագիտութեան» հետ շփոթողները կարծուածէն շատ աւելի են, այս բնագաւառին մէջ: Կարելորը, օգտակարը՝ կեղծաւորութիւնն թշնամիին հետ ի գործ դրուելուն մէջ կը կայանայ:

Ծոյլ մարդը վտանգ մը կը ներկայացնէ, բայց դիւրին ալ է զինքը նուաճելը, չէզոքացնելը, անժսաս դարձնելը. ծոյլ է՝ բաւական պիտի ըլլար իր թաթին մէջ ոսկորի կտոր մը դնելը, որ դադրի վտանգ մը կազմելէ:

Այս ճամբաները, այս վտանգները անցան սփիւոքահայերը: Հիմա, իրենց բնակած, իրենց ապրած երկիրներուն մէջ՝ վտանգ չկայ մասնաւորապէս իրենց համար: Ամէնայն դէպս, իրենց եւ յաջորդ սերունդներուն համար, թրքական վտանգը գոյութիւն չունի անշուշտ: Հիմա ուրե՛ս, ի՛նչ կ'ըսեն, ի՛նչ կը խորհին, ի՛նչ կը ծրագրեն. շահեկանը գիտնալն է ուղղակի, հարագատօրէն, ո՛չ թէ մեր մամուլէն, որ զանազան ձեռքերէ կ'անցնի մինչեւ իր լոյս տեսնելը: Ըսել չեմ ուզեր, թէ «գրաքննութիւն» կայ, «սրբագրում» կամ այլափոխում կայ, բայց առ նուազն, գուցէ միշտ ալ, գրութիւնը ստորագրողին ստացած դրակա՛ն ազդեցութիւնը կա՛յ, կամակոր ու անձայն հօտը կայ, ափաթիք բազմութիւնը կայ: Եւ ասիկա յուսահատութիւնն է մեր Սփիւոքին: Մեր մամուլը, սփիւոքահայ մամուլը՝ հատուածական է, եւ այլ կերպ ալ չէր կրնար ըլլալ իրականութեան մէջ. պարագան՝ սակայն, մերթ ընդ մերթ գնահատական խօսքն ալ, փառաբանութիւնն ալ ըսել կու տայ. որովհետեւ այլապէս, հայ մամուլ գոյութիւն պիտի չկրնար պահել, ծնած իսկ ըլլալ: Հա՛րկ է ըսել ճշմարտութիւնը, ինչքան ալ դառն թուի ան: Այսօր, բոլո՛ր ձեռքերու պէտք կայ անհրաժեշտաբար. մեծ, կամ պզտիկ. ծանր, կամ թեթեւ. երկար, կամ կարճ. բայց մանաւանդ անվեհեր ձեռքին, որ առհասարակ ճշմարտութիւնները գտնողը կ'ըլլայ:

Այսինքն, ամէն զարնող ձեռք՝ անպայման օգտակար արդիւնք մը, ճի՛շդ արդիւնք մը չէ որ կ'ունենայ. մեր պատմութիւնը այդ ցոյց կու տայ նաեւ՝ իր միտումնաւոր շարադրութեամբը, հանգամանքո՛վս իսկ, թէ դաս, փորձառութիւն չենք քաղած մինչեւ այսօր: Այո՛, այսօր ալ: Տիրող ամբոխավարական աղմուկը՝ վկայութիւն մըն է: Իրատեսութիւնը՝ մեր գիտակցութեան, մեր զգացումներուն մէջ չի՛ մտնէր. չէ՛ մտած: Մեր ձեռքերը՝ այս բնագաւառին մէջ, չեն մտածէր

հայի, շօշափել. չեն ուզեր շօշափել՝ զարնելէ առաջ, որոշելէ առաջ, խօսիլէ կամ արտայայտուելէ առաջ, ատելէ կամ սիրելէ առաջ: Կարելորը՝ զարնելը չէ, կարելորը՝ ճի՛շդ ատենին, արդիւնաբեր կերպով զարնելն է: Մինչ հակառակ պարագան՝ ձախողութիւն, դժբախտութիւն կը բերէ անպայման: Վերջին դարու մը մեր պատմութիւնը՝ քաջերու, ինքնակամ ու անշահախնդիր կերպով զոհուողներու, խնկալի հերոսներու շարք մը կրնայ տալ: Կա՛ն, արդարեւ, հերոսներ՝ որ զիս հմայած են, զարմացուցած ալ՝ իրենց բացարձակ անշահախնդրութեամբը, հայութեամբ լեցուած, ստոյգ մահը արհամարհելով, անձնուրացութեամբ, հաւատքով, յոյսով՝ մարդէն շատ վեր էակ մը, պիտի ըսէք դիցաբանութենէ յղացուած աստուածային էակ մը, եւ ես պիտի ուզէի որ անոնք ըլլային մեր դիցաբանութեան տարրերը միայն: Անոնք զոհուեցան, եւ իրենց զոհողութիւնը, հերոսութիւնը այնքա՛ն գերազանց էր, որ աւելի այս պարագան Բնաց ժողովուրդին յիշողութեանը մէջ, քան ինչ որ արժեց առհասարակ: Գուցէ ե՛ւ իրենց նուիրումը այնքա՛ն գերազանց էր, որ հետեւանքին քննութիւնը սրբապղծում մը նկատուած ըլլալու է:

Վաղն ի՛նչ պիտի խորհի մեր ներկային առնչութեամբ: Կրնամ ենթադրել. դիւրի՛ն է այս: Բայց վաղն ինչպիսի վճիռ պիտի տայ ներկայ սփիւռքահայութեան մասին: Ամենէն առաջ, իրատես ձեռքերու պակասը պիտի մեղադրեն իրեն: Նոյն տեսակի վճիռը տրուած էր արդէն նախորդ սերունդներուն դէմ ալ: Ամբոխավարութիւնը տիրական եղած է, շատոնց. մեր սերունդին յատուկ չէ ան: Միսալ մը, յանցա՛նք մը՝ ինքնին. մինչ աղէտ մը՝ հայկական ազգային իրականութեանց մէջ: Չեմ զգուշանար կրկնութեան մեղքը գործելու հոս.- ինչպէս այլ տեղ ալ ըսած եմ, մեր թիւ 1 թշնամին թուրքն է եթէ, բայց մեր թիւ 2

թշնամին ալ ամբոխավարութիւնն է: Սփիւռքահայ մամուլը, քարոզիչները, ժողովականները առհասարակ ենթակայ են ամբոխավարին բռնակալութեանը՝ ոմանք գիտակցաբար, ուրիշներ հետեւողականութեամբ: Բայց այս երկու պարագաներուն մէջն ալ՝ իրատես ու քաջ խօսքի մը յայտնութիւնը անհրաժեշտ է, այդ ներքին ժանտը մաքրելու համար:

Լա՛ւ է իրաւունք ունենալը:

Բայց չի՛ քաւեր իրաւունք ունենալը միայն:

Կարելորը, էականը, անհրաժեշտը՝ իր իրաւունքը պահպանել գիտնալն է, զայն պաշտպանել կարենալը:

Բայց աւելի կարելորը, աւելի լաւը՝ այդ իրաւունքը իրագործելը պիտի ըլլայ անշուշտ:

52-

Ազգութեամբ ֆրանսացի է, ծագումով՝ հայ.-

Ազգութեամբ անգլիացի է, ծագումով՝ հայ.-

Ազգութեամբ ամերիկացի է, ծագումով՝ հայ.-

Եւ դեռ շարունակելի ալ ...:

Բայց այս առօրեայ հաւաստումներուն հանդէպ, ո՛չ մէկ հայ դժգոհութեան ձեռք կամ մատ չի բարձրացներ, մինչ ենթական վստահաբար գո՛հ ալ է:

Վերջերս, ֆրանսական ոստիկանութիւնը կը ձերբակալէր մէկը, որուն համար երբ հեռագիրները, անթելը եւ հեռատեսիլը յայտարարեցին թէ ան «ազգութեամբ թուրք է, ծագումով՝ հայ».- եւ նորէն մտածեցի Սփիւռք ապրող հայուն ազգութեան պարագային առնչութեամբ: Դարձեալ երկարօրէն մտածեցի եւ. հարցը

դիւրին չէ. իր բարդութիւնը բազմազան երեսներ ունի: Ո՛չ թէ երեւոյթը բոլորովին նոր է, այլ չէ քննուած իսկ ըստ էութեան: Մանաւանդ Սփիւռքի հայերուն մասին: Ո՛ւր հասանք հիմա ...: Բայց ճիշդ հոն, ուր արդէն շատո՛նց հասած ենք: Վստահաբար, իմաստը չէինք հասկցած, չէինք գիտեր իմաստը: Ըստ օրինի, մարդոց ազգութիւնը ճշդելու համար, նկատի չես առներ այլեւս անհատին անցեալը, ցեղը, ցեղ դարձած իր մշակոյթը, իր մորթը: Մարդոց, բոլո՛ր մարդոց ազգութիւնը թուղթ մըն է այսօր, որոշ պայմաններու տակ, ուրիշ մէկու մը կողմէ ստորագրուած: Այս թուղթը, օրին մէկը, կրնայ տարբեր ազգութեամբ մը փոխարինուիլ: Միանգամայն երկու ազգութիւն ունեցող անհատներ եւս շատ կան, պաշտօնական թուղթերու շնորհիւր: Ճիշդ այնպէս ինչպէս մարդիկ մէկէ աւելի շապիկ ունին: «Մեր երկրին օրէնքը քեզի մեր ազգութիւնը շնորհեց», կը յայտարարէ պաշտօնատար մը, եւ ենթական երջանիկ է, հպարտ է, ուրախ եւ դողդոջուն ձեռքով մը կը վերցնէ իր «ազգութիւնը հաստատող, վկայող գիրը», որ նախագահական ստորագրութիւնը եւ պետութեան կնիքը կը կրէ: Եւ ահա այսպէս ամէն բան կը փոխուի, իր տեղը կու գայ: Բայց հայը չի՛ փոխուիր, գոնէ թուրքի. չըլլար ասիկա: Յիշեալ ձեռքակալեալը «ազգութեամբ թուրք» եւ «ծագումով հայ»ը ճիշդ սակայն իր ծագումին պատճառովս է որ մղուած է,- ըստ ֆրանսական ոստիկանութեան ալ ,- ահաբեկչութեան ենթարկելու թուրքերը ... Օրլիի օդակայանին մէջ: Մեր դարուն ողբերգութիւններէն մին է անշուշտ այս տեսակ ազգութեանց հարցը, խնդիրը: Ամէնէն աւելի, հա՛յը կը գտնուի այս հարցին, այս խնդրին մէջ: Մինչ ձեռքը՝ ձեռքով կարելի չէ փոխել.- ամէն ձեռք իր արինը ունի: Ձեռքին ցեղը՝ ծագումի հարց է, ծագումի օրէնքին կը հետեւի, չի՛ շեղիր: Մարդոց շինած, հաստատած օրէնքները,

կրնան մարդը կախադան հանել տալ, կրնան գլխատել տալ, բայց մարդուն ձեռքը չեն կրնար փոխել:

Ի՞նչ է հայ Սփիւռքը՝ իրականութեան մէջ: Ո՛ւր կը սկսի, ո՛ւր կը վերջանայ ան: Որո՞նք կը հպատակի, որո՞նք կը հետեւի: Ո՛վ կրնայ տալ իր դիմագիծը, իր անուանումը: Ունի՞ իր ինքնայատուկ օրէնսդրութիւնը: Ունի՞ իր ազգային դատարանը. բայց կրնա՞յ ունենալ իր դատարանը:

Եւ ո՞վ է Սփիւռքահայը: Բայց կա՞ն Սփիւռքահայեր: Մէ՞կ տեսակ է, կամ այլազան: Ի՞նչքանով, կամ ի՞նչքան հայ կը սեպուի ան: Գիտե՞, կ'ըմբռնե՞ իր ինքնութիւնը՝ ըստ օրինի եւ ըստ էութեան: Կարելի՞ է իրական ճշդութեամբ տալ իր դիմագիծը, ու իր գոյութեան սահմանումը:

Վերի հարցականներուն սպառիչ կերպով, ճշգրիտ ու համոզիչ կերպով պատասխանելը՝ այնքան ալ հեշտօրէն հնարաւոր չեմ գտներ: Եւ աւելի՛ լաւ է որ չփորձէիք իսկ այդ ...: Անկեղծօրէն, արիաբար պատասխանող գիտակից ձեռքը՝ պիտի կտրէին իսկոյն՝ առանց դատելու, քաղաքին ամենէն լայն հրապարակին վրայ ...: Կան շատ մը իրականութիւններ՝ որոնք մեր փափաքած իմաստը չէ որ պիտի առնէին:

Գաղթական՝ երբ ինքնաբաւ չէին դեռ բոլորովին, հայերը նկատուեցան «անբաղձալի» գրեթէ այն ամէն երկիրներուն մէջ, ուր բնակութիւն հաստատած էին: Իսկ երբ իրենց անընդհատ ու արդիւնաբեր աշխատանքին շնորհիւր դարձան ինքնաբաւ, մինչ ոմանց համար նոյնիսկ լայնօրէն աւելի, իրենց երեսն ի վեր գովեցին երբեմն, իսկ աւելի յաճախ կոնակէն... «Մա՛ մեթեքները ահա՛ մեզ կը շահագործեն»: Եւ սակայն երկրին իսկ օրէնքին տրամադրութեանց համաձայն, հաւասար քաղաքացի մկրտուած էին, մանաւանդ հոն ծնած սերունդը: Առեղծուած չէր այս, այլ իրականութիւն. թէ՛՝ այսօր ալ տակաւին, կարգ մը երկիրներու

մէջ, անոնք անգիր «օրէնք»ի մը առհաւական ազդեցութեան տակ, «օտարներ» կը նկատուին, անբաղձալիներ. Իրականութիւն մը՝ որուն դէմ պայքարիլը՝ յաջողութեան չէր կրնար հասնիլ: Կան դուռներ՝ որոնք գոց են իրենց դէմ, բայց բոլոր պարտականութեանց, բոլոր ծառայութեանց դուռները միշտ լայնօրէն բաց փսացած ըլլալով հանդերձ: Իրենց ստացած անցագիրը՝ այս բնագաւառին մէջ, մէկ ուղղութեամբ տանող է, իրականութեան մէջ: Դրամ շահելու ասպարէզները՝ իրենց համար, աւելի թոյլատու երեւցան:

Սփիւռքահայը չի՛ նմանիր ուրիշին: Ո՛վ որ ալ ըլլայ ան: Իր գոյութեան, իր կեանքին, իր լինելիութեան պայմանները զինքը կը զանազանեն իր բնական երկրին ժողովուրդէն, հոն հաստատուած օտարներէն ալ:

Այն տեղ ուր ան կ'ապրի, կը շինէ ի՛ր դպրոցը, ի՛ր եկեղեցին, ի՛ր ակումբը, կը հիփսէ հայկական մամուլ, զանազան ազգային հիփսարկներ, կուսակցութիւններ, միութիւններ, կը հաստատէ ժողովներ, իր մայրենի լեզուն պահելու համար չի՛ դադրիր պայքարելէ, եւ, այսուհանդերձ, իր ծոցի գրպանին մէջ կը կրէ ալ անցագիր մը, կամ ինքնութեան փաստաթուղթ մը, որ կը վկայէ թէ իր ազգութիւնը ա՛յդ է: Բայց երբէ՛ք հայկական: Բայց ոչ ոք կրնայ արդէն հայկական անցագիր ունենալ. ասիկա չկայ: Իսկ իբր ազգութեամբ այս ֆրանսացի՛, այս անգլիացի՛ կամ ամերիկացի՛ հայը յանցանք մը գործէ ու բռնուի, ահա այդ ատեն բոլոր ռատիոնները, հեռագիրները, թերթերը կը յայտարարեն, թէ ան հա՛յ է ծագումով: Ուրե՛սն այս վերջին կէտն ալ այլ կարգի վկայութիւն մը կը կազմէ:

Առեղծուածային է հայը. առեղծուածային է ե՛ւ իր կեանքը: Ո՛չ մէկ բնագաւառի մէջ, հայերը իրար հետ համաձայն չեն, իրար հետ կռիւ կ'ընեն, իրարու վրայ ձե՛ռք կը բարձրացնեն,- հարցը,

խնդիրը ըլլայ մեծ կամ պզտիկ,- բայց լիովին համաձայն են իրար հետ՝ պայքարելու համար հայերեն լեզուի վերապրումին ի նպաստ:

Սփիւռքին մէջ, հայը մեկուսի է, կղզիացած. գատուած է բոլորէն՝ իր ինքնայատուկ պայմաններովը. բայց չի զգար այս իրողութեան, այս դրութեան մռայլ իմաստը, հիփսական իմաստը: Եթէ հեռանայ իսկ հայկական կեդրոնէն, չի՛ լուծուիր. չ'ըսեր, բայց կը զգայ թէ չէ լուծուած: Եւ ունի ներքին պայքար մը, սակայն: Եւ կը դրսեւորէ ալ իր զգացումը մեծ երկրի մը ազգութեան պատկանելու: Նո՛ր երեւոյթ: Թէ՛ ազգութիւնը սահմանուի, հաստատուի օրէնքին, երկրի՛ն օրէնքին արուեստական, շահախնդրական պայմաններուն համաձայն: Ուրե՛մս է՛ւ այս պայմանները կրնան տարբերիլ երկրէ երկիր եւ ժամանակներու ընթացքին ալ: Ինչ որ կրնայ ստեղծել ալ պարագաներ՝ որոնց մէջ գտնուին է՛ւ հայ մարդիկ, որ օրին մէկը կանչուին գնդակ նետելու իրենց հարազատ հայրենիքին դէմ, այսինքն այն հայրենիքին՝ ուրկէ ծագում առած են, եւ որուն լեզուն գուցէ եւ տակաւին կը խօսին:

Չեմ տեսներ այն ձեռքը, որ պիտի կրնար լուծել այս առեղծուածները:

Սփիւռքին մէջ, հայուն զգացումներուն, մտածումներուն, բայց մանաւանդ իր զգացումներուն այդ ներքին պայքարը, եւ ներքին տագնապը՝ չպակսեցան հիմ նետելով հանդերձ հոն ուր կը բնակի, ո՛չ ալ նիւթական միջոցներուն զգալիօրէն բարելաւումովը: Այս պարագան հայուն մէկ լաւ ու դրական կողմը կը ներկայացնէ, եւ որ կը սատարէ իր գոյատեւումին: Սփիւռքահայը չ'որոնէր այլեւս այլ աշխատանք բայց եթէ ոչ իր հայկականութիւնը, իր հայրենիքը՝ որուն հեռաւորութիւնը, կամ հայրենի սահմաններէն դուրս ապրիլը՝ իր զգացումներուն ազդած ըլլալու

տպաւորութիւնը չեն ձգեր: Ինքն ալ առեղծուած մըն է: Ուստի չենք հարցնէր. ինքն եւս չի հարցնէր. ի՛նչքան հայ է կամ կրնայ ըլլալ, թէ ի՛նչքան հայրենասէր է ան որ իր հայրենիքէն դուրս բնակութիւն հաստատած է, եւ այդ իսկ երկրին ազգութեան կը պատկանի՝ իր քաղաքացիական պարտականութիւններով ու իրաւունքներովը. աւելի՛ շատ անգամ, պարտականութիւններով քան իրաւունքներով: Հարցականը ուղղող կա՞յ: Սփիւռքահայը չի՛ նմանիր ուրիշին. եզակի է ան՝ համայն աշխարհին վրայ: Ուրիշներն ալ պիտի չնմանին իրեն:

Եւ ինչ որ իրական է, ճիշդ է, չի՛ փոխուիր: Իրողութիւնն է որ մեր ծագումը մեզի կը հետեւի, կամ մենք՝ իրեն. իրարմէ զատուիլը ճակատագրական կ'ըլլայ: Մնացածը յաճախ անհրաժեշտ, արտակարգ պայմաններէն առաջ կու գայ, եւ ասկէ աւելի իմաստ ու զգացում չի՛ բովանդակեր: Պատասխանատուն փնտռելու, գտնելու համար՝ նախ հարցնելու է, թէ ինչո՞ւ, թէ ինչպէ՛ս եւ ե՛րբ հայ Սփիւռքը տեղի ունեցաւ: Բայց արար աշխարհ զիտէ այն ոճրագործ ձեռքը, այն անորակելի մեղսակիցները՝ որ մեր այս Սփիւռքին տեղի ունենալու պատճառ դարձան: Մինչ իրականութիւնը այսպէս ըլլալէն ետքը, բիւզանդական է հայուն հարազատ, հայուն ճշգրիտ դիմագիծը, կամ սահմանումը տալը, ներկայացնելը: Ինչի՛ կրնայ ծառայել այդ, այսօ՛ր, հիմա՛: Իրական կերպով խառնարաններ՝ որոնց միակ արժանիքը կը դրսեւորուի անով միայն որ հոն դեռ կը նշմարուին ձեռքեր, վեր բարձրացած, խեղդուելու վրայ, եւ կը յայտնեն՝ միաձեւ, թէ հա՛յ են: Այդ ձեռքերը՝ իրենց ափերուն խորը կը կրեն իրենց ճակատագիրը, Բայց ամէն դիտողին չէ որ կը պատմեն, կը խոստովանին իրենց կամքը, իրենց խորհուրդը:

Հայը, դեռ այս Անձանօթը:

Բայց ես կը սիրեմ այս Անձանօթը:

53-

Դիտա՞ծ էք ձեռքը՝ որ ձեր գաւաթին մէջ ջուր, կամ գինի, կամ ուէկ խմիչք մը կը լեցնէ. արտայայտութիւն մը, դրսեւորում մը անպայման պիտի ունենայ ան:

Ձեռք մը՝ առատաբուխ, կամ կծծի կ'ըլլայ:

Բայց ամենէն աւելի կծծի ձեռքն է որ ինքզինքը պիտի մատնէ՝ ինքնայատուկ շարժումով մը:

54-

Ձեռքի մը ուժին, ձեռքի մը անսահմանութեան, ձեռքին մարդասիրութեան վկայութիւնը՝ Հիլտա Գալֆաւեան-Փանոսեան կը բերէ մեզի շքեղ տողերու շքեղ պատկերով մը, իր «Կաթիլ մը» բանաստեղծական հատորին «Տագնապ» վերնագրով քերթողութեան մէջ. հոն կ'երգէ ան. արդարեւ՝

Հիմա պիտի կորզեմ երկինքէն աստղ մը բոցավառ

Եւ արձակեմ ռումբի նման աշխարհի գլխուն ...

Բայց կաթիլ մը արցունք աչքերէս

Կ'իյնայ ու կը մարէ աստղը ձեռքիս մէջ:

Մինչ իր յաջորդ քերթուածովը, «Բոցերու Մէջ» խորագիրով, Հիլտա Փանոսեան, վստահ՝ իր արդարութեան, վստահ՝ իր յաւերժութեան մասին, գիտակից՝ իր ասփերուն, իր ձեռքին եւութեան, լինելիութեան, դեռ մեզի կը հաղորդէ.

Ես իմ սիրտս ասփերուս մէջ պինդ բռնած

Խաւարէն դուրս կը քաշեմ ճիւղին ինծի փաթթուած

Կը տանիմ մինչեւ խարոյկը հսկայ

*Եւ անոր հետ կը նետուիմ բոցերուն մէջ
Ու մինչ ան իր գեհէնը կը վերագտնէ
Ես փիւնիկի պէս կը յառնեմ իմ մոխիրներէս:*

Եւ ասիկա ձեռքի մը արդարութեան, ձեռքի մը միջոցով ճիւղաղի մը դէմ գործադրուած արդար պատիժին, ու այսպէս այդ ձեռքին շնորհած վարձատրութեան բարձրագոյն երգն է, եւ աստուածացումը, տաղանդաւոր, լաւատես բանաստեղծուհիի մը կողմէ:

Ու աւելի անդին, «Մեր Ձեռքերով» անուն իր երգին մէջ, Հիլտա Փանոսեան՝ հոյակապ թոյլքի մը պահուն, կը թուէ մեզի իր ինքնավստահ լաւատեսութիւնը, որ յատուկ ալ են մեր օրերուն. ան կը վկայէ արդարեւ.

*Դար կը կերտենք վայրկեանի մէջ
Նորատիպ աշխարհ մը կը կառուցենք
Բուռ բուռ արեւ կը բաժնենք
Վեցիագարամեայ մեր պատմութեան
Փառապսակը կը հիւսենք:*

Եւ անմիջապէս ետքն ալ կ'աւելցնէ՝

*Աղամանդ կը տեղանք – գիւտ կը տեղանք
Բարիք որպէս – հրաշք որպէս
Ու գաղտնիքն հարցնողին ցոյց կու տանք
Մեր ձեռքերը միաձուլող:*

Բայց Հիլտա Փանոսեան միշտ լաւատես չէ անշուշտ: Լաւ կողմերը միայն չէ որ կը տեսնէ մեր կեանքին, մեր շարժումներուն մէջ: Այլ՝ ան կը նշմարէ բացասական երեւոյթներն ալ: Ջարգա-

ցած միտք, անկողմնակալ, իրա՛ւ մտաւորական, հասարակաց կռիւներէն վեր, ճշմարիտը փնտռող իրատեսն է ան: Գիտէ, ուրե՛ս, որ մետալը իր միւս երեսն ալ ունի եւ որուն վրայ կրնայ գտնուիլ չարը, կամ չարին հաւատացողը, կամ կրնան գտնուիլ դեռ անկումայինները, տգէտները, նախամարդիկ ալ. ուստի ե՛ւ բանաստեղծուհին կը յարէ անոնց.

Եւ այս դարուն դեռ

Անտեղեակութեան վահաններով կը զինուիք

Մինչ մենք

Մեր ձեռքերով կը ժպտինք ձեզի:

Իր գլխաւոր ակնկալութիւնը, յոյսը, մտածումը, իր բոլոր համարումը դրած է ձեռքին հնարաւորութեանց, ձեռքին ազնութեանը մէջ. այսինքն՝ «անտեղեակութեամբ զինուածներուն» կը պատասխանէ «ձեռքին ժպիտովը», ինքնավստահ ու հեզնական, եւ այս ժպիտը կը ներկայացնէ անհուն իմաստասիրութիւն մը: Անշուշտ քիչ անգամ կարելի է հանդիպիլ այսքա՛ն խոր ու այլազան փառաբանութեան՝ ձեռքին ստորոգելիներուն առնչութեամբ:

55-

- Միրտի պարկեշտութիւնը,
- Միտքի առողջութիւնը,
- Գիտակցութիւնն եւս,
- Ինքն իր հանդէպ յարգանքը դեռ,
- Ինքն իրմէ խպնելու առաքինութիւնը,
- Զսխալելու մտահոգութիւնն ալ՝ անշուշտ,

- Ուղղամտութիւնը՝ ի հարկ է,
- Տգիտութեան վտանգը՝ դեռ մանաւանդ,
- Հետաքրքրութիւնը՝ նաեւ,
- Ճշմարտութեան սէրն ալ՝ անկասկած,
- Մաքուր, անսակարկ ձեռքը,
- Սուտին դէմ նողկանքը,
- Արդարութեան տարրական պայմանները՝ աւելի,
- Ըսի-ըսաւին անթիւ գոհերը՝ անհատական թէ ազգային,
- Եւ վերջապէս մարդկային խղճմտանքը.-

Կը պահանջեն՝ անհրաժեշտաբար, նախապէս քննել ինդրոյ առարկայ եղող դէպքը, կամ հարցը՝ բերան բանալէ առաջ, գրիչը ձեռք առնելէ առաջ, իր ձեռքովը հպելէ, շօշափելէ առաջ, ո՛րէ՛կ ձեռով արտայայտուելէ առաջ ալ, մանաւանդ ոեւէ՛ վէճէ, ոեւէ՛ որոշումէ առաջ, անգա՛մ աղօթելէ առաջ:

Եւ այս՝ պէտք է դառնայ ամէն ձեռքին անշեղ սովորութիւնը, բարոյականը, իր գոյութեանն իսկ արդարացումը, իր հանգամանքը, այլապէս այս ձեռքը կը վերածուի ոսկորի, վէտվէտ մորթի, կը կորսնցնէ իր զգայնութիւնը, մտածելու, գատելու, ստեղծագործելու, ճշմարտութիւնը նշմարելու, եւ բռնելու իր բոլոր ստորոգելիները: Եւ այն ատեն, ձեռքը կը դառնայ, անխուսափելիօրէն, վտանգ՝ իր անձին ու ընկերութեան համար:

Արդարեւ, այն ձեռքը որ կը դատէ, որ կը վճռէ առանց նախապէս քննած ըլլալու, առանց նախապէս իր մատներովը շօշափած ըլլալու ինդրոյ առարկայ հարցը, նիւթը՝ այդ ձեռքը անշուշտ որ նախամարդու գործ կատարած պիտի ըլլայ:

Նման ձեռքեր՝ անհատին համար, հաւաքականութեանց համար, ազգերու համար, համայն մարդկութեան համար,

տեսական տգիտություն կը ներկայացնեն, եւ այդ ձեռքերը սրբագրելը՝ ամեն ատեն չէ որ կարելի կ'ըլլայ:

Անհատներու թէ երկիրներու մեծ թէ պզտիկ պատմութիւնը՝ բազմաթիւ պարագաներ կը պարունակէ այդ տեսակէն:

56-

Օթելլոյին երկու ձեռքերը՝ ոսկոր եւ մաշկ էին: Պիտի չի կրնար ունենալ հպելու, շօշափելու խղճմտութիւնը, գիտակցութիւնը՝ փնտռելու, գտնելու, ստուգելու համար իրականութիւնը, մինչեւ անգամ երբ պարագան ճակատագրական էր իրեն եւ իր Տէգտեմոնային համար: Իր ձեռքերը զուրկ էին ձեռքին ստորոգելիներէն.- նախամարդու այդ ձեռքերը: Հաւատաց Եակոյին գրպարտութեան, իր ձեռքովը խեղդեց իրականութիւնը, փոխանակ զայն ստուգել ուզելու, փորձելու՝ իր արարքէն առաջ: Անխուսափելի էր այս՝ սակայն. իր ցեղին մարդը գործեց:

Արդարեւ, Օթելլոն այլ կերպ չէր կրնար շարժիլ. իր ձեռքը տակաւին նախամարդու բնագոյր կը կրէր, իր էութեանը մէջ, եւ նախամարդը, կամ անգիտակից մարդը՝ իր արարքէն առաջ քննելու մասին չի խորհիր անգամ:

Առանց մասնաւոր պատճառի չէ, ու երբէ՛ք պատահական, ուրեմն, որ Օթելլոյի բնութիւնը, խղճմտութիւնը, միտքը, հակազդեցութիւնը ներկայացնող կերպարը ստեղծելու համար՝ Շէքսպիր զայն վերցուցած է Օթելլոյին իսկ պատկանած ցեղին մարդոց մէջէն:

Այսօր ալ սակայն, այս բնագաւառին մէջ, մարդկութիւնը իր մանկական շրջանին մէջ չի՞ գտնուիր տակաւին. բարդ ու երկար պիտի ըլլար պատասխանը: Բայց այս հարցումը արդէն ինքնին յատկանշական է՝ իր կարեւորութեանը համար: Յամենայն դէպս,

Սոկրատէն ի վեր, Պդատոնէն ի վեր, ցաւը կա՛յ, գուցէ բոլորին համար ալ, Արեւելքէն Արեւմուտք, Հարաւէն Հիւսիս: Հակազդեցութիւններն ալ միշտ եղած են ուժեղ, դաժան – օրինակը՝ Միջին Դարը կը տրուի իսկոյն. օրինակը՝ կը տրուի նաեւ անհմանալի հաւատքներով անգամ մեր օրերուն:

Եւ կա՛յ, այսուհանդերձ, ճշմարտութիւն մըն ալ, որ մեր ձեռքերուն գեղեցկութիւնը կը կազմէ, որ կեանքին խորհուրդը կը պարունակէ: Եւ պայքարիլ՝ ճշմարտութիւնը գտնելու համար. յառաջդիմել, բարձրանալ՝ գագաթը հասնելու համար. գագաթին, որուն ո՛չ ոք, եւ ո՛չ մէկ քաղաքակրթութիւն պիտի չհասնի ալ: Ինչպէս յոյները երազեցին, գուցէ սահմանեցին ալ գագաթը, Բայց երբ կարծեցին, թէ հոն հասած են իրենց ստեղծած աստուածներուն շնորհիւր, սկսան ե՛ւ իջնել ետ:

Մարդուն՝ օդին մէջէն ճամբայ բանալը ու թռիլը՝ երազ մըն էր իրեն համար, գագաթն էր իրեն համար. Բայց շատոնց արդէն գագաթ մը չէ այս, այլեւս: Բարեկամ մը ունիմ, շա՛տ հաւատացեալ, որ օրին մէկը ըսաւ ինձի, թէ եթէ մարդը լուսին երթայ, պիտի չհաւատայ Աստուծոյ գոյութեան. այսօր այս մասին չի խօսիր ա՛լ, մինչ դեռ նո՛յն հաւատացեալն է. իր յիշատակութիւնը ըրի հոս իր մտածումին եւ համալսարանական ըլլալուն համար: Մարդը՝ լուսին հասաւ անշուշտ, հոն քիչ մըն ալ քննութիւններ կատարեց, Բայց այս իրականացումն իսկ գագաթ մը ըլլալէ դադրած է: Մարդուն հնարաւորութիւնը, մարդուն աստուածութիւնը կա՛ն այս աշխատանքներուն մէջ, եւ իր յառաջդիմութեան անսահման հնարաւորութիւններն են որ կը կազմեն իր հրաշագեղ էութիւնը, ինչպէս նաեւ իր անվերջ հակասութիւններն ալ: Իր ձեռքը շարունակ կը շինէ, շարունակ ալ կը քանդէ, Բայց ե՛ւ շարունակ նորը կը կերտէ, իր մատներուն հպումը կանգ չ՛առնէր, ինչքան ալ չհասնի գագաթին, գոր

կ'երագէ, եւ որ չի լրանար, իր ձեռքը չի կրնար գայն լրացնել.- ձեռքին աշխատանքը, ձեռքին ստեղծագործութիւնը՝ վերջակէտ չունի, եւ չի՛ կրնար ունենալ: Իր աստուածութիւնը այսպէս է: Իր սահմանած կէտին հասնելուն պէս՝ յառաջդիմութիւնը կանգ կ'առնէ, եւ այլեւս տեղ քայլ պիտի ընէ. կամ կ'իջնէ ետ.- այս երկու պարագաներն ալ՝ նո՛յն նշանակութիւնը ունին յառաջ-դիմութեան համար, դէպի գագաթ ընթանալու իմաստին մէջ: Յառաջդիմութիւնը՝ հանգրուան ունենալու չի՛ գար: Ամբարտաւանը չի գիտեր, չի հասկընար այս պարագան. ուստի եւ չի՛ քններ, չի՛ մտածեր. կը հաւատայ, թէ իր ունեցածը՝ միտք կամ առարկայ, գագաթն է: Ամբարտաւաններուն, սնափառներուն պատճառով՝ մարդկութիւնը շատ կը տառապի:

57-

Կը սիրեմ նորութիւնները:

Անշուշտ ուրիշ շատեր ալ կան նորութիւնները սիրող, ինչպէս նաեւ չսիրողներ:

Այս վերջիններուն համար կ'ըսուի՝ առհասարակ, թէ պահպանողական են անոնք: Գուցէ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսելը, թէ պարագան՝ ճաշակի, զգացումի, մտածելակերպի հարց մըն է: Առհաւութեան, շրջապատի, ստամոքսի հարց ալ: Արդարեւ, ընտրել, գանազանել, գնահատել կարենալը՝ փորձա-ռութեան, հմտութեան, մարտողութեան ստորոգելիք է: Մինչ ձեռքին պարկեշտութեան, գրաւականին ալ անհրաժեշտու-թիւնը՝ իր գլխաւոր դերը ունի, անշուշտ:

Նաեւ կը հաւատամ, թէ առաւելաբար գեղեցիկ դպրութեան մէջ, առանց նորութեան՝ ստեղծագործութիւն չի՛ ստացուիր: Եւ

հոս, մանաւանդ, ստեղծագործութիւնը կը նշանակէ՝ ճշմարտութիւնը փնտռել, գտնելն ու արտայայտելը հարազատօրէն:

Ճշմարտութեան մը յայտնումին՝ հակազդեցութիւնները անշուշտ որ միշտ ալ իրար հետ համաձայն չեն ըլլար: Շատ անգամ, թեր ու դէմ կարծիքներ, նոյնիսկ բո՛ւրն վէճեր տեղի կ'ունենան: Այն աստէն՝ ուրեմս, օգտակարութիւնը, կամ պատեհութեան, կամ գեղեցկութեան, կամ հաճելիութեան, կամ զանազան կարգի շահախնդրութեան նկատմամբն են որ նժարին վրայ դնել պիտի տան՝ ճշմարիտը կշռելու, ճշմարիտը ստուգելու, ճշմարիտը գնահատելու համար ...: Եւ այս առթիւ ալ դարձեալ, ձեռքին ստորոգելիներուն կը դիմեն մարդիկ, ամէն մէկը իր հասկցած կերպովը, իր տրամադրութեան համաձայն: Իսկական ճշմարտութիւնը գտնելը ու մանաւանդ զայն երեւան հանելը՝ նորութիւն մը կը կազմէ ինքնին:

Այս բնագաւառին մէջ, Շահան Շահնուրին գեղեցիկ դպրութեան եւ իր փորձերուն ալ ելոյթը՝ իր ամէնէն հուժկու, ամէնէն յանդուգն արգասիքը՝ իր արտայայտած նորութիւնները եղան, մօտ վեց տասնեակներու (տասնամեակներո՞ւ խմբ.) ընթացքին:

Զգայուն, գիտակից ձեռքով մը, արի ու անվերապահ, ճշմարտութիւնները շօշափած, գտած, յետոյ զանոնք ուղղակի, հարազատօրէն յայտնած ըլլալուն համար մանաւանդ, առանց նկատի ունենալու իր հասարակութեան կաղապարեալ միտքերը, ամբոխավարները, կեղծ սուրբերն ու կեղծ ազգասէրները, որ կրնային իրեն դէմ հալածանքի ձեռք տալ: Եւ Շահան Շահնուր լաւ գիտէր այս կարելիութիւնը, այս ստոյգ կարելիութիւնը: Իր «Նահանջը Առանց Երգի» վէպին հայ դէմքերէն Միսաք կը յորդորէ Սուրենին, որ կը խօսէր խիստ ծանր

կերպով յիշատակելով ու քննադատելով մեր սխալներն ու պակասները, ինչպէս նաեւ անփոխարինելի կորուստներուն եւ իրենց ներկայ վիճակին պատճառները.

«-Աղէկ որ,- կ'ըսէր արդարեւ Միսաք՝ իր խօսքը ուղղելով Սուրենին,- աղէկ որ այդ խօսքերդ ուրիշին չես ըսեր. քեզ անմիջապէս դաւաճան, ազգուրաց, վատասերած պիտի անուանեն»:

Բայց է՛ւ միշտ ալ Շահնուր պիտի արտայայտէ իր ճշմարտութիւնները: Եւ առանց վերապահութեան: Ձեռնոց չի՛ դներ երբեք: Այս կերպով կը սիրէ ան իր ժողովուրդը, իր հայրենիքը: Ա՛յս կերպով կը ծառայէ իր ժողովուրդին, իր հայրենիքին: Երբ յիշեալ վեպը իբր թերթօս կը սկսի հրատարակուիլ «Յառաջ»ին մէջ 1929-ին, ոմանք փորձեցին անոր շարունակութիւնը արգիլել, եւ ջլաջողեցան: Ըստ ինծի, «Նահանջը Առանց Երգի»ն գնահատումը, հեղինակը կը պարտի ամէնէն աւելի այն իրողութեան, որ շատ մը հում ճշմարտութիւններ կ'ըսէ ան, վստահ՝ հանդէպ իր ձեռքին հարազատ փոխանցումներուն, եւ առանց երբեք տատամսելու, զգուշանալու, առանց երբեք իր չորս կողմը նայելու, եւ դեռ առանց ալ իր բառերը ծամծմելու երբ նոյնիսկ շատ խիստ են անոնք եւ կ'ուղղուին ծանրակշիռ եւ սրբազան նկատուած պարագաներու:

Եւ հակառակ երբե՛մս այսպէս դառնութիւն պարունակող իր խիստ դիտողութիւններուն, եւ նոյնքա՛ն ալ խիստ քննադատութեանց, պիտի ուզէի անմիջապէս ընդգծել, թէ Շահնուր միշտ ունեցած, միշտ պահած է, եւ արտայայտած ալ իր խոր ու անյողողող սէրն ու հաւատարմութիւնը իր հայրութեանը հանդէպ, իր կեանքին ամէնէն դժնդակ, յուսահատական, ամէնէն վատթար պայմաններուն եւ տառապանքներուն մէջն անգամ: Եւ

բնա՛ւ մոռնալու չէ այս պարագան, երբ, մանաւանդ, ան կը յայտնէ ճշմարտութիւնները: Արդարեւ, երբ Շահնուրին մօտիկը գտնուող հիւանդ մը իրեն կը հարցնէ. «-Ինձի ըսին թէ դուն օտար ես, ճի՞շդ է», - ան կը պատասխանէ իսկոյն.

«-Ես հայ եմ»:

Ինչպէս Տոսթոյեվսքիին վէպերուն տիպարներէն՝ Շաթոֆին երբ կը հարցնեն «Կը հաւատա՞ք Աստծոյ», այս վերջինը կը պատասխանէ անյապաղ.

«-Ես Ռուսիոյ կը հաւատամ»:

Վստահաբար՝ վերի երկու պատասխաններն ալ անկեղծ են, սրտաբուխ, գուրկ երկդիմի ըլլալէ, եւ վերջնական ապաստան՝ երկու հեղինակներուն համար ե՛ւ: Եւ սակայն այս երկու հեղինակներն ալ՝ իրենց ուղղուած հարցումին բո՛ւն եւ ուղղա՛կի պատասխան չտուին:

Մօտ քսանը հինգ տարեկան Շահնուր, երբ գրեց «Նահանջը Առանց Երգի» անունով իր առաջին վէպը, իր գլուխ-գործոցը, Փարիզ՝ ուր ապաստանած էր, վտանգը տեսնելով՝ իրեն համար ալ, Քէմալական արշաւանքին, իր ծննդավայր Պոլսոյ մէջ:

Փարիզ՝ իրեն պէս արմատախիլ գաղթական հայեր շատ կան այդ շրջանին: Բոլորին մտահոգութիւնը, ցաւը, տառապանքը՝ նոյնանման են առ հասարակ .- առօրեայ հացը հայթայթելու անօրինակ դժուարութիւնները, աշխատանքին անյարմարութիւնները, յաճախ ալ այդ աշխատանքին ստորաքարշ, նուաստացուցիչ կերպերն ու հանգամանքը, հարազատներուն, տան, հայրենիքին կարօտը, ապագայի եւ վերապրումի անստոյգ հեռանկարը: Նաեւ անբաղձալի գաղթականի վիճակը, որ իրենց կ'ընկերանայ ամէն օր, ամէն

տեղ, շուքի մը պէս: Ե՛ւ Փարիզի կեանքը, անոր բարձր, հաճելի եւ միեւնոյն աստէն կուլ տուող խորխորատներն ալ: Շահան Շահնուր մտաւորական միջավայրի մէջ մեծցած՝ իսկական մտաւորական է. գիտէ նշմարել, շօշափել, զգալ, ըմբռնել բոլոր դիրքերը, իր շուրջիններուն էութիւնը, եւ ի՛րն ալ անշուշտ:

Տխո՛ւր է, ողբերգական է «Նահանջը Առանց Երգի»ն մէջ երեւցող հայ երիտասարդներուն ապրումը: Բոլո՛րն ալ մոայլ, տառապած, ելք մը փնտռող, միշտ խորը ինկող, ամէն մէկը կորսուելու վրայ կամ արդէն իսկ կորսուած, բայց միշտ ալ հայ ժնասցած ամէնէն անակնկալ պարագաներուն մէջն իսկ, կարօտը իրենց յիշատակներուն մէջ առկայ, անկարող ճիշդը գտնելու, որոշելու: Դժբա՛խտ, դժբա՛խտ, ամէն կողմէ զարնուած, լքուած սերունդ, որ կը փնտռէ իր այս վիճակին պատճառը ու կը դեգերի, երբե՛մ ալ ամէնէն սրբազան նկատուած ասանդութիւնները, ընդունուած ճշմարտութիւններն անգամ քննադատելով, ուրանալով: Իր վերագրումները պիտի ըլլան մեր դարաւոր թշնամիին դէմ, դուրսին դէմ, ներսին դէմ – շատ աղէկ չի գիտեր, շիտակը. ամէն ինչ կը խուսափի իր ձեռքէն. հայ Սփիւռքը՝ ինքնին, ինքն իրեն, ողբերգական իրականութիւն մըն էր, ըլլալով ծնունդը շարք մը անօրինակ ողբերգութեանց:

Եթէ յիշեալ վէպին երկու գլխաւոր հերոսները՝ Պետրոս-Փիէռ եւ Սուրէն ծանր նշմարումներ, աւելի ծանր ալ տատանումներ արտայայտեցին շատ անգամ, պարագան չի՛ նշանակէր երբեք, թէ անոնք պարզ յոռետեսներ էին: Պարզապէս, հարագատօրէն իրատես էին անոնք. ապացոյց, որ անոնք շօշափած էին, զգացած էին, կ'ըմբռնէին, կը սիրէին նաեւ հայութեան ու անոր առո՛ղջ ասանդութեան գեղեցիկ կողմերը, հպարտութիւն առթող ազդակներն ալ, եւ ո՛չ մէկ առիթ կը փախցնէին զանոնք վեր առնելու, զանոնք հիմնովին արժեւորելու, զանոնք փառա-

բանելու համար ալ: Աննախապաշարեալ, ստոյգ, արդար ձեռքեր ունեցան: Շահնուր կը դաւանի, թէ «սուտը քաղաքական զենքերէն մին է, մշակոյթին զենքը միայն արդարութիւնն է»:

Այն շրջանին, ուր ան գրեց «Նահանջը Առանց Երգի» վէպը, հայուն նահանջը տեղի կ'ունենար արդէն ո՛չ թէ կամքէ անկախ պատճառներով, այլ շատ մը տարապայման ու ծա՛նր, ծա՛նր պարտութիւններէ, սխալներէ ետքը, եւ անշուշտ «առանց երգի», եւ տխրօրէն: Այսօ՛ր ալ նահանջ կայ, լայն դաշտի վրայ, այսօ՛ր ալ, յիշեալ վէպին հրատարակութենէն կէս դարէ աւելի ետքն իսկ, բայց այս անգամ, հիմա, նահանջը տեղի կ'ունենայ երգելով, երբեմն կամովին, ու մանաւանդ որոշ հպարտութեամբ մըն ալ՝ երբ հայը կարելիութիւնը պիտի ունենայ մեծ ազգի մը հպատակութիւնը ունենալու.- այլեւս ան շալակաւոր է, մինչ ոմանք դիրք ալ ունին:

Շահնուր կ'ապրէ՝ իր իսկական երիտասարդութեան տարիներուն անգամ դժնդակ օրեր, մանաւանդ իբր հայ: Հայը անբաղձալին էր՝ բոլոր երկիրներու մէջ, արմատախիլ մարդ մը, առա՛նց հայրենիքի, եւ ուղղակի կ'արհամարհէին ալ զինքը, ամէ՛ն տեղ, ո՛րէն առթիւ: Շահան Շահնուր կը զգար անշուշտ իր դրութեան անարդարութիւնը, որ բոլոր հայերունն ալ էր, կը զգար այս ցաւագին կացութիւնը: Կ'ըմբռներ, կը զգար, թէ ինք եւ ընկերները զոհուած սերունդը կը կազմեն: Բայց յոյս մը կա՞ր խուսափելու, ազատուելու: Իր սիրտը, իր միտքը, իր մշակոյթը ունեցող մտաւորական երիտասարդ մը միա՛յն այդ դրութիւնը նկատի պիտի առներ. անտարբեր մը, եսասէր մը չէր ինք: Անգամ ամէնէն ազատամիտ ու մեծ երկիրները չէին ուզեր հայուն անունը լսել իսկ: Գուցէ կ'ամչնային ներքնապէս – ոմանք, թերեւս շատեր – գիտէին թէ այդ վիճակին իրականացումին մէջ ապահո-

վաբար մեղսակից էին: Հայուն ներկայութիւնը՝ զիրենք յայտնօրէն կը նեղէր կարգ մը եղելութեանց մէջ. ուստի եւ զայն դէպի հեռուները, իրենց ներկայութենէն, շրջանակէն, իրենց աչքերէն հեռու, միշտ դէպի հեռուն կը հրէին: Շահնուր յաճախ տեսած ըլլալու է այն ձեռքերը՝ որ կը հրէին հայը՝ իրենց ներկայութենէն դուրս: Կասկած չկայ, որ ասիկա իր գլխաւոր վիշտը եղած ըլլալու է:

Իբր վերյարդարող մտաւ լուսանկարչատուն մը, իր հանապազօրեայ հացը շահելու համար: Եւ այսպէս ալ կը սկսէր կորսուիլ իր ներկային մէջ: Ապագայի յոյսեր, ծրագիրներ պիտի չունենար: Եթէ գրեց սակայն, եթէ ծառայեց սակայն գեղեցիկ դպրութեան, պարագան կրնայ նկատուիլ՝ իր ներկայէն, իր դժնդակ ներկայէն խուսափում մը, պարպուիլ մը, կամ հետեւիլ անզսպելի իտէալի մը, առաքելութեան մը: Այսուհանդերձ, ինչ որ ալ եղած ըլլայ իր բուն պարագան, Շահան Շահնուրին արժէքը, արժանիքն ու փառքը՝ իբր ստեղծագործ վիպասան, իբր արդար ճշմարտութիւնը փնտռող, սիրող, արտայայտող փորձագիր, կասկածէ վեր են:

Եւ ճիշդ է նաեւ, որ ան չուզէց հեռանալ, մեկուսանալ. իր ընկերներուն հետն էր. նոյն ճակատագիրը ունէին: Ի՞նչպէս կրցան ապրիլ: Ի՞նչպէս կրցան վերապրիլ՝ մանաւանդ: Այս հարցումները՝ հայոց համար, միշտ ալ անօրինակ, տարապայման են, եւ երբեք ալ իրենց ճշգրիտ պատասխանը պիտի չստանան: Ամէն պարագայի տակ, անհետացողներ, կորսուողներ, զանազան կարգի կորսուողներ՝ անշուշտ որ եղան, բայց է՛ւ վերապրողներ ալ:

Իր ըմբռնումներուն մէջ, Շահնուր աւելի իրատես էր – իր ձեռքը՝ իրականութենէն չհեռացուց, ինչքան ալ դառն ըլլար ան: Պատմութեան մէջ մտաւ շնորհիւ իր ճշմարտութիւններուն,

շնորհիւ իր ճշմարտութիւնները ըսած ըլլալուն համար. եւ չկրցան զինքը պատմութենէն դուրս արտաքսել, հակառակ իր գոյութեան տուած անհաճոյ ամբաստանութեանց, քննադատութեանց հանդէպ մէկէ աւելի մեծերուն, եւ կարգ մը ասանդակաւն ըմբռնումներուն ալ:

Մինչ իր կարծիքներուն, իր վճիռներուն մէջ երբեմն չափազանցեալ բայց միշտ բացարձակ եղաւ Շահնուր: Ա՛յս ալ ճիշդ է: Նաեւ՝ իր զգացումներուն մէջ: Առհասարակ, ես կը զգուշանամ անոնցմէ, որոնք բացարձակ բնոյթով կ'արտայայտուին, կը վճռեն. ու չեմ սիրեր ալ, հետեւաբար: Բայց Շահան Շահնուրին գիրին մէջ, իր այդ երեւոյթը չէ խրոչեցուցած զիս, գուցէ շնորհիւ իր արուեստին, իր ըսելաձեւերուն, իր անկեղծութեան, իր բերած յանդուգն անակնկալներուն, իր ճշմարտութեանց ինքնուրոյն արդարութեան: Եւ Շահնուր մտերմական ներկայութիւն մըն է, ունի միշտ ալ գրաւիչ չեմ գիտեր ինչ մը, իր նշմարումները ընկերական են, սրամիտ ալ՝ տեղ-տեղ ու հեզնական:

Արդեօք Շահնուր արտայայտե՞ց, կամ կրցա՞ւ արտայայտել իր շօշափած, զգացած, ըմբռնած բոլոր ճշմարտութիւնները: Ճշգրիտ պատասխանը՝ անօգուտ պիտի չըլլար անշուշտ: Բայց այդ՝ ի՛նք միայն գիտէ: Ամէն պարագայի տակ, հաւանական է որ նո՛յն ճշմարտութիւնը պիտի չհամարձակէր կամ զգուշանար նո՛յն անվերապահութեամբ, նո՛յն կարծրութեամբ արտայայտել իր յիսունին կամ աւելի առաջացած տարիքին մէջ. ճիշդը՝ ո՛չ թէ Շահնուր դադրեցաւ՝ իր երիտասարդական շրջանէն ետքը, ճշմարտութիւնը զսպելէ, ո՛չ թէ լքեց իրողութիւնները յայտնելու իր կամքը, շնորհը, այլ իր ձեւերը այլեւս պակաս կարծր էին, եւ աւելի մեղմ:

Այսուհանդերձ, մեր վիպասաններուն ամենէն հում ու կծու, անմիջական ճշմարտութիւնները ի՛նք յայտնեց: Ճշմարտութիւնները փնտռելու եւ զանոնք յայտնելու կիրքը ունէր: Եւ կ'ըսէր ուղղակի կերպով: Շեղակի ճամբաները չէր սիրէր: Եւ միշտ ալ իսկական մտաւորականը մասց՝ ամէն բանէ վեր, անձնականէն ալ վեր, դրսեւորելու համար իր ճշմարտութիւնները:

Զարմանալիօրէն, իր խումբին մէջ, Փարիզ, Մեծ Եղեռնէն վերապրողներ չկային. գրեթէ բո՛լորն ալ Պոլսէն փախածներ: Բայց բո՛լորն ալ դժբախտներ, զրկեալներ: Անյոյս, դառնացած երիտասարդներ, ընդհանրապէս: Եւ անստոյգ ներկայով, անստոյգ ապագայով: Եւ աշխարհին ամենէն լուսաւոր, ամենէն անդունդաւոր, սիրոյ եւ միանգամայն առանձնութեան, անտարբերութեան կղզիացումին իրականութիւններով խոշոր կեդրոնի մը մէջ:

Շահնուր անշուշտ որոշ զարգացում մը ունէր երբ կը հասնի Փարիզ: Շատ կարդացած, ուսումը սիրող, հայկական միջավայրի մը մէջ դաստիարակուած է եւ տաղանդ ունի: Բայց, այսուհանդերձ, գրեթէ ամէն ինչ նոր էր իրեն համար, Փարիզի մէջ. աշխատանքէ սկսելով՝ բոլոր պայմանները, եւ բարքերը: Դիրին չէր հաւասարակշռութիւնը պահելն ու ապրիլը: Եւ ապրիլ կ'ուզէր, ինչպէս իր ընկերներն ալ: Այս պարագային խորութիւնը, բովանդակութիւնը հասկնալու համար՝ այդ տղայոց կացութեան մէջ գտնուած ըլլալու է մանաւանդ այդ օրերուն:

Ուրեմս Շահան Շահնուրին բերածը՝ նախ իր «Նահանջը Առանց Երգի» վէպին մէջ, կերպով մը ամենէն առաջ, եղաւ նո՛ր, աննախընթաց յանդգնութիւն մը ցուցաբերելը, անսակարկ, անվեհեր ձեռքով մը, ցուցամատը դէպի իր ճշմարտութիւնները

ուղղած, ճշմարտութիւնը՝ անցեալին պատկանող բայց շարունակած ու տիրական ալ տակաւին ներկային վրայ, եւ առկայ ճշմարտութիւնները՝ ներկային մէջ:

Եւ առանց մասնաւոր մտածումով չէ որ, ուրեմն, հոս, յիշատակեցի Շահան Շահնուրին իւրայատուկ պարագան:

Երբ ան սկսաւ գրել, իր շրջանը գուցէ մեր ամենէն անորոշ, ամենէն անկազմակերպ, ամենէն անստոյգ դրութիւնը, պայմանները կը ներկայացնէր կեանքի եւ գոյութեան, անհատական թէ ազգային կրկնակ իմաստովը: Սփիւռքը հետզհետէ կայք կ'ընէր հոն ուր կը գտնուէր: Առատօրէն խոստումսալից դաշնագիրներուն, մահատիպ, անամօթ դաշնագիրներ յաջորդած էին: Հայրենիքը անթափանց մշուշի մէջ էր: Կազմակերպութիւն չկար: Այս մթնոլորտին մէջ գրեց Շահնուր: «Պատկերագարդ Պատմութիւն Հայոց» մը տալու համար: Եւ բացառաբար ալ առանց ամբոխավարութիւն ընելու. արդարեւ, իր յիշեալ վէպին կարգ մը հրապարակագրութեան մօտեցող ընդարձակ էջերուն մէջն անգամ, կը հեռանայ այդ ամպիոնէն:

Ու եթէ իր այս վէպը լայն համակրանք գտաւ մեր բոլոր հատուածներուն պատկանողներուն մօտն ալ, պարագան կ'արժէ լրջօրէն եւ անկողմնակալ կերպով հետազօտել, ուսումնասիրել:

Իր խիզախ արտայայտութեանց, իր խիզախ ու հարազատ արտայայտութեանց մէջ՝ հակասութիւններ ալ կան անշուշտ: Գուցէ եւ իր այս հակասութիւնները գլխաւոր պատճառներէն մին կազմած ըլլան իր լայն յաջողութեանց, որ կ'երեւան մինչեւ այսօր: Մեծ ու նոր տեսութիւնները, արուեստը, ստեղծագործութիւնները, նոր վարդապետութիւններն ալ՝ ունեցած են եւ ունին իրենց նոյնիսկ էական հակասութիւնները, եւ որ կենսա-

կան ազդակը եղած են իրենց տարածումին: Արուեստագետին համար,- կ'ըսէ Սթեֆան Չվայկ,- ամէն ճշմարտութիւն կրնայ երկուութիւն ունենալ: Նոյնպէս Անաթոլ Ֆրանս կը հաւաստէ, իր կարգին, թէ ամէն գեղարուեստական գրող՝ հակասական տեսութիւններ եւ ճշմարտութիւններ կրնայ ունենալ:

Յիշեալ վէպին գտած լաւ ընդունելութիւնը՝ հոգեբանական պատճառէ մըն ալ կու գայ վստահաբար.- ամէն հայ՝ այդ օրերուն, պէտք ունէր, անհրաժեշտօրէն պէտքը կը զգար այս վէպին մէջ պարզուած ճշմարտութիւնները իմանալու, ճշմարտութիւնները՝ իր անցեալին, իր ներկային ու իր էութեանը անցեալէն, իր ինքնութեանը առնչութեամբ, հայ ազգային սխալները, թերութիւնները, պատասխանատու դէմքերը յայտնաբերող: Արդարեւ, ամէն հայ կը փնտռէր՝ հրապարակով կամ լուռ, այն ձեռքը՝ որ այս բաները իրեն համար երեւան պիտի հանէր, մինչ այս յայտնութենէն կը յուսար ալ ելք մը գտնել, կամ առնուազն միւիթարանք մը: Շահնուր առատօրէն բերաւ այդ՝ իր գեղարուեստական էջերովը: Եւ հետզհետէ զինքը աւելի սիրեցին իր ճշմարտութիւններուն համար:

Եւ իր ձեռքը շօշափեց, արտադրեց ամէնէն դժնդակ, տարապայման պայմաններուն մէջն անգամ.- անստոյգ առօրեայ, ազգովին նահանջ, ֆիզիքապէս ամէնէն տարրական ինամքի կարօտ, բարեացակամ ժպիտէ գրկուած: Եւ օր մը, մօտ տասնամեակ մը ետքը իր գլուխ-գործոց «Նահանջը Առանց Երգի» վէպին հրատարակումէն, Փարիզի «Անի» ճաշարանին մէջ՝ իր դէմքն ի վեր հայ երկու եղբայրներ, որոնցմէ մին գրող ալ, բռունցքի հարուած մը կու տան, իր ակնոցները կը կոտորուին,- ինչպէս կը գրէ պարագան իր մէկ անձնական նամակովը Վահան Թեքէանին ուղղեալ՝ 5 Դեկտ. 1937 թուականին, եւ որուն մէջ Շահնուր կ'աւելցնէ նաեւ, թէ իրմէ աւելի երջանիկ է, որ աչքը

չկորսնցուց ... ու քիչ վարն ալ դեռ կը յարէ, թէ «խորապէս զգուած է» իր «հանրութենէն»: Բայց ինչո՞ւ, այս առթիւ, չի յիշեր, թէ Վահան Թեքէեանին մէկ այլը հանողը եւ զինքը հարուածող երկու եղբայրներն ալ հայե՛ր եղած են ...: Շահնուր չէ՞ր նշմարած այս պարագան: Չե՛մ կարծեր: Կարելի չէ՛մ նկատեր: Գուցէ իր ցաւերը արդէն շատ, եւ շատ ալ ծա՛նր էին իրեն համար: Բայց յիշեալ միջադէպին առթիւ, հա՛րկ էր ստուգել, ինչքան կարելի է, անոր իսկական դրդապատճառը.- ինչո՞ւ երկու եղբայրներ, որոնցմէ մին գրող իսկ է, յարձակեր են ֆիզիքապէս տկար ու հիւանդի մը վրայ, մանաւանդ որ ան հոչակ ստացած, տաղանդաւոր վիպասան ալ է: Նախա՞նձը, կամ ենթակային կողմէ յանցա՞նք մը, կամ հատուածական տարակարծութիւնն է՞ր, որիս է՞ր, կամ անհաճոյ բնութի՞ւն մը տեղի տուին այդ յարձակումին, որ, ամէն պարագայի մէջ ալ, տգեղ է: Հայկական նկարագիրին, հայկական բնութեան, հայու մոլեռանդութեան, անհանդուրժողութեան, հայու ատելութեան առնչութեամբ՝ մե՛ղք որ վերի հարցականները առանց պատասխանի փասցած են, զոնէ ինծի համար: Այս բնագաւառին մէջ, շահեկան վկայութիւն մը կորսնցուցած պիտի ըլլանք: Այո՛, մե՛ղք որ այդ վկայութիւնը բերող ձեռքը չգտնուեցաւ: Գուցէ այդ ատենին վկաները խնդիրը շա՛տ ոչինչ, շա՛տ հասարակ նկատեցին ...:

Շահան Շահնուրին բերած, յայտնած ճշմարտութիւնները ընդհանրապէս դառն ու մռայլ են, եւ կը վերաբերին հայ ազգային, ցեղային իրականութեանց, ինչպէս նաեւ հայկական բարքերուն. քիչ անգամ զուրկ են անոնք այլ հանգամանքէ: «Նահանջը Առանց Երգի» հերոսներէն մին՝ Սուրէն կ'ըսէ վէպին գլխաւոր հերոսը Պետրոսին, որ Փիէռն է.

-Դո՛ւն ալ մարդ չեղար. թի՛ւհ ... լուսանկարի՛չ, լուսանկարի՛չ ... տասնոց չ'արժեր: Դո՛ւն ալ կատարեալ մարժացուեմ

եւ հայութեան: Հայր ունի լաւ նկարիչներ՝ բայց ո՛չ նկարչութիւն. հայր ունի լաւ դերասաններ՝ բայց ոչ թատերգութիւն. յոգնիլ չգիտցող ճամբորդներ՝ բնա՛ւ նաւապետ. հայր ունի զմայլելի բանաստեղծներ, բայց ո՛չ գրականութիւն. Աստուածներ՝ ո՛չ դիցաբանութիւն. Խնկելի յեղափոխականներ՝ բայց ո՛չ յեղափոխութիւն. հայր ունեցած է ազատութիւններ, երբե՛ք՝ անկախութիւն:

Սուրեն պիտի հաստատէ ալ, թէ «պայքարին տեղ դրեր ենք կուսակցութիւն – մեր բոլոր կուսակցութիւնները ապացոյց»:

Որոշ հաւանականութիւն մը ենթադրել կու տայ, թէ վեպին գլխաւոր հերոսը՝ Փիեռ, որ զբաղումով վերյարդարող է, կը մարմնաւորէ Շահան Շահնուրը: Բայց Սուրենին մեջն ալ իրմէ ատաղձներ կան: Նիւթը, դէպքերը շատ են:

Սուրեն՝ յատկանշական բայց տխուր աւանդութիւն մը կը դրսեւորէ, իր կարծր ու դառն բառերովը, թէեւ ոչ առանց փաղաքշանքի ալ, երբ կը գոչէ Միսաքին երեսն ի վեր.

-Դո՛ւն, հայո՛ւ լակոտ, դուն ամենէն շուտը կը փոխուիս անասունի, եթէ օր մը իսկ փասս առանց վիշտի:

Ես ընդգծեցի այս վերջին բառը՝ վիշտը: Հեղինակը, վստահաբար, այդ պիտի ուզէր ալ.- հայր այնքա՛ն մօտէն ընտելացած է վիշտին հետ, այնքա՛ն երկար ժամանակներէ ի վեր. հայր այնքա՛ն շատ վիշտ, այնքա՛ն շատ վիշտեր կրած է իր կոնակին, իր ուսերուն, իր ամէն կողմերուն վրան, որ առանց վիշտի ինքզինք շատ առանձին, լքուած, մեկուսի պիտի զգայ: Վիշտը՝ անհրաժեշտ գոյութիւն մը դարձած, այլեւս: Առանց վիշտի, ան պիտի չկրնար ապրիլ որպէս մարդ:

Սուրենին եւ Փիեռին խօսակցութիւնները միշտ շահեկան են: Ի միջի այլոց, Սուրեն կը հաւաստէ իր մէկ տեսակցութեան ընթացքին, թէ գրելու համար «մեր մեջ գետին չկայ, շարժում չկայ,

գործունեութեան դաշտ չկայ»: Եւ կ'աւելցնէ.- «Յոյսերով կարելի չէ զիս օրօրել. տեսայ ինձմէ առաջ եկող հայերը, որոնք միշտ սպասեցին լաւագոյն օրերու եւ այդ յոյսով ծերացան»: Եւ սակայն Սուրէն կ'ուզէ խօսիլ տակաւին, եւ կը շարունակէ անմիջապէս ալ.- «Կ'ուզեմ խօսիլ, եւ բնական է որ խօսքս ուղղեմ անոնց որոնք լսելու աստեն ու փափաք ունին: Հայը ոչ մէկը ունի, ոչ ալ միւսը: Իսկ դո՛ւն, սիրելի Պետրոս-Փիեռ, դուն եւ քեզի պէսները իմ ըսածներս պիտի հասկնաք: Այդ կը բաւէ ինձի»:

Բայց Պետրոս-Փիեռ դիտել կու տայ իրեն.

-Գրածներդ ո՛չ մէկ հայու կրնան խօսիլ, որքան աստեն որ անոնց մէջ «կարօտ» բառը չկայ ... Այո՛, մի՛ խնդար, որովհետեւ միայն այդ չէ որ թերի է. դուն արդէն գիտես, բայց թող որ յիշեցնեմ, թէ ֆրանսերէնը գոյութիւնը չունի նաեւ «մայր» բառին, «հայ» բառին, «աքտոր» բառ»ին ... ֆրանսերէնը չկա՛յ մեր «գաղթական, մեր «որբ»ին ...

Սուրէնին կողմէ պատասխան չկայ այս մասին: Բայց այլ էջերու մէջ երեւցած իր այլ խօսքերուն մէջ, կան երկար նշմարներ, հաւաստութեան, քննադատութիւններ, ճշմարտութիւններ՝ գեղեցիկ ու յախուռն, ցնցող եւ անսակարկելի: Սուրէն կը դաւանի՝ արդարեւ, իբր իր գլխաւոր հաւաստութեան մին, գուցէ ե՛ւ իր բո՛ւն գլխաւոր հաւաստումը.

-«Ոչ թէ որովհետեւ այժմ պատերազմ կայ ու կռիւ, ոչ թէ որովհետեւ այժմ ճակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետեւ բան մը աւելի ճակատագրական, աւելի աններող, կայ բան մը ահեղ, անդիմադրելի որ իր անունը կ'ոռնայ բոլոր քառուղիներէն. նահանջն է ան, նահանջը հայերուն»:

Ո՛չ թէ սակայն Սուրէն տկար կամք ունի. ո՛չ թէ պայքարը չի՛ սիրեր. այս հարցին մէջ՝ դառնացածն ալ չէ ան.- այլ իրատես մը, հայ իրականութիւնը շատ մօտէն շօշափած մէկը, իրա՛ւ

մտաւորականը. եւ առաքեալ մը: Մինչ իր յայտնած ողբերգութեան՝ նահանջին, աւելի ուժգին եւ դաժան ալ շերտ մը, իմաստ մը տալու համար, ան կը յարէ անմիջապէս ալ, առանց կանգ առնելու իր այդ եզրակացութեան մէջ.

«-Կոիւր սրբազան բան մըն է. ճակատամարտը երբեմն նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ. բայց նահանջը հոգիներու, գլխի պտոյտ տուող գառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան»:

Մխալա՞ծ է Սուրէն, կամ Պետրոս-Փիէռ, կամ Շահան Շահնուր, ասկէ մօտ վեց տասնամեակ մը առաջ հայուն նահանջը տեսած ըլլալով Սփիւռքին մէջ: Պատասխանելէ առաջ այս հարցումին, հաճեցէ՛ք նայիլ, խնդրե՛մ, ձեր մօտերը, շուրջերը, նայեցէ՛ք ձեր գաղութէն ներս, բոլո՛ր գաղութներէն ներս, շօշափեցէք փոքր թէ մեծ իրականութիւնները, շօշափեցէք անկեղծօրէն, առանց ամբոյսավարութեան դիմելու.- հայ մամուլը նօսրացած է, թելերը վար առած. ընթերցողներն ալ նօսրացած են ու վերջին էջը կը կարդան միայն. դրամը շատցած, շատցա՛ծ է, բայց իր բերքը տխեղծ ու անկումային է. համալսարանական վկայեալներ աւելի կան, բայց ճշմարիտ մտաւորական շատ քիչ կայ. եւ գլուխ չկայ, իշխանութիւն չկայ. դրամին չափ առատ խօսք ալ կայ, բայց ճշմարտութիւնը յայտնող ձեռքը խարոյկի վրայ կ'այրեն. կ'ատեն՝ անգիտակցաբար, եւ աւելի յաճախ կ'ատեն՝ ստելու համար միայն.- ուղղամտութիւնը տկարութեան, կամ ապուշութեան տեղ կ'առնեն. եւ խպնիլ չկայ. եւ ամէնէն թանկագին մագաղաթներն անգամ գողնալը՝ յանցանք չի՛ նկատուիր: Եւ այս պայմաններուն տակ, անշուշտ որ Սուրէնին նշմարել տուած նահանջը կը շարունակուի, պիտի չդադրի. «Պատկերազարդ Պատմութիւն Հայոց», այո՛, ի հարկէ.

մանաւանդ Սփիւռքի հայոց նահանջը՝ այլեւս այլազան բնագաւառներու մէջ:

Բայց ե՛ւ այս հաւաքականութիւնը կրնայ տակաւին ոտքի վրայ կենալ, եւ ուզածին չափ աղօթել ալ, որովհետեւ ներկայ Հայաստանին շքեղ իրականութիւնը իրեն արինի ներարկում կը կատարէ. մեր միա՛կ լուսաւոր բեւեռը, որմէ կախում ունի, իրմէ՛ միայն, սփիւռքահայերուն փրկութիւնը՝ որպէս հայ: Ուրիշ, այլ ճշմարտութիւն չկայ, եւ չի՛ կրնար ըլլալ:

Իր երեւումէն իսկ՝ «Նահանջը Առանց Երգի» վէպը կարդացեր էի, ու շատ լաւ տպաւորուած իր արտայայտած ճշմարտութիւններէն, գրելու ձեւէն, հեզնանքէն, իր արուեստէն: Իր հեղինակը ստուգած է, որ հայը ընդ միշտ տառապած է ճշմարտութիւնները չգիտնալէն, ուստի եւ իրեն յայտնեց իր շօշափածները: Եւ հիմա, նորէն կարդացի իր այս վէպը. կը խոստովանիմ որ աւելի, քայց շատ աւելի զգացուեցայ, արեւմտահայոց ողբերգութիւնը շա՛տ աւելի խոր գտայ, հակառակ անոր որ վէպին հայ դերակատարները Մեծ Եղեռնը չեն տեսած իսկ: Վէպին մէջ արտայայտուած իրականութիւնները, ճշմարտութիւնները՝ այսօ՛ր ալ կենդանի են, մինչ նախատեսութիւնները իրականացած ալ՝ մեծ մասով: Հո՛ւ է Շահան Շահնուրին ստեղծագործումներուն էութեան իսկական արժէքը, կշիռը:

Եւ այս իրողութիւնը լիովին ըմբռնելու համարալ՝ հա՛րկ է աննախապաշարեալ կերպով դիմել յիշեալ վէպին՝ «Մուտք» վերնագրին տակ գտնուող առաջին տողերուն իսկ, եւ որոնք վէպին ալ առաջիններն են.- հեղինակին կողմէ կազմուած իւրայատուկ նախագաւիթ մըն է այս մուտքը, կերպով մը անհրաժեշտ անցագիր մը, իր վէպը, իր ճշմարտութիւնները՝ անոնց ճիշդ իմաստովը հասկանալու համար: Բայց այդ տողերը

կարդալու ատեն, խրտչելու չի գար. ձեռքը վրան ամուր դրած մտածելու է. նոր ու յախուռն կերպով, ձեռով տրուած է հարցը, որ՝ ինքնին, մեր օրերուն միայն յատուկ չէ սակայն, մարդուն իմացութիւնը երկար դարերէ ի վեր սկսած ըլլալով այդ մասին մտազբաղուիլ: Ստուգիւ, վեպը անմիջապէս կը սկսի ուրեմն յայտնել, առաջին տողովս իսկ.-

«Հասունցած տղայ մըն էր սակայն. ապացոյց որ չկրցաւ բոզ ու Աստուած բառերուն սահմանումը տալ»:

Ուրեմն քանի որ չկրցաւ բոզին եւ Աստծոյ սահմանումը տալ, հասունցած տղայ մը կը նկատուի ան:

Այսինքն՝ տղան մեծցած է, կրթուած է իր շրջապատին մտայնութեանց համաձայն, ըստ իր միջավայրին աւանդութիւններուն եւ անցեալին, եւ անոնց ազդեցութեան եւ պայմաններուն ենթակայ ըլլալով՝ պիտի չկրնայ ազատօրէն, առանց կաշկանդումի, առանց իր շուրջերը խանգարելու, խրտչեցնելու տալ ճշմարիտ սահմանումը՝ ի՛րը, ամէնէն շատ տարածուած, աւելի շատ ծանօթ եւ առօրեայ յիշեցում ունեցող յիշեալ երկու երեւոյթներու, որոնցմէ մէկը միշտ արհամարհանքով, միշտ ամօթով, մինչ միւսը՝ միշտ ակնածանքով, պաշտումով, աղաչանքով:

Բայց ինչո՞ւ Շահնուր կ'առաջարկէ միայն այդ երկուքին սահմանումը տալ: Պա՛րզ է: Երկու սահմանումներն ալ այնքա՛ն կրկնուած, յեղեղուած են, որ ամէն մարդ կը կարծէ դիւրաւ կարենալ կատարել զանոնք: Բայց երբ այդ սահմանումները ձեւաւորուին մարդոց կողմէ,- ըլլան այդ մարդիկը ուսեալ, իշխանաւոր, Աստուածաբան, կամ անգրագետ,- կը յայտնուի իսկոյն սահմանումներու դէզին մէջէն, թէ ասոնք հիմնովին կրնան տարբերիլ. եւ իրականութեան մէջ տարբեր են արդէն, եւ կրնան ալ ըլլալ նոյնիսկ բոլորովին հակասական եւ մէկը միւսը

հերքող, հալածող, եւ թէ ամէն մէկ սահմանումի հեղինակը իր մասնայատուկ ճշմարտութիւնը ունի կամ կրնայ ունենալ շատ անգամ ոչ առանց յետին նպատակի, գուցէ ալ ոչ առանց շահագրգռութեան,- պարզապէս անոր համար, որ այդ սահմանումները գծող ձեռքերը չեն նմանիր, իրար պէս չեն խորհիր, իրար պէս չեն զգար: Եւ սակայն մեր գիտցած կրօնքները եւ անոնց հետեւող մարդիկը՝ կը հաւատան, կը դաւանին, թէ Աստուած մէ՛կ է ամէ՛ն տեղ, ամէ՛նուն համար: Եւ երբե՛ք երկու, կամ աւելի: Եւ անկէ կը հետեւի ալ անհրաժեշտաբար, թէ ամէն ոք այս մէ՛կ հատիկ Աստուածը ի՛րը ըրած է, ի՛րը միայն, զայն կը պաշտէ, եւ կ'ուզէ ալ որ ո՛չ թէ ինք հետեւի Անոր հրահանգներուն, այլ Ան տնօրինէ իր փափաքներուն, շահերուն համաձայն: Եւ դեռ կ'ուզէ նաեւ, որ այլ մարդիկն ալ, բոլո՛րը, հետեւին ի՛ր Աստծոյ: Իսկ այս այսպէս ըլլալով՝ Աստուածներուն քանակը աւելցած է եւ կ'աւելնայ ալ այնքան որքան մարդիկ Աստծոյ սահմանումը տալու պիտի ձեռնարկեն, ամէն մէկը իր մասին: Այս առնչութեամբ ալ մարդոց ամենէն կարելոր մէկ հարցին մէջ՝ ճշմարտութիւնը կորսուած է ուրե՛մ.- քանի որ ճշմարտութիւնը մէկ է, եւ մէ՛կ միայն կրնայ ըլլալ ան:

Մարդիկ պիտի չդադրին ծիծաղելի ըլլալէ, երբ յաւակնութիւնը ունենան իրենց կօշիկէն վեր ելլելու՝ խօսելու համար իրենց չգիտցած բաներուն առնչութեամբ:

Նոյնիսկ բոզին սահմանումը պիտի չկարենան տալ մարդիկ միահամուռ կերպով: Միայն պաշտօնական քառթ ունեցողը չէ ան. քանակով աւելի են ապօրինի ճամբով գործողները: Հետեւաբար, մարդիկ այլազան սահմանումներ պիտի տան այս մասին ալ, հեռանալով ճշմարտութենէ:

Բայց Շահան Շահնուր անիմաստ, անգիտակից մարդ մը չէր. ուզեց ցնցել իր հասարակութիւնը ու հասկցնել, թէ

ճշմարտութիւնը կրնայ յաճախ յարաբերական ըլլալ: Ճշմարտութիւնը իր մտասելեռումը, իր յաճախումը, իր արմատական կիրքը, իր լինելիութիւնը պիտի ըլլայ, սկսած յիշեալ վեպին մէջ, շարունակելով միւս բոլոր գործերուն մէջն ալ: Իր «Պատկերագարդ Պատմութիւն Հայոց» ընդհանուր վերնագիրը ապացոյց է, թէ պատմութիւն ըսելով՝ այլ բան չի հասկնար բայց եթէ ոչ ճշմարիտ իրողութեան հարազատ պատկերացումը, շարադրումը:

Հաճելի ոճ, անակնկալ դրսեւորումներով, յաճախ հեզնական՝ առանց երբեք սայթաքելու սակայն ճապարտութեան մէջ, անսեթեւեթ լեզու, զգայուն, յախուռն, անկաշկանդ, տիրացած՝ իր մատուցած դրուագին ճշմարտութեանը, մաքուր ու վստահ ձեռքերով, եւ մարդկային՝ Շահան Շահնուր կը ներկայանայ իր ընկերներուն մէջ եւ ասոնց միջոցով իր հանրութեան, ի՛ր ցեղին՝ գոր կը սիրէ խորքին մէջ, ու կը դատէ, ու կը հարուածէ տոկմաթիք մտածումներն եւ գրիչները, առաջնորդները, անցեալ ու ներկայ ամբովախարները, ստախօսները, կեղծաւորները, տխեղծները, միշտ անխնայ, ինչպէս նաեւ առանց զգուշանալու ալ արտայայտելէ իր նոր, յանդդուզն ճշմարտութիւնները:

Սովորական ցանկապատով սահմանուած մթնոլորտէն շեղում մը եղաւ իրր: Արմատական շեղում մը՝ յանկարծական, առանց նախապատրաստութեան, ուժեղ, հերոսական ձեռքով մը: Շեղում մը՝ նոր տեսութեամբ, նո՛ր բարոյականով, նո՛ր ճաշակով, մտածումներու եւ զգացումներու. նո՛ր յեղափոխութիւն մը՝ ապրելու իրաւունքով, եւ իր ցեղին լաւ բաները, լաւ կողմերը վառ պահելու կամբո՞ճա ալ: Մեր կեանքին մէջ, մեր

սովորութիւններուն մէջ՝ իր գործելակերպը, կամ իր կեցուածքը կրնար նկատուիլ հերոսական ինքնասպանութիւն մը:

Շահնուրի պարագային մէջ, առնուազն զարմանք կը պատճառէ, շատ որոշ ու անհերքելի իրողութիւն մը. ան մէկէ աւելի անգամներ քննադատած, ձաղկած իսկ է ոչ թէ միայն այն արարքները եւ այն մտածումները՝ որոնք հայ կուսակցութեանց «դրամագլուխը» կազմած են, այլ ուժգնօրէն քննադատած է այս կուսակցութիւններն ալ, բայց, ասով հանդերձ, անոնք՝ այդ կուսակցութիւնները իրեն դէմ չեղան, երբեմն իրեն օգտակար անգամ հանդիսացան, եւ աւելի յաճախ ալ գնահատեցին իր գրականութիւնը: Անշուշտ որ շնորհակալ կեցուածք մըն է այս, ի պատիւ իրենց վարկին. բայց եւ բաւական չէ ամբողջական պատճառը գրած ըլլալու համար՝ այս մասին: Ամենայն դէպս, կ'արժէ հարցը սպառիչ կերպով ուսումնասիրելը: Գուցէ ճշմարտութիւնները զիտնալու փորձերէն զրկուած ըլլալը՝ իր շատ որոշ դերը ունեցած ըլլայ այս մասին: Հա՛րկ էր՝ այդ ձեռքը:

Ցաւալի է որ Շահնուրին մօտիկէն, քիչ թէ շատ մտերիմ ընկեր մը, ծանօթ մը, բարեկամ մը տուած չըլլայ իր անմիջական վկայութիւնները՝ անոր բնութեանը, նկարագիրին, հասարակ ճաշակին, իր սովորութեանց, մարդոց հետ իր յարաբերութեանց եւ վարուելակերպին, ինչպէս նաեւ իր զանազան ցանկութեանց մասին դրուագներ, նօթեր: Իսկ ասկէ զատ ալ՝ ան ունեցած է անկեղծ բարեկամներ: Եղած է ընկերասէր, կամ ընկերական: Այս կէտերուն մասին՝ մտերիմ, վաւերական վկայութիւնները՝ լուսարձակներ պիտի կրնային ըլլալ իր գրականութեան եւ իր տեսութիւններուն վրայ: Այդ օգտակար, այդ շնորհակալ ձեռքը պակասած է. ճիշդը՝ մենք Շահան Շահնուրը կը ճանչնանք իր գրութիւններէն միայն: Իր ստացած զանազան կարգի այցելութիւնները, մեծ մասով մեզի անձանօթ կը ժախ. բայց այս

պարագան նոյնն է նաեւ մեր բոլոր գրողներուն, մտաւորականներուն առնչութեամբ. թէեւ իրեն համար, տարբեր ըլլալու էր: Իր լուսանկարները կը հաւաստեն, թէ անուշ մէկը եղած ըլլալու է ան՝ մանուկի մը պէս, որքան կարելի է լուսանկարէ մը հասկնալ:

Թէքէեանին գրած իր նամակներէն մէկուն մէջ (5-12-1937), Շահնուր աննպաստ, ծա՛նր կերպով կ'արտայայտուի Վազգէն Շուշանեանին մասին. «Այդ վտանգաւո՛ր, այդ փասակա՛ր ոչնչութիւնը» կ'անուանէ զայն: Ինչո՛ւ: Չ'ըսեր: Բայց կ'արժէ այդ գիտնալը: Երկուքն ալ փարիզահայ, երիտասարդ, ծանօթ գրողներ էին, ազգային ու գրական շարժումին լծուած, եւ երկուքն ալ սպրուստի հոգերով ծանրաբեռնուած: Պիտի ուզէի գիտնալ նաեւ, անշուշտ, Շահնուրին դատումը՝ այլ գրողներու եւ ազգային գործիչներու առնչութեամբ ալ. բայց ո՛չ թէ ընդհանրական կերպով, այլ անուանապէս եւ իրենց գործերովը. այս կերպ վկայութիւնները կրնային ծառայել նոյնիսկ զինքը աւելի հարազատօրէն ճանչցնելու համար մեզի:

Շահնուրէն յիշատակներ, իր կեանքէն, իր գործելակերպէն դրուագներ ալ չունինք. ցաւալի է այս: Ձեռք մը չգտնուեցաւ՝ այդ շրջանին, զինքը մեզի ներկայացնելու համար:

Իր «Նահանջը Առանց Երգի» վէպին գլխաւոր դէմքը՝ Պետրոս, կամ այլեւս Փիէռ, գործ կը գտնէ Փարիզի լուսանկարչական տան մը մէջ, վերյարդարողի պաշտօնով: Retoucheur բառին այս թարգմանութիւնը՝ Շահնուրինն է: Ըստ երեւոյթին, այդ լուսանկարչատունը կը պատկանի Լէսքիւրին եւ Ժաննին, զոր Նէնէթ ալ կը կոչեն: Ժանն եւ Լէսքիւր ամուսնացած չեն, բայց միասին են ու միասին ալ կ'ապրին: Նէնէթ գեղեցիկ ու հաճելի է. նուրբ մարմին, եւ հմայքոտ: Նէնէթ եւ Փիէռ ատեն մը ետքը՝ իրարու կը յանձնուին: Եւ իրենց կեանքը կը քալէ երեքով

...: Պետրոս, կամ Փիեռ գիտե, թե ո՞վ է Լէսքիւր, թէ իր գլխաւոր շահը ո՛րկէ կու գայ. գիտե նաեւ, թէ իր Նէնէթը բաժնեկից, մեղսակից է Լէսքիւրին ապօրինի գործերուն մէջ: Լէսքիւր պոռնկագրական թերթ ունի, եւ մերկ ու վրան ամէն կերպով բաց լուսանկարներ կ'առնէ, զանոնք ծախելու համար: Կը պատահի, որ Փիեռ եւ Լէսքիւր իրարու թշնամանան: Դիպուածով մը՝ Փիեռ կը գտնէ այն թաքստոցը, ուր Լէսքիւր կը պահէր իր արգիլեալ պատկերները: Վրայ կը հասնի Լէսքիւր: Կոհ՛ւ: Հայը կ'ըսէ, թէ ոստիկանութեան պիտի յանձնէ այդ լուսանկարները, ու դուրս կ'ելլէ, կարգ մը օրինակներ հետը վերցուցած: Նէնէթ կը հանդիպի իրեն, եւ պաղատագին կը խնդրէ, որ ոստիկանատուն չերթայ: Փիեռ կը պատասխանէ խիստ կերպով.

«-Մի՛ մոռնար որ հայ եմ ... գիտես յամառ ըլլալս, բայց չես գիտեր թէ մենք որքան ռիսկալ ենք, աններող ենք: Ըսի թէ պիտի երթամ եւ պիտի երթամ»:

Բայց Փիեռ չ'երթար ոստիկանատուն:

Եւ իրենց սիրաբանութիւնը կը շարունակուի, մանաւանդ որ աստէն մը ետքը Լէսքիւր ինքնաշարժի արկածով կը մեռնի, իսկ Նէնէթ իր մէկ թելը կը կորսնցնէ: Դժբախտ պարագաներու մէջ, աւելի դիւրաւ կը յաղթանակէ. միսը՝ Փիեռին սիրած բառն ալ է այս:

Շահնուր՝ հեղինակը, ինչքան, կամ ո՛րքանով կը բաժնէ իր ստեղծած տիպարներուն միտքերը, տեսակետները.- դժուար է, եթէ ոչ անկարելի, բացարձակ կերպով այդ գիտնալը: Իր մտերիմ համոզումներուն, իր մտերիմ կենցաղին մասին՝ ուղղակի, առաջին ձեռքի հարագատ վկայութիւնները չունինք, դժբախտաբար: Բայց, այսուհանդերձ, Շահան Շահնուր՝ որոշ է որ չի՛ մերժեր, չի՛ ժխտեր ալ իր ստեղծած տիպարներուն միտքերը: Այս տեսակ մը մուտքը հարկ սեպեցի հոս տալ, որովհետեւ իր վեպին

Սուրենը՝ մանաւանդ, խիստ դատուժներ ունի, նախատական իսկ, հանդէպ հայ հեղինակի մը եւ անոր մէկ գիրքին, որոնք բոլոր հայերուն կողմէ բարձր, հանճարեղ ու նուիրական նկատուած են մինչեւ այսօր ալ:

Ուրե՛մս՝ «Պոռնկագրութեան վրայ խօսած ատեն, օր մը Սուրեն այսպէս կ'արտայայտուէր Փիէռին»։ Եւ կը յարէ առանց սեպելու ո՛րեւ նկատում:

«Հայերը գիրք մը ունին: Անոնց ամենագէշ, զգուելի, ամենասխալ, վատառողջ, եւ ամենէն աւելի անբարոյական գիրքն է ան ... Նարեկը: Կ'ամբաստանեմ զայն իբրեւ ամենամեծ թշնամին հայութեան. կ'ամբաստանեմ այն թշուառականը որ անոր տողերը թքաւ: Եւ ըսել թէ որքան փառայեղ ճակատագիր մը ունեցաւ այդ թունաւորիչ հատորը: Հայերը զայն ընդունեցին, իւրացուցին, ընդգրկեցին: Ոչ մէկ սերունդ չխորհեցաւ զայն ջնջել. որովհետեւ անոր լեզուական եւ բանաստեղծական ինչ ինչ յատկութիւններէն խաբուելով ծածկուած թոյնը չնշմարեցին: Ընդհակառակն փոխանցեցին որդիէ որդի, արիւնէ արիւն, ու ան եկաւ մինչեւ մեզ: Թունաւորուեցանք, ազգովին թունաւորուեցանք: Ահա թէ ինչու պարտուածներ ենք: Պարտուածներ ենք որովհետեւ այն վանականին հաշմանդամ հոգիին պէս արհամարհեցինք եւ անգիտացանք գոյութիւնը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականութեան.- չկուուեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնէական վարդապետութեան անոր սխալ ու թերի մեկնութիւնը ընդունելով եղանք անմտօրէն կրաւորական, համակերպող, աղերսական, անգիտակից: Մենք մեր անձէն դուրս չէլանք, չունեցանք նպատակ, խմբովին չսլացանք դէպի կարելիութիւնը անկարելիին եւ մեծ իտէալ մը մեզ բոլորս իր ճանկերուն մէջ չշաղուեց: Կ'ամբաստանեմ այն թշուառականը, որ ...»:

Եւ Սուրեն դեռ պիտի ըսէ ալ Փիեռին, «իր ձայնին կրակը մեղմելով», ինչպէս նաեւ «իմացականութեան պայծառութիւնն ու խաղաղութիւնը վերստին գտած».-

«Որքան ալ տարօրինակ թուի ազգի մը տկարութեան պատճառները բացատրելու այս եղանակս, պէտք չէ ուրանալ հոն ծածկուած ճշմարտութիւնը. Նարեկացին սկզբնապատճառ նկատուի կամ ոչ, իրողութիւն է որ շատ մը բաներ կու գան լիովին կ'արտայայտեն իմ յախուռն մտածումս, որ իր ազգասերի տառապանքին մէջ կ'ուզէ անպայման մէկը նետել ամբաստանեալի աթոռին վրայ: Ամէն ազգ, ամէն դարու, ամէն ժամանակաշրջանի, գիւղացի, անտաշ եւ անգրագետ ամբոխէն զատ ունեցած է «պզտիկ» մարտեր, «ընտրեալ» կոչուած դասակարգին մէջ իսկ: Սակայն հայոց մէջ անոնց թիւը ջախջախիչ, գերապատիկ, յուսահատական համեմատութիւն կը ստանայ: Ահա թէ ինչու է՛ս, Սուրեն, կ'ուզեմ անգիտանալ փոքր խումբը բացառութիւններու, եւ ամբողջ հայութիւնը կը նկատեմ Նարեկով թունաւորուածներ, հաշմանդամներ: Եւ սակայն այո՛, կը բաւէ որ գիտնանք մեր շուրջը նայիլ, կը բաւէ որ նայինք ապրող սերունդին եւ անոր մէջ պիտի հանդիպինք ակնարկի մը որուն համարձակօրէն պիտի կարենանք պոռալ.- անհաւատ: [.....] Նոյն հայը բան մը իր իտէալը չ'ըներ եւ չի պայքարի որ անոր համար: Հոգևով մարմնով չի նուիրուիր գաղափարի մը իրականացման. [.....] Աստուածային կիրքը բացակայ է իր մտածումներէն եւ զգացումներէն: [.....] խելացի, ուշիմ եւ գործունեայ ցեղի զաւակը ըլլալուն հակառակ, այդ յատկութիւնները ի սպաս կը դնէ միայն ի՛ր կաշիին շահերուն: [.....] Եթէ կրցաւ մոռնալ, անոր տեղ բան մը չի դնէր բնաւ. միայն կը ջանայ իր պարապութիւնը ոսկեզօծել: Թողէ՛ք զայն, ոսկերիչ պիտի ըլլայ»:

Բայց Սուրեն տակաւին պիտի շարունակէ իր քարոզը. ունկնդիր ունի՝ Ճիշդը՝ կ'ուզէ պարպուիլ, իր դառնութիւնները, իր ճշմարտութիւնները յայտնել.- կերպով մը՝ երջանիկ է այս առնչութեամբ, ու դիտել կու տայ հայուն մասին ակնարկելով.

«Կը խորշի, կը սոսկայ հպատակութեան գաղափարէն. պզտիկութիւն կը համարէ ուրիշի մը մտածումը բաժնելով միաբանիլ ու գործակցիլ անոր, երբ որ հրամայողը ինք չէ: Ինք ինք է եւ ինք բան մը չէ»:

Եւ այլեւս Սուրենին ձայնը, իր բառերը ամէն շեշտ, ամէն երանգ ու վճիռներ կ'արձակեն: Գուցէ եւ իր բո՛ւն մտածումին, իր կարեւոր, իր իրատես մէկ եզրակացութեանը հասած ըլլալու պէս՝ ան կ'ըսէ դեռ Փիեռին.

«Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ. կը նահանջեն բարք, ըմբոնում, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

«Եղան հայեր որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի, եղան ուրիշներ որոնք տուին հաւատք, կուսութիւն. եղան անոնք որոնք լքեցին տուն տեղ, երկինք. եղան դեռ վատեր՝ որ ուրացան ազգ ու լեզու, եւ հերոսներ՝ որ տուին արիւն, կեանք, օր ու արեւ: Իսկ մենք, կը վճարենք իբրեւ վերջին փրկագին այն որ պիտի գայ: Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ որոնք կրնային մեծնալ. ապագայի սերունդներ որոնք մեզմէ վերջ պիտի գային: Որովհետեւ, այն որ պիտի գայ, պիտի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

Եւ ինչպէս կը յայտնուի ալ յիշեալ վէպով, «Ահա այսպիսի նահանջող ազգայիններու մէջ ինկաւ Փիեռ»:

Ուրեմն Սփիւռքը սկսած էր արդէն գոյութիւն առնել: Վտանգէն փախած հայերը՝ ինքնաբերաբար, բնագոյով, կ'ուզէին աշխատիլ եւ հաստատուիլ հոն, ուր գացած էին, ինկած էին կերպով մը: Ռեւէ հանգրուանի մը կանգ առած էին, թերեւս առժամապէս, բայց կանգ առած էին, առ հասարակ քշուելով: Երեւոյթը, պարագան՝ Սփիւռքին բոլոր գաղութներուն համար ալ նո՛յնն է, այսօր եւս: Աւելորդ է կուրծք ծեծելը. իրականութիւնը չի՛ փոխուիր:

Եւ Շահնուր նախատեսած էր այդ: Կամ, ճիշդը, այդ տեսած, հաստատած էր արդէն իսկ: Ստուգած՝ առանց երգի: Բայց Սփիւռքին մէջ՝ ձեռք մը պիտի կրնա՞ր ատոր առաջքը առնել: Պատասխանը, ճշգրիտ պատասխանը, սպառիչ պատասխանը շատ ուշ եկած կրնայ նկատուիլ, բայց կրնայ ծառայել դաս մը, փորձառութիւն մը շահելու: Սուրէնին նշմարումովը՝ Շահնուր երեք անգամ իրարու ետեւէ կը կրկնէ, թէ «կը նահանջէ լեզուն». լեզուն՝ կենսականը: Տարբէ՞ր է այսօր: Շատ մը գաղութներ արդէն նահանջեցին, մինչ ուրիշներ ալ նահանջելու վրայ կը գտնուին: Հակառակը՝ կարելի չէ պնդել, ինչքան ալ մե՛ծ, մե՛ծ ճառեն իրենց արհեստը ըրած, սնափառ ամբոխավարները: Չանգուստային կայքը՝ հայրենիքէն դուրս, արդէն ինքնին նահանջ մըն է:

Օտարութեան մէջ, բոլորովին անգլուխ, անդէկ, ցրուած, կազմակերպութենէ զուրկ, հայը իր եսին ապաւինած է, խօսքերու առատութեան մէջ՝ հոն երեւակայած է մեծութիւն մը, ի՛րը, եւ շինած իր սնամտութիւնը իրականութիւնները չնշմարելու, չզգալու աստիճան, ինքն իրմէ գոհ, ինքն իրմէ հպարտ,

բաւարարուած, ճիշդ բաղդատութիւններ ընելու անհոգութեամբ, եւ այդ հայր՝ այսպէս, չգիտցաւ, չհասկցաւ իր իսկութիւնը: Բացառաբար Փիէռ խոստովանութիւն մը ունի, երբ կը տառապի իր սիրոյն մէջ, Նէնէթին հետ.

«-Այո՛, կ'ըսէր ան, ե՛ս եմ, եւ միայն ես եմ յանցաւորը: Իմ հպարտութիւնս զիս սպանեց, իմ անտարբերութիւնս Նէնէթս առաւ ինձմէ: Կեանքին նայեցայ իմ նեղ պատուհանէս, զիս շրջապատող անձերուն եւ դէպքերուն նայեցայ իմ սեղմ անկիւնէս, չելայ անձէս դուրս մտնելու համար Նէնէթին մէջ: [...] ըսել է այդքան հասարակ մէկն եմ ես, այդքան գաճաճ հոգի մըն եմ ... ես ... ես ...»:

Եւ վէպին հեղինակը կ'աւելցնէ՝ ամբողջացնելու համար Փիէռին խոստովանութիւնը՝ ինքն իրեն, հարազատութեան վկայութեամբ.

«Այս «ես»երը կրկնած ատեն կարծես թէ մորթին վրայ կարդալու համար իր փոքրոգութիւնը, Փիէռ ակնարկը հաւաքեց, խոնարհացուց եւ ուշով նայեցաւ ձեռքերուն, մարմնին, ուսերուն: Յետոյ նայեցաւ շուրջը, գիտակցութիւնը պտըտցուց իրականութեան մէջ, կարծես հասկնալու համար, թէ արդեօք ուրիշներն ալ իր կուզերը կը նշմարե՞ն: Gare de Lyon էր, երրորդ կարգի վակոնի մը մէջ: Փիէռ սոսկումով անդրադարձաւ, որ ամէնուն ուշադրութեան առարկան էր դարձած»:

Շահան Շահնուր յոռետե՞ս մըն էր ուրե՞մս, երբ գրեց իր «Նահանջը Առանց Երգի» վէպը:

Ծնած, սնած, մեծցած մինչեւ իր երիտասարդութիւնը հայկական շրջապատի մը մէջ, հայկական աւանդութիւններով, գեղեցիկ դպրութեան մէջ իր մուտքը հայերէնով կատարած, եւ յետոյ հակառակ ֆրանսական մշակոյթին, ինչպէս նաեւ

Ֆրանսուհիներուն սերերէն կրած զգալի ազդեցութեանց, խորքին մէջ միշտ հայ՝ իր զգացումներովն ու մտածումներովը, եւ խիստ կծու կերպով քննադատելով հանդերձ սրբութեան բարձրացուած կարգ մը հայ գոյութիւններն ու իրողութիւնները.- Շահան Շահնուր չհեռացաւ սակայն այդ խորքէն, ու փնտռեց իր հայ ընկերներուն շրջանակը: Ուստի, որպէս ճշմարիտը, գեղեցիկը սիրող վիպասան, իր նիւթերը վերցուց այն դաշտէն որուն ծանօթ էր անոր անցեալովն ու այժմու մտահոգութիւններովը, կեանքովը: Եւ ստուգիւ որպէս ճշմարտութիւնը՝ փնտռող մտաւորական, մաքուր եւ ստեղծագործ ձեռքով մարդ՝ այլ կերպ չէր կրնար ընել, եւ այլ կերպ ալ չըրաւ, որքան ալ վիշտ, ոխ պատճառէին իր ցաւալի նշմարումները, իր բերած ճշմարտութիւնները.- ան դրաւ իր մատը մեր թերութիւններուն, սխալներուն, մեր վերքերուն վրայ՝ ուղղակի կերպով, առանց տատամտումի, բայց գրեթէ միշտ ալ հակառակ հայ մարդոց մեծամասնութեան տրամադրութեանց: Այսպէս դիտած՝ ուրե՛մ, Շահնուր իրատես մըն է, եւ իր ըմբռնած իրականութիւնները ըսող մը:

Նման պայմաններուն մէջ, զարմանալի պիտի թուէր որ իր առաջին հրատարակութեամբն իսկ, Շահնուր ստացած ըլլայ լայն յաջողութիւններ: Որոնց ազդակներէն մին է՛ր այն իրողութիւնը որ մեր ժողովուրդը, իր դժբախտ, իր անստոյգ կացութեանը մէջ, կը փնտռէր պատճառ եղողները, պատասխանատուները, կը փնտռէր գործուած սխալները, յանցանքները, եւ ճշմարտութեան ծարաւը ունէր: Եւ իրաւացի կամ ոչ, նման պարագաներուն՝ ամբաստանութիւնները միշտ ալ անխուսափելի երեւոյթներ են, գրեթէ բոլոր ժողովուրդներուն մէջն ալ, ինչպէս Շահնուր ինքն եւս նշմարել տուած է ասիկա իր յիշեալ վէպին մէջ:

Հարկը, անհրաժեշտը՝ անշուշտ, այդ պատճառներուն, այդ սխալներուն, այդ յանցանքներուն գոյութիւնը ստուգելն է, յետոյ արդիւնքը հարազատօրէն եւ անվերապահ կերպով յայտնելը: Շահնուրին դիտողութիւնները, ամբաստանութիւնները՝ միայն տառապած, միայն դառնացած մարդու պայմաններէն, հոգեբանութենէն առաջ եկած երեւոյթներ են սակայն. անոնք իրա՛ւ, հարազա՛տ եզրակացութիւններն են իր ստացած ճշմարտութեան, իր ձեռքովը, իր ուշիմութեան, ինչպէս նաեւ իր ազգասիրութեան շնորհիւր:

Անշուշտ իր վէպին անունն անգամ յոռետեսի, պարտուածի հնչումը ունի. բայց բոլոր հայերը, իր շրջանին, պարտուածներ էին ամէ՛ն կերպով, եւ կը նահանջէին: Կը նահանջէին՝ իբր հայ: Այսօր անգամ, մեր գրողները՝ առ հասարակ պարտութեան, ուժացումի, հայերէնին արդէն կորսուելու վրայ գտնուելուն առնչութեամբ ահազանգ կու տան:

Մօտաւորապէս այդ տարիներուն՝ ուր լոյս տեսաւ «Նահանջը Առանց Երգի» վէպը, այլ երիտասարդ մը, բայց արդէն հռչակաւոր գրող մը, հռչակաւոր միջազգային չափանիշով, Մայքըլ Արլէն (Տիգրան Գոյունճեան) եւս արտայայտուեցաւ՝ գեղարուեստական էջերով, հայկական բոլորովին ժամանակակից իրականութեանց առնչութեամբ: Իր լեզուն անգլերէնն էր: Եւ այս առթիւ, թեր ու դէմ կարծիքներ տեղի ունեցան հայոց միջեւ, մեր մամուլին էջերուն վրայ, երբե՛մս կծու, նեղմիտ կարծիքներ: Ոմանք հեղինակին բո՛ւն միտքը չէին հասկցած, ուրիշներ մոլեռանդ տրամադրութեամբ կարդացած էին խնդրոյ առարկայ եղող գրութիւնը, իսկ մաս մըն ալ կը պահանջէր, որ օտար

լեզուով տպուած գրութիւնը՝ հայութեան փառաբանութիւնը միայն իրագործէր:

Մայքըլ Արլէն հայերէն չէր գիտեր, բայց իր մայրը իրեն կը թարգմանէր հայկական գրականութենէն էջեր եւ եղելութիւններ. ուրեմն մայրը իրեն կը թարգմանէ եւ՝ այն բոլոր յօդուածները՝ որ լոյս կը տեսնեն, հայ մամուլին մէջ, իր յիշեալ գրութեանը առթիւ:

Իսկ Մայքըլ Արլէն՝ իր մօրմէն այսպէս իմանալէ յետոյ ամէնէն խիստ քննադատ յօդուածագիրին մօտաւոր տարիքը, իրեն կ'ըսէ թէ արդէն առաջացած տարիք ունեցող հայը չի՛ կրնար ճիշդ ու արդար կերպով, արմատական կերպով հասկնալ իր գրուածքը: Այսինքն՝ ըստ իրեն, հին կամ նախորդ շրջանին պատկանող հայը կարող չէ՛ իր գրութեան ճիշդ իմաստը հասկնալ, որովհետեւ երկար շրջաններէ ի վեր նախապաշարեալ, անհպելի գաղափարներով, կաղապարուած տեսակէտներով, զգացումներով, մոլեռանդ տեսլականով, բացարձակ ինքնահաւանութեամբ լեցուն է, բարդոյթ մը կազմելու աստիճան: Ան կրնար նոյնիսկ նախորդ սերունդին պատասխանատու անձերէն մին ըլլալ:

Եւ Մայքըլ Արլէն չգրեց այլեւս հայոց մասին:

Եւ մե՛ղք եղաւ: Շա՛տ մեղք եղաւ:

Եւ այսպէս, միջազգային բարձր հռչակի տիրացած հայ գրող մը մեր ձեռքովը կորսնցուցինք:

Մեր ձեռքը թաքթ չունեցաւ:

Բայց մենք կորսնցուցինք նաեւ Գալուստ Կիւլպէնկեանին հսկայական, առասպելական հարստութիւնը, նոյնպէս իր ունեցած գեղարուեստական անգին գլուխ-գործոցները, հազուա-

գիւտ, հանճարի ստեղծագործումներ, որոնք կրնան պետութեան մը վայել մեծ թանգարան մը լեցնել:

Ինչո՞ւ Գալուստ Կիւլպէնկեան հրաժարեցաւ Բարեգործականին նախագահութենէն: Մեր հանրութիւնը չգիտցաւ այդ, ինչպէս միշտ: Զրոյցները՝ այս մասին, շատ էին, շատ ալ շրջեցան. բայց զրոյցները իրական, ստոյգ վկայութիւններու տեղ առնելը, չափահասի գործ չէ: Ամէն պարագայի տակ, մեղքը շատ, չափազանց շատ խոշոր ըլլալէ չի դադրիր. Գալուստ Կիւլպէնկեան իսկապէս լաւ տրամադրուած կ'երեւար եւ մէկէ [աւելի] անգամ ալ ասոր ապացոյցը տուաւ ե՛ւ:

Մե՛ղք եղաւ:

Հայուն անգիտակից, կարծր, վարուելակերպ չունեցող ձեռքը՝ չըմբռնեց իրականութիւնը: Կամ չկրցաւ: Եւ իր դերը՝ բացասական եղաւ: Մինչդէռ համագային գործ մը ընելու էր, Գալուստ Կիւլպէնկեանէն կտակ մը ստանալու հնարաւորութիւնը. Սփիւռքը ճակատագրական առիթ մը կորսնցուց:

Շահան Շահնուր պիտի կրնա՞ր իր ձեռքը երկարել այնքան, որ ի վիճակի ըլլար՝ առանց դժնդակ արգելքի, արտայայտելու իր գիտցած, իր զգացած բոլոր ճշմարտութիւնները:

Անգամ երբ այս ճշմարտութիւնները արտայայտելը՝ օգտակար նկատէ ինք՝ անձնապէս:

Պատասխանէն առաջ, լուսաբանութիւն մը անհրաժեշտ կը սեպեմ այս մասին:

Արդարեւ, ունկնդիրներուն, հասարակութեան զանազան կարգի պայմանները, տրամադրութիւնները նկատի ունենալով, եւ պէ՛տք է նկատի առնել մանաւանդ հայկական կեանքէն ներս, ամէն ճշմարտութիւն, ամէն վկայութիւն անպայման հրապա-

րակելը չէ որ իր օգուտը կրնայ ունենալ, այլ յարմար ատենին զայն հրապարակելը, կամ միայն ե՛րբ հարկ է: Լուռ կենալու գոհողութիւնն ալ արդիւնաւոր կրնայ ըլլալ. անշուշտ ձեռքին իմացութենէն կախում ունի այդ:

Ճիշդ պատասխանի մը համար՝ հարցը քիչ մը աւելի սահմանելով, առանց սակայն իր էութենէն ո՛րեւ կէտ զեղչելու, կրնանք զայն բանաձեւել այսպէս.- այժմեական եւ կարեւոր ճշմարտութիւն մը, իրողութիւն մը, կամ նշմարում մը՝ որ կը շահագրգռեն հայ զաղութները իրենց ներկային մէջ եւ իրենց ապագայովն ալ, հա՛րկ է, անհրաժե՛շտ է արտայայտել անպայման:

Արդարեւ, կրնայ պատահիլ որ յայտնուած ճշմարտութիւնները՝ բոլորովին հակառակը, կամ բացարձակ հերքումը ներկայացնէ[են] մինչեւ այդ օրը գրուածին, խօսուածին, ընդունուածին: Բայց ահա հո՛ւ է, որ մտաւորականին, իրա՛ւ մտաւորականին իրա՛ւ բարձրութիւնը, իրա՛ւ ինքնութիւնը փորձի կ'ենթարկուի:

Պարագան հերոսական ըլլալէ աւելի է իսկ, անոր համար մանաւանդ որ մենք մեր շրջապատէն դուրս նայիլը չենք ներեր: Չենք հանդուրժեր, չենք ներեր, որ այլ կերպ խորհին, այլ կերպ շարժին, այլ կերպ շնչեն իսկ մեզի պէս չմտածողները:

Արդ, Շահան Շահնուր համարձակեցաւ շատ մը ծանր, գուցէ շատ մը ծանրագոյն իրողութիւններ յայտնելու, հակառակ իր ատենին ալ տիրող (դեռ այսօր եւս) կոշտ կապած մտայնութեանց: Ոմանք՝ գայթակղած, բորբոքած, չհանդուրժեցին որ «Նահանջը Առանց Երգի» վեպին հրատարակութիւնը դադրի **{շարունակուի}** իբր թերթօն. եւ պահանջեցին անոր դադարումը, բայց բարեբախտաբար չյաջողեցան:

Պիտի ուզեինք, իսկապէս պիտի ուզէի գիտնալ, թէ յիշեալ վեպին հեղինակը ունէ՞ր արդեօք ուրիշ՝ այլապէս կարեւոր ճշմարտութիւններ ալ եւ սակայն չէ փափաքած դրսեւորել աւելի եւս չգայթակղեցնելու համար իր հասարակութիւնը: Իր մտերիւմները թերեւս գիտէին այս պարագան, բայց այսօր ուշ է արդէն այդ իրականութիւնը իմանալու համար: Ամենայն դէպս, անիրաւ պիտի ըլլար՝ հիւանդ եւ ամէնէն տարրական միջոցներէ զրկուած երիտասարդէ մը աւելի ցնցիչ նշմարուիմներ, հաւաստումներ սպասելը:

Այսօր, գիտեմ սակայն, թէ միւս կողմէ շատ շատ գրողներ՝ յաճախ իրենց հարազատ մտածուիմները չէ որ կը դրսեւորեն մեր մամուլին մէջ: Այս մասին երկարօրէն խորհած եմ: Բայց աւելի առաջ չերթալու համար՝ պիտի ուզէի ըսել, թէ գուցէ կերպով մը իրենց համար պատուաւոր ելք մը, չքմեղանք մը պիտի սեպուէր բնա՛ւ չգրելը ...: Նափովէն կ'ըսէր՝ ֆրանսացի ազնուականներուն հասցէին ուղղելով իր խօսքը.- «Ոչինչ մոռցան, ոչինչ սորվեցան»:

Խելացի ժողովուրդ մըն է մերինը: Բայց երբ ինը դարեր առաջ ոչ թէ «կորսնցուց» իր անկախութիւնը, այլ զայն իր ձեռքէն «առին», - ինչ որ նոյն բանը չէ երբեք,- հայեր չտեսան, չհասկցան այս յստակ իրողութիւնը. որովհետեւ, չէին շօշափած զիրենք կալանոդ իրականութիւնները, որովհետեւ իրենց ձեռքերը այդ գիտակցութիւնը, այդ խղճմտանքը կորսնցուցած էին այլեւս: Ստրկութիւնը՝ հաւաքականութեանց համար հրաժարուիմ է, պարպուիմ է իր ինքնութենէն:

Շահնուր պահած էր՝ սակայն, իբր հայ, յետոյ իբր մտաւորական իր անկախութիւնը, իր ինքնութիւնը, իր ձեռքին տաղանդը, հետեւաբար ե՛ւ գիտցաւ շօշափել ու բռնել ու արտայայտել ճշմարիտ իրականութիւնը, առանց կեղծիքի:

Չուզեց մանաւանդ, ամբոխավարներուն յատուկ եղող փառքը. եւ ընդհակառակն՝ այդ արհամարհեց անգամ:

Իր գեղարուեստական գրականութենէն բացի՝ իր փորձերուն մէջն ալ ան փնտռեց ճշմարտութիւնը: Մանաւանդ իր «Վաւերաթուղթը» խորագիրով յօդուածներուն շարքը՝ այդ կը հաւաստէ մասնաւորապէս:

Իսկ այս մասին իր ստացած անմիջական ու խոր համակրութեան, գնահատումին ազդակներուն գլխաւո՞րը.- մեր ժողովուրդին՝ ճշմարտութիւնը լսելէ *sevré* (կաթէ կտրուած) եղած ըլլալէն առաջ կու գայ, առաւելաբար:

Եթէ մեր մեծ ու փոքր գրողներէն, բեմախօսներէն բոլորը ամբոխավարութիւն չեն կատարեր, բայց անոնցմէ շատեր ամբոխավարութիւնը իրենց գլխաւոր մտահոգութիւնը ըրած են: Անշեղ մտասէւեռումով մը, ամէն ատեն, ամէն բանի մէջ: Շահան Շահնուր անողոք է անոնց հանդէպ. անառարկելի օրինակ մըն է իր «Վաւերաթուղթը» գրութեան մէջ յիշատակածը՝ Սուրէն Պարթեւեանին արձակէն իր վերարտագրածը: Իր շրջանին, Պարթեւեան անարգել գտած է **շովինիչ** մը տարածելու դաշտը, սուտ, անիրական, արուեստական ազգասիրութիւնը թմբկահարելու միջոցը՝ ծափ եւ այլ բաներ ալ ապահովելու իր անձին համար միայն: Իր ամբոխավարական ջանքերը, վարպետութիւնները, իր փչուած բառերը, իր սեթեւեթեալ արտայայտութիւնները, իր բացարձակ հաւաստումները՝ հատուածական փրոփականտի մը ի հաշիւ կատարուած ըլլալու չքմեղանքն անգամ չունէին ...: Իրականութեան, ճշմարիտ խօսքին արժէքը՝ երբեք չգիտցան ինք եւ իր նմանները. մինչ

կորսնցնողը՝ անհրաժեշտաբար, հայ ժողովուրդը եղաւ: Այստ մը դարձաւ ամբոխավարութիւնը:

Շահան Շահնուր մեծ է մանաւանդ անոր համար որ վաւերաթուղթին կարելորութիւն տուաւ: Եւ ինչպէս ըսին շատեր ալ՝ այս առթիւ, իր անուանած վաւերաթուղթը հասարակ վկայութիւնն իսկ է՝ աւելի պարզ բառով:

Այսուհանդերձ, Շահնուր պակաս, թերի կէտ մը ունի՝ այս մասին: Ստուգիւ, երբ եղելութիւն մը, ճշմարտութիւն մը կը յայտնէ, ամէն ատեն, ամէն պարագային չէ որ կ'ըսէ թէ ինչպէ՛ս, ե՛րբ եւ ո՛ր գտած է այդ եղելութիւնը, կամ ճշմարտութիւնը: Այս թերին կա՛յ, գոյութի՛ւն ունի իր հաւաստումներուն մէջ, հակառակ անոր որ ինք Տէքարթեան մը եղած է սկզբունքով:

Յիշեալ թերիին առնչութեամբ յամենալս տեղի կ'ունենայ անով մանաւանդ որ ան գոյութիւն ունի՝ անպակաս կերպով, մեր ժողովուրդին ու նաեւ մեր գրողներէն, խօսողներէն շատերուն մօտը. կը հաւատան իսկոյն, կ'արտայայտեն իսկոյն իրենց իմացածը, մտածածը՝ առանց նախապէս քննելու, ստուգելու խնդրոյ առարկայ եղող իրողութիւնը, եւ այս՝ վստահութեամբ մը, որ մանկական կը թուի եթէ երբեք բարեմտութեամբ չէ կատարուած: Ե՛ւ ամէնէն կարելոր, ամէնէն կենսական կեցուածքներու մէջն անգամ՝ առ հասարակ թերի է, անշուշտ, կարծիք կազմելը, վճռելը, հաւատք հիմնելը, անվերաքննելի կերպով, առանց նախապէս հետազօտութիւն, առանց նախապէս քննութիւն կատարելու, յաճախ մէկ կողմը միայն մտիկ ընելով: Ըսի-ըսաւի մարդն է հայը. մեծ ու պզտիկ. անգամ ժողովականը, բայց մանաւանդ ժողովականը: Մեր անկումներուն, մեր սխալներուն, մեր դժբախտութեանց մեծագոյն մասը՝ այս թերութենէն կու գայ: Ազգային, թ՛է անհատական, թ՛ ընտանեկան կեանքին մէջ:

Տեքարթ կ'ըսէ՝ թանկագին խորհուրդ տուողի մը շեշտովը,- եւ ես պիտի ուզէի բոլո՛ր սրտովս, որ ամէնուն ալ հաւատոյ հանգանակը դառնար այդ,- ուրե՛մս Տեքարթ կ'ըսէ, թէ՛

-Երբե՛ք չընդունիլ ո՛չ մէկ բան իբր ճշմարտութիւն, մինչեւ որ գայն չճանչնաք վստահաբար որպէս այդ:

Երկար տարիներու ընթացքին, ազգային թէ առօրեայ հասարակ կեանքին մէջ, ու նաեւ ասպարեզիս քառասուն տարիներէ աւելի անընդհատ շրջանին տուած փորձառութեան եւ ընթերցումներուս եւ յարաբերութիւններուս շնորհիւր՝ հաստատած եմ, թէ Տեքարթին յիշեալ մտածումը, խորհուրդը ինչքա՛ն շատ ու յաճախակի կերպով անտեսուած է, արհամարհուած է հայ մարդոց, եւ նոյնիսկ պատասխանատու դիրքերու վրայ գտնուող հայ մարդոց կողմէ:

Ինչպէս տեսանք, Շահան Շահնուր՝ Փարիզ, լուսանկարչատան մը մէջ, վերյարդարող (retoucheur) էր: Այս աշխատանքին, այս զբաղումին էութիւնը յատկանշական է. գայն միշտ աչքի առաջ, կամ ի միտի ունենալու է՝ զի՛նքը, Շահնուրը, իր գրական, ստեղծագործական արտադրութիւնները աւելի հասկնալու, մանաւանդ աւելի լաւ գնահատելու համար:

Արդարեւ, այս վերյարդարողի աշխատանքը կը պահանջէ, նախ՝ փնտռել, գտնել, ստուգել լուսանկարին թերութիւնները, լուսանկարին նսեմացնող դրսեւորումները, եւ յետոյ՝ զանոնք շտկել, ի հարկին՝ սրբագրել իսկ: Խնդրոյ առարկայ եղող աշխատանքին մէջ, ձեռքին անժխտելի դերը՝ անժխտելի է ուրե՛մս:

Արդ, Շահան Շահնուր վերյարդարողի, այսինքն ճշմարտութիւնը փնտռողի, յետոյ սրբագրողի աշխատանքը կատարած ըլլալու է՝ ամէ՛ն անգամ որ երկնէլ մտադրած է գեղեցիկ դպրութեան, կամ մտաւորական ո՛րեւէ գործ մը: Այսինքն՝ նախ տեսնել, շօշափել, համոզուիլ, եւ յետոյ արտայայտուիլ: Այսինքն եւ՝ շտկել, ուղղել, երբե՛ս ալ բառնալ, բայց միշտ դէպի լաւն ու գեղեցիկը շարունակել, ու ճշմարտութիւնը ցանկալ եւ երկնէլ: Գեղեցիկը՝ ճշմարտութեան մէջ:

Անշուշտ որ տաղանդաւոր, արտակարգ ձեռք մըն է ի՛րը.- գնահատեց՝ երբ սիրեց խնդրոյ առարկայ եղող մտածումը, կամ գործը. զարկա՛ւ, երբ նշմարեց անպիտան, հարազատութենէ զուրկ, անարուեստ, կեղծ արգասիքները, ինչպէս նաեւ նեխած, ախտաւոր մտայնութիւնները: Բայց աւելի այս վերջիններուն է որ հանդիպած ըլլալու է իր ձեռքը: Եւ քննադատեց սուր կերպով: Եւ ձաղկեց: Եւ հեզնեց ալ: Ինչքան որ կրնար: Բայց բնա՛ւ երբեք քիչով: Անկախ մարդն էր ինք. եւ անկախ ժառանգ ալ միշտ: Հակառակ իր ֆիզիքական յարատեւ, ցաւատանջ տկարութեան ու նաեւ հակառակ իր շատ խեղճ եւ անորոշ նիւթականին.- արդէն իր շինած փառքերուն գլխաւորը՝ հո՛ւ կը բարձրանայ: Առեղծուածի մը պէս՝ մեր իրականութեանց մէջ:

Հայութիւնը, հայութեան էութիւնը՝ իր մտահոգութեանց կեդրոնը կանգնած է միշտ: Եւ գիտակից մտաւորականն է Շահնուր.- երբ հայերէնով արտադրեց, հայոց այժմեական խնդիրներն էին որ նիւթ կը հայթայթէին իր գրութիւններուն. բայց երբ ֆրանսերէնով սկսաւ արտայայտուիլ, ա՛յլ նիւթեր նկատի առաւ: Իր ֆրանսերէն երկերն ալ յաջողութիւն գտան: Բայց ժամանակ մը յետոյ, Շահնուր վերսկսաւ դարձեալ հայերէնով արտադրել, ու այն ատեն իր ցեղակիցներէն ոմանք ըսին՝ իրեն համար, թէ ան «կը վերադառնար» հայկական գրականութեան,

իր ծագումին: Միսա՛լ, բայց շա՛տ սխալ եզրակացութիւն մըն է այս. սխա՛լ, որովհետեւ «Նահանջը Արանց Երգի» վեպին հեղինակը երբե՛ք չէր հեռացած իր հայութենէն, իր ծնունդէն, հայկական գեղեցիկ դպրութենէն:

Իրեն մեղադրուած պարագան, անկարելի էր. այսինքն՝ անմտածելի:

Ի՛նչ ազդեցութիւններ կրած է Շահան Շահնուր իր գեղեցիկ դպրութեան, եւ իր տեսակէտներուն, մտածումներուն կազմումին համար:

Այս բնագաւառին մէջ ալ, պարագայական ուսումնասիրութիւն մը, կրնայ հիմնական արդիւնքներ ունենալ ստոյգ մեկնաբանութիւններ տալու համար՝ իր տեսակէտներուն, ինչպէս նաեւ իր գրականութեան մասին, առ հասարակ:

Շահնուրին գրելու ձեւին, կերպերուն, արտայայտուելու կերպերուն վրայ՝ ֆրանսական գրականութիւնը՝ ի մասնաւորի, ֆրանսական ճաշակը, ֆրանսերէն լեզուին յստակութիւնը՝ անշուշտ որ իրենց ազդեցութիւնը ուղղակի գործած են, եւ այս ազդեցութիւնը իր հայերէնին տուած է, իր ոճին տուած է, ինչպէս նաեւ իր շարադրութեան, զգալի նորութիւն մը, եւ շնչող, ապրող կենդանութիւն մըն ալ:

Պոլսոյ միջավայրին, իր ընթերցումներուն բերումովը, հայկական վիպապաշտութեան մթնոլորտովը՝ Շահնուր պիտի ըլլար արդէն զգացական գաղափարներով, զգացական խառնուածքով, կեցումածքով երիտասարդ մը, մարդ մը: Բայց եւ ուշիմ էր, զգաստ էր, շօշափող, վերյարդարող ձեռք մը ունէր. չլքեց իր բնածին ուշիմութիւնը, զարգացուց իր իրատեսի կեցումածքը, եւ արտայայտուելու կերպերն ալ: Այսպէս, այս պայմաններուն մէջ, ֆրանսական գրականութիւնը, ֆրանսական

մտածումը, եւ ֆրանսական մթնոլորտը խորապէս ազդած են իր վրան, իր գրականութեան խորքին թէ ձեւին վրան:

Ի մասնաւորի Տէքարթին ազդեցութիւնը՝ որոշապէս յայտնի է. Շահնուր ամէն տեղ ալ, արդարեւ, միտքի, ճշմարտութեան, եւ գեղեցիկ դպրութեան մարդն է: Չէ ըսած, բայց անկասկած՝ Տէքարթին պէս կը խորհէր.- «Կը մտածեմ, ուրեմն կա՛մ»:

Մինչ ճշմարտութեանց առնչութեամբ, Շահնուր ցոյց կու տայ՝ իր մտածելակերպովը, թէ քննելէ յետոյ, նախապէս ստուգելէ յետոյ միայն դէպքի մը ճշմարիտ ըլլալուն մասին խօսելու է: Այս սկզբունքը իր գործադրած ըլլալը կրնանք հաւաստել երբ կը կարդանք իր դիտողութիւնները՝ մանաւանդ ի մասին այնպիսի պարագաներու, հաւաստումներու, գորս հայեր դարերէ ի վեր ստոյգ, վճռուած, բացարձակ իսկ ճշմարտութիւն կը նկատեն: Եւ Շահնուրին միտքին եւ զգացումին շօշափումները, տրամաբանութիւնը այնքան ուժեղ, այնքան անյողողոյ են, ինչպէս Տոսթոյեւսքիին մօտ եւս, որ երկուքին ալ պարագան կը հերքէ այն ասացուածքը՝ թէ «առողջ միտքը՝ առողջ մարմինի մէջ» կրնայ գտնուիլ միայն:

Սպառիչ հերքում՝ արդարեւ երկուքին ալ պարագան. որովհետեւ Շահնուր իր երիտասարդութենէն ի վեր, արդէն հիւանդ, սկսաւ ընդմիջտ անկողնոյ ծառայել, տաժանագին պայմաններու եւ ցաւերու մէջ, իսկ Տոսթոյեւսքի կը տառապէր ժառանգական ախտէ մը, վերնոտութեան (Էփիլէփթիք) յաճախակի եւ սարսափելիօրէն դժնդակ տագնապներով, գետին նետուած, բերանը փրփուրներով, եւ այսպէս անգիտակից՝ երկար ատեններ:

Շահնուր եւ Տոսթոյեւսքի՝ երկուքն ալ անյոյս կերպով հիւանդներ, բայց երկուքն ալ լուսաւոր, պայծառ, ուշիմ միտք, կրնան դատումներ ունենալ եւ արտադրել իրա՛ւ գլուխ-

գործոցներ: Եթե մարդը՝ տակաւին «այս անձանօթն է», ինչպէս կը հաւաստէ հոչակաւոր Տօքթ. Ալեքսիս Քարել, բնութիւնն ալ կը մսայ, ուրե՛մս, տակաւին անձանօթ մը:

Առանձնապէս ֆրանսական գրականութիւնը՝ որուն լաւ ծանօթացած կ'երեւայ Շահնուր, այս գրականութիւնը միայն չէ որ՝ իր կարգին, տիրացած ալ ըլլայ անոր վրան, այլ Փարիզի կեանքն էւս, դեռ Փարիզի կենցաղը, առօրեան ալ, իրենց զանազան կողմերովը:

Շահնուր կը դաւանի, թէ մարդը ուրախ, երջանիկ ապրելու իրաւունքը ունի ամէնէն առաջ, ապրելո՛ւ իրաւունքը, եւ սակայն կը նկատէ միեւնոյն ատեն, թէ այս իրաւունքը կը մերժեն հայուն, կամ հայը չի զգար որ ունի այդ իրաւունքը, չի՛ զգար իսկ թէ պէտք է ուզէ, պէ՛տք է պայքարի ապրելու իրաւունքը ստանալու համար իսկապէ՛ս, եւ որուն արժանի է ամէն կերպով: Հայը կը հաւատայ, թէ իր տառապանքը, թէ իր վիշտը՝ իրեն համար իտէալ առանձնաշնորհումի պէս բան մը, իր եզակի հնարաւորութիւնը միայն եղած ըլլայ:

Հայու իր տեսակէտները, համոզումները, իր եզրակացութիւնները՝ Շահնուր վերցուցած է իր շրջապատին կեանքէն, իր ընկերներուն շփումներէն, առօրեայէն, նաեւ պատմութենէն, հայկակա՛ն պատմութենէն՝ իր ձեռքը սխալումներու վրայ դրած, զանոնք շօշափելով, յետոյ իր անձնական անընդհատ ցաւերուն, վիշտերուն պատճառով: Մինչ նոյնացած է այս ցաւերուն, այս վիշտերուն հետ, ինչպէս Արփիար Արփիարեան իր ժողովուրդին տառապանքներովը շաղախուած մտածեց, գրեց, գործեց:

Շահնուր անկասկած կարդացած ըլլալու է Տոսթօյեվսքիին գրականութիւնը եւ անոր կեանքին պատմութիւնը: Եւ անոր պէս ալ ընդմիշտ հիւանդ, ընդմիշտ տառապած, բայց մտածեց ու արտադրեց ինչպէս Տոսթօյեվսքի: Երջանկութիւնը՝ գրելուն մէջ

կը փնտռէր. Ֆիզիքական շա՛տ ծանր ցաւերուն յաճախութեան
ատենն անգամ, անօթութիւնն անգամ, զինքը չկրցան հեռացնել
գեղեցիկ դպրութենէն, նաեւ Տոսթոյեվսքին:

Տոսթոյեվսքի՝ ամէն ատեն, ամէն առթիւ, Աստոյ գոյութեան
մասին իր ներքին պայքարը ունեցաւ. Շահնուր՝ վերապրումի
պայքարը, իբր հայ:

Տոսթոյեվսքի կը հարցնէ իր վեպին հերոսներէն մէկուն.-
«Կը հաւատա՞ք Աստոյ», եւ այս վերջինը կը պատասխանէ
իրեն.- «Ես կը հաւատամ Ռուսիոյ»: Մինչ Շահնուրին կը հարցնէ՝
ի՞ր հիւանդանոցին մէջ մօտիկ անկողինէն հիւանդ ընկեր մը.-
«Ինձի ըսին, թէ օտար ես, ճի՞շդ է», եւ Շահնուր իրեն կը պատաս-
խանէ լսկոնական ձեւով, բայց եւ շատ պարզ ու պերճախօս
խմաստովս ալ.- «Ես հայ եմ»:

Տոսթոյեվսքի՝ ուրեմն, կը հաւատայ Ռուսիոյ, իր
հայրենիքին, մինչ Շահնուր՝ հայութեան: Եւ երկուքն ալ ըսին այդ՝
անսթեւեթ ու անմիջական կերպով: Եւ ամէն մէկը իր ցուցա-
մատը տարաւ դէպի կեդրոնը իր հաւատքին, իր դաւանած
ճշմարտութեան:

Այս մասին՝ կա՛յ ազդեցութիւն մը Տոսթոյեվսքիէն հայ
երիտասարդ գրողին զգացումին, մտածումին վրայ: Կամ՝ պարզ,
կարելի դիպումա՞ծ մը: Ամենայն դէպս, պարագան էապէս
յատկանշական ըլլալէ չի՛ դադրիր երբեք:

Բայց երբ Շահնուր ֆրանսերէնով արտայայտուեցաւ, իր
գեղեցիկ դպրութեան նիւթերը չառաւ հայկական կեանքէն. գուցէ
մտածած ըլլայ, թէ այդ նիւթերը հայերէնով միայն կարելի է
հարազատութեամբ դրսեւորել: Արդարեւ, «Նահանջը Առանց
Երգի» հերոսներէն՝ Մուրէնին բերանով կ'ըսէ արդէն, թէ
«կարօտ» բառին, ինչպէս նաեւ «մա՛յր», «հա՛յ», «աքսոր», մեր
«գաղթական», մեր «որբ» բառերուն ֆրանսերէնները չկան:

Եւ ասով, Շահնուր կ'ուզէ հաւաստել՝ ուրե՛մս, թէ յիշեալ նիւթերը աւելի պատկերալից, աւելի հարազատ կերպով ներկայացնելու համար, հա՛րկ է հայերէնը.- աքսորին, գաղթականին, մե՛ր որբին, հայո՛ւն գոյութիւնը՝ արտակարգ, ողբերգական աննախընթաց պարագաներու մէջ տեղի ունեցած է:

Եթէ հայ երգը իր ցրուածութեամբը ու հակառակ այս ցրուածութեան՝ իր ինքնութիւնը, իր հարազատութիւնը պահած չըլլար, գուցէ պիտի չկարենայինք Կոմիտաս մը ունենալ: Այլ բացատրութեամբ մը՝ ստեղծագործող Կոմիտաս մը կրնար երեւան գալ, բայց երաժշտական տարբեր բնագաւառի մը մէջ: Ուրե՛մս՝ Կոմիտաս պեղեց, գտաւ, շօշափեց, գտեց, եւ հայկական երաժշտութիւնը վերստեղծեց.- հայ հանճարին գեղարուեստական ճշմարտութիւնը:

Կոմիտաս քննադատող մը, սրբագրող մը, առաջնորդող մը չէր. այլ՝ արուեստագէտ ստեղծագործող մը. բայց իր ձեռքը շօշափեց, զգաց, ըմբոնեց, վեր առաւ յատկանշականը, իւրայատուկը, հարազատը: Եթէ զինքը խճրճողներ, հալածողներ եղան, նոյնիսկ ու մանաւանդ իր կրօնակիցներուն կողմէ, Կոմիտաս կը պարտի ասիկա անոր որ իր բերքը նո՛ր էր, հանճարի գործ էր, եւ մարդիկ՝ սե՛ւ կամ այլ գոյնով հագուած, չէ՛ն սիրեր նորը, փայլուն նորը, ու կը նախանձին:

Մեր Կոմիտասն ալ «Պատկերագարդ Պատմութիւն Հայոց»ն է:

Շահնուրին անվերապահ համարուե՛մս ու սերը, եւ իր ակնածանքը հանդէպ Կոմիտասին, անշուշտ որ իրենց ազդեցութիւնը պիտի դնէին իր զգացումներուն, իր գիտակցութեան վրայ: Ազդեցութիւն՝ հայ ժողովուրդին ճշմարտութիւնները, անկարելի ու գեղեցիկ ճշմարտութիւնները տեսնելու եւ արտայայտելու համար՝ մանաւանդ: Իր բովանդակ գործին

առնչութեամբ: Իրա՛ւ, գեղարուեստական գործ մը՝ միայն ի՛նքիբմով, միայն իր առկայութեամբը չէ որ իր յաւիտենական արժէքը կրնայ ունենալ, այլ նաեւ անով որ կ'ազդէ յաջորդ սերունդներուն, յաջորդ սերունդներուն աշխատանքին վրայ: Ասկէ զուրկ բնոյթ ունեցող հեղինակ մը, կամ գործ մը՝ թերի բան մը, անտաղանդ բան մը ունեցած կ'ըլլայ անպայման:

Շահնուր, Կոմիտաս, Արփիարեան, Զօհրապ տուին այդ բնոյթը, իրենց արգասիքներովը: Իսկ եթէ, իրենց յաջորդ սերունդները չկարենան՝ ո՛րէէ պատճառով, ազդուելու տաղանդը վայելել, ուրե՛մս այդ սերունդները պիտի նկատուին ամուլ բնութիւններ:

Մեր վերջին դարուն երկնակամարին վրայ փառայեղ լոյս մը եկած էր.- Արփիար Արփիարեանը:

Այլազան առաւելութիւններով լոյս մը:

Հրապարակագիր. ստեղծագործող արձակագիր. իր ժողովուրդը անհունօրէն, անվերապահ կերպով ու անսակարկ սիրող. անոր տառապանքներովը մտահոգ, ցաւակից. յանդուգն՝ իր տեսակէտները պաշտպանելու համար. բայց համեստ ալ. իրա՛ւ մտաւորական մը՝ բառին ամենէն օրինակելի իմաստովը. անխոնջ աշխատասէր. իր ժողովուրդին համար արդարութիւնը պահանջող. Իրատես, ուշիմ, եւ հեռատես ալ. անկախ եւ ազատ՝ իր տեսակէտները, իր գաղափարը կազմելու, հիմնելու, եւ զանոնք արտայայտելուն մէջ. կուսակցական, բայց ոչ երբեք նեղմիտ, այլ աննախապաշարեալ, անկողիմասկալ, մտահոգուած ըլլալով մի՛ միայն իր ժողովուրդին ցաւերովն ու անոր ծառայելու, անոր օգտակար ըլլալու համար. անոր ցաւերուն, անոր վերքերուն հետ նոյնացած. հեզնական՝ մարդոց յիմարութիւններուն, ամբարտաւան կեցուածքներուն դէմ. հեզնական՝ այո՛, ի հարկէ, բայց ոչ երբեք ճապաղ. հակառակ մուրացկանի իր

արտաքինին՝ գեղեցիկը, գեղեցիկ դպրութիւնը, ազատութիւնը սիրող. իր հրապարակագրութիւնը՝ գեղեցիկ դպրութեան բարձրացուցած. հայ գրականութեան պատմութեան մէջ՝ լաւագոյն պատուանշաններէն մին գրաւած, աւելի ճիշդը՝ իրեն տրուած արդարօրէն. ոյժ մը՝ իր գրիչին շնորհիւր, գրող մը՝ որ հանրային կարծիք կը պատրաստէր իր գրութիւններովը միայն. քննադատող՝ հանդարտօրէն, տրամաբանութեամբ, պարզ կերպով, անվերապահօրէն, հեզանքով ալ, առանց սեպելու ո՛չ մէկ նկատում, ամէն անգամ որ հարկ էր. երբեք տեղի չտուող՝ իր ճշմարտութիւններուն պաշտպանութեան մէջ. խոնարհ, համեստ, բայց ե՛ւ գիտակից՝ իր միտքին ու զգացումներուն հիմնական մեծութեանը, առանց սակայն այդ դրսեւորելու. աղմուկ հանած՝ հակառակ իրեն, պարզ անոր համար որ ոյժ մըն էր եւ իր շիտակ, իրատես խօսքերը ոմանց շահերուն դէմ եկան: Ուստի եւ անկարելի է որ Շահան Շահնուրի պէս մտաւորական գրող մը տեսած չըլլայ, ուժգնօրէն սիրած չըլլայ, մօտէն հետեւած ալ չըլլայ Արփիարեանի մը լոյսերուն: Ճիշդ է նաեւ, որ իրենց պաշտպանած ճշմարտութիւնները՝ շատ անգամ նո՛յն նիւթերը, նո՛յն ատաղձները չունին, բայց իրենց՝ երկուքին ալ կերպերն ու անվախ մտաւորականի համարձակ ձեւերը ենթադրել կու տան՝ հարազատ վկայութիւն մը բերած համոզումով՝ թէ Արփիարեան անձանօթ վարպետ մը չէ եղած Շահնուրին համար: Մեր գրողներուն, մեր մտածողներուն, մեր գործիչներուն՝ թերեւս ամէնէն իրատես աչքը, միտքը եղած է Արփիարեան, մինչեւ իր օրերը. իսկ Շահան Շահնուր՝ որպէս հայ տառապած ու տառապող երիտասարդ գրող մը, անկարելի է որ **չի՛ նշմարէր, չի՛ համակրէր** Արփիարեանին անվերապահ միտքն ու գեղեցիկ դպրութիւնը, ինչպէս նաեւ անոր պաշտպանած ճշմարտութիւնները եւ մանաւանդ անոր հեզանք սխալները,

յանցանքները. արդարեւ, իրենց հեզնանքները եղբայրական նմանութիւններ ունին իրար միջեւ, խորքի, ձեւի, տարողութեան, ենթակային միամտութիւնն ու անգիտակցութիւնը ձաղկելու կատարեալ միտումովը:

Անշուշտ ճիշդ է, դարձեալ, որ Արփիարեան կ'առնէր իր նիւթերը առօրեայ ազգային, կուսակցական կեանքէ, իր քննած դէպքերը առօրեայ էին, իր քննած գրական երկերը նո՛ր հրատարակութիւններ կ'ըլլային, իսկ դէմքերը՝ որոնց արարքներն ու մտածումները կը քննադատէր կամ կը գնահատէր, կ'ապրէին իր օրովը, կամ առկայ էին տակաւին իրենց ազդեցութեամբը: Բայց Շահնուր՝ իր տեսութիւններուն մէջ, տեսաբան է. գործիչ չէ. իր մօտիկ ընկերներուն կացութիւնը, ողբերգութիւնները, տեսակէտներն ու մտայնութիւնները, նախապաշարումները կը ներկայացնէ, պատճառաբանութիւնները կու տայ, ի հարկին կը հեզնէ ալ, բայց ժամանակակից ազգային դէմքեր, կերպարներ չկան իր գրականութեան մէջ:

Ամենայն դէպս, այս բնագաւառին մէջ, Շահան Շահնուր բան մը կ'աւելցնէ Արփիար Արփիարեանի գրականութեան, բան մը՝ մեր պատմութիւնը խուզարկելով, հոն հետազօտութիւններ կատարելով իր իրատեսի ձեռքովը, կերտելու համար «Պատկերազարդ Պատմութիւն Հայոց» մը:

Մեր գեղեցիկ դպրութիւնն ու մեր իմաստասիրութիւնը երախտապարտ, խո՛րապէս երախտապարտ պէտք է ըլլան հանդէպ Արփիար Արփիարեանին՝ եթէ երբեք, ի՛սկապէս, իր մտածումներէն, իր գրականութենէն Շահան Շահնուր ազդուած է, ինչպէս նաեւ իր անկախ, իր անսակարկ, իր անշեղ միտքէն ու կեցուածքէն ալ:

Շահան Շահնուր, տեսանք աւելի վերը, կ'ուզէր որ Աստուծոյ սահմանումը տային: Իր յիշեալ վէպին մուտքին իսկ կայ այս

մտածումը: Ըստ երեւոյթին, Աստծոյ սահմանումը տալը՝ մարդոց համար դիրքին պիտի ըլլար, քանի որ առտու-իրիկուն իր անունն ամէնուն բերանն է, ինչպէս նաեւ իր պաշտամունքը: Առանց բացառութեան, մարդիկ պիտի տային, պիտի կրնային տալ՝ ուրե՛մ, այդ սահմանումը, ե՛ւ առանց ընկրկելու, ե՛ւ բացարձակ ինքնավստահութեամբ, բայց ե՛ւ արդիւնքը, միշտ ալ, պիտի ըլլար այն որ մէկը միւսէն բոլորովին տարբեր Աստուած մը պիտի յօրինէին, պիտի ներկայացնէին անպայման, եւ ասով իսկ մէկուն սահմանումը միւսին հերքումը պիտի ըլլար անհրաժեշտաբար, կամ անոր անտեսումը, եւ, այսպէս, անմտածելի, ծիծաղաշարժ, անխորհուրդ, սնափառ ելոյթներու, հաւատքներու տեղի տալու համար մարդոց միջեւ: Անշուշտ Շահան Շահնուր գիտէր ե՛ւ այս պարագան, բայց կը տեսնէր նաեւ որ պիտի չկրնար տրամաբանութեամբ, գիտական կերպով, լուրջ ու համոզիչ կերպով պատասխանել, դիտողութիւն ընել նախապաշարեալ մարդոց. պիտի չկրնար, որովհետեւ անկարելի է, անհնար է.- նախապաշարումին դէմ՝ կարելի է սակայն պատասխանել, պայքարիլ, յաղթել՝ նախապաշարումով միայն: Բայց այս միջոցը՝ Շահնուրին համար չէր ի հարկէ: Ուստի, իր հերքումը, իր դիտողութիւնը, իր մտածումը, իր ճշմարտութիւնը՝ հեզնանքով կը դրսեւորէ, կը կատարէ, ինչպէս Արփիար Արփիարեան՝ նման պարագաներուն մէջ: Այսպէս, իրենց հեզնանքները նո՛յն խորքն ու ձեւը, նաեւ նո՛յն տարողութիւնը ունին: Արդարեւ, իր «Թերթիս Կիրակնօրեայ Թիւր»ին մէջ, «Ներքին Լուրեր» խորագիրին տակ, Շահնուր կը գրէ անայլայլ լրջութեան մը երեւոյթովը.

«Իմ մեծագոյն հիասթափութիւններէս առաջինը ապրեցայ այն օրը, երբ ինձի ըսուեցաւ թէ Աստուած հրեայ է եւ ոչ թէ հայ: Ան ալ Պաղեստինցի մը: Ո՛չ իսկ Պոլսեցի»:

Հեզնանքը՝ հոս, դեպի մեկ կողմ միայն ուղղուած չէ: Շահնուր կը հեզնէ արդարեւ հրէական հաւատքը՝ Աստուծոյ հրէական ազգութիւնը ունենալուն մասին, ինչպէս նաեւ ի՛րն ալ, իրեններուն հաւատքն էւս, այս առնչութեամբ: Մանաւանդ այն պարագան որ ո՛չ թէ Պոլսեցի հրեայ, այլ Պաղեստինցի հրեայ է եղեր Աստուած: Այսինքն՝ այս երկու ճշմարտութիւնները մէկէն ըսուած են իրեն.- Առաջինը՝ Աստուած հրեայ է, երկրորդը՝ հետեւաբար ալ Աստուած հայ չէ: Եւ Շահնուր կարծել կու տայ, թէ ինք կը հաւատայ ասոր, քանի որ իր «մեծագոյն առաջին հիասթափութիւնը ապրեր է», երբ այդ «ճշմարտութիւնը» իրեն ըսեր են:

Կը թուի որ Զօհրապէն ալ ազգուած ըլլայ Շահնուր, հակառակ իրենց միջեւ գոնուող առողջական, նիւթական, ընկերային զգալի տարբերութեանց, երկուքն ալ սակայն կէանքին, ապրելու իրաւունքը դաւանած են, եղած են արդարասէր հանդէպ համեստներու, եւ բոլորին հանդէպ, եւ սիրած ճշմարտութիւնը, երբ գայն նշմարելն իսկ դառն ըլլայ:

Զօհրապին «Կարծեմ Թէ» խորագիրով նորավէպին եւ Շահնուրին պատմած մէկ պատահարին միջեւ շատ սերտ նմանութիւն մը կայ: Արդարեւ, «Նահանջը Առանց Երգի» վէպին մէջ պատմուած դրուագներէն մին՝ «Կարծեմ Թէ»ին մէկ հետեւողութեամբը գրուած ըլլալու ստոյգ տպաւորութիւնը կը ձգէ իսկոյն:

Հա՛րկ է, ուրե՛մս, նախ «Կարծեմ Թէ» նորավէպը ներկայացնել հոս, համառօտակի կերպով գոնէ: Զօհրապին աղուոր, ամէնէն յատկանշական ու իրապաշտ ստեղծագործութիւններէն մին է ան, անկասկած: Եւ որ մաս կը կազմէ իր «Կեանքը Ինչպէս որ է» հատորին:

Աննիկը ներկայացնելու համար այս նորավէպին մէջ,-

«Բացարձակ ու անգիտակից Անկեղծութիւնը ունէի դիմաց», Զօհրապ կը սկսի գրել, եւ անկեղծութիւնը՝ գլխագիրով ալ:

Եւ Աննիկին «թափած սիրոյ լեզուն գեղջուկ, գրեթէ շինական քան մըն էր.- «հոգի՛ս, հոգի՛ս ու կեանքս ես դուն, հասկցա՛ր»

Իսկ աւելի յետոյ.

«Եւ ձեռքը ձեռքիս մէջ՝

«-Խոստացիր որ չպիտի մոռնաս զիս»:

Բայց կը պատահի, օրին մէկը, որ Զօհրապին Իգմիրցի բարեկամներէն մին Պոլիս կու գայ Պոլիսէն աղջկայ մը հետ նշանուելու համար, եւ խօսք կապի ատենը, սալօնին մէջ, երբ հեղինակը, իր բարեկամը, եւ այս վերջինին ընտրած աղջիկը կը գտնուին, Զօհրապ կը շարունակէ իր նորավէպը.

«Աննիկ, կ'ըսէ բարեկամս, քեզի ներկայացնեմ իմ խիստ, բայց խիստ մտերիմ ընկերս, դուք Պոլսեցի էք, հարկաւ իրար կը ճանչնաք քիչ մը, այնպէս չէ՞»: Բայց Աննիկ չ'այլայլի իր նախկին սիրահարին ներկայութենէն հոն, ո՛չ ալ իրեն ներկայացուելու՝ իբր անոր մէկ մտերիմ, մէկ խիստ մտերիմ ընկերոջը ապագայ կինը, այս եղելութիւնը զինքը անակնկալի չի բերեր, ու կը յառաջանայ եւ կը յարէ խաղաղ ու անմեղ շէշտով՝

«Կարծեմ թէ տեղ մը տեսած ըլլալու եմ էֆէնտին»:

Իսկ հիմա ալ հարկ է ներկայացնել այն պարագան՝ զոր կը պատմէ Շահնուր «Նահանջը Առանց Երգի» վէպին մէջ, Պետրոսին ընկերներէն Հրաչին ամուսնութեանը ատեն:

Հրաչ իր ամուսնութեանը կը հրաւիրէ Պետրոս-Փիեռը: Երկուքը՝ թաքսիին մէջ, հարսնցունին տունը երթալու ատեն, մտերմօրէն կը խօսակցին: Հրաչ՝ Պետրոսին խճճուճներուն պատասխանելով՝ կը հաւաստէ, թէ այս անգամ իր ընտրածը

Պօնիշ մը չէ, այլ՝ «անուշիկ, զմայլելի, պատուական պուպրիկ մը եւ շատ շնորհքով ընտանիքի աղջիկ», եւ կ'աւելցնէ.

«Ձաւակն ալ ե՛ս ուզեցի որ ունենանք, որպէսզի իր ծնողքը մեր ամուսնութեանը հաւանի: Հաւատա՛, Պետրոս, բնաւ ան քու կարծած թեթեւսովիկներէն չէ. շա՛տ դժուարամատչելի, ամիսներով ետեւէն եմ վազեր, որպէսզի զինքը համոզեմ: Բայց հիմա, ալ երջանիկ եմ, երջանիկ: Քիչ մը վերջ, դուն ալ պիտի տեսնես թէ ի՛նչ աղջիկ է»:

Այս տրամադրութեամբ, Հրաչ եւ Պետրոս ֆրանսացի հարսնցուին տունը կը հասնին: Բայց հազիւ թէ այս վերջինը դուռը կը բանայ, եւ Հրաչ կը պատրաստուէր զայն իր բարեկամին ներկայացնելու՝

«Պետրոսի երակներուն մէջ արիւնը վայրկենապէս սառեցաւ: Կարծես թէ ահաւոր լախտի հարուած մը ընդունած էր զլիսին: Չէր ուզեր, չէր կրնար աչքերուն հաւատալ, սակայն բացարձակապէս անկարող էր ռեւէ շարժում ընելու, դէմքին վրայ ռեւէ ժպիտ ուրուագծելու: Ինքզինքը պիտի մատնէր: Երիտասարդ կինը սակայն, որ մանրարոպէ մը իսկ իր պաղարիւնը չէր կորսնցուցած, խնդալով ըսաւ.

«-Վստահ էի որ բարեկամդ զիս պիտի ճանչնայ. քանի մը անգամներ իր պանդոկին սանդուղներուն վրայ հանդիպած ենք իրարու ...»:

Բայց Պետրոս շա՛տ աւելի ու իրական մանրամասնութիւններով ալ ճանչցած էր իր ընկերոջը՝ Հրաչին հարսնցուն ...:

Այս պատմութեան, այս դրուագին մէջ՝ եթէ կան չափազանցութիւններ, եթէ իր շարադրութիւնը, իր գիրը չունի Զօհրապին յիշեալ նորավէպին զգաստ, խաղաղ, կերպով մը պատահական հանգամանքը, թէ Շահնուր ուզած ըլլայ քիչ մը տարբեր ու աւելի ցայտուն ձեւով կատարել իրը, հետեւողա-

կանութեան մը կասկածին տեղի չտալու մտածումովը գուցէ, կամ որովհետեւ Փարիզ կատարուող եղելութիւնները պէտք է որ առաւել զգայացունց ըլլան քան Պոլիսիները: Ճիշդ է նաեւ, որ ամէն գնով Շահնուրին այդ շարադրութիւնը հետեւողական էջ մը նկատելը՝ շիտակ չէ, ո՛չ ալ արդար. գրական կեանքին, բնագաւառին մէջ, դիպուածներ կրնան տեղի ունենալ, հեղինակէն անկախաբար: Այսուհանդերձ, խնդրոյ առարկայ եղող պարագային մէջ, ազդեցութեան գոյութիւնը Զօհրային գրականութենէն՝ անկարելի է ժխտելը, մէկէ աւելի պատճառներով.- Զօհրայ եւ Շահնուր՝ համաքաղաքացի էին, մինչ Զօհրային վարկը իսկապէս փայլուն էր տիրապետող ալ ի մասնաւորի երիտասարդութեան վրայ. իսկ ասկէ զատ՝ Շահնուր Նահանջին պատկերները, վկայութիւնները ներկայացնելու ատեն, մտածած ալ է բարքերուն անկումին առնչութեամբ յիշեալ պարագան, յիշեալ դրուագը յատկանշական գտած: Արդէն բարքերու շատ մը այլ անկումներ, նահանջներ ալ ներկայացուցած է իր յիշեալ վէպին մէջ միշտ աւելի խոր ու ցաւալի թոնով, իրողութիւններով: Արդարեւ, Շահնուր միայն անկումներ ներկայացնող պատկերահանը չէ, այլ մանաւանդ յատկանշական եւ խոր անկումները: Եւ դարձեալ այս իմաստով՝ Շահնուր հասկցնել կ'ուզէ՝ Հրաչին միջոցով, Հրաչին անհատական կերպարովը, թէ հայը որքա՛ն միամիտ է օտարին հետ, ու կը հաւատայ օտարին:

Շահնուրին գիրքը տխուր է: Իր վէպին վերջաւորութիւններն ալ տխուր են: Իր բոլոր հերոսներուն կեանքը հոս, հոն. անոնց վերջը՝ մանաւանդ: Սփի՛ւռքը, ահա՛: Այլ կերպ չէր կրնար ըլլալ, այդ շրջանին, այդ պայմաններուն մէջ, Փարիզ:

Եւ մոռնալու չէ որ Շահնուր հիմնովին իրատես մըն է: Նո՛ր մը ե՛ւ: Իր ձեռքը շօշափած է իրականութիւնները, զգացած, եւ

տաղանդը ունի զանոնք գեղարուեստական ձեւերով արտայայտելու ակ:

Արդ, իր ինքնատպութիւնը կը կայանայ՝ իր ճշմարտութիւններուն մէջ: Անոնց հարազատ ու յանդուգն ակ արտայայտութեանց մէջ: Այս սահմանէն դուրս իր գրականութիւնը հետազօտելը՝ չարաչար մեղանշում մը պիտի սեպուէր:

Քիչ մը տարբեր բնագաւառի մը մէջ, Շահան Շահնուրէն շուրջ կէս դար առաջ ծնած ուրիշ հոյակապ վիպող մը, աննման հրապարակագիր մը, իրատես, անգամ հեռատես ու անգերազանց մտաւորական հայ մըն ակ ունեցած ենք.- Արփիար Արփիարեանը:

Որ՝ Շահնուրին պէս իրապաշտ ու անվախ, ճշմարտասէր, անարգել ու անվերապահ կերպով կը յայտնէր, իր թերթին մէջ, իր տեսած, իր գտած, իր հասկցած այն բոլոր իրողութիւնները, ճշմարտութիւնները, որոնց երբ {կը} հաւատար անկեղծօրէն: Ինչպէս նաեւ ազգային, գրական դէմքերուն մասին:

Արփիարեան առողջութեամբ տկար չէր, բայց կ'ապրէր վերջին աստիճանի զրկանքներով: Անհաւատալի թուելու չափ: Կայ ու չկայ իրեն համար, հայ ժողովուրդը միայն կայ. անոր ներկան էւ ապագան. անոր ֆիզիքական, բարոյական, թէ՛ մշակութային գոյութիւնը էւ պաշտպանութիւնը: Այլ առարկայ՝ Արփիարեանին համար՝ գոյութեան իմաստը չունէր. իր մտածումը, իր մտահոգութիւնը ուրիշ իրականութեան մը մէջ փնտռելը՝ սին, անօգուտ աշխատանք պիտի նկատուէր իր աչքին:

Եւ երկուքն ակ՝ Արփիարեան էւ Շահնուր տառապեցան, բայց է՛ւ արտադրեցին, ծառայեցին: Մէկն թէ միւսը, արտակարգ երեւոյթներ են:

Արփիարեանի գործին, հրապարակագրութեան եւ գեղարուեստական գրականութեան մէջ, եթէ ոչ ամէն բան, առ նուազն շատ բան կայ: Եւ երբե՛ք, բայց երբե՛ք պիտի չկրնամ հաւատալ, թէ հնարաւոր ըլլայ ուսումնասիրելը՝ իրենց իսկութեանը մէջ՝ հայ մարդը, հայ յեղափոխականը, հայ գրողն ու գրականութիւնը, մեր ազգային կեանքն ու քաղաքականութիւնը, մեր մեծութիւններն ու անկումները, հայկական նկարագիրը, մեր առհաւութիւնները, վերջապէս՝ մեր բովանդակ էութիւնը, դեռ անգա՛մ մեր բովանդակ պատմութիւնը,- առանց արդէն ուսումնասիրած ըլլալու Արփիարեանին կեանքն ու գործը: Այս բոլորը՝ մեր անհատական թէ ազգային գէշ կամ լաւ ճշմարտութիւնները եթէ երբե՛ս հրապարակուած իսկ են, վերապահ վաւերականութեան մը տպաւորութիւնը կրնան բերել յաճախ, իրենց հատուածական հանգամանքներուն պատճառովը. բայց Արփիարեանին վաւերաթուղթերը՝ իրենց անտիպ, իրենց բո՛ւն ակունքներէն եկածի իրականութեամբը, բոլորովին առաւել եւ նոր եւ հում ճշմարտութիւններ կը պարունակեն ո՛չ թէ միայն ի՛ր մասին, այլ՝ նաեւ շատ մը մեր պատմական կարեւոր, էական դէպքերուն, եւ դէմքերուն ալ առնչութեամբ:

Անշուշտ իր այդ անտիպ թղթածրարներուն ծանօթանալէս առաջ ալ խորին հիացում մը ունէի Արփիարեանին հանդէպ, բայց այժմ այս համակրութիւնը, այս գնահատումն աւելի եւս զօրացաւ, աւելի հիմնաւորուած համոզումներով:

Ջարմանալիօրէն հեռատես միտք մըն էր Արփիարեան, իրատես ըլլալէ բացի: Մինչ իր կարծիքը՝ առանց երկար յայպադումի կը կազմէր, եւ իր որոշումը կ'առնէր ալ դարձեալ առանց երկար ատեն սպասելու՝ միշտ զմայլելի յստակութեամբ: Իր արտայայտութեանց երբե՛ս հեզգնական կերպը՝ այս

Ճշմարտութեան հերքումը չի նշանակեր, այլ՝ կ'ապացուցանէ իրեն տրուած դիտողութեանց կամ իրեն բերուած առաջադրութեանց ծիծաղելիութիւնը, պարզապէս: Չեմ խորհիր, որ շօշափումի զգայարանքը իրմէ աւելի վստահութեամբ ունեցող մը գտնուած ըլլայ մեր իրականութեանց մէջ, եւ իրմէ աւելի մեկին կերպով ալ արտայայտուող մը՝ հայութիւնը շահագրգռող ո՛րեւ նիւթի մը, ո՛րեւ հարցի մը մասին: Եւ արդէն այս ակներեւ պարագան էր որ գլխաւոր, իսկական պատճառը դարձաւ իր գոյութիւնը չհանդուրժելու. ուստի ե՛ւ իր պատկանած կուսակցութիւնը հարուածելու համար, զինքը հալածեցին:

Արփիար Արփիարեանին մեծութիւնները չափելու, արժէքաւորելու համար, իր կեանքն ու գործը ուսումնասիրելէ զատ, տեսնելու է, քննելու է մանաւանդ իր դէմ յարուցուած առասպելական զրպարտութեանց բովանդակութիւնն ու կերպերը:

Ստուգիւ, անոնց հեղինակներուն գլխաւոր յետին միտքը իսկոյն կը դրսեւորուի, կը ցայտի.- Արփիարեան՝ անոնց գոյութեան, յառաջդիմութեան, անոնց լինելիութեան համար անպարտելի արգելք մը ըլլալուն, այդ տեսակի զրպարտութիւններով միայն ձեռք ձգել կը յուսային իր տապալումը, եւ իր մի անգամ ընդ միշտ հեռացումը ազգային գործերէն: Բայց ան՝ հսկայ կաղնիի մը պէս, կուրծք տուաւ բոլոր հովերուն, բոլոր փոթորիկներուն, երբեմն հեզնանքով, կամ կարճ կերպով միայն պատասխանեց, երբեմն ալ արհամարհանքով, իր բոլոր չարամիտ հակառակորդներուն, թշնամիներուն, թէեւ միշտ ալ իր ամէն մէկ բառը ծանր հարուածներու նման ինկան այդ անվայելներուն գլուխը: Եւ եթէ օրին մէկը, երրորդ մահափորձ մը իր մարմինը տապալեց, իր գործը, իր միտքերը, իր գեղեցիկ

դպրութիւնը՝ դեռ կ'ապրին սակայն, եւ պիտի ապրին ալ, իբր փառքը, իբր պատիւը մեծ մշակոյթի մը:

«Կարմիր Ժամուց»ին հեղինակը, ո՛չ մէկ առթիւ, ո՛չ մէկ ատեն, ո՛ր էւէ ջանք, բայց ամենադոյզն ջանքն անգամ պիտի չընէ իրեն հանդէպ համակրական տպաւորութիւնը ստեղծելու համար: Հասարակ դարձած ամբոխավարութիւնը, մեր օրերուն ծանօթ գովազդը, սնափառութիւնը՝ իր բնագաւառին մէջ գոյութիւն չունին. այս միջոցները չի՛ սիրեր, անոնցմէ վեր է: Անկեղծ վստահութիւն ունի իր գաղափարներուն, իր գործին, իր ժողովուրդին, իր ձեռքին իրատեսութեանը վրայ: Այս պարագան՝ իր մօտ գուցէ հաւատքի մը բացարձակութեան, անվերաքննելի հանգամանքին հասած ըլլայ: Իր պարկեշտութիւնը, իր ազգասիրութիւնը, ծառայելու իր անսակարկ տրամադրութիւնը, կիրքը՝ իր մէջ, ինչպէս նաեւ իր արմատական ու յստակ տեսութիւնները եւ իր ձեռքին **գօրականութիւնը**՝ թոյլ պիտի տան մեզի զինքը նկատելու ինքնավստահ, անսայթաք կամքի մը տէր մէկը, ամէն անգամ որ հարցի մը, խնդրի մը վրայ խօսի, կամ գրէ: Իր ձեռքին գիտակցութիւնը, հաղորդումները՝ միշտ իրական եղած են: Եւ ճիշտ այս իսկ պատճառով ալ, իր գրութիւնները՝ որքան ալ պարզ, հանդարտ, երբեմն թեթեւ անգամ երեւան, իր գրութիւնները՝ ուրեմն, ամէն ատեն անհպելի ըլլալու հանգամանքը ունին, իրենց ճշմարիտ, հարազատ խորքին ու ձեւին համար:

Արփիարեան երբեմն նօթագրած է՝ կարճ բայց ողբերգական իրատեսութեամբ, նիւթական պակասէն իր զգացած ցար. իր կարգ մը նամակներուն սեւագրութիւններն ալ նո՛յնը կը վկայեն, մինչ Շահնուր կը պատմէ հիւանդանոցի կեանքէն, իր անտէր վիճակէն, իր ցաւագին կեանքէն: Եւ սակայն այս կենցաղը, այս

տարապայման վիճակները՝ երբեք պիտի չկազմեն իրենց աշխատանքին, իրենց պայքարին, իրենց գրականութեան համար արգելք մը, ո՛չ ալ անոնք իրենց գեղեցիկ դպրութեան նիւթը պիտի դառնան: Մա՛րդ էին, երկուքն ալ, եւ կրնային ազդուիլ. բայց պայքարեցան, ստեղծագործեցին: Տառապանքը՝ իրենց համար, մղիչ ոյժ մը եղաւ դէպի աշխատանքը, դէպի սէր մը:

Սթեֆան Չվայկ՝ միջազգային հռչակ ունեցող կարգ մը հանճարեղ գրողներու եւ պատմական դէմքերու մենագրութիւնները հեղինակած է արտակարգ հմտութեամբ, բժախնդիր ուսումնասիրութիւններէ յետոյ. այս բնագաւառին մէջ, ապահովաբար լաւագոյն հեղինակը կը նկատուի բոլոր երկիրներու մօտ: Արդ, Տոսթոյեվսքիին յատկացուցած իր մենագրութեանը մէջ, Չվայկ կը հաւաստէ, թէ ո՛չ միայն ան դժգոհ չէր իր զանազան տառապանքներէն, դժբախտութիւններէն, իր վերնոտութեան տագնապներէն՝ որոնք զինքը գետին կը նետէին, կը գալարէին, բերանը փրփուրներ դուրս կու տար, ո՛չ միայն դժգոհ չէր ու չբողոքէր անգամ երբ՝ ամէնէն հասարակ ոճրագործի մը պէս շղթայակապ Սիպերիա արքայութեան զինքը, այլ ընդհակառակն՝ ամէն անգամ որ նոր ցաւ մը կ'ունենար, Աստծոյ շնորհը կը նկատէր զայն: Անշուշտ վարկած մը կրնայ սեպուիլ այս հաւաստումը՝ որուն կարելիութիւնը բոլորովին ճշմարտութենէ հեռու մտածելն ալ սակայն հապճեպ վճիռի մը հանգամանքը կ'առնէ:

Տոսթոյեվսքի կը սիրէր կեանքը՝ իր բոլոր կերպերուն մէջ, կը սիրէր գեղեցիկ դպրութիւնը, ստեղծագործումը. կապուած էր, խմորուած էր անոնց եւ իր ժողովուրդին հետ: Անոնց մէջ, անոնց հետ՝ գոհ էր: Հաւատքին հարցը, Աստծոյ գոյութեան հարցը՝ նոյնքան գրաւած, զբաղեցուցած էր զինքը: Ռուսիան եւ

Աստուած՝ Տոսթոյեվսքին կ'առաջնորդէին բոլոր եղելութեանց մէջ:

Շահան Շահնուր կը հաւատար, թէ գեղեցիկ դպրութիւնը իր ցաւը մոռցնել տուած է իրեն, կերպով մը:

Իր երիտասարդական տարիները՝ ամէնէն դժնդակ եւ ամէնէն յուսահատական շրջանը եղան հայոց համար. դժուար էր օրական հացը ճարելը, ապագան անորոշ, մութ, իսկ հայր՝ ամէն տեղ, «անբաղձալի»ն: Մինչ Շահնուր՝ արդէն կազմուած մտաւորական մը: Մնաց ալ նո՛յնը: Մնաց նոյնը՝ ի պատիւ իրեն: Իր օրապահիկը շահելու համար՝ լուսանկարիչի մը քովը իբր վերյարդարող ծառայեց, բայց իր գրիչը՝ հայ գրականութեան մէջ, վերհպումներէն աւելին կատարեց.- մեր վիպական գրականութեան տուաւ նոր ստեղծագործումներ, նոր տարերգրութեանց՝ յատկանշական երեւոյթներէն եւ եղելութիւններէն ոմանք՝ քննադատեց անվերապահ յանդգնութեամբ, փորձեց վերյարդարել ալ: Անշուշտ որ իր վերյարդարումը՝ սրբագրութիւն մը եղաւ: Իր ձեռքերուն տաղանդին, հպումին, շօշափումին, զգայութեան, գիտակցութեան վստահեցաւ: Ո՛չ թէ միայն կրցաւ ճշմարտութիւնը իր ափին մէջ առնել ու դրսեւորել զայն, այլ եւ այս կերպով գտաւ իր սփոփումը, մտաւորականի իր սփոփումը՝ ծառայելու ու մանաւանդ տեւելու ոյժը: Իր հիւանդութիւնը՝ ընկեր մը եղած էր իրեն:

Արփիար Արփիարեանն ալ,- տեսա՛նք,- երեւոյթ մըն է: Իր վերջին աստիճանի չքաւորութիւնը, ամէ՛ն կարգի զրկումները, տարիներով տեւող քաղցած մարդու վկայութիւններն անգամ վերջ չդրին իր հրապարակագրական, գրական, կուսակցական

⁶ Արդեօ՞ք տարերական, տարրական բառէն, թէ՞ պարզ վրիպակ մըն է.

եւ ազգային գործունեութեան: Հոգ չըրաւ իսկ, երբ, Փարիզ, ամէնէն աժաննոց պանդոկ մը մերժեց իրեն օթեւան տալ, պարզապէս իր արտաքին կերպարանքը տեսնելով: Չզգաստացաւ՝ երբ յաճախ իրեն կը պակսէր պարզ նամակ մը առաքելու համար հարկ եղող դրոշմաթուղթին ստակը: Չրի, անպիտան զրպարտութիւնները, ճրի ու անպիտան բամբաստողները՝ տարածեցին սակայն ամէն տեղ, առանց յոգնելու, առանց դանդաղելու, թէ Արփիարեան թրքական ոստիկանութենէն կը ստանայ ամսական երեսուն կարմիր ոսկի ... մինչ այդ շրջանին՝ նման ամսաթոշակ մը խոշոր, շա՛տ խոշոր եկամուտի մը արժէքը ունէր: Երբե՛մ զրպարտութիւնները աւելի առատաձեռն ալ կ'ըլլան ... օր մը, Փարիզի մէջ, հայերէն լեզուով տպուած թռուցիկ մըն ալ կը ցրուեն.- թէ Արփիարեան եւ Չօպանեան երեսուն հազար ոսկի նուէր ստացեր են եւ փարիզուհիներուն հետ կը ծախսեն: Չեմ գիտեր ի՛նչպէս որակել այս զրպարտութիւնները՝ որ բոլորովին սուտ ըլլալով հանդերձ, հարազատօրէն կը մատնեն իրենց հեղինակներուն տրամաբանութեան, մտածելու տարրական կարելիութեան հիմնական պակասը. արդարեւ, այն որ կը ստանայ ամսական երեսուն ոսկի, այն որ կը ստանայ մանաւանդ 30,000 ոսկի թագաւորական գումար մը՝ իբր նուէր, կարօտ կ'ըլլայ հացի, եւ անձրեւոտ օրերուն ալ ծակած կօշիկներով փողոցը կը քալէ, գործի երթալու համար:

Անշուշտ որ Արփիարեան տառապեցաւ ամէ՛ն օր այս բովանդակ կացութենէն: Բայց չհրաժարեցաւ ալ իր տառապանքներէն երբ կրնար՝ շնորհիւ իր զարգացումին, ապրիլ բաւարար կերպով: Գիտէր, տեսած էր, կը տեսնէր ամէն օր իր ժողովուրդին դժբախտութիւնը. գիտէր ալ այս ժողովուրդը առաջնորդել, այսինքն՝ զայն լաւագոյն կերպով առաջնորդել եթէ լիովին կարելիութիւն տրուէր իրեն: Գիտակից էր նաեւ անոր

«փրկիչ»ներուն ձեռքերուն ահաւոր անխղճութեանը, փառասիրութեանը, հատուածական յետին միտքերուն, եւ կը տառապէր իր ժողովուրդին հետ, իր ժողովուրդին համար: Եւ աւելի եւս կը տառապէր տեսնելով իր իսկ կուսակցութեան պատկանողներէն ոմանց զարտուղի, ազգաժառանգարարքները, այլ հատուածներու անորակելի պայքարէն, գործերէն բացի: Նոյնացաւ իսկ իր ժողովուրդին տառապանքին հետ, բայց չկորսնցուց իր արեւելքը: Եւ իր սելեռումը՝ առաքելութիւն մը դարձաւ. անգամ իր հայրենասիրութենէն աւելի՝ հայ ժողովուրդին հանդէպ տաժած իր սէրը, պաշտումի մը հասցուց.- իր անձը՝ միշտ ու ամէն առթիւ մոռցաւ. իր միտքը, իր սիրտը, իր ձեռքը՝ իրարու միացած ու համերաշխ, ստոյգ հպումին հետեւեցան: Եւ իր կեանքը, իր կենսագրութիւնը՝ այսպէս երկնուեցաւ: Առանց իր կրկնակ տառապանքին՝ իր անհատական կեանքին մէջ, եւ իր ժողովուրդին հալածանքներէն զգացուած, Արփիարեան պիտի չկրնար ըլլալ գուցէ՝ այն ինչ որ է իր շքեղ ու շնորհակալ գործերովը:

Դարէ մը ի վեր սկսած մեր մտաւորական, ազգային, գրական պատմութեան մէջ, եւ որուն Չարթօնքի կոչումն ալ տուին, երկու աղուոր, օրինակելի բացառութիւններ միայն կան.- Առաջինը՝ Գրիգոր Արծրունին է Արեւելահայոց մէջ, իսկ երկրորդը՝ Գրիգոր Զօհրապ, Արեւմտահայոց մէջ:

Արդարեւ՝

Գրիգոր Արծրունի, Զուիցերիա ուսած, եւ հսկայական հարստութիւն մը ժառանգած իր հօրմէն, իր ժողովուրդին ծառայելու համար հիմնեց «Մշակ» օրաթերթը, վարձատրեց իր տաղանդաւոր աշխատակիցները, զանոնք քաջալերելու եւ արգասաւորելու համար: Դրամը՝ զոր ժառանգեց, չկորսնցուց

զինքը, բայց ինք իր ժառանգած հարստութիւնը գործածեց իր ժողովուրդին ծառայելու ճամբուն վրայ:

Իսկ Գրիգոր Զօհրապ հարուստ չէր, բայց շնորհիւ իր փաստաբանական ասպարեզին՝ շատ դրամ կը վաստկէր եւ շատ ալ կը ծախսէր. կը սիրէր կեանքը, հաճոյքը, գեղեցիկը. սիրեց կինը, սիրեց ստեղծագործական գրականութիւնը. սիրեց իր ազգը: Իր յաջողութիւնները՝ ամէն մարզի մէջ ալ, եւ փառքը՝ երբեք չշլացուցին զինքը, ո՛չ ալ իր ստեղծագործական աշխատանքը թուլացուցին: Անգամ երբ «Անհետացած Մերունդ Մը» առաջին վիպակը գրական նոր աստղի մը երեւումին պէս ընդունեցին, մտաւորական դասն ալ մէջը, ինքը՝ հեղինակը, զայն յայտարարեց որպէս տկար բերք մը եւ զայն կերպով մը ուրացաւ: Զօհրապ ինքնավստահ, գիտակից մարդն էր իր ձեռնարկած բոլոր գործերուն մէջ,- բայց ո՛չ երբեք ամբարտաւան մը: Ձեռք կ'առնէր այն աշխատանքը, գոր կը սիրէր: Մեր նիւթին համար կարեւորը՝ հոս, գեղեցիկ դպրութեան հարցը չէ, այլ այն որ հակառակ իր շահած փայլուն յաջողութեանց, նախանձելի միտքին, հակառակ իր վաստկած իր ատենին համար խոշոր գումարներուն, չկորսնցուց ինքզինքը, չըբեց գեղեցիկ դպրութիւնը, ինչպէս նաեւ իր հասարակութեան ծառայելու տրամադրութիւնը, սէրը: Մեր իրականութեանց ի տես, ես չեմ կրնար մոռնալ այս պարագան, այս շատ իմաստալից, յատկանշական երեւոյթը:

Տիգրան Կամսարականն ալ, Պոլիս, մեծ յաջողութիւն գտաւ իր «Վարժապետին Աղջիկը» վէպովը: Գրական անուն մը շինեց եւ անցաւ իր շրջանին մեր գրականութեան պատմութեան մէջ: Յետոյ Եգիպտոս հաստատուեցաւ, ծխախոտի գործով, իր անդրանիկ եղբօրը մօտ: Հարստացաւ: Բաւական շատ

հարստացաւ: Արուեստէ կը հասկնար, արուեստը կը սիրէր ալ, եւրոպական իմաստով զարգացած միտք մըն էր, բայց, այսուհանդերձ, լքեց գեղեցիկ դպրութիւնը, եւ չգրեց այլեւս: Այս բնագաւառին մէջ, դրամը զինք կորսնցուց, իսկ հայ գրականութիւնը՝ լաւ վիպասան մը:

Ինչո՞ւ այս այլազանութիւնը՝ Արծրունիին եւ Զօհրապին հետ բաղդատելով, ի մասնաւորի: Խորհելո՞ւ է այս մասին: Կ'արժէ՞: Ի՛սկապէս կ'արժէ անշուշտ:

Փարիզի Հայ Ուսանողական Ընկերակցութեան կողմէ գացած էի, յիշեալ վիպասանին՝ իրմէ խնդրելու համար որ մեր մէկ հերթական հրապարակային հանդէսին բանախօսէ գրական նիւթի մը վրայ: 1925-ին էր: Տիգրան Կամսարական կը բնակէր Փարիզի ամենէն շքեղ եւ ամենէն հայ լայն թաղամասերէն մէկուն մէջ: Լաւագոյն հագուստս **դրուեցայ**. ուրախ եւ հպարտ ալ էի, որ հոչակ ստացած հայ վիպասանի մը պիտի ներկայանայի, զինքը անձամբ ալ պիտի ճանչնայի. իրեն հանդէպ՝ իբր վիպասան, իբր գրող, մեծ համակրանք ունէի, «Վարժապետին Աղջիկը» յափշտակութեամբ կարդացած էի:

Իր յարկաբաժինին դուռը ինծի բացողը՝ երիտասարդ, աղուոր, ժպտուն, լաւ հագուած աղջիկ մը եղաւ. իր սպասուհին ըլլալու էր, ապահովաբար: Նայեցայ իր ձեռքերուն, որ նոյնպէս նուրբ եւ սիրուն էին: Ըսի իրեն, թէ Հայ Ուսանողական Ընկերակցութեան կողմէ եւ իբր իր նախագահը՝ եկած եմ Պարոն Կամսարականը տեսնելու: Երիտասարդուհին ներս գնաց իսկոյն, ինձմէ խնդրելէ յետոյ, միշտ քաղաքավար, որ վայրկեան մը հոն սպասեմ:

Անառարկելիօրէն փարթամ էր յարկաբաժինը: Մուտքի բաւական ընդարձակ սրահին պատերուն վրայ կախուած էին պետական թանգարանի մը վայել իւղաներկ նկարներ: Հոս ու

հոն, արուեստի հոյակապ առարկաներ: Մինչ գորգերուն եւ կարասիներուն թանկագին հանգամանքը աչքի կը զարներ եւ կը հրապուրէր: Որպէս հայ ուսանող մը, ու մանաւանդ Մեծ Եղեռնը տեսած, երջանկութիւն կը զգայի որ մեր մէկ վիպասանին կը պատկանի այս հոյակապ բնակարանը, որ մեծ ալ էր: Խորապէս յուզուած, կլանուած՝ շուրջերս կը նայէի առանց այլեւս ամէն ինչ կարենալ տեսնելու:

Եւ աղջիկը շուտով ալ ետ եկաւ, ժպիտը գրեթէ կորսնցուցած, ու գրեթէ անհրապոյր, եւ ըսաւ.

-Պարոն Կամսարականը պիտի չկրնայ ընդունիլ ձեզ. զբաղած է:

Ցնցում մը ունեցայ: Կը խոստովանիմ: Երիտասարդուհին՝ դեռ դիմացս: Եւ ինծի կը նայէր: Հասկցայ վիճակս: Բայց երբ խնդիրը անձիս, լոկ ինծի չի՛ վերաբերիր, չե՛մ յուսահատիր շուտով, տեղի չեմ տար դիրաւ. եւ կը պնդեմ անդրդուելի կերպով ալ: Յիշեցի որ այն ատեն, անմիջապէս, թէ ունէի այցետոմս մը, որուն վրայ գրուած է՝ անունիս տակը, իրաւաբանութեան ուսանող, իսկ ասոր ալ տակը՝ Եւրոպայի մեջ Պոլսահայ թերթի մը, Ազդարարին թղթակիցը ըլլալս: Եւ տեսէ՛ք այս այցետոմսիս իմաստը, հնարաւորութիւնները: Մամուլի թղթակիցի հանգամանքս՝ շատ մը դուռներ բացած էր արդէն ինծի, այդ շրջանին⁷:

⁷ Երկու բառով հա՛րկ է պատմել այս: Ուսանողութեանս այդ շրջանին, տարի մը կամ երկու տարի առաջ, Փարիզէն թղթակցութիւն մը դրկած էի Ազդարարին, առաջին անգամ ըլլալով. իր խմբագիրը՝ Մանուկ Ասլանեան, նամակով մը շնորհակալութիւն յայտնեց եւ կը խնդրէր ալ միւսնոյն ատեն որ շարունակէի աշխատակցութիւնս, ու կ'աւելցնէր թէ չէր կրնար վճարել աշխատակցութիւնը՝ ինչպէս «բոլոր հայ թերթերը», բայց սիրով պիտի դրկէր թերթ եւ թղթակիցի քառթը, «որ

Ուրե՛մս հանդարտօրէն այցետոմսս հանեցի դրամա-
պանակէս ու առջեւս կեցած, ինծի նայող սպասուհիին
երկարեցի, աւելցնելով թէ տեսակցութիւնս՝ իր տիրոջը հետ,
քանի մը վայրկեանը պիտի չանցնի: Առաւ այցետոմսը՝ վրան
տեսակ մը նայելով, նորէն գնաց նոյն սենեակը, ու պահ մը ետքը
վերադարձաւ, այս անգամ ժպտուն, եւ յարեց.

-Հետեւեցէ՛ք ինծի, Պարոն:

Նրբանցքի մը մէջէն իրեն հետեւեցայ, սպասուհին կանգ
առաւ դրան մը առաջ, ու ըսաւ.

-Կրնա՛ք մտնել:

Ներսը՝ ուր զիս ընդունեց Տիգրան Կամսարական,
աշխատանքի իր սենեակը ըլլալու էր. նոյնպէս զգալիօրէն
վստահելի ճաշակով շտկուած, արուեստի առարկաներ,
ընտրեալ նկարներ, մարոքէնով կազմուած հատորներ շատ
կային: Ինձմէ առաջ ինք խօսեցաւ ինքզինքը իսկոյն չքմեղացնե-
լու պէս, թէ հայ երիտասարդներ իրեն կ'այցելէն՝ ուսանողի
պիտակին տակ, զինքը թափէ⁸ ընելու համար...: Բառը զիս շատ
նեղեց: Հայ ուսանողի մը ձեռքը, ինչքանով եւ քանի անգամ
կրնար իրեն պէս փարթամ կեանք ապրող մէկը թափէ ընել:
Չուզեցի սակայն ռեւէ ձեւով արտայայտուիլ այս մասին: Թերեւս
պիտի չկրնայի ալ. ա՛յնքան ազդուած էի, մէկէն: Ըսի միայն իրեն,
թէ եկած եմ իրմէ խնդրելու որ մեր Ուսանողական
Ընկերակցութեան կազմակերպած մէկ հրապարակային հանդէ-

կրնար ինծի օգտակակար ըլլալ»: Եւ ճիշդ ալ, այդ քառօր շատ լաւ
ծառայեց ինծի: Ագրաքարին աշխատակցութիւնս՝ այս
օգտակարութենէն բացի, ինծի այլ հաճոյք ալ պատճառեց. Մանուկ
Ասլանեանին մէջ ճանչցայ սքանչելի մարդ մը եւ նոյնքան ալ
սքանչելի խմբագիր մը:

⁸ Taper = փոխ առնել.

սին դասախօսութիւն մը տայ, հայ գրականութեան վերաբերեալ նիւթի մը վրայ. բայց ան մերժեց իսկոյն, առարկելով թէ հրապարակային ելոյթ ունենալէ, գրելէ ալ վաղուց արդէն հրաժարած է ինք: Չուզեցի կրկնել խնդրանքս. կարելի եղածին չափ շուտով մեկնիլ կը փափաքէի:

Երկրորդ անգամ զինքը տեսայ, նոյն տարին, քանի մը ամիս ետքը. Արշակ Չօպանեանին յոբելենական հանդէսին էր, Փարիզ, Փլէյէլ սրահին մէջ: Ուր ինքն ալ՝ խօսեցաւ: Երբ հանդէսին գացի, չէի գիտեր, թէ Տիգրան Կամսարական պիտի խօսեր այդ իրիկուն: Բեմին վրայ, զինքը տեսնելը զիս գոհ չձգեց, բայց չզարմացայ. այս՝ հասկնալի է կարծեմ:

Այսօր, մօտ վեց տասնամեակներ անցած են, բայց իր գանգատը, իր վրդովումը՝ թէ հայ ուսանող մը, կամ հայ ուսանողներ զինքը «թափէ» ընելու համար իրեն գացեր են,- շատ լաւ կը վերյիշեմ երեկուայ դէպքի մը պէս: Եւ այս մասին շատ խորհած եմ, ետքն ալ. խորհած եմ երկրորդ Համաշխարհային Պատերազմէն ետքն ալ, մինչեւ այսօր իսկ.- կ'ըսեմ, թէ հարստութիւնը եւ դիրքը՝ հայուն չեն վայելեր: Բացառութիւնները՝ սակայն, այս նշմարումս չեն ժխտեր երբեք, այլ՝ ընդհակառակն, հիփսովին կը ստուգեն, կը հաստատեն, կը վաւերացնեն զայն:

Շահան Շահնուր չէր հետեւած ո՛րէի վարդապետութեան: Կը թուի, թէ վարդապետութիւնները զինքը շահագրգռած են՝ իբր մտաւորական պաշար միայն: Բայց Արփիար Արփիարեան՝ տեսական բնագաւառին մէջ, ընկերվարական էր. ասիկա՝ սակայն, զուտ գաղափարական, կամ տեսական գիծերէն անդին չէր անցներ իրեն համար: Ընկերվարական տեսակէտներուն, վարդապետութեան գործադրութեան մասին՝ այդ օրերուն,

վիճելն անգամ տղայական կամ առ նուազն շատ կանխահաս կը նկատէր, ու կը յարէր միշտ.- «Դեռ ատենը չէ»: Քանի, անշուշտ, իր ժողովուրդը տակաւին անընդհատ հալածանքներու, ջարդերու, առեւանգումներու, թալաններու ենթակայ է թուրքին եւ քիւրտին կողմէ, ու, հետեւաբար, նախ հա՛րկ է, անհրաժեշտ է, կենսական է՝ մտածել եւ աշխատիլ հայը պաշտպանելու, ազատագրելու:

Այսուհանդերձ, Արփիարեան մոլեռանդ մը չէ: Ո՛չ ալ ազգայնամոլ մը: Այլ՝ խղճամիտ, արդար ազգայնական մարդն է. եւ իրա՛ւ մտաւորականն ալ: Բարձր միտք, բարձր մշակոյթ ունէր, եւ բարդ էր, իր պարզութեան մէջն անգամ: Պարկեշտ, գերծ ալ անհատական ամենադոյզն շահերէ, գուրկ՝ նաեւ փառասիրութենէ: Արփիարեան գիտցաւ, ուրե՛մ, ըմբռնել հայ իրականութիւնները՝ յստակութեամբ մը, որուն չեմ գիտեր եթէ մեր գործիչներէն ո՛րէւ մէկը կրցած է երբեւիցէ հասնիլ: Իր ձեռքին հպումներուն արգասիքները՝ այս ճշմարտութիւնը անհերքելիօրէն կը վկայեն: Անոնք կը վկայեն, կը հաւաստեն՝ նաեւ իր անսակարկ գործունէութիւնը, անհատական թէ՛ ազգային գործիչի, ինչպէս նաեւ հայ գրողի իր բովանդակ բարոյականը.- Արփիարեան բովանդակ էութիւնը:

Հրաշքով մը, տասնեակ մը տարիներ առաջ, իր անտիպ արշիւր ձեռքս անցաւ: Այս արշիւին գոյութեան մասին իսկ՝ մինչեւ այդ օրը, ո՛չ ոք լուր անգամ չուներ: Ստուար է ան, մօտ հինգ հազար կտոր.- կան երկտող բացիկներէն մինչեւ բազմաթիւ էջերով տեղեկագիրներ, նամակներ, զանազան սեւագրութիւններ: Անոնց բոլորն ալ քննեցի մէկիկ մէկիկ. պատմական դէպքերուն եւ դէմքերուն իսկական, հարազատ վկայութիւններու ակունքներ են անոնք: Ուրախութեամբ կատարեցի անոնց բովանդակութիւնը հետազօտելու, ուսումնասիրելու աշխատանքը. շահեկան են մէկէ աւելի իրողութեամբ, եւ նաեւ անոր

համար որ այս արշիւր երեւան չէր հանուած: Եւ ահա՛ ան առաւել եւս կը ներկայացնէ, կը լուսաւորէ Արփիար Արփիարեանին շրջանը, իր գործակիցները, ազգային դէպքերն ու դէմքերը՝ իրենց իսկութեանը մէջ, ինչպէս նաեւ իր ալ դէմքը, գործը, տեսակէտները, իր նկարագիրը: Եւ այլեւս ստոյգ կ'երպով:

Արփիարեան նախ առաքեալ մըն էր, յետոյ մարգարէ մը եղաւ:

Եւ միշտ ալ համեստ փասց: Անգամ երբ հոչակ ստացած հեղինակութիւն մըն էր: Արդարեւ ամէ՛ն առթիւ, եւ ամէնուն հետ: Չէր ըսեր երբեք իր խօսակիցին, չէր գրեր երբեք.- «Ես եւ դուն», կամ «ես եւ դուք». այլ՝ «դուն եւ ես», կամ՝ «դուք եւ ես»: Իր սեւագրութիւններէն մէկուն մէջ տեսայ միայն մէկ անգամ, որ գրած ըլլայ.- «ես եւ դուն». բայց ասիկա բացառութիւն մը կը կազմէ իր կողմէ:

Այս քաղաքավարական, այս պատշաճ ձեւին, կ'երպով մը այս պատշաճ ու անգիր օրէնքը յարգելը՝ նկատած ըլլալու էք, անշուշտ, թէ ամէն ատեն չէ որ տեղի կ'ունենայ մեր մէջ, մանաւանդ ազգային գործունէութեանց լծուած մարդոց միջեւ:

Արփիարեանը՝ իր ամէնէն մեծ յանցանքը ինքն իր դէմ գործեց ամէն օր.- չքաւորութեան, յետին աստիճանի հասած չքաւորութեան մէջ ապրեցաւ: Իրե՛ն պէս մէկը: Անշուշտ որ յանցանք մըն է այս: Ո՛րքէ չքմեղանք չունի. չէ՛մ գտներ: Կրնար գոնէ քիչ մը լաւ ապրիլ, ու չըրաւ: Իր զրկուածութիւնները՝ հետզհետէ չափազանցութեան տարաւ: Զինքը գնահատողները, սիրողները բազմաթիւ էին՝ ամէն տեղ, եւ որոնց մէջ ունեւորներ ալ կային. բայց ո՛չ ոք իրեն օգնեց: «Գնա՛ մեռիր, եկուր սիրեմ»: Արփիարեան հայ է, իր շրջապատն ալ, ու այս իրողութիւնը բաւական կրնայ սեպուիլ իբր լիակատար բացատրութիւն: Եւ անշուշտ Արփիարեան ձեռք չերկարեց երբեք, ձեռք չբացաւ

երբեք, իր գլուխը միշտ բարձր բռնեց. հակառակը՝ Արփիարեան չճանչնալ պիտի նշանակեր:

Որովհետև, բառին լաւագոյն, բարձրագոյն իմաստովը՝ Արփիարեան մտաւորական մըն է: Կ'արտայայտէ ազատօրէն, անշահախնդիր կերպով, ինչ որ գիտէ, ինչ որ կը զգայ, ինչ որ կը հաւատայ թէ ճիշդ է, կամ կրնայ ըլլալ. կեղծիքը վարկ չունի իրեն համար: Չի՛ կրնար մտածել անգամ, թէ պարկեշտ մէկը, ուղղամիտ մէկը՝ չարտայայտուի արիաբար, կամ չուզէ վկայել, հաւաստել իր գիտցած ճշմարտութիւնները, կամ իր համոզումները: Ստուգիւ, Արփիարեան երբեք իր ձեռքը ետ չքաշեց երբ իր ասիին մէջ բռնած ունի ճշմարտութիւնը.- այս մասին, բացառութիւն չկայ իր կեանքին մէջ, իր տեսական պայքարի, վտանգներով փոթորկալից կեանքին մէջ: Այն ձեռքը որ զարկաւ իրեն, միայն Արփիար Արփիարեանին դէմ չէ որ ոճիր մը գործեց, այլ հայ ժողովուրդը որք դարձուց նոյն ատեն:

Ինչպէս ազգային կեանքին, ազգային բո՛լոր խնդիրներուն մէջ ու հանդէպ, նոյնպէս եւ իր ստեղծագործական գրականութեան մէջ՝ Արփիարեան հարազատ ու ինքնատիպ իրապաշտն է: Այս հաւաստումին համար՝ բաւական պիտի ըլլար եւ ստոյգ ու հիմնական իմաստով, իր «Ոսկի Ապրջան»ը, իր «Օրհնեալ Գերդաստանը», իր «Կարմիր Ժամուցը» ստեղծագործութիւնները միայն: Անշուշտ նկատի չունիմ, այս առթիւ, իր սկզբնական գործերը, քանի որ ինքն իսկ ոչ միայն անոնց չհետեւեցաւ, այլ զանոնք լքեց, երբեմն ալ սրբագրեց անգամ: Իր շրջանին՝ ուր աղմուկը, ժխորը, լուսնոտներու ամբոխավարութիւնը, երագային, ցնորամիտ տրամադրութիւններն ու ահեղ հոսանքը՝ գրեթէ ընդհանուր դարձած էին, ձրի էին, ան՝ Արփիարեան, ժայռի մը պէս կեցաւ սակայն իր տեսակետներուն ե՛ւ իրականութեանց վրան, գիտակից ու անվեհեր ռահվիրայի մը

պէս, երբեմն արհամարհական եւ հեզնոդ ալ, միշտ ինքնատիպ, կծու, ու իր հակառակորդները մինչեւ գետին հաւասարացնող: Տիրող հոսանքներուն երբեք տուրք չտուաւ:

Ոմանք՝ իր գրականութեան, իր տեսակէտներուն վրայ խօսելու ատեն, գովեստի բառերուն հետ, ըսին նաեւ թէ ան դպրոց չհիմնեց, մոռնալով կամ ուրանալով, որ Արփիարեան գրական, մտաւորական դպրոց մը հիմնելէն աւելին ըրաւ.- իրապաշտ գրողներ պատրաստեց՝ իր իրատես, իր ինքնավստահ ձեռքովը:

Արփիարեանին արժանիքը դեռ աւելի գնահատելի է անով մանաւանդ, որ իր շրջանին մթնոլորտը, ընդհանուր մթնոլորտը՝ անորոշ էր, աներես, անգիտակից, ատելավառ, նախանձի բոյն, առասպելական զրպարտութեանց երդուեալ մրցուժներու դաշտավայր ալ. եւ այս մթնոլորտը չդադրեցաւ. բայց այս տեւական խառնակութեանց մէջ, ինչպէս նաեւ հայկական մտածելակերպին, խլրտումներուն հիւանդագին, առհաւական վիպապաշտութեան մէջն իսկ, երեք գլխաւոր, ճշմարիտ աստղեր ունեցաւ Արեւմտահայ երկինքը, հայ իրականութիւնը.- Արփիարեան, Զօհրապ եւ Շահան Շահնուր: Երեքն ալ՝ արի, ճշմարտախօս, ազատ հրապարակագիրներ եւ արուեստագէտ գրողներ, եւ որ, ո՛չ մէկ ատեն, չգործածեցին ակնակապիչներ, որ իրենց ձեռքովը փնտոեցին ու գտան իրականութիւնները, որ ճշմարտութիւնը միայն արտայայտեցին, գրեցին անվերապահօրէն, որ եղան պարկեշտ՝ իրենց կեցուածքին մէջ, որ չստեցին երբեք մեր ժողովուրդին, ձեռք չտուին ամբոխավարութեան: Երեքն ալ բռնած էին՝ ամենէն առաջ եւ ամէն մէկը առանձինն, իր ուրոյն ձեռքովը, հայ ժողովուրդին բազկերակը. գիտցան, թէ ազգասէր, պարկեշտ մտաւորականի կերպն էր այս:

Մասնաւորապէս Արփիարեանի գործունէութիւնը, մտածումները, տեսակէտները, փորձառութիւնը, իր գործը՝ շա՛տ բան կը պարունակեն, շա՛տ բան կ'աւանդեն, շա՛տ բան կը թելադրեն, կը սորվեցնեն, համալսարան մը կը կազմեն, մեր՝ հայոց իսկական «Աւետարանը» կը կազմեն արդարեւ,- ու այս՝ մանաւանդ տեղեկանալէ, ուսումնասիրելէ ետքը իր անտիպ արշիւր, որ ստոյգ վկայութիւններու վաւերական շտեմարանն է:

Անկարելի է որ Արփիարեանին նշմարումները, քննադատութիւնները, անկողմասկալ տեսակէտները, եւ մանաւանդ իր ուղիղ, անշահախնդիր նկարագիրին ու միտքին բարձրութիւնները՝ համակրութիւն եւ համամտութիւն միայն ստանային. յետին նպատակներով սերած, քսու, աստելավառ հակառակութիւնները, ոխերը՝ այդ շրջանին ի մասնաւորի, ամէն օր քիչ մը աւելի կ'աճէին, եւ խրամատները այլեւս բացայայտ վտանգ մը դարձած էին:

Անշուշտ լուրջ մտաւորականներու համակրութիւնը, բարեկամութիւնը, ինչպէս նաեւ շատ լայն ժողովրդականութիւն կը վայելէր Արփիարեան: Եւ ճիշդ այս իսկ պատճառով ալ է որ իրեն հակառակորդ կուսակցութիւնը զինքը անընդհատ պիտի հալածէ, մինչ ատեն մը ետքը ի՛ր կուսակցութենէն ալ կարգ մը պատեհապաշտ, շահախնդիր, նախանձ ընկերներ հալածանքի պիտի սկսին իրեն դէմ: Այս պայմաններով ստեղծուած դրութիւնը՝ անկերպարան, ցաւալի հետեւանքներու հասաւ, անշնչելի դարձուց մթնոլորտը.- ի վերջոյ, Արփիարեան զոհ գնաց երրորդ մահափորձի մը, մինչ հայ իրականութիւնը կորսնցուց մեծ մարդ մը, ճշմարտութիւնները արիօրէն ըսող մեծ մտաւորական մը, մեծ ազգասէր մը:

Արդէն հայ ժողովուրդին ցաւերովը չէին զբաղէր առ նուագն տասնեակ մը տարիներէ ի վեր. հայութեան մտքին ու խղճին վրան դրուած քօղը՝ առ հասարակ, անթափանց էր, մութ եւ ճնշուած. չէին տեսներ, չէին զգար. ներքին անհամաձայնութիւնները, վէճերը, կուսակցական կռիւները՝ ամէն ինչ կլանած, առաջին կարգի ու գլխաւոր մտահոգութիւններն էին: Անգիտակցութիւնը կը տիրէր: Մեզի վայել դրութիւն մը չեղաւ այս: Քիչեր, բայց շատ, շատ քիչեր միայն հասկցած էին այս իրականութիւնը: Եւ նոյնպէս ալ, շատ շատ քիչեր միայն կրնային արտայայտուիլ, շարժիլ: Իսկ այս շատ քիչերուն ամէնէն ողջփտը, ամէնէն իրատեսը, անհաշիւ զոհուողը՝ Արփիարեանը եղաւ:

Եթէ իր հակառակորդները կարենային՝ պիտի չվարանէին զինքը խաչը հանելու, կամ խարոյկի մը [վրայ] ողջ ողջ այրելու՝ ձեռքերը ոտքերը կապած, ճիշդ ինչպէս կը պատահէր հաւատաքնութեան օրերուն. բայց որովհետեւ այս հնարաւորութիւնը, այդ իշխանութիւնը չունէին, զինքը նախ մահուան դատապարտեցին ա՛յսպէս, ուղղակի, առանց նոյնիսկ զինքը «Ատեան» կանչելու, առանց նոյնիսկ զինքը լսել ուզելու ալ, առանց ե՛ւ ոեւէ վկայ մտիկ ընելու, ուրե՛մս Արփիարեան մը մահուան դատապարտեցին պարզ զրպարտութեան մը վրայ. եւ հակառակ անոր որ այդ զրպարտութիւնը ամէնէն ծանր ոճիրի մը կը վերաբերէր, - կը վերաբերէր՝ դաւաճանութեան կամ մատնութեան արարքներուն:

Հայ յեղափոխականի մը անզգոյշ մէկ նամակը Պոլսոյ թրքական ոստիկանութեան ձեռքը կ'անցնի: Այս նամակին մէջ, Արփիարեանին անունին յիշատակուե՛մս ալ կայ. Ոստիկանութեան նախարար Նազըմ Պէյին հրահանգովը՝ Արփիարեան կը

ձերբակալուի 9 Նոյ. 1890-ին. բազմաթիւ հայեր ալ: Ազատ կ'արձակուին, 5 Յունուար 1891-ին, 76 հոգի, բայց ոչ՝ Արփիարեան.- ոստիկանական նախարար Նազըմ Պէյ, Արփիարեանէն կը պահանջէ իր թերթին մէջ հրատարակել այն գրութիւնը՝ որ ծանօթ է այլեւս, այդ օրերէն ի վեր, «Մեղայագիր» կոչումովը, գիր մը՝ Ապտիւլ Համիտին բարութի՛ւնը, մեծութի՛ւնը, արդարութի՛ւնը, բարիքնե՛րը գովող, փառաբանող, ինչպէս նաեւ իր՝ Արփիարեանին խորին ու անհուն երախտագիտութիւնը յայտնող՝ ամենէն շողշողուն բառերով:

Արփիարեան նախ կը մերժէ նման գիր մը ստորագրել, բայց իր մօրը, իր եղբայրներուն, իր բարեկաճներուն, իր համակիրներուն թախանձագին պնդումներուն վրայ՝ տեղի կու տայ եւ ազատ կ'արձակուի:

Այս գիրը, այս աքթը՝ որ առ նուազն եթէ ոչ բոլորովին հեզնանք մըն է թուղթին սկիզբէն մինչեւ վերջը, Արփիարեանին ռիւերիճները իրեն դէմ նոր պատրուակ մը սեպեցին սակայն, եւ իսկոյն, զայն չարաչար կերպով շահագործելու համար: «Մեղայագիր» յորջորջուած այդ ծիծաղելի շարադրութիւնը, երկար տարածութեամբ այդ բառակոյտը՝ ինքն իրմով կը դատապարտուի: Զգացումի, մտածումի, զգաստութեան սնանկութիւնը՝ թոյլ չէր տար այլեւս, որ զրպարտիչները տեսնէին, շօշափէին իրենց բովանդակ անկումը: Չէին ըմբօներ, գուցէ աւելի ճիշդ պիտի ըլլար հաւաստելը՝ թէ չէին ուզեր ըմբօնել հեզնանքը որ ամենէն զօրեղ լոյսին պէս կը ցայտէր սպառնալիքով պահանջուած, ստացուած այդ մեղայագի՛րին ամէն մէկ բառէն: Ոխը կուրցուցած էր այդ մարդուկները. չորցուցած էր իրենց ձեռքերուն շօշափումին յատկութիւնը:

Բայց Տոսթոյեւսքին ալ՝ Չարին փառաբանութեան, ինչպէս նաեւ ներողութիւն խնդրող նամակ մը, աղերս մը գրած էր

Միպերիոյ իր արքային, ու, այս կերպով, այս միջոցով, եւ նոյն պայմաններու մէջ, իր ազատութիւնը ստացած 2 օրէն.- եւ սակայն, հո՛ն, բազմաթիւ անգամ տասնեակ միլիոններու հասնող Ռուսիոյ մէջ ոչ թէ միայն Տոսթոյեվսքին մեղաւոր չնկատեցին իր յիշեալին նամակին, խնդրանքին համար, այլ ուրախացան իսկ որ մեծ գրող մը ազատուած է:

Այս երկու մտայնութեանց, դատելու այս երկու կերպերուն միջեւ՝ այս նշմարելի տարբերութիւնը, անշուշտ որ ցաւալի կը գտնեմ, եւ պիտի ուզէի հաւաստել, թէ յիշեալ «Մեղայագիր»ին մէջ զրպարտութեան պատրուակներ փնտրող մարդիկ բոլորովին գուրկ եղած են իրականութիւնները շօշափելու, զգալու մարդկային արդար ձեռքերէն:

Պէ՛ տք էր տապալել Արփիարեանը:

Եւ ամէ՛ն գնով:

Մի անգամ ընդ միշտ:

Բոլո՛ր միջոցներով, առանց գանազանելու այդ միջոցներուն տեսակները:

Բայց նախ՝ դատապարտելով: «Զրպարտեցէ՛ք, զրպարտեցէ՛ք. միշտ քան մը կը փսայ»:

Յետոյ՝ դարանակալ գնդակին:

Ոյժ մըն էր՝ արդարեւ, Արփիարեան:

Ոյժ մը՝ առանց գէնքի, իր խօսքովը, իր գրիչովը միայն:

Որ ունի իր ձեռքին մէջ ճշմարտութիւններ եւ արիութիւնն ալ զանոնք յայտնելու, պաշտպանելու:

Ոյժ մը՝ որ իրատես է, եւ համոզուած՝ իր տեսակետներուն մասին, եւ անվախ ազգասէր:

Եւ վերջապէս ո՛յժ մը՝ որ կը պատրաստէ հանրային կարծիք, իր գրիչովը միայն:

Այս պարագաները հասկցած՝ հակառակորդ կուսակցութիւնը զինք մահուան դատապարտեց իր մէկ կոմիտէին մէջ, ո՛չ իսկ Արփիարեանը կանչելու որ կարենայ հնարաւորութիւնը ունենալ ինքզինք պաշտպանելու, - իրաւունք մը՝ զոր կ'ընդունին նոյնիսկ կլիսակիրք հաւաքականութեանց օրէնքները, կամ սովորութիւնները: Այսուհանդերձ, յիշեալ կոմիտէն Արփիարեանին կը հաղորդէ՝ նոյնքան անօրինակ անպարկեշտութեամբ, «մահուան վճիռը», արիւնի գոյն կուսակցական կնիքը կրող նամակով մը:

Իրողութիւնը ահաւոր է:

Արփիարեանի պարագան առասպելի կը նմանի, բայց առասպել չէ, այլ՝ իրական: Իր կեանքին պարութեան⁹ եւ իրական վաւերաթուղթերը ասիկա կ'ապացուցանեն որպէս առարկայական գոյութիւն մը:

Թերեւս բոլոր ազգերուն մէջ ալ այլ կերպ չէ իրականութիւնը. բայց խօսելով միայն մեր վերջին մօտ դարու մը պատմութեան առնչութեամբ, պէտք է այլեւս ընդունիլ, թէ չափը շատ անցուած է:

Ճիշդ է նաեւ որ, եթէ գտնուեցան՝ Արփիարեանի գործին դէմ, իր դէմ, գաճաճներ, անզգամներ, նողկանք առթող աներեսներ, պատիւի եւ արիւնի ոճրագործներ, կողմնակալ «զարգացած»ներ, բայց գտնուեցան ալ մեծ թիւով գիտակիցներ, եւ որոնց մեծութիւնը աւելի էւս բարձրացաւ ինչքան միւսները կը պզտիկնային իրենց քութիւններովն ու չարագործութիւններովը: Կա՛ր ե՛ւ հայ ժողովուրդը՝ զանգուածային, որ սիրեց զինքը, սիրեց անհուն, արդար, հպարտ երախտագիտութեամբ:

Արփիարեանի արժանիքին գլխաւոր կողմերէն մին ալ այն էր, որ շարունակեց իր առաքելութիւնը, ի հեճուկս բոլոր

⁹ Պարութայ - խնդիրի մը՝ դատի մը թղթածրար:

արգելքներու, զրկանքներու, առկայ վտանգներու, դեռ կարելի մահափորձերու: Ուրե՛մս ե՛ւ երբեք, բայց երբե՛ք, ո՛չ մէկ պահուն, ո՛չ մէկ պարագային ալ, ան՝ Արփիարեանը պատեհապաշտի թերացումը, ընկրկումը չունեցաւ:

Հակառակ խորին զգացումիս, երախտագիտութեանս՝ Արփիարեանին գրականութեան եւ գործին հանդէպ, ինչպէս նաեւ հակառակ համամտութեանս՝ ազգային, գրական խնդիրներուն եւ հարցերուն մէջ իր տածած գաղափարներուն եւ տեսակէտներուն հետ, չեմ կրցած սակայն իրեն ներել այն անհոգութիւնը, իր այն անգիտակցութիւնը, իր այն անմտածելի կրաւորականութիւնը, որ իրեն թոյլ տուած ըլլան ցնցոտիներու եւ միշտ քաղցած վիճակի մէջ ապրելու տարապայման նիւթական կեանքը.- շա՛տ էր այս, արդարեւ:

Եւ վստա՛հ եմ որ այլապէս աւելի շատ, եւ գուցէ աւելի լաւ արտադրէր. ինք իսկ արձանագրած է ծոցի իր փոքրիկ տետրակին մէջ, թէ գրելու ատեն իր ձեռքը կը դողդղայ անօթութենէ:

Բացի իր չքաւորատիպ արտաքինէն, բացի չքաւորի իր ապրելակերպէն, կենցաղէն՝ Արփիարեանին մէջ ամէն ինչ բարձր էր, եւ օրինակելի:

Վերջապէս, եզական ու զարտուղի, եւ արտակարգ հայ մըն էր Արփիարեան.- ո՛չ ոք նմանեցաւ իրեն, եւ ոչ ոք ալ պիտի կրնար նմանիլ իրեն, նոյնիսկ քիչ թէ շատ մօտէն:

Համոզուած եմ այլեւս. այն որ չի ճանչնար Արփիար Արփիարեանը՝ իր էութեանը մէջ, ան չի կրնար ալ ճանչցած ըլլալ մեր պատմութիւնը, մեր մշակոյթը, մեր գրականութիւնը, բայց մանաւանդ հա՛յր:

Կա՛յ, հայ աշխարհին մէջ, Կոմիտասն ալ:

Հիմա՝ ամէնքէն սիրուած:

Ամէնքէն՝ անկասկած: Ա՛լ աւելի: Առանց ո՛րեւէ վերապահութեան:

Բայց իր շրջանին՝ ան անգամ ունեցաւ, աշխարհականներու շարքին՝ կրօնակիցներ ալ, սուկալի, անդրդուելի ոխերիճներ, աջապահքով միջնադարեան պահպանողական, նախապաշարեալ, նախանձ ու ատելավառ հակառակորդներ:

Այսուհանդերձ, Կոմիտաս շարունակեց իր առաքելութիւնը, գործը, իր հասկցած ձեւովը, այնպէս ինչպէս ինք կ'ըմբռնէր, շօշափած էր ու գտած ճշմարիտը: Այսինքն՝ փնտռեց, հաւաքեց, գտեց հայկական հարագա՛տ երգը: Կերպով մը պեղեց հայկական հողերը, շոյեց հայ սիրտը, հայ ընդերքները.- գիտէր, հաւատացած էր, թէ հայ ժողովուրդը իր ուրոյն մշակոյթը կերտած է իր հայրենիքին մէջ, ուստի ե՛ւ իր փնտռած երաժշտութիւնը, հոգեբանութիւնը, մշակոյթը, այն ինչ որ հարագատօրէն մերը եղած է, մեր բովանդակ ժառանգութիւնը: Գտաւ՝ առատօրէ՛ն: Իր ձեռքը լաւ շօշափած էր, ճիշդ ալ զգացած: Ըսին արդարօրէն, թէ իր ձեռքը հանճարեղ արուեստագէտն էր. ըսելու է նաեւ, թէ իր քաղածը, մեզի հրամցուցածը՝ հանճարեղ ալ է:

Կոմիտաս վերստեղծեց, ուրե՛մս, շատ բան՝ զուտ հայկական մեղեդիէն, հայկական երաժշտութիւնը.- առանց իրեն՝ շատ բան կորսնցուցած պիտի ըլլայինք:

Եթէ Կոմիտաս իր այս բերքը լոյս աշխարհի հանած չըլլար, գուցէ Արամ Խաչատուրեանն ալ հնարաւորութիւնը պիտի չկրնար ունենալ յօրինելու՝ դաշնակի համար, իր հոչակաւոր քոնչէրթոն. ի մասնաւորի, հարագատօրէն հայկական մեղեդիին աստուածացումը կերտուած է հոն, դաշնակի համար: Եւ այս

երաժշտութեան մէջ՝ մշակոյթի մը, նկարագիրի մը, հայտնի հեթանոսական եւ քրիստոնէական հաւատալիքներուն գլխաւոր երանգներուն առկայութիւնը կը զգացուի, երանգներ՝ միանգամայն ժողովրդական ու ազգային, բայց ե՛ւ գուցէ միայն մերը:

Իրականութեան մէջ, տիեզերքին անխախտ օրէնքներուն, կազմակերպութեան մէջ, ճիշդ է որ ստեղծագործում չկայ, եւ չի՛ կրնար ալ գոյութիւն ունենալ: Մարդուն գիտցած խոշոր բնագաւառներուն մէջն եւս, չկայ՝ ստեղծում, չկայ՝ ծնունդ, չկայ ե՛ւ մահ. կան միայն յարափոխութիւն, կերպարանափոխութիւններ: Տիեզերքին տարրերուն դրութեան անյողողող պայմաններուն, անյողողող օրէնքներուն համաձայն է քիչ առաջ յիշուած ճշմարտութիւնը:

Ուստի ե՛ւ իրաւ ստեղծագործումը կը կայանայ ճշմարտութիւնները, իրականը, գոյութիւն եղողը գտնելուն եւ զանոնք հարազատօրէն արտայայտելուն մէջ, իրենց յատկանշական նկարագիրներովը, ընդհանրական բանականութեամբ: Արուեստագետին տաղանդին, հանճարին, ինքնատիպ հնարաւորութիւններուն, պարկեշտութեան կը պատկանի այս աշխատանքը, այս ինքնաձին առաքելութիւնը:

Մեր ներկայ նիւթին համար, եւ մեր մէջ, Արփիարեանին, Զօհրապին, Կոմիտասին, Շահնուրին ինքնուրոյն, անկախ, ինքնավստահ ձեռքերը կատարեցին՝ ամէն մէկը իր բնագաւառին մէջ, ճշմարտութիւնը, իրականութիւնը գտնելու եւ յայտնելու ստեղծագործական աշխատանքը.- իրենց երեւան հանած բերքը՝ զիրենք անմահացուց: Իրենց օրինակը՝ իրենց այս օրինակը միայն՝ կրնայ ծառայել, այսօ՛ր ալ, հայկական մշակոյթին եւ հայութեան վերապրումին:

Եւ այս օրինակը անոնք կերտեցին նոյն գիրով, մերթ տարբեր գործունէութեամբ, բայց միշտ նո՛յն իտեալով, եւ միշտ

իրենց տաղանդաւոր խօսքերովը, մի՛ միայն իրենց հարազատ ձեռքերովը, առանց դուրսի աջակցութեան եւ հակառակ դուրսին այլազան ու դժնդակ պայմաններուն եւ հալածանքներուն ալ, միշտ առանձինն, ամէն մէկը իր մարզին մէջ,- յաւիտեանական փառքեր:

Արդարե՛ւ:

Ձեռքը՝ մարդն իսկ է:

58-

Ստեղծագործ արուեստագէտը՝ կրնա՛յ հակասական ըլլալ իր տեսութիւններուն, իր արտայայտութեանց, իր ճաշակին, իր գտած ու դրսեւորած ճշմարտութիւններուն մէջն անգամ. իրատես զգացում մը, իրատես միտք մը՝ այդ հաւաստումը պիտի չուզէին հերքել: Անհասկացողութիւնն ալ չ'ենթադրուիք հոս.- չկա՛յ: Արուեստագէտը կեանքին ընկերակիցն է, կեանքին մէջն իսկ կ'ապրի, որովհետեւ կեանքին հետ կ'ուզէ ըլլալ. մինչ կեանքը, մեր կեանքը, մեր բոլորին կեանքը՝ հակասութիւններ շատ, շատ կրնայ պարունակել: Երեւոյթը միշտ տեղի ունեցած է: Նորը՝ որ պիտի գտնուի, պիտի նշմարուի, որ պիտի երեւայ, նորը՝ որ կը ծնի, որ կը զգացուի, որ կը խայտայ, եւ նախորդը՝ որ կար, որ արդէն ապրած է.- իրար միջեւ հակասութեան մը գոյութիւնը տեւապէս պիտի դիտուի, առանց սակայն ստուգապէս ալ հաւատալու անվերապահ զգացումով:

59-

Սմբատ Տէրունեան՝ իր «Ճառագայթ ու Մշուշ» անունով քանաստեղծական հատորին վերջին մասը յատկացուցած է «Ձեռքերու Խորհուրդը»ին: Մինչ, հոն, այն քերթուածին մէջ որ «Ձեռքին Արարիչ ու Մոզն Արուեստի» խորագիրը կը կրէ, քանաստեղծը մեզի կը պատկերացնէ ձեռքին ծնունդը՝ «հին պատմութեան մը համաձայն», եւ շքեղ առասպելի մը պէս.-

*Իսկ երգ մը հին կը պատմէ – որպէս անյայտ առասպել
Թէ արուեստի մոզն աւագ,
Արարչութեան խորհուրդին իբր արժանի յիշատակ,
Երազեց ձեռք մը շինել:*

Բայց է՛ւ Տէրունեան իրատես ալ է. նշմարած՝ արդարեւ, որ կարգ մը մարդիկ, գուցէ շատ շատեր է՛ւ, տակաւին ունին վատ ձեռքեր, դիակապուտներու յատուկ ձեռքեր, սարսափելի մատներով: Արդարեւ Տէրունեան քանաստեղծը կը հաւաստէ, թէ՛

*Թաթեր անկուշտ վաշխառու, կարծես մագիլ կեն ու խեն,
Մոլի որսի, դիակի,
Գիշատիչի պէս գոհին վրայ թառող, մահաստուեր:*

Եւ մեր ազատախօս, արի քերթողը պիտի շարունակէ իր կարծր հարուածները տալ բոլոր այն ձեռքերուն՝ որ կը շահագործեն ի հաշիւ իրենց «գետնամած ցանկութիւններուն». օրինակ.

*Ձեռքեր՝ հեշտիւ սքեմի ներքեւ պահող աշխարհիկ՝
Յանկութիւններ գետնամած
Եւ արծաթի փոխարէն յանձնող՝ խորան ու նախնիք,*

Յանձնող՝ սուրբեր ու Աստուած:

Բայց, այսուհանդերձ, հակառակ այս աշխարհիկ թե կրօնական անկումին, այս խրումին՝ բանաստեղծ Մմբատ Տէրունեան՝ ասպարէզով փաստաբան, կը հաւատայ ձեռքին վեհութեան, յուսատու ստորոգելիներուն, կը հաւատայ անոր անկաշառ տեւականութեան, հաւաստելով՝ հիմնական շէշտ դրած.

Ձեռքեր՝ բողբոջ կուսական, ձեռքեր թրթռուն ու բուրեան,

Որոնց իղձի ծիլը հեզ

Կը դառնայ շունչ ու գարուն, կ'ընէ հեքիաթ ամէն բան

Ու կը փսայ միշտ այդպէս:

Շքե՛ղ է պատկերը: Շքե՛ղ՝ իր իմաստովը, իր այլազան ճշմարտութիւններովը՝ մարդավայել, գիտակից, տոկուն իր գեղեցկութիւններովը, եւ իբր շնորհակալ նշմարում ալ:

60-

Մարդիկ՝ իրենց աչքերէն աւելի, իրենց ձեռքերուն կը հաւատան, իրենց ձեռքերուն կը վստահին: Աչքը կրնայ դիւրաւ, աւելի դիւրաւ շփոթել, սխալիլ: Ականջը՝ ա՛լ աւելի: Որովհետեւ, ձեռքը՝ նախ կը բռնէ, կը շօշափէ, կը զգայ, կը ստուգէ:

Եւ ինքնուրոյն կամք ալ ունի ձեռքը. իր անհատականութիւնն ալ. մանաւանդ իր անկախութիւնը: Ամէն ձեռք չէ որ կը հնազանդի ամէն ցանկութեան, ամէն անարդարութեան, գողնալու դրդումներուն: Ձեռքով գողցողներուն թիւը շատ աւելի քիչ է քան այլ միջոցներով գողութիւն ընողներունը:

Ձեռքը՝ բոլոր զգայարանքներուն մէջ, ամենէն շատ, յաճախակի, փորձութեանց ենթարկուածն է: Ուստի եւ հագուագիւտ կ'ըլլայ մաքուրը: Իսկական ու թանկագին գանձին պէս:

Զօրաւոր, անատիկ կամք ունեցող ձեռքն է որ կրնայ մերժել գիտէ՛ մերժել: Իր լաւագոյն, իր գեղեցկագոյն գիտակցութիւնը՝ իր մերժումին մէջ կը գտնուի, հո՛ն կը գոյանայ: Եւ ձեռքը երբեք չանգիտանար, թէ իր մերժումին միանգամայն առաւելութիւնն ու կորուստները ինչպէ՛ս կը գոյանան եւ ո՛ր կը գտնուին: Ասիկա իր անսասան եւ իւրայատուկ աշխարհն է. շատ քիչեր կրնան ընդունիլ այդ:

Ձեռքի մը ազնուականութիւնը գնահատելու համար անգամ՝ մաքուր ձեռք ունենալու է. չի՛ բանիր միտքը, չի՛ բանիր բարի տրամադրութիւնը, զգացումը՝ այս մասին: Ուրկէ ե՛ւ այն անայլայլ իրականութիւնը, թէ մաքուր ձեռքը խորապէս կը տառապի անմաքուր, պղտոր մթնոլորտին ներսը: Այս բնագաւառին մէջ, առանձնութիւնը, կղզիացումը՝ իր փորձառութեան ամենէն տխուր, ամենէն դժնդակ տուրքը կը կազմէ:

Մաքուր ձեռքը՝ ամենէն իտեալիստ մարդունն է: Իրատեսութեան պակաս մը, թերի մը չէ այս, աւելորդ: Այլ՝ մեծութիւն մը, եւ իւրայատուկ գոհունակութիւն մը, իւրայատուկ երջանկութիւն մը: Ի՛րը, որ եւ անփոխարինելի է: Հոգ չ'ըներ, երբ իր մերձաւորներն իսկ զինք չեն հասկնար, երբ ծաղրեն անգամ: Իր աշխարհին մէջ, ինքն իրեն համար կ'ապրի: Իրականութեան մէջ, ի՛նքն է ճիշդ մարդը. եւ ճիշդ հո՛ս է որ տարակարծութիւնը կը սկսի՝ իր ու բազմաթիւներու հետ:

Մաքուր ձեռքերը միայն կրնան խմորել, պատրաստել իսկական, մեծ իտեալիստը,- իսկական մարդը:

Առանց մաքուր ձեռքերու, չեմ գիտեր ինչպէս պիտի ըլլար աշխարհին քաղաքակրթութեան երեսը.- պարզապէս պիտի չկրնար ունենալ օրինակելի երես մը:

61-

Հայ անցեալը, իր խորերը թափանցող, մեր զգայուն, գիտակից բանաստեղծուհին՝ Ալիսիա Կիրակոսեան, ձեռքին մէջ կը տեսնէ «հեռաւոր հողը», ինչպէս նաեւ մեր հայրենիքը «դպչելու», անցեալը զգալու, անոր բոյրերէն իր աւիշը կազմելու հրաշալի կարելիութիւնները, իր հետեւեալ անկրկնելիօրէն սեղմ քերթուածովը.

*Ես ուզում եմ դիպչել
Այն հեռաւոր հողին,
Բոյրերի մէջ նրա
Իմ անցեալը զգալ
Եւ բոյրերից նրա
Իմ աւիշը կազմել:*

Մինչ իր այլ էջերուն մէջ, կը հաւաստէ, թէ երբ ձեռք ձեռքի կու տան երկու սիրտեր, անոնք «հնարում են» այն ամէնը՝ զոր սիրտը կը բաղձայ. Եւ այս իմաստով՝ ան կ'երգէ իրեն յատուկ եղող հրապոյրովը, կարճ բայց գրաւիչ.

*Մենք հնարում ենք այն ամէնը
Ինչ մեր սիրտն էր ուզում ...*

Ալիսիա Կիրակոսեան իրապէ՛ս կը հաւատայ ձեռքին մագնիսական ոյժին, անոր քաշողականութեան, կը հաւատայ

ձեռքին հարազատորեն զգալու կարելիութեան, կը վստահի ձեռքին արտակարգ գիտակցութեան:

Իր «Արմատ եւ Էութիւն» քերթողութեան վերջին տունը կը վկայէ, թէ «ձեռք խնդրելը» հարսնցուի մը համար, անգամ «Երագի հարսին» համար, ճակատագիրն իսկ է.

*Այսպէս ուզում եմ,
Որ ճակատագիրն
Իմ ձեռքը խնդրի ...*

Երագի հարսն եմ:

Այսինքն՝ իր ձեռքը խնդրողը, կ'ուզէ որ ան ճակատագիրն իսկ ըլլայ, միայն ճակատագիրը, ու նոյն ատեն կը հաւաստէ, թէ իր ձեռքը կը ներկայացնէ իր ներկան, իր ապագան, իր կեանքը, իր էութիւնը, - էութիւնը՝ «Երագի հարսին»:

Այսինքն՝ այս բոլորին մէջ, ձեռքը գլխաւորն է, եւ զայն ունենալը՝ կարեւորագոյն հոգը կը կազմէ: Թէ ճակատագիրը, բոլորին ճակատագիրը՝ հո՛ն կը գտնուի:

Եւ իր ձեռքն ու մատները այնքա՛ն նուրբ ու խաղաղ են, որ կը սահին, կ'ընթանան դէպի լոյսը, դէպի ճշմարտութիւնը, դէպի անսահմանութեան, անսայթաք, ժպտուն, անուշօրէն ժպտուն:

Արդարեւ, Ալիսիա Կիրակոսեան իրատես միտքն է, իրատես զգացումն է. իր ձեռքը հպած է, շօշափած է հայկական իրականութեանց հիմերն ու երակները, եւ որպէս մտածող եւ զգայուն բանաստեղծուհի՝ արտայայտուեցաւ ալ հարազատ ներշնչումով Երեւանի մէջ գումարուած Սփիւռքահայ գրական գործիչներու 1983-ի հաւաքին մէջ, եւ հոն ըսաւ՝ անկախ մտաւորականին յատուկ եղող արի յստակութեամբ, ինչ որ

անհրաժեշտ էր մոլեռանդութեան դէմ, կուսակցական կողմնակալութեան դէմ, կուսակցական անհանդուրժողականութեան դէմ՝ մանաւանդ, եւ պախարակելով այս աղետներուն գործած վատ արարքներն ու փասաները. ընդ դէմ այս իրողութեանց, որ գնահատելու, իր մերձատրին գործերը, աշխատանքը գնահատելու արդար ձեռքը չունին:

Նոյն ատեն, այս իրողութեանց մէջ կը տեսնեմ, որ հարագատ ու մաքուր ձեռքին ստացած փորձառութիւնը՝ կը սիրէ ճշմարտութիւնը, անոր մէջ կը գտնէ միակ հնարաւորութիւնը օգտակար հանդիսանալու, բարձրանալու, վերապրելու: Եւ դարձեալ անոր մէջ է, որ կը տեսնեմ կարելիութիւնը ամբոխավարութեան եւ շահախնդիր միտումներու դէմ պայքարին յաջողութիւնը:

Ալիսիա Կիրակոսեան շրջանաւարտ է իրաւաբանական համալսարանէ մը. ուստի, արդարութիւնը, ճշմարտութիւնը պաշտպանելու հոգը ունի՝ անհրաժեշտաբար:

Գուցէ ե՛ւ մարդուն իրաւունքները պաշտպանելու հնարաւորութիւնը ստանձնելու համար է որ ան ուսած իսկ ըլլայ իրաւաբանութիւնը. այս բնագաւառին մէջ տեսած, վերլուծած է՝ ճշմարտութիւնը, իրականը որոնելու, գտնելու կարելի միջոցները, կարելի ձեռքը:

Իր բանաստեղծութիւնը երազ մը, երեւակայութեան արգասիքը, անհիմն պարտադրութիւն չէ. իր ձեռքը, իրաւաբանի իր ձեռքը, իր զգացումը՝ իրողութիւններու արտայայտութիւնը կը ներկայացնեն, գեղեցիկ դպրութեան միջոցով: Արտայայտուելու իր հմայիչ, իր անսակարկ, իր ուղիղ արիութիւնը՝ իսկական վկայութիւն մըն է, իր կողմէ, իր ճշմարտասիրութիւնը՝ իր հայկական եւ իր մարդկային գիտակցութիւնը: Բառերուն

աւանդական եւ շիտակ իր ըմբռնումը, յետոյ գործածութիւնը, ան կը պարտի, գուցէ առաւելաբար, իր իրաւաբանական գիտութեան, որ գիտութիւնն է նաեւ ճշգրտութեան, բնականութեան, եւ ծնունդ տուողն ալ անկեղծ ու բարի զգացումներու:

Իր «Խոստովանանք» անուն հատորին ուղղակի հայերէն լեզուով գրուած քերթուածներուն «Մեսրոպաշունչ» մասին մէջ, հայ ժողովուրդին ուղղուած խօսքովը՝ Ալիսիա Կիրակոսեան կը յարէ նաեւ.-

*Ապրիլ է նորէն,
Անապատներու մէջ դիզուած
Հին վկայ – ոսկորները
Բողոքի աշտարակ են կազմած
Եւ տառապանքի ձայնը
Վերանորոգուած,
Քամիներուն հետ շաղուած
Դեռ կը հնչէ
Լուր տալու
Բոլոր մոլորակներուն,
Թէ վերքը չէ՛ սպիացած դեռ
Ու հսկայ կաթիլներով
Կ'արբինի:*

.....

Ցաւ՝

*Որ մարդոցմէ բխած
Անմարդկային է,*

.....

Ես այդ ցաւդ առնեմ

Իմ ժողովուրդ:

Մինչեւ որ մարմինս

Ցաւի ու վիշտի կոթոյղ դառնայ

Ու այդ վիշտերէն

Ծնին երազներ

Ու այդ երազներէն

Ծնին արեւներ

Ու այդ արեւները

Լուսաւորեն այն ժամը

Երբ արդարութիւնը

Աստուծոյ ձեռքէն բռնած

Ծունկի գայ

Քու առջեւ

Եւ խաղաղութիւնը

Դառնայ

Երգ երգոց:

Արդարօրէն, ապահովաբար, կը խորհիմ, որ այս քերթուածը կը ներկայացնէ ձեռքին բարձրագոյն ստորոգելիներուն մէկ հարազատ, անհերքելի արտայայտութիւնը, վկայութիւնը, հայ իրականութեանց համար, առանց պէտք ունենալու այլ բացատրութեան, այլ մեկնաբանութեան:

62-

Պարոյր Սեւակ յաճախ արտայայտուած է ձեռքերու մասին, իր տաղանդին իսկական հնարաւորութիւններովը, իրապաշտ ու

յատկանշական պատկերներով: Օտար գրականութենէ ալ թարգմանած, երբ տեսած է ձեռքերու առնչութեամբ քերթողական ստեղծագործութիւններ: Եւ երգած, ինքն ալ, զանազան տեսակի բնոյթ ունեցող ձեռքեր:

Ձեռքերու մասին իր ստեղծագործած քերթուածներէն՝ «Մօր Ձեռքերը» խորագրով արտադրութիւնը՝ յուզիչ, իրական վկայութիւն մըն է: Հոն, Պարոյր Սեւակ կը թուէ, ի միջի այլոց.

*Այս ձեռքերը՝ մօր ձեռքերը,
Հինաւորց ու նո՛ր ձեռքերը ...
Բնչե՛ր ասես որ չեն արել այ՛ս ձեռքերը ...
Պսակուելիս ո՛նց են պարել այս ձեռքերը՝
Ի՛նչ նազանքով՝
Երազանքո՛վ:*

.....
*Բնչե՛ր ասես որ չեն արել այս ձեռքերը ...
Մինչեւ տատի ձեռք են դառել այս ձեռքերը,
Այս ձեռքերը՝ ուժը հասած,
Բայց թոռան հետ նոր ուժ գտած ...
Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը ...
Բնչե՛ր, ինչե՛ր, ինչե՛ր չարժեն այս ձեռքերը՝
Նո՛ւրբ ձեռքերը,
Սո՛ւրբ ձեռքերը:
Եկէք այսօր մենք համբուրենք որդիաբար*

.....
*Փռշի սրբող, լուացք անող,
Անվերջ դատող, անվերջ բանող
Այս ձեռքերը,
Թող որ ճաքած ու կոշտացած,*

*Բայց մեզ համար մետաքսի պէս՝
Խաս ձեռքերը ...*

63-

Առհասարակ ամէն արուեստագէտ՝ գրող, ստեղծագործ, քանաստեղծ, նկարիչ, կամ երաժիշտ, կամ պարող, էապէս նշմարած են ձեռքերուն բազմազան յատկանիշները, ու մանաւանդ անոնց հնարաւորութիւնները՝ հարազատօրէն արտայայտելու մարդո՛ւն զգացումներն ու մտածումները,- եւ վկայած ալ, անշուշտ, այս մասին:

Արդարեւ, քիչ չեն այն իրա՛ւ արուեստագէտները, ստղանդները, հանճարները՝ որոնք ձեռքին մէջ տեսած են ճշմարտութեան եւ մարդկային այլազան արտայայտութեանց բոլո՛ր ստորոգելիներուն գոյութիւնը, կարելիութիւնները, եւ իրենց ստեղծագործութեանց նիւթը առած՝ ձեռքին բնագաւառներուն մէջէն:

Ռոտէն՝ բոլոր դարերու ամէնէն հանճարեղ ու հռչակաւոր արձանագործներէն մին, կերտած է նաեւ կնոջ ձեռք մը՝ իր կէս նախաբազուկովը, բնական մեծութեամբ, անագապղինձով, առանձինն, որպէս պզտիկ արձան մը:

Որ զիս անմիջապէս գրաւեց:

Առաջին անգամ ըլլալով էր որ ես կը տեսնէի ձեռքի մը քանդակը՝ իր կէս նախաբազուկովը, որպէս արուեստի ստեղծագործում:

Ռոտէն զայն անուանած է «Գալարուած Ձեռքը»: Իր զլուխ գործոցներէն մին՝ ցաւի ու սրտնեղութեան, ինչպէս նաեւ

զսպուած բողոքի մը, լուռ ու մունջ, զգալի արտայայտութեամբ, բայց ե՛ւ իր էութիւնը շեշտող գոյութիւն մը, իր գրաւական երեւոյթովը: Այս «Գալարուած Ձեռք»ը կ'արտայայտէր Ռոտէնի հանճարը՝ անոր մատներուն մէջէն:

Այլ ձեռքեր ալ կերտած է Ռոտէն: Իր «Աստծոյ Ձեռքը» կոչուած գործը՝ արարչութիւնը կը մարմնաւորէ, մինչ իր «Գաղտնիք»ը անուանումը կրող ձեռքը՝ կը ներկայացնէ մտածումը.- միշտ գլուխ գործոցներ, անտարակոյս:

Պատահաբար, քիչ ետքը, բարեկամի մը գրասենեակին մէջ տեսայ, ուրիշ քանդակագործէ կերտուած ձեռք մը, որ աղուոր էր թէեւ, որ կը նայէր, բայց չէր խօսեր: Եւ այն աստէն, ես յիշեցի, այս առթիւ ալ, Ռոտէնին ստեղծագործած «Գալարուած Ձեռքը», եւ ինքնաբերաբար բաղդատութիւն մը ընելու տարուեցայ:

Եւ, այսպէս, այդ պահուն, ես աւելի եւս զգացի, համոզուեցայ, թէ ձեռքերն ալ կ'արտայայտեն, հարազատօրէն ու առանց շեղումի կ'արտայայտեն զգացում եւ իմաստ, ինչպէս դէմքը, աչքերը, ինչպէս շրթունքները, բայց ձեռքերը աւելի շեշտօրէն կը կրեն մարդուն հանճարին առկայութիւնը:

64

Երեւան, 1974-ին, հաւաքական ցուցահանդէսի մը մէջ, երիտասարդ քանդակագործ Վահան Խաչիկեան ցուցադրած է իր մէկ ստեղծագործութիւնը, որ «Կորչի՛ Պատերազմը» անունը կը կրէ: Այս քանդակը կը ներկայացնէ դէպի երկինք պարզուած չորս բազուկներ, չորս ձեռքեր՝ որոնք կ'արտայայտեն «ցասում եւ բողոք, տառապանք, յաղթանակի վստահութիւնը եւ կամք», - ինչպէս կը հաւաստէ Մոսկուայէն ռուս նկարիչ մը՝ Բորիս

Ստարչիքով, եւ կ'աւելցնէ ալ թէ «Վ. Խաչիկեանի քանդակին գաղափարական ու գեղարուեստական նշանակութիւնը կասկածից վեր է»: Մինչ Երեւանէն ժողովրդական նկարիչ Միւր Աբեղեան կը հաւաստէ՝ իր կարգին.- «Իմ կարծիքով, այս քանդակը կարելի է դասել խաղաղութեան թեմայով ստեղծուած լաւագոյն գործերի շարքը»:

Եւ ան կը ներկայացնէ՝ մեր նիւթին լուսաւորութեանը համար, այն՝ թէ ձեռքերը կրնան արտայայտել ու կ'արտայայտեն ալ արդէն հաւատարմօրէն մարդուն բոլոր՝ զգացումներն ու մտածումները:

65-

Անցեալ եւ ժամանակակից համայնապատկերէ մը շրջապատուած, լուսաւոր քառուղիի մը շքեղ կեդրոնը կայնած՝ գլուխը վեր, առողջ միտք, հպարտ որ հո՛ն է, դիտելով իր քովերէն անցնողներուն ձեռքերը՝ բայց առանց երբեք զգացնելու այդ, ներհուն բանաստեղծ եւ նոյնքան ալ բազմերանգ ու գիտակից արձակագիր՝ Գեորգ Էմին, իր մէկ շատ փոքր հատորին մէջ, մօտ 27 էջ միայն, «Հայկական Սիմֆոնիա» անուն.-

Վեր առնելով այդ համայնապատկերին մէջ երեւցող մեր բոլոր երեւելի դէպքերն ու դէմքերը որ կը կազմեն հայ ժողովուրդին փառքն ու իր ապրելու իրաւունքը՝ քաղաքակիրթ մարդկութեան մէջ, այսօր ալ մանաւանդ,-

Գեորգ Էմին՝ ուրեմն, իր կարճ եւ սակայն ուժեղ եւ հիմնական, եւ արդար բառերով, վաւերական եւ հմուտ յիշողութեամբ՝ հո՛ն, իր «Հայկական Սիմֆոնիա» խորագիրով

Էջերուն մէջ կու տայ ճշգրիտ եւ անհերքելի վկայութիւններ դարերու եւ այսօրուան հայ ձեռագիրներուն առնչութեամբ եւ ներկայացնելէ յետոյ այս համայնապատկերին շատ մը հայ հերոսական դէպքերը եւ դէմքերը,-

Մինչ հայ գրիչը կը յայտնէ, կը ներկայացնէ իր ինքնութիւնը ու իր ձեռքերուն աշխատանքը՝ իր յետագայ ուրուագիծովը.-

«Երիտասարդ ու ծեր այն գրիչն էմ ես, որ վանքի խցի խաւարում, մոմի լոյսի տակ, հատիկ-հատիկ տառերով ձեռագիր էմ արտագրել ու յիշատակարան թողել էմ իմ դժնի ու ծանր ժամանակի մասին ...Քանի՛ անգամ էմ ես հալածուել ու սպաննուել ձեռագիր արտագրելիս, քանի՛ անգամ էմ կեանքիս գնով ձեռագիրները թաքցրել հողի տակ ու վանքի պատի խորշերում ...»:

Եւ այսպէս ինքն իր մենագրութիւնը տալէ յետոյ, կը յայտնէ եւ իր վերջին մտածումը՝ պատգամի մը պէս յարելով.

«... թէեւ գնաց ու մոխի՛ր դարձաւ իմ ձեռքը, քայց գիրս քնաց ու հասաւ նոր Երեւանի Մատենադարանը ...»:

6-

Մաքսիմ Կորքի կարգ մը նշանաւոր գրողներուն դիմանկարները տուած է հոյակապ էջերու մէջ, ի միջի այլոց, Լէոն Թոլսթոյինը:

Հոս կը վերցնեմ միայն այն տողերը որ կը վերաբերին «Պատերազմ եւ Խաղաղութիւն»ի հեղինակին ձեռքերուն:

«Զարմանալի ձեռքեր ունի ան», - կը գրէ արդարեւ Մաքսիմ Կորքի՝ խօսելով Լէոն Թոլսթոյի ձեռքերուն մասին, եւ կ'աւելցնէ իսկոյն. «Գեղեցիկ չեն անոնք, ուռած երակներով ծածկուած, եւ

սակայն լեցուն են արտայայտութեամբ եւ ստեղծագործող գորութեամբ: Լեոնարտո տա Վինչի այսպիսի ձեռքեր ունէր անշուշտ: Նման ձեռքերով կարելի է ամէն բան կատարել: Երբեմն, խօսելու ատեն, կը շարժէ իր մատները, բռունցքը կը սեղմէ, յետոյ մէկիկ մէկիկ զայն կը բանայ՝ քանի մը գեղեցիկ ու լեցուն իմաստով խօսքեր արտասանելով: Կը նմանի աստուծոյ մը, ո՛չ թէ Եհովայի կամ Ողիմպիականի մը, բայց իսկական ռուս աստուծոյ մը՝ «Նստած դոքիէ շինուած գահի մը վրայ, ոսկեզօծ թմբիի մը տակ», առանց մեծ վեհափառութեան, եւ սակայն թերեւս աւելի նուրբ քան միւս բոլոր աստուածները»:

Թուլթոյ՝ մեծերու մէջ մեծ մըն է անշուշտ: Բայց ինչ որ Մաքսիմ Կորքիի վերի տողերուն ամէնէն յատկանշականն է, անոր ձեռքերուն մէջ աստուածութիւն մը տեսած ըլլալու է, հակառակ անոր որ կը հաւաստէ, թէ «գեղեցիկ չեն անոնք». խորհուրդը հո՛ւ կը գտնուի.

Նոյն պատկերին մէջ, աւելի ետքը, այսինքն բազմաթիւ այլ էջերէ ետքը, Մաքսիմ Կորքի Թուլթոյի ձեռքերուն առնչութեամբ դեռ պիտի արտայայտուի: Այս անգամ, այլ տեսարանի մը առաջ: Կորքի ներկայ եղած է երբ հանճարեղ վիպասանը թղթախաղի վրայ է, սեղանին շուրջը: Կորքիի նշմարումները ուրեմն կենդանի, գունաւոր վկայութիւններ են այդ մասին. ան կը հաւաստէ, ստուգիւ, թէ Լեոն Թուլթոյ.

«Կը սիրէ թղթախաղը, ի՛նչ տարօրինակ է այս: Կը խաղայ լրջութեամբ, կիրքով: Երբ թուղթերը կը բռնէ, կ'առնէ՝ իր ձեռքերը ջղային կը դառնան, ինչպէս եթէ իր մատներուն մէջ սեղմած ըլլար կենդանի թռչուններ, եւ ոչ թէ անշունչ քարտոնի կտորներ»:

Ձեռքերուն անմիջական ու հարազատ կերպով արտայայտուելու հնարաւորութեանց գունաւոր ու կենդանի պատ-

կերներն ու վկայութիւններն են այս էջերը՝ մեծի՛ մը մասին, մեծի՛ մը կողմէ:

67-

Բայց Պարոյր Սեւակ ունի նաեւ քերթուած մը ի՛ր ձեռքերուն առնչութեամբ.- քանդակ մը՝ Պոտլէռեան շունչով, Պոտլէռեան իրապաշտութեամբ գործուած, կերտուած, սեռային յիշեցումներով, համարձակ բայց քնքոյշ եւ հարազատօրէն ու լիովին արուեստ: Գրական գլուխ-գործոց մը՝ ամէն տեսակէտով: Աւելի շնորհ, աւելի գեղարուեստական վկայութիւն՝ չեմ խորհիր որ կարելի ըլլար պարփակել, դրսեւորել՝ իր արտայայտած նիւթերուն մասին, եւ այդքան սակաւ բառերով, քան ինչ որ պիտի կարդանք անմիջապէս յետոյ, վարը, իր «Խենթը» անուն վերնագիրով քերթուածին մէջ (հրատարակուած «Սովետական Գրականութիւն» ամսագիրին 1974-ի թիւ 1-ին մէջ, իբր անտիպ բանաստեղծութիւններ Պարոյր Սեւակէն, ըստ խմբագրական ծանօթագրութեան մը):

Արդարեւ, Պարոյր Սեւակ կ'երգէ յիշեալ քերթողութեան մէջ, հատուածով մը.

«ԽԵՆԹԸ»

Ես նայում եմ իմ ձեռքերին
Այնպէ՛ս նայում,
Որ դիտողը ինձ կարող է խենթ համարել.

.....

Անգամ դէմքդ չեմ յիշում ես ...

Ու թէ յիշեն
 Միայն որոնք,
 Լոկ ձեռքերըս պիտի յիշեն
 Ու վկայեն, որ դու կայի՛ր,
 Ու դու եղա՛ր,
 Իրո՛ք եղար:
 Միայն որո՛նք պիտի յիշե՛ն,
 Քո՛ ձեւե՛րը,
 Մաշկը,
 Հո՛տը,
 Սարսո՛ւտը,-
 Քե՛զ՝ ամբողջովին ...

68-

Տօքթ. Ալեքսիս Գարեղ է այն գիտնական բժիշկը, այն գրողը, որ երկարօրէն ուսումնասիրած է մարդուն իսկական էութիւնը, լինելութիւնը՝ իր բոլոր կողմերուն մէջ, բոլոր արտայայտութեանց եւ երեւոյթներուն մէջ.- վկայ՝ «Մարդը, այս Անձանօթը» անուն, անյապաղ միջազգային հռչակ ստացած եւ իր հեղինակած հատորը. այլեւս դասական դարձած գործ մը:

Արդ, Տօքթ. Գարեղ հոն կը հաւաստէ՝ ի միջի այլոց, գեղեցկութեան եւ ձեռքերուն ստորոգելիներուն մասին, հոյակապ ու պարկեշտ տողերով, թէ.

«Գեղեցկութիւնը անհատնում ուրախութեան աղբիւր մըն է այն մէկուն համար, որ գիտէ զայն գտնել: Քանզի կարելի է անոր հանդիպիլ ամէ՛ն տեղ: Ան կը ծագի այն ձեռքերէն, որ կը ձեւեն, կամ կը նկարեն կոշտ յախճապակին. որ կը կտրեն փայտը եւ անով կը շինեն գոյք մը. որ մետաքսը կը հիւսեն. որ կը տաշեն

մարմարը. որ կը ճեղքեն մարդկային միսը. եւ կը դարմանեն: Ան կը գտնուի ե՛ւ մեր վիրահատներու արուեստին մէջ, ինչպէս նկարիչներու, երաժիշտներու, եւ բանաստեղծներու արուեստին մէջ: Ան կա՛յ նաեւ Կալիլէին հաշիւներուն մէջ, Տանթէի տեսիլքներուն մէջ, ովկիանոսին վրայ բարձրացող արեւին մէջ, բարձր լեռներուն ձմեռնային մրրիկներուն մէջ: Ան աւելի եւս զգալի կը դառնայ աշխարհին աստեղային անհունութեան մէջ, մարդկային ուղեղին անբացատրելի ներդաշնակութեան մէջ, ինչպէս նաեւ հոգիին մէջը այն մարդուն որ կը գոհուի՝ մութին մէջ, ուրիշներուն փրկութեանը համար: Եւ այս ձեւերուն, կերպերուն ամէն մէկուն մէջ, ան կը հանդիսանայ անձանօթ հիւրը ուղեղային այն գոյութեան, որ տիեզերքին դէմքը ստեղծագործողն է:

Բայց, աւա՛ղ, ամէն ձեռք, ամէն ատեն, անպայման ճարտար, հրաշալի պիտի չըլլայ: Տօքթ. Գարէլ այդ գիտէ՝ իր անձնական փորձառութեամբը: Որոշ ատենէ մը ի վեր, կ'ապրեցնէր հաւու սիրտ մը, իր իսկ հաստատած արուեստական միջոցներովն ու խնամքներովը, ապակիէ տուփի մը մէջ՝ մասնաւոր կերպով շինուած,- երբ գիշեր մը, ուշ ատեն, հիւանդի մը կը կանչուի. ստիպուած՝ զայն կը յանձնէ իր մէկ օգնականին խնամքներուն. բայց այս սիրտը պիտի չկրնար ապրիլ մինչեւ իր վերադարձը.- իր օգնականին ձեռքը բաւական մը ճարտար չէ եղած, եւ դարձեալ ըստ իր հաւաստումին՝ այդ սիրտին մահը, իրեն համար ամէնէն դժբախտ շիջումը եղած է իր կեանքին մէջ:

69-

Մաքսիմ Կորքի մեկէ աւելի անգամ արտայայտուած է ձեռքերուն մասին, իր իրատես խորքոճս ու շքեղ ձեւովը: Եւ իր զգացումները, իր մտածումները շատ յաճախ լայն հորիզոններ կ'ընդգրկեն: Մինչ իր հաւասարակշիռ փորձառութեան արգասիքներուն համաձայն, ան մեզի կու տայ մարդուն ձեռքին առնչութեամբ, վկայութիւններ՝ որոնք միշտ ալ հիմնական, գրաւիչ, իմաստուն են, ու ճշմարիտ: Նաեւ այն վկայութիւնը՝ թէ մարդուն ձեռքը «ստեղծագործած է ինչ որ կայ ամենէն գեղեցիկը աշխարհի վրայ», - ինք որ, Կորքի՛, շատ դժբախտ ու դաժան մանկութիւն մը, պատանեկութիւն մը ունեցած է ու մօտէն ճանչցած ալ՝ այդ շրջաններուն, իր երկրին վերջին ծայր զրկուածները, թշուառները: Եւ կը հաւաստէ իր անկեղծ շեշտոճս ու իր տեւական պարկեշտութեամբը մարդուն ձեռքերուն եւ անոր տարած աշխատանքներուն մասին.

«Ինծի համար,- կ'ըսէ արդարեւ Մաքսիմ Կորքի,- մարդէն դուրս մտածում չկայ. ան է, եւ ան միայն, որ ինծի կը ներկայանայ որպէս ստեղծագործողը բոլոր բաներուն եւ բոլոր մտածումներուն: Ա՛ն է հրաշագործը, եւ, ապագային մէջ, տիրականը բնութեան բոլոր ուժերուն: Ինչ որ կայ՝ մեր աշխարհին մէջ, որպէս ամենէն գեղեցիկը, մարդուն ձեռքովը ստեղծուած է, եւ մեր բոլոր գաղափարները, մեր բոլոր մտածումները՝ աշխատանքէն կը ծնին: Արուեստին, գիտութեան, թեքնիքին զարգացումին պատմութիւնը՝ մեզ կը համոզէ այս մասին: Մտածումը՝ աքթէն ետքը կու գայ: Կը խոնարհիմ մարդուն առջեւ, որովհետեւ կը նշմարեմ որ մեր երկրագունդին վրայ իր իմացութեան մարդեղութենէն, իր երեւակայութենէն, իր

հնարաւորութիւններէն դուրս, ուէ՛ք բան չի՛ կրնար գոյութիւն ունենալ»:

Ուստի ե՛ւ ձեւ մը, խորք մը, հարազատ արուեստ մը, կէանքին իրական արտայայտութիւնն ալ կան ձեռքին բան մը առնելուն, վերցնելուն, բան մը ստանալու կերպերուն մէջ: Նաեւ երբ ձեռք մը կը զատէ, կը գնահատէ, կ'ընտրէ, կը շոյէ, կը կշռէ, կը դատէ:

Այս հնարաւորութիւններով ձեռքերն են որ պիտի գիտնան աշխատիլ, ստեղծագործել, եւ ունենալ մարդկութեան սէրը.- հանճարը կայ իրենց ափերուն, իրենց մատներուն մէջ: Եւ կա՛յ ալ առաքելութիւնը արտադրելու, ստեղծելու, տալու: Եւ երբ վաւերական մարդուն ձեռքերը առնեն, վերցնեն, շալկեն՝ միշտ ալ տալու համար է, նո՛ր կառուցումներով, նո՛ր սարքաւորումներով: Յատկանշականը, ինքնուրոյն կերպով յատկանշականը այն է որ, երբ ձեռք մը զատէ, առնէ ո՛ւէ՛ք բան մը, կամ ո՛ւէ՛ք արժէք մը, իր շօշափումէն կը յայտնուին իր նկատումը, իր զգացումին եւ իր մտածումին էութիւնը, գոյները: Անշուշտ որ բացառիկ են այս ձեռքերը, եւ թանկագին:

70-

Մեր ձեռքերուն ամէնէն էական, ամէնէն յատկանշական, եւ ամէնէն ճակատագրական հնարաւորութիւնը, լինելիութիւնը՝ կը կայանայ ճշմարտութիւնը, իրականութիւնը փնտռելու եւ բռնելու իրենց առաքելութեանը մէջ, բայց նաեւ ու մանաւանդ, այդ

ճշմարտութիւնը յայտնելու, արտայայտելու գիտակցութեան մէջն ալ:

Ձեռքերուն անչափօրէն զգայուն, հանճարեղ իմացակա- նութիւնը, եւ առաջնորդողի անշեղ աւանդութիւնը՝ իրենց կու տան ամենէն առաջ, հաւատարիմ վստահութիւնը իրենք իրենց հանդէպ. գիտեն թէ կը պարունակեն՝ այդ պայմաններուն մէջ, զգայնութիւնը եւ միտքը:

Շքեղ ձեռքը, նուրբ ձեռքը, հետաքրքրիւր ձեռքը, եւ այն ձեռքը որ կը սիրէ զարգանալ, սիրել, ծառայել, դրօշակ բռնել, այդ ձեռքերը՝ կը կերտեն մարդը, երջանկութիւն կու տան, կը կերտեն ժողովուրդը: Գերմարդը չէ այս, ըստ ինծի: Մա՛րդն է ան. եւ եթէ կ'ուզէք փաղաքշական ըլլալ իր մասին, լաւագոյն կերպով, եւ բարձրօրէն գնահատել զինքը.- հաւաստեցե՛ք, թէ հազուագիւտ դէմքն է ան:

Ձեռքը՝ մարդն իսկ է:

Որ կը զգայ, կը մտածէ, կը խորհրդածէ:

Որ կը դատէ, կ'որոշէ, կը գատէ, կը սահմանէ:

Միշտ վստահաբար:

Ամէն ատեն չէ, սակայն, որ հարագատօրէն, արդարու- թեամբ կ'արտայայտուի: Հո՛ւս կը գտնուի՝ անշուշտ, իր գլխաւոր թերին, իր գլխաւոր մեղքը: Կը սիրէ, կամ կ'ատէ,- անկեղծ է, կամ կը ստէ՛,- կը գնահատէ, կամ կը նախանձի,- կը շոյէ, կամ կը քանդէ,- կ'ընդունի կամ կը մերժէ,-կը ստեղծագործէ, կամ կը վիժի,- կը ժպտի, կամ ակոյս ցոյց կու տայ: Ձեռքը անպայման կ'արտայայտուի: Ձեռքը արարչութիւնն է:

Տրամաբանութեամբ չէ որ կարելի պիտի ըլլար ըմբռնել, ճանչնալ հայուն ձեռքը. դեռ այսպէս է ան: Շատ աղմո՛ւկ կայ իր երկու կողմերը, իր առջեւը, իր ետեւը, իր վրան, եւ այդ աղմուկը՝

ամբոխավարութիւնը կը շարունակէին օրերէ ի վեր: Բայց ան գիտէ ալ հատուցանել, ստեղծագործել. իր ինքնայատուկ հանճարը ունի ան: Տեւելու հանճարն ալ. եգական է այս, իր յամառութիւնը:

Ձեռքը մարդն իսկ է:

Նաեւ հակասութիւններու տէր:

Հայուն ձեռքը՝ հակասութիւններ շատ ունի:

Արարչութիւնները չեն փոխուիր. ծնունդն ու մահը հակասութիւններ են:

Հանճարեղ, բայց իսկապէս հանճարեղ ձեռք մըն է որ ստեղծած ըլլալու է բարին ու չարը՝ միանգամայն, հրեշտակն ու սատանան՝ միանգամայն:

Ձեռքը՝ մարդն իսկ է.- մարդը՝ հակասութեանց անառիկ մթերանոց մը. ըլլայ այդ ձեռքը իսկուհի ու կրակ արարած մը, կամ հմտութիւն ստացած հանճարեղ միտք մը: Եւ այս վերջինը թերեւս աւելի իսկ հակասական պիտի ըլլայ:

Նիցչէ հանճարեղ է անով մանաւանդ որ իր տեսութիւնները շատ անգամ հիփսովին հակասութիւններ կը ներկայացնեն:

Աստուածորդիին աշակերտները իրենց Տիրոջը կը վերագրեն կարգ մը լրջօրէն հակասական տեղիքներ.- գուցէ այս կերպով ուզած ալ ըլլան վկայել, թէ իրենք եւս մարդեր էին եւ իրենց ձեռքերը այլ ուղղութեամբ պիտի չշարժէին:

Մարդկութեան բոլոր իմաստունները՝ բոլոր դարերուն ալ, ուզած են, իրականութեան մէջ, մեկնաբանել միայն ձեռքին հակասութիւնները: Ճիշդ է, նաեւ, որ առանց այս հակասութեանց, կեանքը պիտի կորսնցնէր իր ստեղծագործական պէսպիսութիւնը, հմայքը, արուեստը, հանճարը՝ դառնալու համար պարզ, անհոգի գործիք մը, միջոց մը, հլու բան մը,

կրաւորական, գուրկ՝ մարդը յօրինելու, կազմելու, ներկա-
յացնելու առանձնաշնորհումէն. որովհետեւ՝
Ձեռքը՝ մարդն իսկ է:

Աղեքսանդրիա, Նոյ. 1983 - Փետր. 1984

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան	5
1. Շատ յաճախ մտածած եմ մեր ձեռքերուն մասին	13
2. Ձեռքին հպումը, շօշափումը	14
3. Թանկագին է աղուոր ձեռքը	16
4. Ձեռքերը՝ մարդն իսկ են	17
5. Դիտա՞ծ էք	20
6. Դիտելով առօրեայ իրագործումները	20
7. Պատմութիւնը կը յիշատակէ, թէ մարդկութիւնը	21
8. Եթէ արժէք մը, եթէ ո՛րէէ դէպք մը	21
9. Սոսկալի է կծծի ձեռքը	22
10. Ժողովրդական իմաստութիւնը	22
11. Ֆրանսացի հեղինակ մը՝ Փոլ Կիլթ, «Մեծն Գոլէթ»ին վրայ	30
12. Դատի մը մէջ, իր վկայութիւնը տալու համար	30
13. Տա՛լ. տա՛ լը՛ այո՛	30
14. Իր ոտքերը սկսած էին տկարանալ	31
15. Երկրորդ Համաշխարհային պատերազմին	31
16. Անկասկած իր հայրենակիցներուն գովեստը ընելու	34
17. Ձեռքը մաքուր, կամ աղտոտ կ'ըլլայ	34
18. Մաքսիմ Կորքի կը պատմէ	35
19. Ֆրանսացի բանաստեղծուհի մը՝ Ռընէ Վիվիէն	36
20. Կարելի՞ է բացատրել, թէ ինչպէ՛ս երկար դարերէ ի վեր	37
21. Վերքերը կարելի չէ դարմանել անմաքուր ձեռքերով	38
22. Անպայմա՛ն մէկ ուղղութեամբ գործող ձեռքը	39
23. Եւ ձեռքը իր ինքնուրոյն ձեւը ունի	39
24. Երբ իր ազգակիցներէն շրջապատուած է	39
25. Հնագոյն Յունաստանի մէջ	40

26. Ատեն մը կայ, ոչ երկար ատեն, որ	40
27. Կը կարծէի թէ ֆրանսուհիները ունին	41
28. Տեսա՞՞ ճ էք ամբոխավարի մը ձեռքերը	41
29. Մեր մէջ շատ բան կայ քանդուելու արժանի	43
30. Ամէն ինչ արտակարգ է հայուն համար, հայուն հետ	43
31. Մեծ Եղեռնին, հայոց բոլոր ինչքերը	45
32. Իր «Ապրիմ-Մեռնիմ» քերթողական հատորին	48
33. Ձեռքը չի կրնար գութի զգացումէն զերծ ըլլալ	48
34. Արշամ Տատրեան՝ մին մեր լաւագոյն փորձագիր- ներէն	49
35. Մեր ներկայ ժամանակներուն, գործերուն, արտայայ- տութեանց մէջ	50
36. Իր գրականութեան, ինչպէս նաեւ անհատական խօ- սակցութեանց մէջ	52
37. Արշամ Տատրեան Գահիրէ կը բնակէր	53
38. Հայերէն լեզուին գլխաւոր եւ ինքնայատուկ	54
39. Ֆրանսերէն doigte բառին հայերէնը չկայ	60
40. Լեզուներն ալ իրենց ինքնայատուկ կեանքը ունին	66
41. Տաղանդաւոր բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեան	76
42. Իր «Ներաշխարհ» պոէմային մէջ, Արեւշատ Աւագ- եան	76
43. Լեւոն Միրիջանեան՝ ի միջի այլոց «Երգին Հովիւ»ը	77
44. Վաղուց դասական դարձած է այն ոտանաւորը	78
45. Կան ձեռքեր որ կը դողդղան	79
46. Յաւալի է, բայց իսկապէս ցաւալի է, որ	81
47. Մեր միանգամայն զգայուն եւ իրատես մեծ բանաս- տեղծը	82
48. Վահան Թէքէեան կը տեսնէ ձեռքին	82
49. Բառին բազմազան ու լաւագոյն առումովը	83
50. Շրջահայեաց էր, եւ միշտ բարեացակամ	83
51. Էմիլ Լուիսիլի՝ գերմանացի, ծագումով հրեայ	92
52. Ազգութեամբ ֆրանսացի է, ծագումով հայ	100

53. Դիտա՞ծ էք ձեռքը՝ որ	106
54. Ձեռքի մը ուժին, ձեռքի մը անսահմանութեան	106
55. Սիրտի մը պարկեշտութիւնը	108
56. Օթելլոյին երկու ձեռքերը՝ ոսկոր եւ մաշկ էին	110
57. Կը սիրեմ նորութիւնները	112
58. Ստեղծագործ արուեստագէտը՝ կրնա՛յ հակասական	187
ըլլալ	
59. Սմբատ Տէրունեան՝ իր	188
60. Մարդիկ՝ իրենց աչքերէն աւելի իրենց ձեռքերուն	189
61. Հայ անցեալը, իր խորերը թափանցող	191
62. Պարոյր Սեւակ յաճախ արտայայտուած է	195
63. Առ հասարակ ամէն արուեստագէ՛տ	197
64. Երեւան, 1974-ին, հաւաքական ցուցահանդէսի մը մէջ	198
65. Անցեալ ու ժամանակակից համայնապատկերէ մը	199
66. Մաքսիմ Կորքի կարգ մը գրողներու	200
67. Պարոյր Սեւակ ունի նաեւ	202
68. Տօքթ. Ալէքսիս Գարէլ	203
69. Մաքսիմ Կորքի մէկէ աւելի անգամ արտայայտուած	205
70. Մեր ձեռքերուն ամէնէն էական	206

ՀԲԸՄ ԳԱՀԻՐԷԻ ՉԱԳԸՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
«ԱՐԽԻՒ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

- 1- «Պոլսոյ 1860-ի եւ Գահիրէի 1906-ի Բարեգործականներուն Ծնունդը եւ Պատմութիւնը», «Արխիւ» մատենաշար թիւ 1, Բ. հրատարակութիւն, Գահիրէ, 2019, Չազրր հիմնադրամ, 76 էջ.
- 2- «Պոլսոյ 1860-ի եւ Գահիրէի 1906-ի Բարեգործականներուն Ծնունդը եւ Պատմութիւնը», «Արխիւ» մատենաշար թիւ 2, Գ. հրատարակութիւն, Գահիրէ, 2023, Չազրր հիմնադրամ, 81 էջ.
- 3- *A world in Letters, Letters of Janig H. Chaker, "Archive" series, AGBU Cairo, 2023, 350 pages.*
- 4- «Վաւերագրեր Առնչուած Տարօնի եւ Կիլիկիոյ Ազգային Կրթական Գործունէութեան», «Արխիւ» մատենաշար թիւ 4, Գահիրէ, 2023, Չազրր Հիմնադրամ, 78 էջ.
- 5- «Որբուհիներու Տուները Գահիրէ եւ Աղեքսանդրիա», «Արխիւ» մատենաշար թիւ 5, Գահիրէ, 2023, Չազրր Հիմնադրամ, 196 էջ.
- 6- «Մարդուն Ձեռքերը», Ստեփան Շահպագ, «Արխիւ» մատենաշար թիւ 6, Գահիրէ, 2024, 214 էջ.